

9(47.925)

Փ-31

ՏԻԳՐԱՆ Ա. ՓԱՓԱԶԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԲԱԼՈՒ ՀԱԻԱԻ ԳԻՒՂԻ



PRINTED IN LEBANON

ՏՊԱՐԱՆ ԱՇԱԿ

ՊԵՐՈՒԹ

1960

9(47.925)
ԿՐ-31

9

ՏԻԳՐԱՆ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԲԱԼՈՒ ՀԱԻԱԻ ԳԻՒՂԻ

(ՀԻՄՆՈՒԱԾ ՔՐԻՍՏՈՍԷ ԱՌԱԶ)

157



PRINTED IN LEBANON

ՏՊԱՐԱՆ ՄՇԱԿ

ՊԷՅՐՈՒԹ

1960





ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԵԱՆ

(Պատմաբան)

Ծնած Հաւա 1855ին,
մեռած Պոլիս, Մեծ Եղեռնին,
— պատմութեան հեղինակը —



ՏԻԳՐԱՆ Ս. ՓԱՓԱՋԵԱՆ
Ծնած Հաւաւ, 1887ին,
Ամերիկա եկած 1909ին
գիրքը պատրաստած է նիւ Եորք
իբ անձնական աշխատանքով:

ՅԱՌԱՋԱԲԱՆ

1909ի Զատիկէն վերջ, երբ գիւղէն հեռացայ, Ամերիկա գալու Պոլիսի վրայով, իմ առաջին գործս եղաւ, տեսնել մեր գիւղացի համբաւաւոր պատմաբան, Պոլիս բարձր ուսում առած Համբարձում Կարեանը, որ 95ի կոտորածէն առաջ Պոլիս հաստատուած էր: Եօքը շաբաթ Պոլիս մնացի, Կարեանէն հասկնալու համար Հաւաւի հին պատմութիւնը, որ գիւղ մը գիւղով կը խօսէին անոր մասին:

Պրն. Կարեանի համար շատ գնահատելի եղաւ իմ հետաքրքրութիւնս, շատ սիրով յանձն առաւ զայ Զուխուր Զէտէի խան, իմ բնակած սենեակս, օրական երկու ժամ պատմելու իր գիտցածներէն: Ան կը զբաղէր կառավարական հին գրքեր կազմելով: Առաջին օրն իր մօտ տեսայ ձեռագիր գիրք մը, որուն մէջ ամփոփուած էր Հաւաւի պատմութիւնը: Ան ըսաւ ինձի որ ինք եւ իմ ազգական Մկրտիչ Փափագեանը, միասին Պոլիս ուսմամբ առած, Հաւաւի պատմութիւնը պատրաստած էին, օգտուելով վանքին մէջ պահուած հին ձեռագրի մագաղաքեայ գիրքէ մը: Բայց չեն յաջողած տպագրել տալ, եւ ոչնչացուցած են կառավարութեան ձեռքը չի անցնելու վայելով: Շարիֆ պէկին գիւղէն դուրս էջելէն վերջ, գիւղն ու վանքը շատ կասկածելի դարձած էին, որ ստէպ ստէպ կառավարութիւնը խուզարկութիւն կ'ընէր, առանց բան մը ձեռք ձգելու:

Պրն. Կարեանի գիւղէն հեռանալէն վերջ՝ պատահածները լսած եմ, 8-15 տարով ինձմէ մեծ Աբամ եւ Արմենակ երկու եղբայրներէս, անոնց հետ 3 տարի ապրելով: Անոնք ալ իրենց կարգին պատմաբաններ էին, գօրաւոր յիշողութեան տէր, պէտք է ըսել որ երեք եղբայրներս ալ օգտուած էինք երկնատուր այդ պարգեւէն: Երկու եղբայրներս ոչ միայն Հաւաւի՝ այլեւ կարգ մը ազգային եւ միջազգային մարդոց պատմութեան ծանօթ էին: Արտասահմանէն գիրքեր, քերքեր բերելով գիշեր ցերեկ կը կարդային: Հիացեր էի իմ պատուական ուսումնասէր եղբայրներուս վրայ:

Գիւղը եղած ատենս շատ բաներ լսած էի իմ անգուգակն

մօրմէս, որ զօրաւոր միտք ունէր. կարգալ չէր գիտեր, բայց գիտէր Ա. Բ. Գ. ը:

Հայրս նոյնպէս ուսումնասէր՝ բայց վաղուց մեռած, շատ բաներ լսած եմ հօրեղբօրմէս, Տէր Պաղտասարէն, որ նոյնպէս ուսումնասէր մարդ մըն էր: Լսած էի մեր գերդաստանի ամէնատարիքաւոր Յարութիւն Փափագեանէն որ լաւ հողագործ էր, պարզ կարգալ գիտէր, բայց շատ զօրաւոր յիշողութիւն ունէր: Տէր Փափագ տատային անուրը կը կրէր, անոր ողջ եղած ատեն, այս մեր տարիքաւորին բոլոր գերդաստանով պապա կ'ըսէինք: Գիւղէն դուրս գործով գացած օրերը զիս հետը կը տանէր. այնքան հին պատմութիւններ կը պատմէր որ ես կը զարմանայի: Մեր գերդաստանը մեծով պգոտիկով պատմաբան էին: Կ'ըսէր թէ մեր գերդաստանը հինգ հարիւր տարուայ քահանայի սերունդ մըն է: Ան Փափագ պապայէն շատ բաներ լսած էր, մեր գերդաստանը որտեղէն եկած է: Փափագ տատան պատմած է որ, Համբարձման գիշեր Ուրբաթ լուսանայուն, գիւղին մէջ զօրաւոր երկրաշարժ պատահած է. Տէր Ստեփան այդ գիշեր առաւօտուն կանուխ դաշտ տարած է եզներն արածելու, *Սաչ հողիս* ըսուած տեղը. անարկու եղած է երկրաշարժը, գետիններէն կրակ դուրս կը ցայտէ, եզները պտալով հոս ու հոն կը վազեն. *Կանտասաճորը* այդ օրէն բացուած է: Քափշար ըսուած քարածուխի հանքը դուրս ելած է գետնէն: Գիւղին մէջ բաւական տուներ կործանած են եւ մարդկային կորուստ եղած է: Գիւղին քարաշէն եկեղեցին չէ քանդուած:

Երկրաշարժէն վերջ գիւղացիներուն առաջին գործը եղած է Տէր Ստեփաննոսին տունը շինել եկեղեցիին դէմ, մեր օրուան Փափագեաններու տեղը, ուր երկրաշարժէն առաջ Արեւկանք անուրով ընտանիք մը կ'ապրի եղեր, որոնք երկրաշարժին տունով տեղով ոչնչացած են:

Գնահատանքի արժանի է Արմենակ Գասպարեանը որ նամակով քաջալերած է զիս Հաւաւի պատմութիւնը երեւան քերելու, նաեւ գնահատանքի արժանի է Պօղոս Վարդեանը, երկուքն ալ Փրակտէնս քաղաքէն: Պօղոս ինծի զրկած էր մատիտով գրուած տետրակ մը իր օրով պատահածներ Հաւաւի մէջ: Նիւ Եոթի մէջ բնակող Պօղոս Հանեան, Կարապետ Քէչեան որ մեռած են հիմա, ինծի պատմած են իրենց գիտցածներն ու լսածները Հաւաւի մասին. լոյս իջնէ անոնց գրեթեմաններուն վրայ:

Շնորհակալութեան խօսք ունիմ գիւղին դպրոցը միատեղ յաւախող ընկերոջս, Տիգրան Գաբրիէլեանին որ միակ խորհրդակիցս

եղած է: Ամէնավերջի գնահատանքներս Նիւ Եոթի ծնած ձեւով երկու եղբայրներուն, Կարապետին եւ Պետրոսին, որ Հաւաւի պատմութեան գրքին մէջ փայլող լուսանկարները պատրաստած են ամենայն սիրով, մերժելով որեւէ վնասում: Անոնք մեր գիւղի համբաւաւոր ձեւով երկու գերդաստանի վերջին շառաւիղներն են: Յարգանք իրենց ծնողներուն Ասատուրին եւ Տիգրանուհիին, որ այսպէս գաւակներ մեծցուցած են, որ չեն մոռցած Հաւաւը: Հաւաւը իր հիմնադրութեան օրէն սկսեալ մոռցուելիք գիւղ մը չէ եղած: Իր քաջագործութիւններով, մղած կ'ուրեւնէր: Այդ կառուցուած հոշակաւոր բլուրին պէս ան մնացած է տոկուն, մնաց հաստատ իր տեղին վրայ: Պահած են Թաղէս Առաքեալի ձեռնով քաղուած խաչքարերը, Բարբոզիմէս Առաքեալի ձեռնով կառուցուած վանքը, մշտադալար ծառերով, բուսիներով պաշտելի անտառը վանքին կողքին:

Հայաստանի վրայ կատարուած արշաւանքները ի գուր անցած են, որ Հաւաւը տիտանի մը պէս մնացած է կանգուն աւելի քան 2000 տարիներ, մէկ ձեռքը խաչը, միւս ձեռքը սուրը: Անոնց դիմադրական ոգին, այնքան բարձր եղած է որ Օսմ. բարբարոս կառավարութիւնը իր պէկերով, ազաներով եւ ցեղապետներով չեն կրցած փոխել Հաւաւցիներու ազգային դիմագիծը որ պիղծ համարած են սալբիլ թուրքին հետ միեւնոյն գիւղին մէջ. որ գիւղին հողին, ջուրին, օդին տէր ու տիրական արիւնարբու պէկեր դուրս բշտած են գիւղէն: Որ Հաւաւը եղած է մոլեռանդ, հաստատ իր հաւատքին վրայ, որ չէ թողած գիւղին մէջ հաստատուելու ոչ կաթոլիկ եւ ոչ բողոքական:

Այսպէս եղած է մեր Հաւաւը, որուն նմանը չէ գտնուած Հայաստանի մէջ գիւղ մը, որ շրջապատուած ըլլայ տասնապատիկ քիււերով նմանը չի տեսնուած բարբարոս թուրքերով, որ մնաց իր բարձրութեան վրայ: Պահելով հին հեքանոսական գուտ հայկական ոգին:

Պատիւ է ինձ համար հարուստ անցեալ ունեցող իմ պաշտելի Հաւաւի պատմութիւնը գրելը, գիշեր ու ցերեկ անընդհատ խորհելով, մտածելով եւ ունեցած ուժս ու կարողութիւնս ի սպաս դնելով, իմ անձնական նիւթականով գիրք մը երեւան քերելու:

ՏԻԳՐԱՆ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

ԱՌԱՆԴՈՒԹԻՒՆ

Հայկ Աւանը, որուն շարունակութիւնն է հիմակուան Հաւաւը, հիմնուած է Քրիստոսէ առաջ: Բնակչութիւնը եղած է 500 տունէ աւելի, կէսը բլուրին շուրջ, միւս կէսը 4 մղոն հեռաւորութեամբ բարձրալանդակի մը վրայ, տակը ապառաժ, բոլորուած փոքրիկ լեռնապատերով: Զօրաւոր երկրաշարժ մը կը քանդէ բլուրի շուրջ հաստատուած բնակարանները: Մեր օրուան Հաւաւը քիչ կորուստով կ'ազատի:

Գաշտին Հաւաւը կը զբաղի հողագործութեամբ, հետքեր կային. պալատնոցը, որ մենք բալատոց կ'ըսենք. թղենին, թեղիստանը, կաղնիորերն. մոխիր թրիք կուտակելու տեղը որ մենք մտիւրը թլակ կ'ըսէինք, ունեցած է իր մասնաւոր բանջարանոցը, սօխնոց անունով որ մենք սագուկ կ'ըսէինք:

Իսկ բարձրալանդակի վրայ բնակիչներ եղած են մտաւորական դասակարգը, որ զբաղած են արհեստագիտութեամբ, դիւխաւոր արհեստները եղած են բրուտ, ատաղձագործ, չէնք կառուցանող, որ մինչև մեր օրերը Հաւաւ պահած էր այդ արհեստը. գեախններու տակ մնացած անհամար կարանները եւ շատերու համար գործածուելիք հողէ խողովակները, բոլորն ալ պտուտակներով պատրաստուած, թրծուած, որքան տոկուն, ներսէն ու դուրսէն փայլուն, որ կը կարծուի թէ գեւ երէկ շինուած է: Եղած են հախճապակի պատրաստողներ, գոյնզոյն, որոնց փշրանքները մենք կը տեսնենք հողերու տակ մնացած, մենք անոնց դալու պիպիկ կ'ըսէինք. դաշտ գացող փոքրիկներս պէտք էր հաւաքէինք տուն բերելու: Բերնէ բերան պատմուածներէ գիտցուած է որ Հաւաւը եղած է մուլեանդ կրահապաշտ. որ անտառ մը ունեցած է, անոր մշտագալար ծառերն ու թուփերը արեւադարձ երկիրներէ բերած տնկած են, զանոնք վառելու՝ որոշուած օրը: Վանքը եղած է կռատուն նախապէս, որուն դուրսի դրան առջև, սալալատակուած գետին վրայ հրկիզում տեղի կ'ունենար:

Միւսնոյն մուլեանդ Հաւաւը դարձած է Քրիստոնեայ, պահած է իր մուլեանդութիւնը: Ոչ ոք չիտէ թէ երկու Առաքեալները որքան ջանք ու աշխատանք թափած են, որքան ժամանակ տուած են զանոնք Քրիստոնեայ դարձնելու: Հաւատափոխութիւնը Հաւաւիցիներու համար դժուարահաս յղած է, ու պահուած է այդ տասնարանեան, որ մինչև մեր օրերը չեն թողած գիւղին մէջ մուտք գործել կաթնիկն ու բողոքականը:



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԲԱԼՈՒ ՀԱՒԱԻ ԳԻՒՂԻ

Բալահովտի ամենամեծ եւ ամենահին զուտ հայաբնակ գիւղը հիմնուած է Քրիստոսէ առաջ, Հայկ Աւան անունով որ կը գտնուէր Քալու քաղաքէն 10 մղոն հեռաւորութեամբ, հիւսիսային արեւմուտք փոքրիկ լեռնապատերու մէջտեղ բարձր դիրքի մը վրայ: Հայկ Աւան անունով հիմնուած է այն նպատակով, որուն մէջ բնակողներ պէտք է ըլլան միմիայն Հայեր: Եկող գացող սերունդներ աւանդաբար պատմած են այս որոշումը, որ մնացած է զուտ հայաբնակ:

Օսմանեան կառավարութեան օրով Հաւաւի հողերուն բուն տիրացած պէկեր անդամ չեն կրցած կտորել այս որոշումը, որով Հաւաւ մնացած է զուտ հայաբնակ մինչև մեծ եղեռն, 1915:

Հայկ Աւանի անունին փոփոխման մասին աւանդութիւնը կուտայ տարբեր տարբեր մեկնութիւններ, որուն մասին պիտի տրուի բացատրութիւններ: Գիւղին հպարտանքները կը կազմէին իր դարաւոր (3) հնութիւնները, հոշակաւոր բլուրը գիւղէն դուրս գաշտին մէջտեղ, կառուցուած է քարով եւ կիրով, դուրսէն հողով բռնուած: Թաղէտ Առաքեալի ձեռքով հաստատուած գիւղին շուրջ խաչքարերը խոշոր դուռներու շափ, կիսով թաղուած են հողին մէջ: Բարթուլի մէջո Առաքեալի կողմէն կառուցուած է Ս. Աստուածածին քաղցրահայեաց քարաչէն վանքը գիւղէն 2 մղոն հեռաւորութեամբ: Ասոնք մնացած էին մինչև մեծ եղեռն:

Բլուրը շինուած է շէրաձեւ, քարով ու կիրով. դուրսէն բռնուած հողով, որուն վրայ բուսած խոտեր եւ թուփեր կարծր խաւ:

մը կազմած էին: Մօտաւորապէս 100 սոք բարձր, վրան տափարակ, վեր կըլեւու համար կար ճանապարհ մը: Կոռուղներու համար անառիկ զիրք: 3000-է աւելի մարդիկ պատսպարելու չափ ընդարձակ, շէնք մը, որ յետոյ կրակի տրուած է: Փոշայոյն հողեր ալ կ'ապացուցանեն: Բլուրին շուրջ արտերու մէջ տեղ տեղ կուտակուած կըրտածեւ քարերը, մարգալլուի մեծութեամբ, գործածուած են բլուրին վրայ կոռուղներու կողմէ, արձակուած մարգալլոյ գործիքներով, եւզով թրջուած քուրջերով հրախա վիճակի մէջ, բլուրը պաշարուցներուն վրայ:

Անոնք եղած են ոչ միայն քաջ կոռուղներ, այլ եւ լաւ արհեստաւորներ, որ բլուրին շուրջ ապրողներու համար գործածած են ջուրի խողովակներ, յար եւ նման արդիական խողովակներու, թըրծուած եւ կիրի մէջ առնուած: Մենք կը տեսնենք շարան շարան կարաններ, գետնին տակ թաղուած, որոնցմէ քանի մը հատը հանուած էին: Պտուտակներով պատրաստուած համաչափ, կարծր եւ տոկուն, թրծուած, 25 լիտր մեծութեամբ, տմանք կիրի մէջ առնուած: Կանգուն մնացած են Թաղէոս Առաքեալի ձեռքով հաստատուած խաչքարերէն քանի մը հատ, որոնց քովէն երբ անցնէին մեր մամիկները երկիւղածութեամբ կը համբուրէին, խաչակիցերով եւ կ'ըսէին, Առաքեալին ձեռքերը դպած են ասոնց: Ճշմարիտ հաստատեցաւ Հուաւոյն սերունդէ սերունդ պահած էր իր սրտին մէջ նախնիքներու յիշատակները:

Աւանդութիւնը կ'ըսէ որ Թաղէոս Առաքեալ դժուարութեամբ յաջողած է Հայկ Աւանն Քրիստոնեայ դարձնել. առաջին հանդիպումով կը մերժուի եւ բերտորէն դուրս կը քշուի, բայց մասնաւոր յանձնախումբով կը հրաւիրուի աւան եւ կ'ընդունին Քրիստոնէութիւնը: Թաղէոս Առաքեալ ի յարգանս Աւանցիներուն կը կառուցանէ 12 խաչքարեր աւանին շուրջ: Իրմէ յետոյ Բարթողիմէոս Առաքեալ կը կառուցանէ Մ. Աստուածածին քաղցրահայեց վանքը, գիւղին հարաւային կողմը փոքրիկ անտառին կուրծքին, սրբատաշ քարերով: Վանքը ունէր վարելահողեր, այգիներ, պարտէզներ, ինքնաբուխ աղբիւրներ, աւազաններ եւ շրջապատուած էր թթենիներով ու տեսակ տեսակ պտղատու ծառերով:

Վանքը, կառուցման օրէն, եղած է սրբալայր եւ ուխտատեղի մարող շրջաններուն համար: Համբարձման եւ Վարդափառի տօներուն ամէն կողմերէ կու գային թմբուկով եւ գուռնայով, մատաղջուներով եւ նուէրներով: Կատարեալ ուխտատեղի, հսկայ բազմութիւն, ո՛չ Թուրք, ո՛չ Քիւրտ, ո՛չ կառավարական հսկողութիւն, կա-

տարեալ Հայաստան: Կ'ըլլային ձիարչուներ, վահանախաղ, հրացանաճուրիներ, զօտեմարտութիւն, ուտել, խմել, զուարճանալ, երգել, պարել տեսակ տեսակ կանչերով օղը թնդացնել, ոչ կուի, ոչ իրարանցում, վերջին ծայր եռուզեռ եւ կարգապահութիւն: Վանքին հիմնարկութեան սկսեալ պահուած էր այդ խրախճանքի սովորութիւնը որոնք կ'ըլլային ամէն տարի, մինչեւ մեր օրերը: Սակայն 93ի կոտորածին պատճառաւ չէր մնացած նախկին եռուզեռը:

Ամբողջ դարերու ընթացին վանքը մնացած էր իր պայծառութեան մէջ, չէր տեսնուած ոչ ջարդ, ոչ աւերում, միշտ կանդուն: Հաւանական կը նկատուի որ Հայկ Աւանի հիմնադիրները եկած են ուրիշ շրջանէ, որոնք եղած են հմուտ կարգ մը արհեստներու, որոնց առաջին գործը եղած է կառուցանել բլուր մը քարով եւ կիրով, դաշտին մէջտեղը, եւ զայն գործածել պաշտպանութեան զիրք, հաստատելով իրենց բնակարաններն անոր շուրջ: Երթալով զօրացած, տիրապետող դարձած են Բալահոփիտին. անոնք ապրած են լաւ շրջան մը, ունեցած են բարգաւաճ կեանք շնորհիւ իրենց արհեստագիտութեան: Տեղւոյն վրայ որողելով տեսակ տեսակ ծառատաններ, ունեցած են նշանաւոր պալատնոց ընդարձակ գետնի վրայ, որոնց անունները եւ վայրերը ծանօթ մնացած էին Հաւաւոյններուն մինչեւ մեր օրերը:

Տեղի ունեցած է մեծ երկրաշարժ, որ կործանած է ամէն ինչ: Ազատ մնացած է մեր օրուան Հաւաւը, որուն յատակը ապառաժ քար է: Բլուրին շուրջը տակաւին կը մնային տեսակ տեսակ ծառեր:

Հայկ Աւանն Քրիստոնէութիւնը ընդունելէ յետոյ դարձած է կատարեալ սրբալայր, իր քարաշէն եկեղեցիներով, սրբատեղիներով եւ մատուռներով, որոնք թաղուած մնացած են գետնին տակ: Հաւաւի շուրջ ուր որ փորէիր լոյս կը ցոլար, սրբատաշ քարերով կառուցուած եկեղեցիներ, մատուռներ եւ սրբատեղիներ, դամբարաններ, մասնաւոր շինուած քարերով օղէ եւ ջուրէ անթափանց քարացած դիակներ, ճեփ-ճերմակ, որ կարելի չէր հասկնալ թէ ո՛ր դարէն մնացած են անոնք: 90-ական թուականներուն հնուց մնացած եկեղեցիին կից գետինը յարգարած առեն դամբարան մը կը բացուի, քարաշէն ստուղներու մէջ պահուած կմախքներ, բոլորովին ճերմակած, ոչ թիւ ոչ արձանադրութիւն, կարելի չէ եղած հասկնալ թէ ո՛ր դարէն մնացած են: Ոմանց սրունքի ոսկորները կիսով աւելի երկար հասարակ մարդոց սրունքներէն. մենք կը զարմանայինք թէ Հաւաւի մէջ ի՞նչ հսկաներ ապրած են: Այսպէս Հաւաւը հնութիւններու թանդարան մը կը ներկայացնէր:

Հաւաւի օտը, ջուրը, հողը, հայութիւն կը բուրբէր բոլոր, գաշա, լեռ, ձոր, ճանապարհ հայկական անունով մկրտուած էր: Երբ դիւղէն դուրս կ'ելլէիր, որ կողմն ալ քալէիր, քու դէմը կ'ըզը հայեր էին: Բնաւ չէիր հանդիպեր այդ կոշա ու կոպիտ, բարբարոս թուրքին, ոչ ալ շարշաֆով փաթթուած թուրք պաճիկին, թուրք լաճօին: Որովհետեւ Հաւաւի հողերուն վրայ թուրքերու բնակիլը պիղծ համարուած էր: Թուրք լաքէճը Հաւաւի մանուկներու համար անձանօթ էակ մ'էր: Բացառիկ պարագաներու տակ առեւտուրի համար եկող թուրք պաճիկին հետ ընկերացող թուրք լաքէճը կը պաշարուէր Հաւաւի մանուկներէն, պիշ-պիշ անոնց վրայ նայելով, գննութեան կ'աննէին անոր գլխուն զգզուած մազերը, գոյնզոյն պատուած լաթերն ու բոպիկ սոքերը, կ'արգահատէին անոր վրայ: Որ երբ իրիկուան տուն երթային, կը պատմէին իրենց ծնողքներուն որ թուրք լաքէճ մը տեսած են, նկարագրելով թուրք լաքէճին արտաքինը: Աղ-դային բարձր յատկութիւններով օժտուած Հաւաւիին համար անհանդուրժելի դարձած է ազրիլ զոյ ու աւազակ եւ զեանափոր տուներու մէջ ազրոյ թուրքին հետ, որուն համար կուտած են դարերով եւ շին թողուցած այդ բարբարոս թուրքին Հաւաւի մէջ հաստատուելի: Հայի Աւանի հիմնադիրներուն կողմէ գրուած որոշումը, որ աւանը բնակելի է միմիայն Հայերու համար, մնացած է ի զօրու ամբողջ 2000 տարի, սերունդէ սերունդ:

Օսմանեան կառավարութիւնը երբ կը տիրանայ Հայաստանի հողերուն, նախապէս տեղեակ Հաւաւիներուն անցեալին, գանոնք դերի դարձնելու եւ անոնց նախկին թօնը կտրելու մտօք կը հօլազրկէ Հաւաւիին: Անոնց ձեռքէն առնելով բոլոր վարելահողերը, կը պետականացնէ, որ Հաւաւիին իրրեւ դերի ազդ, հարկատու պէտք է դառնայ իր հողերը գործածելու համար, պէտք է 9% աշար անուան տակ վճարում ընէ իր հանած բերքէն. այսպէս ալ կ'արձանագրուի կառավարական տոմարին մէջ: Այդ օրէն գրուած օրէնքով Հաւաւեան մնացած է մինչեւ վերջ անձնական հող չունեցող դիւղ:

Ատիկ գառ Օսմանեան կառավարութիւնը Հաւաւիին զսպառկան օրէնքի տակ պահելու, անոնց ազգային զգացումները ճնշումի տակ գնելու մտօք Ասլի անունով բարբարոս թուրք մը, Ասլի Պէկ ա-նունով նշանակուի, Հաւաւիներու վրայ իշխող կը կարգէ, որ ուշի ուշով անոնց վրայ հսկէ, իրրեւ տէր ու տիրական անոնց հողերուն որ կրնայ պահել սերունդէ սերունդ, բայց առանց ծախելու իրաւունքով, որ Հաւաւիներ նորէն տէր չդառնան իրենց հողերուն: Իրաւունք կը տրուի Ասլի Պէկին որ Հաւաւիներէն ստանայ 8% շահ:

նօխաւ անուան տակ, անոնց հանած բերքերէն, առիկ գառ պիտի վճարեն 9% աշար անուան տակ կառավարութեան. այսպէս ալ կ'արձանագրուի տոմարին մէջ: Այդ օրէնքով Հաւաւիին կը գրկուի իր անձնական հողը ունենալու: Ժամանակներու ընթացքին մասնաւոր Հաւաւիներու կողմէն կը գնուի իրենց վարելահողերը, որ անվաւեր կը գտնուի կառավարութեան կողմէն, որ տրուած գրամները պարագի կ'երթան, ու պէկը նորէն կը տիրանայ իր ծախած հողերուն, առանց ետ տալու իր գանձած գրամները: Ասլի Պէկ խօսախ ալ կը հաստատէ գիւղին կայերուն մէջ եւ կը ջանայ թուրքեր ալ բնակեցնել իր գիրքը զօրացնելու համար:

Բայց Հաւաւիներ շին թողուր, այն առարկութեամբ որ Հաւաւը վաղուց մնացած սրբավայր է, ներելի չէ օտար ցեղերու բնակուիլեան: Մեկը նազար եւ Տէր Սիմոն ամբողջ զիւրով կ'ընդդիմանան եւ շին թողուր: Այդ օրէն հիմքը կը գրուի Հաւաւի մէջ թուրքեր չհաստատուելու: Ասլի Պէկ Հաւաւիներուն յաղթահարելու եւ գանոնք երկու մասի բաժնելու մտօք կը ջանայ Կաթուիլի կողմէն հաստատուի գիւղին մէջ. գուրսէն բերել կու տայ Կաթուիլի կողմէն մը Հայր Քալանթար անունով մէկը իր խօսախին մէջ, անոր երեւումէն Հաւաւիներ այնպիսի վայնասուն մը կը փրցնեն որ օտար քահանան կը հեռանայ գիւղէն առանց այլեւայլի: Գիւղէն կը հեռանայ նաեւ Տէր Սիմոն իր ընտանիքով, առանց ականջ կախելու գիւղացիներու ազգանքներուն եւ պաղատանքներուն: Կը հաստատուի Չարչանձաղի Հալվոյրի վանքը, ուր շատ սերով կ'ընդունուին վանքի շրջանի լեռնական Հայերու կողմէն, ուր զեռ Տէրսիմ Կաղմուած չէր: Շատ հաւանական կը նկատուի որ Տէրսիմի հիմնադիրն եղած է Տէր Սիմոն որ եղած է շատ քաջ եւ ազգային բարձր գիտակցութեամբ քահանայ մը:

Հին դարերէ ի վեր Հաւաւեան հին սովորութիւն մը պահած է, որ գիւղին մեկիւր սեղան կու տար բացօթեայ, կայերը հանելէ վերջ, հին հրաւիրելով Գրծըգանի 20 գիւղերու մեծամեծները իրենց պարագաներով: Ամբողջ շարաթ գիւղեր ուտել խմելով լուսցնել: Գրծըգանը Օսմանեան տիրապետութենէն առաջ ալ բարեկամ էր Հաւաւի: Այդ ուրախութեան գեղերը Ասլի Պէկի խօսախը մէկէն կրակ կ'անէ եւ կը փոշիանայ, զեռ պէկը եսայլայէն շփրադարձած: Խօսախին կրակ բոլորը եղած է Տէր Սիմոնը, որ գիւղեր տան կու զայ Հալվոյրէն, որ իրօրին զազանի: Այդ նպատակով հեռացած էր Հաւաւէն տարի մը առաջ: Կատարուած գործը կը մնայ գաղտնիք, որ ժամանակ մը յետոյ կը հասկցուի:

Ասլի Պէկի իր խօնախօսին հրկիզումը կը վերադրէ Հաւաւցիներու, եւ Հաւաւցիներու մէջ եղած հակառակութիւնը, պայքարի փաստ բռնելով, գատարան կը տանի կարգ մը Հաւաւցի երիտասարդներ: Սակայն Գօրզգանցի մեծամեծներ գատարան ներկայանալով կը վիպան են խօնախօսի կրակ տուողը Հաւաւցիներ չեն: Ասլի Պէկի կողմէն ամբաստանուած եւ հոս գատարան բերուած երիտասարդներու հետ կողք կողքի նստած կ'ուտէինք, կը դուարձանայինք, երբ յանկարծ խօնախօս կրակ առաւ: Հետեւաբար Ասլի Պէկի կողմէն անոնց դէմ ըսուածները բոլորովին սուտ է, որպէս ճշմարտութիւն կ'երզնուեն գատարանի առջեւ: Կառավարութիւնը իսկոյն ազատ կ'արձակէ ամբաստանուածները: Հաւաւցիներ չեն դոճանար այդքանով, դատ կը բանան Ասլի Պէկի դէմ որ անիրաւօրէն գրեկնք ամբաստանած է: Քսաջ եւ անխախտ Հաւաւցիին կը յաջողի կրակը Պէկիին վրայ ձգելու, որ տարիներով պայքար մղած է Հաւաւցիներու դէմ, գիւղին մէջ օտարներ բնակեցնելու: Իսկ Հաւաւցիին ընդգիծացած է այն առարկութեամբ որ սրբավայրի մը մէջ ներելի չէ օտարազգի բնակեցնել, միեւնոյն ատեն դէմ չերթալով կառավարութեան, որոշած են 100-ին 8-ը պէկիին եւ 100-ին 9-ը կառավարութեան վճարելու:

Կառավարութիւնը տեղեակ Հաւաւցիներու եւ Ասլի Պէկի մէջ տարիներով մղուած պայքարին, անօրոտակար կը գտնէ Ասլի Պէկիին խօնախօս վերաջինելը գիւղին մէջ, միեւնոյն ատեն չ'ուզեր դէմ կենալ Հաւաւցիներու կրօնական զգացումներուն, իրենց դարաւոր սրբավայրը պահպանելու, որոնք եղած են միշտ շինող, կառուցանող եւ կառավարութեան լաւ շահ ցուցնող գիւղ մը: Գիւղ մը որ միշտ հաւատարիմ գտնուած եւ յարգած է կառավարութեան օրէնքները:


Կարգիւրուի Ասլի Պէկիին գիւղին մէջ նորէն գալու եւ հաստատուելու, նոր նոր կրօններու դուռ չբացուելուն: Կարտօնուի Ասլի Պէկիին որ ամէն ամառ գայ Հաւաւ եւ գանձէ իրեն որոշուած 100-ին 8 շահը անոնց հանած բերքերէն: Այսպէս ալ կ'արձանագրուի կառավարական ամսաբան մէջ: Խելացի եւ իմաստուն Հաւաւցիներ այս դրուած օրէնքին վրայ հիմնուելով, դարերով կոռուած, չեն թողուցած իրենց պէկերուն որ հաստատուին գիւղին մէջ: Եւ չեն թողուցած որ թուրքեր բնակին գիւղին մէջ: Ազատ եւ գիւղը գուտ հայաբնակ պահելու բաղձանքը այնքան սիրելի դարձած է Հաւաւցիներուն, որ միշտ արթուն կեցած են այդ դրուած օրէնքը փոփոխութեան չենթարկելու: Կոռուելու ընդունակ քաջ Հաւաւցիին բնու չէ ենթարկուած իր հողերուն բռնի տիրացած պէկերուն: Այնքան դժուարութեամբ ձեռք բերուած այդ որոշումը պահուած է սերունդէ սերունդ: Օրէնք ի վեր թուրքերու հետ ապրելի միեւնոյն գիւղին մէջ անհնարութիւն եղած է: Որ հայ սերունդը պէտք է ազատ ապրել, հետու մնայ այդ կոշտ ու կոպիտ թուրքերէն, ու Հաւաւն իրբեւ սրբաբայր մնայ իր բարձրութեան վրայ: Որ Հաւաւի միանալիս ողին պահուի պահպանուի, իր ուժերը չըլլատուի, հայ մշակոյթը իր կարգին ազատ մնայ, ոչ ոք միջամուխ չըլլայ, իրենց ազգային զգացումները չվերաւորուին, այս մտքով ճամբայ ինկած եւ այսպէս քալած են:

րունդ: Օրէնք ի վեր թուրքերու հետ ապրելի միեւնոյն գիւղին մէջ անհնարութիւն եղած է: Որ հայ սերունդը պէտք է ազատ ապրել, հետու մնայ այդ կոշտ ու կոպիտ թուրքերէն, ու Հաւաւն իրբեւ սրբաբայր մնայ իր բարձրութեան վրայ: Որ Հաւաւի միանալիս ողին պահուի պահպանուի, իր ուժերը չըլլատուի, հայ մշակոյթը իր կարգին ազատ մնայ, ոչ ոք միջամուխ չըլլայ, իրենց ազգային զգացումները չվերաւորուին, այս մտքով ճամբայ ինկած եւ այսպէս քալած են:

Գիմարական ողին Հաւաւցիներուն մէջ վաղուց բոյն դրած եւ քարացած, լեռնացած է. անոնց մէջ միս ու ոսկր դարձած է, որուն չնորհիւ կըցած են պահել իրենց ազգային բարձր գիտակցութիւնը ու բննապետութիւնը հալածած են, ու գլուխ չեն ծռած: Ասլի Պէկի գիւղին հեռանալէ յետոյ միշտ դաւեր լարած է, անարդար պայքարներ մղած է, որ անցած են ապարդիւն: Հաւաւցիին իր միտքն ու հողին արթուն պահած է, պայքարելէ չէ վախցած իր գոյութիւնը պահպանելու: 600 տարուան մէջ երեք անգամներով գուրս քշած է գիւղին պէկերը, որ անոնք հաղիւ կըցած են կարճ ժամանակով ապրել գիւղին մէջ, եւ ոչ մէկ ատեն թուրք ընտանիք գիւղին մէջ:

Ասլի Պէկիին վերջ եկող սերունդներ շատ ջանացած են գիւղին մէջ խօնախօս հաստատելու եւ չեն յաջողած. անոնց համար անհանդուրժելի դարձած է որ չեն կրնար իրենց կայունութիւնը վրայ խօնախօս չինել: 1700 թուականներուն Ասլի Պէկի սերունդի ամենազօրաւոր Հաւաւ Դըհատ Պէկի կը յաջողի Հաւաւի մէջ խօնախօս հաստատել: Այնուհետեւ Կ'աշխատի թուրքեր բնակեցնել գիւղին մէջ իրբեւ ծառաներ: Հաւաւցիները կ'ընդգիծանան եւ չեն թողուր, այն տուրկութեամբ որ Հաւաւը պահուած է իրբեւ սրբավայր դարերով, եւ այսպիսիներու համար թոյլ տրուած չէ ոչ մէկ ատեն: Մենք պիտի պահենք մեր նախնիքներէն ձգուած այս աւանդը՝ որ Հաւաւ պէտք է մնայ դուտ հայաբնակ իրբեւ սրբավայր: Որ մենք պատրաստ ենք կոռուելու ձեր դէմ: Հաւաւ Դըհատ Պէկի յիշեցնելով իրենց նախահօր Ասլի Պէկի օրով կառավարութեան որոշումը, Պէկը կարող է գալ ամէն ամառ Հաւաւ, գանձէ անոնցմէ 100-ին 8 որոշուածը անոնց հանու բերքերէն: Մենք դէմ չենք կառավարութեան կողմէն տրուած որոշումին, 100-ին 8 ձեզի, 100-ին 9 կառավարութեան շահ տալու: Բայց դէմ ենք գիւղին մէջ խօնախօս պահելու եւ թուրքեր բնակեցնելու: Երկիրը պատերազմի մէջ գտնուելուն պատճառաւ, հանուր Հայութիւնը վախի սարսափի մէջ գտնուելով, պէկը զօրաւոր կը զգայ իր ուղիւսը բռնելու, սակայն Հաւաւցիները չեն վախնար, կը մնան հաստատ իրենց

162
162



որոշումին վրայ, որ պիտի չթողուն թուրքեր բնակելու Հաւաւի մէջ: Պատերազմի արհաւիրքը անցնելէ յետոյ Հաւաւացիները նորէն կը զորանան եւ պէկին խօնախը քանդելու մասին խորհուրդներ կը դուժարեն շատ դադանաբոլէն: Հաւաւացիները ոչ միայն համերաշխ եւ միաբան, այլ եւ շատ դադանապահ, որ կրցած են հասնել իրենց նըպատակներուն:

Այդ շրջանին Հաւաւը կ'ունենայ զորաւոր երկրաշարժ, որ կը քանդէ գիւղին կէսը եւ պէկին խօնախը, առանց մարդու կորուստի: Առիթէն օգտուելով Հաւաւացիները նորէն ոտքի կը կազմին, ցոյցեր կը կատարեն պէկին դէմ եւ շէն թողուր որ պէկը նորէն խօնախ չի-նելու ձեռնարկէ: Բացէ ի բաց կ'ըսեն անոր պէտք է հեռանա գիւղէն: Մեկիք Մարտոն զորաւոր նկարագրի տէր մարդ, ոչ ոքէ չի վախ-ցող մարդ, արտակարգ քաջ մարդ, զորաւոր զէրք կը բռնէ, ամբողջ գիւղը մէկ սիրտ մէկ հոգի անոր կողքին կանդնած: Հաւաւացիներու գիտակից եւ դուռ հայրենակ ըլլալը հոն է որ կը շեշտուի, որ հաս-տատ կը մնան իրենց տուած որոշումին վրայ: Հաւաւի Դըհատ Պէկ անկարող կ'ըլլայ Բալահոյի մէջ վարպետներ ճարելու, բռնի կեր-պով նոր խօնախ չի նելու: Շէնք շինողները Հայեր էին: Ան 40 գիւ-ղերու տիրապող անուն ձգող զորաւոր բանապետ Պէկ, գուրակն բերել կու տայ շէնք կառուցանողներ. անոնք ալ կը վտարուին: Հաւաւացի-ներէն պարտուած Հաւաւի Դըհատ Պէկ իր թիւ գիւղը կը հաստատուի (Հաւաւէն 4 ժամ հեռու քաղաք):

Մեկիք Մարտոն զորաւոր քայլեր կ'առնէ պէկին դէմ պաշտ-պանուելու: Գոբլանի եւ Տէրսիմի հետ զորաւոր կապեր կը հաստա-տէ, կը պարտադրէ ամբողջ գիւղը գննք ունենալու, խուր, հրացան, վահան անպայման ունենալու. այդ ատեններ հրացանը հարուստիւտ եղած է: Թուր ու վահան պէտք է կախուած ըլլան բոլոր տուներու մէջ: Մեկիքին կողմէ արձակուած հրամանը զինուորական հրաման է, որուն դէմ ոչ ոք չէ կարող դիմադրել: Մեկիք Մարտոն եւ իր կիներ ուրիշ շրջանէ փախած Հաւաւ սպաստանած եւ պաշտպանութիւն գտած են: Մեկիք Մարտոն իրբեւ լաւ ձիավարժ եւ վնասարժ գիւղին կաշերուն մէջ կ'իրակի օրերը ձիավարժութեան եւ վնասարժութեան գասեր կու տայ Հաւաւցի եւ Գոբլանցի երիտասարդներուն, վահա-նախապուծիւնը ստաջ կը տանի, եւ գիւղին երիտասարդութիւնը կա-տարեալ սիրահար կը դառնայ վահանախապուծիւն, որով ամէն մէ-կը իր սուրն ու վահանը պէտք էր ունենար: Մեկիք Մարտոն օրով հիմքը կը դրուի վահանախապուծիւն որ տեսած է մինչեւ 90-ական թուականները: Երբ Հաւաւցի երիտասարդներ ուրիշ գիւղեր հարս-

նառումի երթալին, սուրբով իրարու դէմ վահանախապուծիւն ցու-ցալրած ատեն, զիւղացիներ լիզապատառ ըլլալու շտի կը սարսա-փէին որ Հաւաւցիներ իրար կը սպաննեն, մէկը միւսին զլխուն սու-րեր նետելով արձակ համարձակ: Հաւաւցի իր ռազմապիտուութիւնը պահած է հին հին դարերէ ի վեր, որ ատեն ատեն թափ առած է: Մեկիքի հրամանով ամէն տուն իր սուրն ու վահանը կ'ունենայ, վառօղի ընդհանրանալէն վերջ հրացան եւ ատրճանակ անպայման: 25⁰ որ գիւղը բոլորովին սպատ է Հաւաւի Դըհատ Պէկին հեռացումով:

Ոյժ կը արուի հայ մշակոյթին, ազգային եւ եկեղեցական գոր-ծերուն, վանքը միշտ լաւ վիճակի մէջ պահել եւ դասն դարձնել կա-տարեալ ուխտատեղի հանուր Բալահոյիտի եւ ուրիշ շրջաններու առջև: Համարձակ եւ վարդապատի տօներուն ամէն կողմէն կու դան, արձակ համարձակ, ազգային այդ օրերն ուրախ դուարթ տօնե-լու, քանի որ շիւայ Հաւաւի Դըհատ Պէկը, անոր կողմէ արձակուած բոլոր սպանալիքներն ի դուր անցած են, ու գիւղը երթալով կը զօ-րանայ, զօրապաշտութիւնն առաջ կը տարուի մեծ թափով, Գոբլանի հետ ունեցած բարի գրացութիւնը հաստատ հոգի վրայ կը դրուի: Բանազնացիներ կը նշանակուին Տէրսիմ երթալ-դարու, որ Տէրսիմ-ցիներու կողմէն շատ սիրով կ'ընդունուին, որ անոնք իմանալով Հաւաւի Դըհատ Պէկի հեռացումը Հաւաւն ըրտա կերպով, տեղի սերտ յարաբերութիւն կը ստեղծուի Հաւաւի եւ Տէրսիմի մէջ: Մեկիք Մարտոն օրով կեանքի կոչուած է Հաւաւի եւ Տէրսիմի մէջ հին ա-տենէ ի վեր տեղի ունեցած բարեկամութիւնը, սպահովելով անոնց օգնութիւնը պէտք եղած ատեն: Այս, հաւանականութիւններ կան որ Հաւաւէն հեռացող Տէր Սիմոնն եղած է Տէրսիմի հիմնադիրը: Այդ շրջաններուն չէ գտնուած Հաւաւի պէս զորաւոր գիւղ մը, եւ Տէր Սիմոնի պէս մէկը, որ երեւան եկած ըլլայ:

Հաւաւցիներուն կատարած քաջագործութիւնները տարածուած են ամէն կողմ, հին ատենէն ի վեր գիւղին դուռ հայրենակութիւնը մեծ համբաւ թողած է: Հաւաւ միշտ Տէրսիմով սպաննացած է իր թշնամիներուն: Տէրսիմի ստեղծումէն ի վեր Հաւաւը քանի մը ան-գամներ, 1700 թուականներուն, ստացած է Տէրսիմի օգնութիւնը, որ խումբերով հասած են ու Հաւաւը կրցած է իր զիրքը պահել: Հաւաւը միշտ պաշարուած ունեցած է գիւղէն դուրս քրուած պէկերու կողմէն, կազմակերպուած թուրք աշխրէթապետներէն:

Պատմութիւնը կ'ըսէ որ եթէ Տէրսիմի եւ Գոբլանի պէս զօ-րաւոր պաշտպաններ չունենար Հաւաւը, պիտի չկիրար առջին զօ-րաւոր զիրք բռնել, Բալահոյիտի պէս բարբարոս ցեղախումբերու

մէջ: Եթէ չըլլար Հաւաի պէս զօրապաշտ եւ զուս հայարնակ զիւզը, ոչ Հայութիւն եւ ոչ ալ քրիստոնէութիւն կը մնար Բալահոյիտի մէջ:

Գժըզանը իր 20 զիւզերով միշտ Հաւաի կողքին կանդնած է հին դարերէ ի վեր: Օսմանեան կառավարութեան տիրապետելէն առաջ, Բալահոյիտը միշտ կուտաղաշտ եղած է, հոն բոյն դրած տեսակ տեսակ ոչ-հայ բարբարոս, զոչ աւագակներու կողմէն: Գժըզանը Օսմանեան կառավարութեան տիրապետելէն վերջ, սմանք աւերես մահմետական դարձած են, բայց միշտ Հաւաի կողքին: Հաւացիներն իրենց ազգային բարձր զիտակցութեան շնորհիւ կրցած են Գժըզանն ու Տէրսիմը իրենց զինակից պահել, որ Բալահոյիտի մէջ ամբողջ մը դարձած է, ոչ մէկ թշնամի չէ կրցած ներս խուժել: Անոր աշխարհագրական զիրքն ալ շատ զօրաւոր եղած է, որ զիւզին չորս կողմերէն տեսանելի կ'ըլլար, թռչուն մը անդամ:

Պատմուած է որ Հաւաւը պաշարուծ ունեցած ատեն տուներու մէջ զուռներ բացուած են զիւզին կուտողներուն համար, միեւնոյն ատեն զուռնէն արձակուած թշնամիներու զնգակին զոճ չերթալու: Գարերէ ի վեր տուներու մէջ զուռ բանալու սովորութիւնը պահուած է, եւ մենք տեսած էինք հին տուներու մէջ, այդ զուռներուն տեղիքը, որ զոցուած են: Պէկին զիւզէն զուռս քուռելէն յետոյ քանիցս պաշարուած է զիւզը թուրք ցեղապետներէ, աւարի տալու մարզով, որ անցած է ապարդիւն: Մեկիք Մարտոն այնքան զօրացուցած է զիւզը որ ոչ միայն թշնամիներէ վախ ու սարսափ չէ ստացած, այլ եւ սուրիչ զիւզերու օգնութեան հասած է: Բալահոյիտը ամէն տեսակ ցեղախումբերու բոյն, միշտ կոխներ տեղի ունեցած է, օղտուելով Բալուի կառավարութեան թուրքութենէն: Կուռելու անընդունակ թույլ եւ անկարող զիմպարութիւն ցոյց տուող զիւզեր, իրենց զուռութիւնը պաշտպանելու եւ պահելու համար, տարեկանով վճարուած ըրած են կարգ մը ցեղապետներու: Հաւաւէն երեք ժամ հետոյ Սարուան անուանով քիւրտ զիւզ մը օգնութիւն կը խնդրէ Մեկիք Մարտոնէն, որ պաշարուած է ճապղղջուրցի Սլօ Պէկի թուրք ցեղապետէ մը: Մեկիք Մարտոն համարաւ տարածուած է ամէն կողմ, որպէս քաջ կուռուղ: Մեկիք Մարտոն անմիջապէս օգնութեան կը հասնի. Հաւաւցի եւ Գժըզանցի երիտասարդներով, Սլօ Պէկի սարսափահար կը վախճի, երբ կը լսէ թէ իր զէմ եկողը Մեկիք Մարտոն է: Սարուանցի Մեկիք Լաման եւ Մեկիք Մարտոն կը հալածեն ու կը յաջողին Սլօ Պէկը զերի բռնել եւ տուգանք առնելով թող ապ: Այդ օրէն կը մնայ Լամայի եւ Հաւաւցիներու մէջ կայացած բարեկամութիւնը: Հաճի Դըհար Պէկի լսելով Մեկիք Մարտոնի ստած յանդուզն

քայլը, Սլօ Պէկին ամէն օգնութիւն կը խոստանայ, Հաւաւի վրայ յարձակելու եւ աւարի տալու զիւզը: Սլօ Պէկի նախ վերջնադիր մը կը զրկէ Հաւաւցիներուն որ Եթէ Մեկիք Մարտոն չյանձնէք ինձի, զիւզին վրայ պիտի յարձակիմ: Հաւաւցիներու համար հնուց ի վեր անկարելի եղած է թշնամիին մարդ յանձնել: Կը պտտախամեն որ մենք քեզի մարդ չենք յանձնէր, արշաւէ զիւզին վրայ, կամ քու զուռիդ կու տաս եւ կամ Մեկիք Մարտոնի գլուխը կը տանիս:

Սլօ Պէկի իր 40 մարդիկներով Հաւաւը կը պաշարէ Զատիկին զիւզին շարթուն, ու զիւզին անասունները՝ կիներ կը տանին դաշտ արածելու եւ բերելու: Հաճի Դըհար Պէկի՝ թէ հաց եւ թէ վառօք ու կապար կը հասցնէ Սլօ Պէկին: Եկուր տես որ Սարածանցի ցեղապետ Մեկիք Լաման ալ Սլօ Պէկը կը պաշարէ եւ չի թողուր որ աւելի օգնական կուտողներ հասնին: Պաշարումը կը տեւէ 8 օր: Հաւաւ կը ստիպուի Տէրսիմի զիմել: Անոնք անմիջապէս 40 ձիաւորներով կը հասնին Հաւաւ, առաւօտուն արեւը դեռ նոր ծագած, Սլօ Պէկի անմիջապէս փախուտի կը զիմէ զէպի Լօզմար, թաթար ըսուած զիւզերը Հաւաւէն 2 ժամ հետոյ, եւ անկարող կ'ըլլան դեպէն անցնելու: Զատիկին վերջն է, բոլոր գետերը յորգած կ'ըլլան: Տէրսիմցիներ զերի կը բռնեն Սլօ Պէկը իր 40 մարդիկներով եւ կը տանին վանք, կը յանձնեն օրուայ Առաջնորդ եպիսկոպոսին, որ եղած է շատ քաջ, յանդուգն: Ան կ'ըսէ Սլօ Պէկին. «Կարող եմ ձեր բոլորիդ ալ զուռիները կտրել: Առաջին անգամ ըլլալով պիտի ներեմ ձեզի. դացէք եւ անդամ մ'ալ Հաւաւի վրայ յարձակելու փորձ չընէք»: Եպիսկոպոսը զրամական մեծ նուէրներով կը վարձատրէ Տէրսիմցիները: Կը վարձատրէ նաև Գժըզանցիները որ վանքը պաշտպանելը յանձն առած էին:

Հաւաւ այդ զօրաւոր պաշարումէն զուռս գալէն յետոյ բոլոր ցեղապետները կը զոլուշանան Հաւաւէն. Տէրսիմցիներու օգնութեան դառն ալ մեծ սարսափ կ'ազդէ բոլորին վրայ. անկէ յետոյ Հաւաւ թէեւ կ'ունենայ յարձակումներ, բայց կ'անցնին թեթեւ: Հաւաւցիի ցեղապետները կը տարածուին ամէն կողմ, որ ալաներէ, ջեղապետներէ, պէկերէ հարածուողներ Հաւաւ կ'ապաստանէին եւ պաշտպանութիւն կը գտնէին. ոչ ոք չէր կարող անոնց զպչիլ. բաւական է որ անոնք քաղաքական յանցաւորներ չեն:

Թուրք աշիրէթապետներ երբ իրարու հետ կուռելու սկսէին, նախ պէտք էր Հաւաւի չէզոքութիւնը ապահովելին: Մեկիք Մարտոն կատարած քաջագործութիւններն ու Տէրսիմի եւ Գժըզանի հետ հաստատած բարեկամական կապերը Հաւաւը կը զնեն աւելի զօրաւոր

զիրքի մէջ, որ կը դառնան մարտիկներ կռուի դաշտ ելլելու, եւ իրենց իրաւունքը պաշտպանելու զինու զորութեամբ:

Յամանեան կառավարութեան կողմէ նախապէս տրուած այն որոշումը որ Հաւաւը զբիւրով իրենց անձնական հողը ունենալէն, կարելի պիտի ըլլար դանոնք զսպել, անցան ապարդիւն: Հաւաւը վար չէ գրած իր ըմբոստ ուղին, միշտ հայածած է պէկերը, որուն համար ամէն ջանք եւ աշխատանք թափած են դանոնք զիւղէն հեռացնելու, որ զիւղը ազատ մտայ ու զիւղին միութիւնը պահպանուի:

Հայ եկեղեցին, հայ մշակոյթը արձակ համարձակ յառաջ կը տարուի: Զինու զորութիւնը Հաւաւցիներու համար պաշտելի դարձած է, որ զպոստի, հրապարակով ցոյց տուած են այդ ուղին, չեն ենթարկուած կառավարութեան այն որոշումին որ Հայը պէտք չէ զէնք կրէ, զէնք ունենայ: Գիւղին միատարր ըլլալը օգնած է այդ հարցին մէջ, որ անոր ներքին կեանքին մասին բան չզխտնայ կառավարութիւնը: Մեղիք Մարտոն մեծ աշխատանք թափած է զիւղը կազմակերպելու եւ զնելու զայն բարձր զիրքի վրայ, որ ոչ մէկ խոցելի կէտ ունենայ, զիչէր ու ցերեկ միութիւն քարոզած է: Զէնք ունենալ, զէնք գործածել լաւ կերպով անոնց ընդունիլ տուած է, որուն վրայ պէտք է դնել իրենց յոյսը:

Այս պատուական մարզը կը մեռնի իր բնական մահով խոր ծեւրութեան մէջ: Այս մեծ մարդուն մահուան վրայ կ'ողբայ Հաւաւը զիչէր ու ցերեկ:

Կը ծագի ոռոս-թուրք պատերազմը. Հայ ժողովուրդը մեծ ահարկեամբ մէջ կ'ապրի: Պատերազմի դացող զինուորական առաջուկներ Հաւաւի մօտէն, կը նեղէ զիրենք, որ թող կը տրուի Եարիֆ Պէկին խօնախ հաստատելու Հաւաւի մէջ: Պէկը իր խօնախը կը հաստատէ զիւղին կից, որ Հաւաւցիներ զգուշանան կրակի տալու, ինչպէս որ հրկիզած էին Ասլի Պէկի խօնախը որ զիւղէն դուրս չինուած էր: Եարիֆ Պէկ զիւղին մէջ հաստատուելէ վերջ կը ջանայ թուրքեր ալ հաստատել, որ Հաւաւցիներ կ'ընդդիմանան եւ չեն թողուր որ պէկը կարողանայ իր զիրքը զօրացնել: Անոր կը հասկնան որ Հաւաւը իրբեւ սրբաւայր չէ կարող թողուլ որ օտար ցեղեր հաստատուին զիւղին մէջ, որ դարեւրէ ի վեր պահուած է այդ որոշումը: Գիւղը մէկ սիրտ մէկ հողի, կը մնայ հաստատ իր խօսքին վրայ: Պէկը անկարող կ'ըլլայ անոնց մէջ բեկում առաջ բերել եւ Հաւաւցիներու միութիւնը խորտակել ու իր խօսքը առաջ տանիլ:

Ուրիշ պէկերէ թելապրուած, Հաւաւցիներու մէջ պառակտում յառաջ բերելու համար, կ'որոշէ Հաւաւցիներու մէջ Բողոքականու-

թիւն հաստատել: Խորհրդէն Մարտիրոս Զուլեհան անունով նոր Բողոքական օծուած պատուելի մը կը բերէ Հաւաւ: Խօնախին մէջ հրաւիրելով տանեակ մը Հաւաւցի բանիմաց մարդիկներ, անոնց ներկայացնելով իր հիւրը: Պատուելի Մարտիրոս բացատրութիւն կու տայ Բողոքականութեան մասին որ Խորհրդի մէջ նոր մուտք գործած է եւ շատ առաջ կ'երթայ: Պէկին արտօնութեամբ կը փափաքիմ Հաւաւի մէջ ալ հաստատել Բողոքականութիւն, որ դուք Քրիստոնէութեան մասին ընդարձակ տեղեկութիւն ստանաք, որ ձեզի բացատրուած չէ, ու դադարի պահուած է ձեզմէ, ու դուք լսելէ յետոյ կատարեալ Քրիստոնեայ կը դառնաք, լաւ կերպով հասկնալով եւ ուսումնասիրելով Քրիստոսի ճշմարիտ վարդապետութիւնը: Իր խօսքերը բոլորն ալ ուշի ուշով մտիկ կ'ընեն ատանց որեւէ հարցումներ ընելու:

Մարտիրոս Խլըրաչեան (Պօրտո Մրտոն) 110 տարեկան, որուն կատարեալ եկեղեցասէր եւ ճշմարիտ հաւատացող ըլլալը զիտցուած էր բոլորի կողմէն, հուժկու, յազթանդամ, քաջ եւ անվախ մէկը, որ պտըտած ատեն զետինը զողացնող հսկայ մը եղած է, Պէկին խօնախին ալ դրացի, կը հարցնէ. — Մարտիրոս եղբայր, Բողոքականութիւնը մաս, պատարազ ալ ունի՞: Մարտիրոս եղբայր կը պատասխանէ, — ոչ: Պօրտո Մրտոն մէկէն ինքնիրմէն ելած կը գոռայ բարձրաձայն. — «Պէկ, պէկ, պու փրօտ տետուդն իսլամտան տհա... Ո՛չ մաս ունին, ոչ պատարազ, եկեր են մեզի քրիստոնէութիւն կը քարոզեն, շուտ զիւղէն դուրս: Մարտիրոս եղբայր այդ զիչէր կը հեռանայ Հաւաւէն: Ո՛չ Հայր Քալանթար ո՛չ Մարտիրոս եղբայր չեն կրցած Լուսաւորչական Հաւաւցիին միտքը փոխել, ու մնացած են մինչեւ վերջ Լուսաւորչական:

Պէկին դէմ վաղուց ի վեր ստեղծուած պայքարը աւելի կը սաստկանայ, որ կը ջանար Հաւաւի մէջ Բողոքականութիւն ստեղծել: Ամբողջ զիւղը օտքի կը կենայ եւ հրապարակով պէկին դէմ հալածանք կը ստեղծուի: Պէկը զիւղէն դուրս քշելու խօսքերը ամբողջ Բաւաւոյիտի մէջ կը տարածուի: Մեղիքը եւ Տէր Թորոս քահանան եկեղեցիին մէջ իրիկուան ժողով կը գումարեն, եւ ժողովականներուն կը բացատրեն պէկին կողմէ անուած քայլը: Մեղիքը կը պատուիրէ զիւղացիներուն որ պէկին ունեցած եւ վայելած իրաւասութիւնները պէտք է ջնջել, նոյն վճարմամբ կ'ըստ աղին ծառայութիւն մը: Արդիւն պէկին ձեռքուն արածիլը զիւղին պարտէզներուն մէջ: Անտառէն պէկին փայտ բերելու ոչ մէկ փորձ, ինչպէս որ կ'ընէին աշունէ աշուն: Ժողովին յաջորդող առաջին աշնան Հաւաւցի կը մերժէ պէ-

կին համար անտառն փայտ բերել, պէկը կը հրամայէ երկու ծառաներուն որ երթան կանչին զիւզին զլիտուն եւ լեռնէն եկող փայտաւորներուն բեռնուցած աւանակները ուղղակի խօնախ բերեն: Ծառաները առաջին անգամ կը յարձակին Տօլպաշ Մեկընին վրայ, ամենէն լաւ փայտերով բեռնուած անոր աւանակը դանկրով: Մեկըն կը դիմազդէ եւ կռուի կը սկսի. կռուին մօտիկ զիւզացիները օդնութեան կը հասնին եւ ծառաներուն աղուոր ծեծ մը կը քաշեն. բան չեն յանձներ: Ծառաները արիւնլուայ խօնախ կ'երթան ձեռնունայն: Ծարիֆ Պէկը կը բորբոքի, կը կատարի, տեսնելով իր ծառաներուն վիճակը: Հաւաւցիներու բարեկամ Կօլարազցի ձըմօն կը զրկէ Տօլպաշ Մեկընը խօնախ բերելու որ պէկէն ներդուրթիւն խնդրէ: ձըմօն կ'ըսէ պէկին. «Կ'երթամ Մեկընը կը բերեմ, Հաւաւցիները զիւ չեն մերժեր, պայմանաւ որ չձեռնու, որուն հետեւանքը կրնայ շատ ազտաբեր ըլլալ քեզի»:

Մեկընը խօնախ բերուելէ յետոյ վայրենիօրէն կը ձեռուի, կէս մեռած դետին կ'իյնայ, ուժասպառ տուն կը տարուի, թարմ մորթուած մորթով կը փաթթուի, մահուրնէ կ'ազատուի: Պէկին այդ բարբարոսութիւնը երբ կը տարածուի զիւզին մէջ, ամբողջ բորբոքած՝ խօնախը կը պաշարեն եւ կը սպառնան ներս մտնել, իրենց վրէժը առնելու: Մեկընը շատ զժուարութեամբ կը յաջողի խուժանի ներս յարձակելը արդիւնէ, որոնք կը պոսան, կը կանչեն, «Պէտք է Ծարիֆ Պէկը դուն հեռանաս զիւզէն», խօնախի րնակիչները ահ ու սարսափի մատնելով: Իրիկուան ժողով կը դուժարեն եկեղեցին, որոշում կը արուի ամէն գնով պէկը հեռացնել զիւզէն:

Մեկընը Չափուուն եւ իր երկու օդնականները՝ Աւետիս Բաշալեան եւ Դաւիթ Արզումանեան, երեքով միասին առտու կանուի ձեռք կ'առնեն Տիգրանակերտի ձամբան, բողբոջազիր ներկայացնելու վախ փաշային, նկարադրուած Ծարիֆ Պէկի կատարած բոլոր բարբարոսութիւնները եւ Մեկընի անդթօրէն ձեռելը, մեռցնելու աստիճան: Վալի փաշան ըլլալով շատ բարի անձնաւորութիւն մը, նկատի կ'առնէ իրեն տրուած աղերսագիրը, խոստում կու տայ որ իր կարելին պիտի ընէ պէկը զիւզէն հեռացնելու: Կը թելազդէ Մեկընին, որ իր ներկայութեան զիւզէն ծանօթ սկանաւոր թուրք մը բերէ Տիգրանակերտ, որ իր ներկայութեամբ հաստատէ բողբոջազիրն մէջ գրուած բոլոր այդ բարբարոսութիւններուն գործուած ըլլալը պէկին կողմէն:

Մեկընը Չափուուն կը տանի Հաւաւի հողին կից Կօլարաք զիւզացի Հաճի Պայրախտարը, Գիւղանցի ցեղապետ եւ Հաւաւի բարեկամ, որը կը հաստատէ բողբոջազիրն մէջ յիշուած բոլոր բռնութիւն-

ները կատարուած՝ Ծարիֆ Պէկին կողմէն: Հաճի Պայրախտար ոչ միայն վկայած է ի նպաստ Հաւաւցիներուն, այլ եւ 500 օսմանեան ոսկի տուած է առանց մուրհակի եւ առանց տոկոսի, որպէսզի պէկը հեռացնեն Հաւաւէն, որուն ներկայութիւնը Հաւաւի մէջ պտտիտ եւ պատուհաս դարձած էր Գիւղանցիներուն համար այ: Հաճի Պայրախտարի արտաքինը վալի փաշայի վրայ մեծ ազդեցութիւն կը թողու, տեսնելով անոր պաշտօնական տարազը, զինուորական նշանները Օսմանեան կառավարութեան կողմէն վարձատրուած, սուսու-թուրք պատերազմի ատեն կատարած քաջութիւններուն համար: Հաճի Պայրախտարի վկայութիւնը զազանի կը պահուի: Վալի դատարան կը կանչէ Ծարիֆ Պէկը Տիգրանակերտի մէջ: Մեկընը ներկայութեամբ կը կարգայ բողբոջազիրն մէջ յիշուած բարբարոսութիւնները, կատարուած իր կողմէն: Ծարիֆ Պէկը կ'ուրանայ, վալի փաշան անոր կը հասկցնէ որ ուրիշներու կողմէն ալ հաստատուած է, որ դուն պատիժ եւ պատուհաս դարձած ես խաղաղ ժողովուրդին զլիտուն: Քու բոլոր ըրածներդ դէմ են կառավարութեան, դուն պէտք է որ հեռանաս Հաւաւէն, քու խօնախը պէտք է քանդուի. այլ է իմ հրամանս, կ'ընէ վալի փաշան:

Ծարիֆ Պէկը դէմ արուած վճիռը կը յայտարարուի ամէն կողմ, Բալահովիտի, Չարսանճագի եւ Խարբերգի պէկերը թունդ կ'ըլլեն, Հաւաւցիներու կողմէն առնուած զօրաւոր քայլերը լսելով: Բոլոր պէկերու կողմէն աջակցութիւն կը խոստացուի Ծարիֆ Պէկին: Տիգրանակերտէն Խարբերգը, Պոլիս զիմում կը կատարուի Ծարիֆ Պէկի կողմէ իր դէմ արուած որոշումը բեկանելու, որ կ'անցնի սպարդիւն: Վճիռը կը մնայ վճիռ՝ որ Ծարիֆ Պէկը պէտք է հեռանայ Հաւաւէն: Տիգրանակերտի վալին հրամանագիր կը զրկէ Ծարիֆ Պէկին որ 6 ամիսէն պէտք է հեռանայ Հաւաւէն իր պարագաներով, հրօլարտակ մ'ալ Մեկընը Չափուունին որ Ծարիֆ Պէկը միայն 6 ամիս կրնայ մնալ Հաւաւի մէջ, որմէ յետոյ դուք իրաւունք ունիք զայն դուրս քշելու: Բալահովիտի եւ իր շրջաններուն մէջ անուն ձգած Ծարիֆ Պէկը կայծ ու կրակ կը կտրի, աջին ձախէն սպառնալիքներու տարափով կը սպառնայ Հաւաւցիներուն որ պիտի չհեռանայ: Պէկե-րու, Աղաներու, ազգեցիկ ցեղապետներու կողմէ կզած միջոցառ-թիւնները պէկը զիւզ մնալու համար, կ'անցնին ապարդիւն: Քաջ եւ անվախ Հաւաւցի կը մնայ հաստատ, ոչ ոքէ վախնալով: Պէկը պէտք է հեռանայ Հաւաւէն, պատրաստ զիմադրուելու անոր բոլոր յար-ձակումներուն:

Պէկին քով ծառայող Կօլարազցի ձըմօն օրը օրին պէկին չար

ժողովուրդները կը հասցնէ Հաճի Պայրախտարին: Ան ալ իր կարգին Մելիք Չափուսին կը հասկցնէ որ պէկը մելիքը սպաննելու փորձը կ'ընէ: Խորհուրդ կը տրուի Մելիքին եւ իր երկու ընկերներուն որ զիւզէն զուրս ճամբորդած ատեննին շատ զգուշ ըլլան, Հաւացիներ զիւզէն զուրս զէնքով ճամբորդելու իրաւունք չունէին ցերեկ ատեն: Հաճի Պայրախտարի թիւղորանքով Տէրսիմէն երեք երիտասարդներ Հաւա կը բերուին վճարուձով, քաջ Վարդան Պոյաձեանի միջոցով որ այն ատենուայ բանազնացն էր Հաւաի եւ Տէրսիմի: Երեք Տէրսիմիներու բերուելը կը մնայ գաղտնիք: Մելիքը, իր երկու օգնականները եւ վանքին Առաջնորդն ու Վարդանը միայն կը գիտնան: Երեք զինուած Տէրսիմիները կը մնան զիւզին շրջակաները շարթուան հինգ օրերը, Ծարաթ եւ Կիրակի կ'երթան Տէրսիմ, որ Բ-ձ ժամ քալելով հեռու է Հաւաէն: Անոնց զիւզերէլ վանքին մէջ բոլորովին դադանի կը մնայ: Ոչ ոք չէր գիտեր թէ ո՞վքեր են այս երեք երիտասարդները, որոնք երբեմն երբեմն կ'երեւին զիւզին շրջակաները: Պէկը ինքն ալ կը կասկածի, անոնց մշտատես երեւումը տեսնելով: Ոչ ոք չի համարձակիր անոնց ինքնութիւնը հարց ու փորձ ընելու: Գիւզին մէջ շատ մը Թուրքեր, Քիւրտեր առեւտուրով կու գային, անոնք կը մնային մինչեւ պէկին զիւզէն հեռանալու օրը:

Հոկտեմբեր ամսուն վերջն է: Պէկը զիւզէն հեռանալու պայմանաժամէն երկու շաբաթ առաջ հեռացած է խօնախէն: Ընտանեկան բոլոր պարագաները, նաժիշաններն ու ծառաները միայնակ թողլով խօնախը: Միեւնոյն ատեն խտիւ պատուէր կու տայ որ ըլլայ հեռանան խօնախէն, ատանց իր դալուն: Ծարիֆ Պէկի հեռացած է զիւզէն խօնախը կազմակերպելու Քէտո Ապտուլլա Պէկի հետ, զեմադրելու փորձ կատարելու Հաւացիներու զէմ, եթէ անոնք բռնի միջոցով զուրս քշեն իր պարագաները խօնախէն: Վերջին օրն է, ամբողջ զիւզը, մեծով պղտիկով, կին, աղջիկ, տղայ, մարդ զինուած հրացանով, թուրով, գանակով, բիրերով, կացիներով, տապարներով, քաջ զինուորի պէս պատրաստ կեցած, Ծարիֆ Պէկի բերած մարդոց զէմ կուտելու: Նախորդ իրիկուան եկեղեցոյ մէջ զուժարուած ժողովին Մելիքը ճառ մը խօսած է եւ ըսած է. «Եթէ վախնանք, չյաջողինք վաղը պէկը զուրս քշելու խօնախէն, ան կը մնայ զիւզին մէջ յաւիտեան. այսպէս ըսուած է վալի փաշային կողմէն: Գիւզացիներ, վաղը կամ իմ զիւզիս պէտք է փոռի խօնախին առջեւ եւ կամ պէտք է Ծարիֆ Պէկը զուրս քշուի զիւզէն»: Մելիք Չափուսին այս հրաման խօսքերը կը լացնեն բոլոր ժողովականները:

Առաւօտուն կանուխ, լուր տունոյր եկած է, Թուրք, Քիւրտ, Չաղա, Բօշա, տղաներ, պէկեր, աղղեցիկ Թուրքեր, ցեղապետներ բոլորն ալ զերագանցօրէն հետաքրքրուած, Ծարիֆ Պէկի եւ Հաւացիներու մէջ մտած պայքարին, սրուն վերջին օրն է, որ յայտնի պիտի ըլլայ թէ ո՞վ յաղթող զուրս պիտի գայ. Ծարիֆ Պէկի թէ Մելիք Չափուսն: Ոչ ոք չի հաւատար որ Հաւացին պիտի յաջողի բռնի ուժով զուրս քշելու պէկ մը, ան ալ 40 զիւզերու տէր բռնապետ, արիւնարբու պէկ մը, իր կալուածքէն: Սակայն պէկին սիրտը վախով բռնուած էր տեսնելով Տէրսիմի 3 զինուած երիտասարդներու երեւումը Հաւաի մէջ, որ Հաւացին կարող է Տէրսիմէն ուժեր բերել իր զէմ:

Մելիքը կը կարգայ բարձրաձայն վալի փաշային հրովարտակը որ անլեւի կը դառնայ խօնախին մէջ բնակողներուն. հանդիսականները իրար անցած, մէկ մը Մելիքին, մէկ մը խօնախին մէջ բնակողներուն վրայ սեւեռելով իրենց նայուածքները, կը սպասեն թէ ի՞նչ պիտի պատահի: Հանդիսականներուն թիւը երթալով կը շատնայ: Մելիքը կը ձայնէ խօնախին բնակիչներուն որ իրենց վերջին օրն է, պէտք է վար իջնին իրենց կահ-կարասիներով. նորէն անպատասխան: Ոտեան Եղսիկ հաջուկը խօնախին անմիջական դրացին: Եղսիկ հաջուկը վեր կ'ելլէ, եւ կ'ըսէ մեծ խանրմին եւ բոլորին, որ ձեր վերջին օրն է, այսօր, դուք չէք կրնար հոս մնալ, որոշուած է ձեզ բռնի կերպով զուրս քշելու խօնախէն, սրտաբեկ պատմելով անոնց բոլորին որ անցեալ երեկոյ ժողովին մէջ, Մելիքը այնպիսի ճառ մը խօսեցաւ որ բոլոր ժողովականները լացին, ձեր հոս մնալը անկարելի է: Մեծ խանրմը կը պատասխանէ որ իրենք պիտի մնան մինչեւ պէկին դալուն: Եղսիկ հաջուկին համոզումները կ'անցնին ապարդիւն: Մելիքը կը հրամայէ երիտասարդներուն որ խօնախին վարի պարկի պատշտամի սրահները թողունեն: Կացինի հարեւաններով հապտահուած լեղապատտ. «Մելիք, Մելիք, Աստուծոյ սիրոյն մեզի պատահութիւն տուր որ վար իջնենք խօնախէն»: Երկու ժամուան մէջ բոլոր կահ-կարասիները վար կը բերուին, ջորիններու եւ ձիերու վրայ բեռնաւորուած, Պէկին բոլոր պարագաները լալով ողբալով կը հեռանան Հաւաէն, խոր սպաւորութիւն ձգելով բոլոր հանդիսականներուն վրայ:

Քաջ եւ անվախ Հաւացին կարեւորութիւն չտալով պէկին բոլոր սպանալիքներուն, հրապարակով զուրս կը նետէ պէկին պարագաները ատանց իրեն ներկայութեան: Հաւացիներ արբեցած իրենց

տարած յաղթանակէն, օգը կը թնդացնեն իրենց ուրախութիւններով, կը սկսին երգել, պարել եւ պոռալ, կանչել: «Շարիֆ Պէկ, դո՛ւրս, դո՛ւրս: Տօլդաջ Մելքոնին ոչխարի մօրթով փաթթող, ո՞ւր են քու բոլոր սպանալիքներդ, ո՞ւր են քու պատարաստած խուճրկը-
շաւաւի վրայ յարձակելու եւ թալանի տուող ուժերդ. ո՞ւր են Հաւաւը կործանելու մարմաջէն բնուողները, ինչո՞ւ չեկան, ո՞ւր մնացին, ո՞ր ծակը մտած են»: Առանց պէկի ներկայութեան դուրս կը նետուին իր ընտանիքը ու բոլոր պարազանները: Հաւաւցին ոչ ոքէ վախ չունի: Այս խօսքերը կ'արտասանուին բարձրաձայն: Հանդիսա-
կաններէն ոչ մէկ ձայն, այն վախով որ ձայն հանողը պիտի գնդա-
կահարուի տեղն ու տեղը: Գիւղը կատարեալ բանակատեղիի մը վե-
րածուած է. կ'ըրաճիւթի կաթսայի պէս կ'եռայ: Կին, մարդ, աղայ, աջըրիկ, մեծ ու պզտիկ բոլորն ալ դործի գրուած, կացիներով, տա-
պարներով, բիրերով, սղոցներով թափուած խօնախին վրայ՝ քան-
դուսի գործը յառաջ կը տանին բոլորի ներկայութեամբ: Հանդիսա-
կանները տկանատես օրուայ կատարուածներուն, տրտում տխուր կը հետանան Հաւաւէն:

Մէկ օրուան մէջ խօնախը գետինի կը հաւասարեցուի, աննող աննողի, աննող տանողի, ոչ ոք անմասն չի մնար կտոր մը իր տու-
նը ամենու իրբու յեշատակ: Որմէ յետոյ բոլոր Հաւաւցիներ ուրախ զուարթ կ'երգեն, կը պարեն գուարճացած իրենց տարած յաղթանա-
կէն, որ զիւղը մաքրուած է մեծ ու պզտիկ պէկերէ, կոշտ ու կոպիտ ծառաներէ: Իրիկուան սեղան կը տրուի Մելիքին կողմէն ամբողջ 200
հոգիէ: Եղ մը կը մօրթուի, կը հիւրասիրուին Գժըզանցի բոլոր 20
գիւղերէն եկողներն ու Սարուճանցի Մելիք Լամային թոռները, ու-
րոնք ի յարգանս իրենց մեծ հօր եկած էին զինուած, իրենց ծառա-
յութիւնը մատուցանելու իրենց դարաւոր բարեկամ Հաւաւցիին: Հաւաւցին հպարտ կը զղայ որ Սարուճանը չէ մոռցած իր մասնակ-
ցութիւնը բերելու Հաւաւին: Մելիք Լաման Սարուճանի քերտ ցե-
ղապետը 1700 թուականներուն եկած է իր քաջերով Հաւաւի օգնու-
թեան, երբ զիւղը պաշարուած էր թուրք ցեղապետէ մը, Հաւաւէն դուրս քշուած Հաճի Դրմար Պէկի զրգումով: Լաման կը զարնուի
կռիւին մէջ, իր բաղձանքին համաձայն, կը թաղուի Հաւաւի հողին վրայ
Սօշմաթ գիւղի սահմանին մօտ, որուն գերեզմանը կը ձանչ-
նայինք Կօնէ Լամա անունով, որ մնացած էր մինչեւ մեր օրերը: Մելիք
Չափզունի թոռները՝ Ալեքսան եւ Յարութիւն Սարգիսեան Լոս Անճէլէս,
Քալիֆօրնիա, իսկ Պեարո Չափզունեան Փրեզիտէնս Բօս Այլընտ կը
բնակին Մելիքի հրամանով բոլոր սեղանակցները

ոտքի կը կանգնին ի յարգանս վալի փաշային, որ նկատի առնելով
Հաւաւցիներու արդար բողբոջողիւր իրբու ողջամիտ կատարելիչ
նահանդին, չէ վրացած Շարիֆ Պէկի կողմէն կատարուած բարբարո-
սութիւնները նկատի առնելու եւ զայն զիւղէն դուրս քշելու:

Մելիքը յանուն զիւղացիներու՝ բարի դալուստ մաղթելով բո-
լոր օտար հիւրերուն, շնորհակալութիւն կը յայտնէ անոնց որ այս-
պիսի նեղ օր մը Հաւաւի համար եկած են, իրբու ճշմարիտ բարեկամ
մեր կողքին կանգնելու: Մելիքը խորին շնորհակալութիւն կը յայտ-
նէ իր երկու քաջ եւ անվախ ընկերներուն, յանձին Ա. Փաշայեանի,
Դ. Արզումանեանի, որոնք զիւղը ու ցերեկ քալելով՝ Տիգրանակեր-
տի, Սարբերգի ճանապարհներն զացին եւ եկան առանց յոգնարեկե-
լու, կըրցան զուրի հանել իրենց վրայ դրուած այնքան դժուարին
գործը: Եահիլ յաղթանակը: Մելիքը իր խորին շնորհակալութիւն-
ները կը յայտնէ իր սիրելի զիւղացիներուն որ մէկ մարդու պէս
կանգնեցան իր կողքին քաջ զինուորի մը պէս մեռնելու գնով, Եա-
րիֆ Պէկի պէս արիւնարբու բարբարոս մը զիւղէն դուրս քշելու:
Մելիք Չափզուն Սարբերգի Ծովը զիւղէն Հաւաւ սպաստանած է
զինք հալածող պէկի ձեռքէն: Չէ՞ որ բոլոր պէկերու, աղաներու
հալածանքէն փախչող Հայեր Հաւաւ կ'սպաստանէին իրենց զիւղու-
թիւնն ապահովելու, որոնց ոչ ոք չէր կարող դպչել:

Շարիֆ Պէկ Հաւաւէն դուրս քշուելէ յետոյ խայտառկաբար,
կ'ուզէ անոնցմէ վրէժ տանել. կ'որոշէ Հաւաւցիները ահարկելու, ըս-
պանութիւններ կատարել: Իր ծառաները՝ սպաննել կը փորձէին պէ-
կին կողքին կանգնող միակ Հաւաւցին, սպանութիւնն Հաւաւցիներ-
ուն վերադրելու մտքով. զիւղը ատեն մարդն արտը ջրելու պահուն
յարձակման կ'ենթարկուի, որն ինքզինք ջուրի պանտին մէջ նետե-
լով կ'ազատի իրեն արձակուած հրացանի գնդակներէն: Այդ անյա-
ջող սպանութենէն յետոյ քանի մը օր վերջ պէկին ծառաները, որոն
չունեիրու պէս կը յարձակին Մարտիրոս Թաշճեանի վրայ զիւղը ա-
տեն ջաղացքին մէջ եւ կը սպաննեն զայն: Գործուած ոճրերն լուրը
կը տարածուի ամբողջ Բալահովիտի մէջ որ պէկը սկսած է վրէժ
առնել Հաւաւցիներէն: Ամբողջ զիւղը սուղ է մտած, կ'ողբայ կա-
տարուած սպանութեան վրայ, անոր ճ որբերուն եւ կնոջ վրայ: Ա-
տենին արիւնարբու պէկը տարինբով Հաւաւցիներու զլխուն պա-
տիժ պատուհաս գառնայլ վերջ, հիմա ալ սկսած է անմեղներու ա-
բիւն թափել:

Մելիքն ու իր ընկերները խորհուրդ մը կը կազմեն վանքին
մէջ, Առաջնորդի գլխաւորութեամբ, Յովհաննէս Մսրբեանի, Յով.

Գուրաճևանի եւ քաջ Վարդան Պոյաճևանի ներկայութեամբ: 7 Հո-
գինոց խորհուրդը նկատի կ'առնէ Թաշճևանի սպանութիւնն ու զիւ-
րին մէջ տիրոջ սարսափը: Միջոց մը կը խորհին բարբարոս պէկին
կողմէն եղած սպանութեան առջեւն առնելու: Մեկիքը կ'ըսէ. «Եթէ
մենք առջեւն առած չըլլայինք Տօլղաչ Մելքոնին զլսուուն եկածին,
տէր ու տիրական չգառնայինք անոր, այդ բռնապետ արեւնարբուն
գիւղացիներուն շատին մօրթը պիտի քերթէր: Այս խորհուրդը պէտք
է միջոց մը խորհի եւ կտրուի ճամբայ մը, այլապէս այդ բռնապետը
պիտի չզսպուի. մենք պիտի տեսնենք որ վաղը, միւս օր, միւս շաբ-
թուն ուրիշներ ալ զո՛հ պիտի երթան, տուներու, այգիներու, պար-
տէզներու եւ դաշտերու, ճամբաներու վրայ: Ամբողջ զելզը սար-
սափի մատնուած է, ամէն ոք իր մասը կը տեսնէ: Մենք երեքս ալ
մեր պարտականութիւնը կտտարեցինք, քաջարար ամէն միջոցի գի-
մելով, որ յաջողեցանք զիւզէն դուրս հանելու այդ բռնապետ արեւ-
նարբուն. հիմա գործը մնացած է մեր զիւզին երեք քաջներուն, որ
կտրուի եւ գորաւոր քայլ մը առնեն այդ բարբարոսին դէմ, եթէ ոչ
ան պիտի մնայ անզսպելի: Գաս, դատաստան, օրէնք, կառավարու-
թիւն պիտի չկրնան այդ հրէշը կարգի բերել: Անոր հետ գնդակով
պէտք է խօսիլ»: Առաջնորդ Հայրը երբ գնդակի խօսքը կը լսէ, կը
սարսափի: Այո՛, գնդակ, Սրբազան Հայր: Հաւաւն ամբողջ դարերու
ընթացքին իր գոյութիւնը պահելու եւ պաշտպանելու համար միշտ
սուրով եւ գնդակով խօսած է իր թշնամիներուն: Ի՞նչ նպատակով
կանդնեցուցած է այդ բոլորը. որո՞ւ համար, որ տիտանի մը պէս
բազմած է գաշտին մէջտեղը եւ կեցած է հազարաւոր տարիներ. ոչ
ոք չէ յանդգնած քանդել ոչ բլուրն ու ոչ ալ Հաւաւը: Փաշալեան եւ
Արղումանեան մէկէն ստրի կանպնած՝ կ'ըսեն. «Մեկիք, ատենն է
մեզի որ նորէն հրատարակ իջնենք»: Երեք քաջերը կ'ընդմիջեն. —
Մեզի կը մնայ Շարիֆ Պէկը զսպել. ո՞ր մէկ օրուան համար մենք
ծնած ենք, մեզի համար մահ է թողուլ այդ բարբարոսին որ մեզի
սպարեզ կարգայ: Երեք քաջերը կ'անցնին գործի: Սրբազան Հայրը
իր «Պահպանիչ»ը կը կարգայ:

Բոլորն ալ մէկ բերան պայման կը գնեն որ տրուած սրտումը
պիտի մնայ շատ գաղտնի, այս սենեակէն դուրս չելլելու պայմա-
նաւ. իսկապէս այդ օրուան մէջ արուած սրտումները կը մնան
գաղտնի մինչեւ վերջ: Գիւղին երեք քաջերը շատ ուրախութեամբ
յանձնառու խօսքերով կը լծուին գործի. մանաւանդ քաջ Վարդանը,
որ քաջ Վարդան անունով մեռաւ:

Երկու շաբաթ վերջ Շարիֆ Պէկի տմենանշտնաւոր ծառան կը

սպաննուի Մուրաա դետի եղբրքին, Վարդենիկ զիւզի գաշտին մէջ
քաղած պահուն: Վարդենիկը Հայու զիւզ եղած է ժամանակին, Շա-
րիֆ Պէկի նորահաստատ թիւ զիւզի խօսախէն երկու ժամ հետու քա-
րելով: Վարդենիկի աղաներն ունկնդրութեան կը կանչուին Շարիֆ
Պէկի խօնարը, Բարսէիմ Սալիլի մասին բացատրութիւն տալու, որ
իրենց հողին վրայ սպաննուած է: Աղաները կը պատմեն պէկին որ
գիւղին լուծք վարդները երեք զինուած մարդիկներ նշմարած են շա-
բաթ մը առաջ, գաշտին ճամբաներուն վրայ, հայկական տարազով:
Պէկը կը ստիպէ աղաներուն որ դան դատարանին առջեւ եւ պատմեն
իրենց լսածները: Աղաները կը մերժեն եւ կ'ըսեն. «Պէկ, պէկ, ո՞վ
կարող է զալ Հաւաւցիներու դէմ վկայութիւն տալ: Ատոնք մեզ ալ
կը սպաննեն, քեզ ալ, զդոյշ, զդոյշ: Երբ անոնք կու դան քու քթիդ
առջեւ ծառայ կը սպաննեն, ոչ թէ ծպտուած, այլ իրենց իսկական
տարազով: Հեռու պէտք է մնալ անոնցմէ»:

Պէկը անկարելի գտնելով աղաները քաղաք տանելու, կը պաա-
ուրէք անոնց որ ոչ ոքի բան չխօսին: Շարիֆ Պէկ այդ օրէն կը ըզ-
դուշանայ Հաւաւցիներ սպաննել տալու: Շարիֆ Պէկի եւ Վարդե-
նիկի աղաներուն մէջ տեղի ունեցած խօսակցութիւնները նորէն կօ-
դարակցի ձըմօին միջոցով Մելքին տկանջը կ'իյնայ, բայց շտիա-
զանց գաղտնի կը պահուի: Պէկը իսպառ կը հրամարի սպանցիներ
սպաննելու սրտումէն, ազդուելով իր ծառային սպանութենէն:
Կորդեզի ուրիշ կերպ մը Հաւաւցիներուն մտաւորու: Օգտուելով
Հաւաւի դարաւոր թշնամի եւ անոր մօտ եղող Քիւրում գիւղացի գող
աւազակներէն, զանոնք կը միամտէ Հաւաւցիներուն նկղութիւն տա-
լու, յարձակիլ անոնց վրայ, գողնալ եւ տանիլ անոնցմէ ինչ որ կա-
րելի է, առանց սպանութիւն կատարելու: Որպէսզի Հաւաւցիներ յու-
սահատին եւ զգան պէկին լացակայութիւնը: Սակայն Հաւաւցիները
նախամեծար կը համարեն պէկին դուրս քշուիլը զիւզէն, անտանելի
գտնելով անոր գերի գառնալը:

Բոլոր զիւզը զինուած, քաջարար կը դիմադրեն իրենց վրայ
յարձակում գործողներու: Ժողովներ կը դումարեն, ազատ համար-
ձակ երեկոնները եկեղեցիին մէջ, սրտումներ կու տան զէնքի ուժով
իրենց իրաւունքները պաշտպանելու: Ժողովի երեկոններուն եկեղե-
ցիին զանգալը հնչեցնել կու տան, որուն զօղանջումէն երկու ժամ
հեռաւորութեամբ զիւզեր նոյնիսկ կը հասկնան որ Հաւաւը ժողով
ուրի: Գիւղին քերտ նախորճի Աւտօին երբ հարցումներ կ'ըլլան զը-
րացի թուրք զիւղացիներէն. «Ինչո՞ւ երբեմն զանգալը այդպէս զօ-

բաւոր կը զօղանջէ»։ Կը պատասխանէ որ զիւրը շատ կարեւոր ֆոն-
ֆերանս կ'ունենայ :

Այդ շրջաններուն Պոլիսէն զիւր կը վերադառնայ Պ. Համ-
բարձու՛մ Կարեան, պատրաստուած ծրագրով, զիւրը աւելի զօրացը-
նելու, զնելով զայն լաւ կազմակերպուած վիճակի մէջ, ինք Պոլիս
եղած միջոցին միշտ նամակներ ստացած է որ զիւրը զօրաւոր ճըն-
չումի ենթարկուած է պէկի կողմէն հրահրուած զոգերէ եւ աւազակ-
ներէ : Իր առաջին գործը կ'ըլլայ Ազգային Ընկերութեան հիմքը զնել
5 անձերով. — Հ. Կարեան, Տէր Թորոս, Օսան Վարժապետ, Ոսկեան,
Քաջ Վարդան Պոյաճեան եւ Մարգիս Մալիկեան : Այս հինգ անձերը
թէ՛ Ազգային Ընկերութեան հիմնադիր եւ թէ՛ Կեդրոնական Մարմին
կ'անցնին գործի, ամէն շաբաթ ընելով իրենց ժողովները շատ
զազանի : Որմէ յետոյ զիւրին ընտրեալ գասակարդէն 40 երիտա-
սարդներու հետ կ'ունենան ժողով, յայտնելով էութիւնը տիրող կա-
ցութեան, կը յայտնեն իրենց գաղափարը, որ շատ սիրով կ'ընդուն-
ուի բոլոր ներկաներէն : Կարեանի կողմէ կը կարգացուի պարզ ծրա-
գիր մը, որ ժողովի եկողները պիտի ընդունուին պարզ անդամներ
նորակազմ ընկերութեան եւ պիտի ենթարկուին վերին մարմին հրա-
մաններուն, պիտի ունենան ժողով ամէն ամիս, երբեմն երկու ան-
գամ : Քաջ Վարդան ընդհանուր հրամանատար՝ անոնց զէնք գործա-
ծելու եւ զինավարժութեան դասեր տալու :

Կը հաստատուի խմբական դրութիւն ճական հոգիով, որոնք
յանձնառու պիտի ըլլան ամէն զիւրը շրջան ընել զիւրին շուրջ : Գո-
ղերու եւ աւազակներու յարձակումներուն դէմ, քաղաք եկողներուն
դէմ երթալ, ջրուորներուն պաշտպանութեան նայիլ :

Փաստարան Կարապետ Էֆէնտի մահուանէ յետոյ Հաւաւի
Թշնամիները, զոգեր եւ աւազակներ, կազմակերպուած Եարիֆ Պէ-
կէն, նոր յարձակումներու կը սկսին Հաւաւցիներուն դէմ, անոնց
մահացու հարուածներ տարով, որոնք ոչ միայն Թուրքերու բնակու-
մը արդիւրած են զիւրին մէջ, այլև պէկեր անգամ դուրս քշած են :
Հաւաւի առաջին պէկէն սկսեալ մինչև Եարիֆ Պէկ շին կրցած դէմ
երթալ այդ որոշումին : Անոնց դէմ առնուած բոլոր օրինական եւ
բռնապետական միջոցներ ապարդիւն անցած են : Օսմանեան կառա-
վարութեան տիրապետութեան օրուան գրուած որոշումին կառչած
են Հաւաւցիներ հաստատուն կերպով, որ եկող եւ գացող կառավա-
րութիւններ անգամ դամուած մնացած են, ու չեն կրցած ի նպաստ
պէկերուն որեւէ փոփոխում ընել : Որ Հաւաւի հողերուն վրայ Թուր-
քեր բնակեցնելով անոնց մօրայր կոտորել : Եարիֆ Պէկ խորաման-

կութիւն մը կը խորհի, Հաւաւի հողերուն սահմանակից Փարամու-
թուրք զիւրի աղային կը ծախէ Հաւաւի հողերուն վրայ հաստատ-
ուած, գարեթէ ի վեր Ս. Մարգիս սրբավայրի գետինը, որուն վրայ
կար մատուռ մը, որուն կը հաւատային Թուրքերն ալ ու ամէն Ուր-
բաթ երեկոյ ձէթի ճրագ կը վառէին. մենք Օտոյին աղբիւր անունը
կու տայինք ուր ինքնաբուխ աղբիւր մը կար : Ազան այդ տեղոյն
բարձր զիրքին վրայ տուն մը շինելու հիմք ձգել կու տայ Հաւաւցի
վարպետներուն, վճարումով : Հաւաւցիներ կը բողբեն աղային
որ հետու կենայ Հաւաւի հողերէն, որ իր տուած գրամները եւ տա-
րած աշխատանքները ի դուր պիտի երթան, — «Հաւաւցիներս պիտի
չթողունք, որով մեզի կը պատկանի, մեր հողն է, որ Եարիֆ Պէկ
քեզի ծախելու իրաւունք չունէր, անոր չի պատկանիր. ան գրամով
չէ գնած որ գրամով ծախէ, ան բռնի տիրացած է մեր հողերուն,
մենք բռնի դուրս քշեցինք զինք, քանդելով իր խօնախը» :

Սակայն անդրդուելի կը մնայ ազան, որ ինք օրինական կեր-
պով գնած է այդ հողը Պէկէն : Ազան վարպետներ վարձելով չէնքին
պատերը վեր բարձրացնել կու տայ, Ազգային Ընկերութեան երի-
տասարդները ամէն զիւրը կ'երթան եւ պատերը վար կ'առնեն : Այս-
պէս կը կրկնուի քանի մը անգամ, որ ազան կը ստիպուի իր երկու
տղաքները զինուած պահակ կանդնեցնել չէնքին զլուխը, ամէն զիւրը
մինչև չէնքին լրանալուն : Այդ առաջին զիւրուայ հերթը կ'ըլլայ
Մեղքոն Գարբիշեանի Յարութիւն Մանկունիի եւ Քաջ Վարդանի, որ
պէտք է երթան պատերը քանդելու : Երեքով Ս. Մարգիսի ձորէն վեր
բարձրանալու պահուն կը տեսնեն որ երկու մարդ զինուած պահակ
կանդնած են չէնքին զլուխը : Մեղքոն կը հարցնէ Վարդանին, կրա-
կե՞մ. ոչ կ'ըսէ Վարդան, հրացանիդ պնդակն անոնց չի հասնիր :
Քաջ Վարդան վայրկեանական հնարք մը կը խորհի պահակները փախ-
ցրելու : Երեքով միասին շուտով զիւր կը վերադառնան, ճերմակ
խոշոր սաւան մը առած եւ կու գան, ուղղակի Ս. Մարգիսի մատու-
ռը, առանց ձայն-ձուռ հանելու : Քաջ Վարդան կը քողբուի ճերմակ
սաւանով, սուրբի կերպարանքով, ձեռքն բռնած հաստատուն կապ-
ուած խոտի փունջ մը, վառած վիճակի մէջ, կամայ կամայ Ս.
Մարգիսի մատուռէն վեր կը բարձրանայ. պահակները սարսափահար
կը փախչին, լեղապատու կ'ըլլան : Կը պատմեն իրենց հօր աղայի,
որ Սուրբ Մարգիս իրենց վրայ յարձակեցաւ : Ազգային մէկ ազան այդ
զիւրը կը մեանի, միտն ալ՝ երկու ամիս վերջը : Ազան իսպառ կը
հրամարի տունը շինելու որ Խզը Մարգիսը չէ հանդուրժած : Դէպքը
կը տարածուի ամբողջ Բալահոյիտի մէջ, որ Հաւաւի սուրբերն ան-

զամ չեն հանդուրժեր թուրքեր Հաւաւի հողերուն վրայ տուն շինելու, որ անոնց Սուրբ Սարգիսը մատուռէն դուրս եկած, մարդու կերպարանք առած աղային տղաները հարածած է, ու երկուքն ալ սրբազարկ մեռած են:

Թուրքեր կը դրուշանան չար մտքով Հաւաւի մօտենալ, միայն առեւտրով կ'երթան եւ շուտով դուրս կ'ելլեն Վրկէն: Այդպէս կը տեւէ ժամանակ մը, որմէ յետոյ կը սկսին Հաւաւի վնաս հասցընել: Ո՞վ էր այդ սուրբը, քաջ Վարդանը որ հողիով սրտով Հաւաւի նուիրուած էր մանուկ հասակէն: Սրերու ժամերու մէջ չէր խորհած այդպիսի հնարք մը, այլ վայրկեանական սուրբը, հերոսներ, մարդարէներ Աբարչին ընտանիքներն եղած են մեզի, աստուածային ուզին առաջնորդած է, որ տոնաց վախ ու սարսափ կրելու յառաջանայ: Ինք Վարդանը պատմած է որ աներեւոյթ հողի մը զին հրահրեց որ այդ քայն տունեմ: Ձէ՞ որ Հաւաւցիներու մէջ այդ ոգին կը տիրապետէ դարերէ ի վեր, որ թուրքը հետու մնայ Հաւաւէն: Հողիով ու սրտով նուիրուած՝ Հաւաւի փառքն ու պատիւը պաշտպանել կեանքի գնով, քաջ Վարդանի հաւատոյ հանդանակը եղած էր:

Ան վախ ու սարսափ չէր ունեցած, ոչ ոքէ, ոչ զէնք, ոչ սուր, ոչ դաւազան մը անդամ իր ձեռքին, քարած էր աղային երկու զինուածներուն դէմ, քայած էր զնդակի դէմ: Երկու զինուած պահակները կարող էին անմիջապէս կրակել զիշեր առեն իրենց վրայ քարային: Քաջ Վարդանը այդ վախը բնաւ չէր ունեցած, իրրեւ մաքուր յեղափոխական, անձնուրաց: Հաւաւի սահմանակից, 100 տունէ բաղկացած Քիւրում անունով թուրք զիւզը, Հաւաւի սխերիմ թշնամին, բնաւ չէր վրէպէր քաջ Վարդանի մտքէն, որ Դամակեան Մուրի մը պէս կախուած էր Հաւաւի գլխուն: Քաջ Վարդան քանի քանի անգամ որոշած է կրակի տալ Քիւրումը եւ ոչնչացնել, սակայն Կեղը Մարմինը խտիւ արգիլած է, որուն հետեւանքը շատ պէշ կրնար ըլլալ Հաւաւի: Նոյն մտքով, նոյն հողիով նուիրուած քաջ մէկ մը եղած էր Տէր Սիմանը, որ ասանց վախ ու սարսափ ունենալու տուաւ կրակը Ասլի Պէկի խօնախին, յեղափոխութեան առաջին կարապետը դառնալով Հաւաւցիներուն: Այն օրէն սիսեալ Հաւաւը գարծած է յեղափոխական եւ մնաց յեղափոխական ամբողջ 500 տարի: Հաւաւը եթէ չկրցաւ կուրիլ Օսմանեան կառավարութեան դէմ, կուտած է անհատ բռնակալներու եւ իր հողերուն բռնի տիրացած պէկերու դէմ. գերի չդառնալ, մնալ ազատ եւ կէս անկախ. Հաւաւը պահած է այդ թանկագին աւանդը: Կրտէ Պ. Կարեան որ դաւիթին մէջ Հաւաւը պէտք է տօնէ իր 2000ամեակը, որ ամբողջ 2000 տարի մնացած:

է, ոչ մէկ զաղթում, ոչ տեղափոխում, որուն համար արժանիք ունեցած է կոչուիլ Ձէյթունի մանրանկարը: Հաստատուած այդ ժայռին վրայ յինուած իր սուրին, միշտ բարձր բռնած եւ վար չէ դրած, հող չէ թէ ով տիրած է Հայաստանի հողերուն, մահ ու սարսափ փռած բոլոր իր թշնամիներուն վրայ, չէ ենթարկուած, զլուխ չէ ծռած բոլոր իր թշնամիներուն եւ բարբարոսներուն առջև:

Անդամ մը Պր. Կարեան եւ Պր. Փափազեան զաշտ տարած են զիւզ եկած պատահական երկու Գերմանացի երկրախոյրներ, ցոյց տուած են բլուրը եւ անոր շուրջի կլորկլոր քարերը, զեանին տակ թաղուած կարաններն ու ջուրի խողովակները: Երկու երկրախոյրներ հաստատած են որ բլուրը կառուցուած է քարով եւ կիրով, եւ այդ շուրջի կուտակուած կլոր քարերը դործածուած են բլուրի վրայ հաստատուած կառուցներու կողմէն, որ մարդոյժ դործիքներով արձակած են բլուրը պաշարողներու վրայ: Այդ կարաններն ու խողովակները պատրաստուած են պտուտակներով, որ բլուրը հաստատողները եղած են դարուն ամենազիտակից եւ լաւ արհեստագործները, որ անոնք եղած են քաջ եւ կուտող ցեղ մը: Հաւաւի տրուած է Բալուրի Աթէնք անունը, որ իրրեւ կեղոն հայ մշակոյթի Բալահոյիտի մէջ, որ այցելու բարձր հայ մատարականներ լաւ կերպով ուսումնասիրած եւ զնահատած են Հաւաւը ու իր վանքը, որ հողիով սրտով նուիրուած է հայ մշակոյթին, Հաւաւցի մատուրականներ մեծ տպաւորութիւն թողած են իրենց հետ խօսող այցելուներուն:

Հաւաւը ծնունդ տուած է՝ Օտեաններու, Կիւրճեաններու, Բաշալեաններու եւ Նէմցէկեաններու, Սիմոնեաններու, Անդրէաս Վարժապետ Կատարեանի, Տէրոյեաններու, Յարութիւն Փափազեաններու, վերջին երկուքն էին մտաւորական, Ամերիկայի մէջ Տէտրիկիւլ այդ փայլուն մտաւորական հողիով սրտով յեղափոխական, Տիրան Բաշալեանի պէս հայ զրքի եւ հայ զրականութեան սիրահար անձնաւորութիւն: Սօսք տալով նորէն Պր. Կարեանի, ան հիացող մը եղած էր Անդրէաս Վարժապետ Կատարեանի, ան Հաւաւի փառքն ու պատիւը կը ներկայացնէր, կատարեալ հայկարան, անդերազանցելի զբարբրի զիտութեան մէջ, որ Ա.Ֆ.Գ.ի պէս զոց բրած էր ամենախրթին բառերը եւ նախապատութիւնները, պատասխաններ պատրաստ էին անոր բերին մէջ: Իր կրօնական եւ եկեղեցական հմտութիւններով, կաթողիկոս եւ պատրիարք ըլլալու արժանի մարդ էր: Հաւաւը միշտ ալ հպարտացած է իր իմաստուն եւ զիտակից մարդիկներով: Հասարակ Հաւաւցիներու մաքուր խօսած հայերէնը հաս-

կրնայի եղած է բոլոր հայկական շրջաններու մէջ: Ան պահող, պահպանող եղած է եւ Հայ եկեղեցիին եւ հայ մշակութիւնի եւ յոռաջ տարած՝ գրելու եւ կարգաւոր սիրահար որ աւանդ մնացած է հին հին դարերէ:

Արհեստագիտութիւնը, շինելու եւ կառուցանելու ճարտարագիտութեան շնորհիւ, ան կրցած է սաք քաշել աշխարհի շորս կողմերը: Անոր խալթաները սուլթանական պատուանշան կրողները, ուսմութեամբ պատերազմներուն միշտ պատերազմի ճակատ տարուած են, շինող եւ կառուցանող, Մեւսաթափօլի պատերազմին Հաւաւցի խալթաներ թարգմտող ոսկի բերած են գիւղ: Հաւաւցիներ մինչեւ իրենց ոսկորի ծուծը յեղափոխականներ էին սերնդական՝ գիւղին մեծերէն սկսեալ մինչեւ զպրոցի աշակերտը. գիւղի շէրա նախըրճի Աւսօն նոյնիսկ Քալմը հնչեց էրգրումի լեռներէն կ'երգէր, պէկին գիւղէն դուրս ելլելէն վերջ, գիւղը զարձած է կատարեալ Հայաստան: Հաւաւցին այնքան սիրահար գարձած է որ զըճհանալով գիւղին մէջ տիրող յեղափոխական ոգիէն, ժողով կը գումարեն, որոշում կու տայ Ազգային Ընկերութիւնը, քաջ Վարդան, Յ. Մանուկեան, Մ. Սողիկեան, Վան գրիկ անոնցմէ յեղափոխական դասեր առնելու, որոնք երեքով աշան վերջի ամիսներուն Վան կ'երթան, հոն կը մնան երկու շաբաթ, կը հիւրասիրուին, կը յարգուին, կը պատուուին որ մինչեւ Վան եկած են յեղափոխական դասեր առնելու: Անոնց կը պատմուի Հաւաւի քաջութիւնները, որ յանդիման է գիւղէն դուրս քշել իրենց բարբարոս, արիւնարբու պէկը: Վանէն վերադարձողներ կը զիմաստուին գիւղացիներէն: Հաւաւը սուբուրութիւն ունէր որ Պոլիսէն եկողներ երբ երեւնային, գիւղին սեմին փոքրիկ լեռնէն պէտք էր զէնք պարպէին, որուն ձայնէն պիտի հասկցուէր որ գիւղը պանդուխտ կու գայ:

Գիւղէն հասնող հայնոցի, գացող գացողի, եւ կը զիմաստուին եկողները: Այսպէս ալ ըրած էին Վանէն եկողներուն, որ ամբողջ գիւղով զէմ գացած էին, եկեղեցիի դանդաղը հնչեցուած էր որ եկողներ նախ եկեղեցի դան, եւ անիկ վերջ պատրաստուած սեղանի զուլս, ուսել խմել եւ յանուն Վանեցիներու եւ Հաւաւցիներու, զինի զաւթներ կը պարպուին: Գիւղին մէջ եռուցեռ այնքան վեր կը բարձրանար որ գիւղը առեւտուրի եկող թուրքեր, Գիւրտեր կը գրան որ Հաւաւի մէջ բան մը պատահած է:

Պատմութիւնը կըսէ որ Հաճի Գրմար Պէկի հեռանայէն յետոյ մինչեւ Շարիֆ Պէկի հաստատուելը գիւղը այնքան ազատ կեանք վարած է. Հաւաւի թշնամիներուն զէմ այնպիսի յոխորասնքներ, որ մանքի առաջնորդութիւն ստանձնող վարդապետներ կը զուլանա-

յին պաշտօն ստանձնելու, որ անոնց բռնած ընթացքը կարող է կործանում առաջ բերել վանքին ալ, գիւղին ալ: Շարիֆ Պէկ գիւղ հաստատուելէ առաջ Բալուէի մէջ ձիւտոր ժանտարմա մը կ'անհետանայ, որուն ձին Տէրսիմ տեսնուած է, Հաւաւցիներու կը վերադրուի, յայց փաստեր կը պահին: Այդ կորուստը փաստ բռնած Հաւաւի թշնամիները կառավարութեան բողոքներ կը տեղացնեն որ Հաւաւը Տէրսիմի հետ զազանի խորհրդակցութիւններ կ'ունենայ, զինարան կը ստահէ, արդիւրուած զէնքեր կը դորձածէ, որ կառավարութիւնը կը ստիպուի վանքն ու Հաւաւը խուզարկութեան ենթարկել, առանց բան մը ձեռք ձգելու: Որ գիւղը խուզարկութեան ենթադրուած առաջ լուր կը տրուի որ մը առաջ, որ ժանտարմաներու եւ հարկահաւաքներու մասնաւոր պատուէր կը տրուի որ Հաւաւցիներուն հետ միշտ զըճ վարուին. պէկերու կողմէ զըզուածներ միշտ ծեծ կերած են Հաւաւցիներէն, թուրք, հայ գիւղեր իրենց պէկերէն, աղաներէն կը պաշտպանուէին, միայն Հաւաւն էր որ ինքընք կը պաշտպանէր, իր ուժով հալածած էր, յաջողած էր բռնել զողերն ու աւազակները եւ յանձնել կառավարութեան:

Դժբախտ Բալուէն, կեղբոնէ հետու եւ խորտ ու բորտ ճանապարհներու պատճառաւ անգոր մնացած է, միշտ ենթակայ պէկերու, աղաներու եւ ցեղապետներու քահանայքին: Բալուի կառավարութեան վախճողներ չկային, անկարող կառավարութիւն էր. Յուսան թուականներուն հազիւ կրցաւ հիւզակ մը ունենալ որպէս զօրանոց քաղաքէն քիչ հեռու բլրակի մը վրայ, որուն մէջ ծառայողներ զինուորութիւն չէր որ կ'ընէին, այլ քաղաք գացող եկողներ կողոպտելու գործով կը զբաղէին: Կառավարութիւնն անկարող էր ոչ զինուորները պատժելու եւ ոչ ալ կողոպտուածները պաշտպանելու: 1908ի ամառը Հիւրիէթէն վերջ կուր մը սկսաւ երկու պէկերու մէջ Ասամաւան գիւղին վրայ, շարթ մը տեսց, մարդիկ սպաննուցան, Բալուէ չկրցաւ ոչ մէկ միջամտութիւն ընել, մինչեւ որ Մատէնէն վաշտ մը զինուոր եկաւ եւ կուր զազրեցուց: Պարագ տեղն է որ Բալուին Չըւլի Բալու անունը տրուած է:

Պրն. Կարեան Ազգային Ընկերութեան հիմքը դնելով մէջ, մեծ ծառայութիւն մատուցած է, որ առողջ մտայնութիւնը հասարակաց դառնայ գիւղին երիտասարդութեան սկսեալ մինչեւ զպրոցի աշակերտներ գարձած են կատարեալ ըմբոսներ, որ գիւղին ազա գասակարգը զպատուութեան բերուած է, որ գիւղին նախըրճին անգամ պէտք է բոլորի մասնակցութեամբ վարձուի, վերջ աւարով ինքնազուլս գործողներու: Կարեանի զէմ մեծ հակահոսանք

կը ստեղծուի կարգ մը ինքնապաշտպանութիւններու կողմէն, բայց հասարակութիւնը միշտ գնահատանքով կը վարուի անոր հանդէպ որ զիւզին մէջ Ազգային Ընկերութեան հիմը դնելով՝ կրցած է անոնց մէջ արթնցնել հին յեղափոխական սպին, որ ինքնապաշտպանութեան ուզին աւելի զօրացած եւ սիրելի դարձած է բոլորին համար: Պր. կարեան բաւական մը շարձարուելէ յետոյ, կը հեռանայ զիւզէն, Պոլիս փոխադրուել կը ստիպուի իր կնոջ հիւանդ աշքերուն դարման գլուխը յոյսով: Իր միակ որդին Մանուէլը թողլով զիւզը, իր կնոջ աղբակհաններու խնամքին յանձնած՝ 1909 Զատիկի շարժուն Բալուէն Պարբերը երթալու պահուն աւազակներու հետ կուի կ'ունենայ եւ կը սպաննուի, ինքն ալ սպաննելով աւազակ մը: Անոր սպաննութիւնը չյայտնեցի, ըսի որ զինք չեմ տեսած, բայց լաւ է, ազէկ է: Կարծես հոգիէս վիպաութիւն տուած էր. առաջին տեսութեամբը, լալով հարցուց. «Ի՞նչպէս է Մանուէլս, Մանուէլս»: Այդ պատուական Հաւաքին կարօտով կը խօսէր զիւզի մասին, կ'ըսէր Հաւաքիներու մեծութիւնը հոն է որ բնաւ չեն մոռցած այն թանկագին աւանդը որ Հաւաքը պէտք է պահէլ զուտ հայարնակ:

Հաւաքին իր այդ որդեգրած նպատակէն բնաւ ետ չէ կեցած, ոչ մէկ նահանջ. թէև առած է դադար երբեմն: Ամբողջ 500 տարի միշտ կռիւներով անցուցած է իր կեանքը: Անոր զիւզէն հեռանալէն յետոյ Ազգային Ընկերութիւնը պահուած է Տէր Թորոսի, Ոսկեան Օհան Վարժապետի եւ Քաջ Վարդանի հսկողութեան տակ, թողելով գործի ղեկավարութիւնը Քաջ Վարդանի, որ զիշեր ցերեկ զիւզին ինքնապաշտպանութեան գործերով կը զբաղէր, բոլոր երիտասարդներուն զէնք առնել կու տայ, զինավարժութեան կը վարժեցնէր, հրացանաձգութեան կը տանէր: Երիտասարդութիւնը միշտ զբաղուած կը պահէր, խումբերուն վրայ պարտք դրած էր, քաղաքէն ու ճեղքներուն դէմ երթալ, զիշերուայ ջրուորներուն հսկողութեան երթալ որ աւազակներու յարձակման չենթարկուին: Դաշտի կենդանիներու յափշտակման «Եկէ՛ք, հա եկէ՛ք» օգնութեան կոչերուն, բան գործ, տուն, այգի, պարտէզ թող տալ, զէնք բռնողը պէտք է աղէտին վայրը հասնի: Կիներ, տարիքաւորներ, մեծ, պղտիկ, աղջիկ, տղայ օգնութեան հասած են: Այսպիսով Հաւաքիներ յաջողած էին շատ անգամ աւազակները բռնել եւ զիւզ բերել, յետոյ կառավարութեան, յանձնել, ոմանց ալ ազատ կ'արձակէին մուխթարին արտօնութեամբ:

1893ի աշնան Հաւաքիներ կ'որոշեն զիւզին դպրոցը Միացեալ Ընկերութեան յանձնել եւ Միացեալ Ընկերութեան գործող անդամներէն Պետրոս Էֆէնտի Սրապեան, զիւզին դպրոցը Միացեալ Ընկե-

րութեան անունով կը կազմակերպէ իրրեւ տեսուչ, զիւզէն կու գան օղնական դատաստուներ ալ, մօտ 200 աշակերտներու համար պէտք կ'ունենայ Միացեալ Ընկերութիւնը զպրօցական դրքեր բերել տալ ջորիներով իրենց կեդրոնէն: Քիւրուացի Թուրքեր կառավարութեան լուր կու տան որ Հաւաքը բռնելով զէնք ստացաւ՝ թուրք զիւզերու վրայ յարձակելու: Բալուի կառավարութիւնը կը տեղեկագրէ կեդրոնին որ հազարապետ մը 10 զինուորներով Հաւաք կու գայ խուզարկութեան, որ բան չի գտներ: Գիւզին մուխթարը բացատրութիւն կու տայ. այդ երեք ջորիներու բերածը եղած է զրքեր Միացեալ Ընկերութեան կողմէն մեր գպրոցին համար: Հազարապետը կ'որոշէ մնալ Հաւաք անորոշ ժամանակով: Գիւզը կը բողոքէ կառավարութեան որ իրենք կը մերժեն կերակրել հազարապետն ու զինուորները: Հազարապետը կը հեռանայ զիւզէն: 1894ին միեւնոյն հազարապետը բանի մը զինուորներով նորէն կու գայ Հաւաք մնալու, որ Հաւաքի 7 սպաննուածները Պապ Ալիի ցոյցին պատճառաւ բռնուած են, որ Հաւաքը ամբողջ զիւզով յեղափոխականներ են, որոնց վրայ պէտք է հսկողութիւն կատարուի: Դպրոցի երկու սենեակները կը տրամադրուին հազարապետին որ իր գրամով կ'ապրի: Խիստ լրտեսութիւն կատարելով որ Պետրոս Էֆէնտին կը ստիպուի բարձրագոյն կարգի դասերը թուրքերէնով աւանդել: Ամէն առաւօտ դպրոցի բացումը փոխանակ Հայր Մեքով կատարելու պէտք է ջօֆ ետշա Սուլթան Համիտի երգով ընթացք տրուի զպրօցի բացումին:

Այսպէս ժամանակ մը շարունակուելէ յետոյ Պետրոս Էֆէնտին կը հեռանայ զիւզէն, չզիմանալով իր վրայ կատարուած լրտեսութեան: Ամբողջ դարերու ընթացքին զիւզը հաւատարիմ գտնուած է կառավարութեան հանդէպ, որ միշտ ներող աչքով նայուած է Հաւաքի: Չէ՞ որ այդ չըջաններու բոլոր Հայերու վրայ կանխածանքով կը նայուէր, հետեւաբար Հաւաքը բացատրութիւն չէր կրնար կազմել: Մանաւանդ որ զիւզը իր դէմ ունէր Ծարիթ Պէկի պէս ռիակալ մը, որ զիշեր ու ցերեկ դաւեր կը լարէր գանոնք յուսահատեցնելու մտօք: Ազգային Ընկերութեան հաստատումէն ի վեր Հաւաքը աւելի կազմակերպուած, աւելի զորդացած, զիմադրական ոգին աւելի բարձրացած, արտաքին թշնամիներէն ոչ մէկ երկիւղ չէր կրեր: Ամբողջ զիւզը մէկ սիրտ, մէկ հոգի, պատրաստ էին որեւէ յարձակում զիւզին վրայ քաջաբար զիմադրուելու:

1894ին Քիւզէն մարդ մը կու գայ Հաւաք, կազմակերպութեան մը կողմէն իրրեւ կազմակերպիչ, կը թելադրէ որ հայ եւ թուրք աչքի զարնուողներէ ժողով մը գումարուի եւ բողոքագրութիւն մը

պատրաստել և ներկայացնել Բարձրագոյն Դրան յանուն բարենորոգութեան, թէ՛ հայ եւ թէ՛ թուրք հասարակութեան վարած աստիճանի կեանքը եւ թեթեւցնելու սղութիւն, ուսելիքներու պակասութիւն, տուրքերու բարձրացումը անասնելի գործած էր այդ շրջաններուն, որ բոլոր շրջաններու կառավարութիւնները կացութիւնը վերկելու բան մ'ալ չէին կրնար ընել:

Ասիկէ աւելին՝ ջարդի եւ կոտորածի վախն ու սարսափը Դամոկլեան լախտի պէս կախուած էր Հայերու զէլտուն: Հաւաքել բանիմացներէ ժողով մը դումարուեցաւ Կիրակի մը, դպրոցին մէջ, ազատ բոլորի համար: Շրջանի թուրք զիւղերէն կը հրաւիրուին՝ Գիւրումցի Մըլլա Իպիշը, եւ Կատիտանցի Սըլոն, որոնց ներկայութեամբ կը բացատրուի ժողովին նպատակը: Բոլորին հաւանութեամբ կը պատրաստուի բողոքագիրը, զրի առնուլը կ'ըլլայ Հաւաքի Պրնշան Բէօնէեան, թէ՛ դրաղէտ, թէ՛ մասամբ օրէնսդէտ: Բողոքագիրը տանող յանձնառուն կ'ըլլայ Պաղտասար Սըլտէեան, իրեն ուղեցոյց կը վարձուի Քիւրումցի մը, զբուժիւնը Քզի տանելու, անկէ ալ էրզրում, իրբեւ կեդրոն, ուրկէ պիտի առաքուի Պոլիս, Բարձրագոյն Դուռ: Բողոքագիրը կը խօսի հայ եւ թուրք ժողովուրդներու թշուառութիւններու մասին, որ պէտք է դարման մը պահուի: Պաղտասար Սըլտէեան եւ իր ուղեկիցը հազիւ երեք ժամ հեռացած, զեռ Քզի չհասած, Բալուի հողերուն վրայ կը պաշարուին Բալուցի զինուորներէն եւ կը տարուին Բալու եւ կը բանտարկուին: Մասնիչները կ'ըլլան Քիւրումցիներ՝ Հաւաքիներէն վրէժ առնելու եւ թէ կառավարութեան առջեւ սեւցնելու: Որ հաւատք ընծայելով Հաւաքիներուն, 100 տունէ բաղկացած Քիւրումցիներէն 60 հողի իրբեւ գող եւ աւազակ, երեք ամսուայ բանտարկութեան դատապարտած էր իրր պատիժ: Յետոյ երաշխաւորութեամբ դուրս հանած. ոչ Հաւաքիներ մեղադրելի էին եւ ոչ ալ կառավարութիւնը: Քիւրում զիւղը զոգութեան եւ աւազակութեան բանուկ արհեստ գործուցած էր եւ անով կ'ապրէր:

Շարիֆ Պէկի համար երկիրքէն ինկած պատահութիւն մ'էր որ Հաւաքիներու վարկը կոտորէր կառավարութեան առջեւ, որ դարերէ ի վեր միշտ ներդրամութեամբ վարուած էր անոնց հետ: Պաղտասար Սըլտէեանի ձերբակալումէն յետոյ հազարապետ մը 10 ձիաւոր զինուորներով Հաւաք կը մտնէ: Կը պահանջէ որ իրենց յանձնուին Յակոբ Լէյլէկեան, Հայրապետ Կատարեան, վարդան Փաշայեան եւ Նշան Բէօնէեան. բողոքագիրը ստորագրողները ձեռնակապելով Բալու քաղաքը կը տարուին, ուր երեք շաբաթ մնալէ

յետոյ, կը տարուին Քզի բանտը, որ ԾԾի կոտորածէն քանի մը շաբաթ առաջ ազատ կ'արձակուին եւ կու գան Հաւաք:

Չորս բանտարկեալները զիւղ զալէն վերջ Ալի Փաշա անունով պինդաչի մը ջոկատ մը զինուորներով նորէն Հաւաք կը խուժէ զիւղացիները ահ ու սարսափի մասնելով. զիւղացիք անոնց կերակուր տալէ վերջ, անոնք կը մնան զիւղը որպէս թէ զիւղը պիտի պաշտպանեն յարձակող խուժանի կողմէն: Մինչդեռ անոնք զիւղը ահաբեկելու եկած են, անոնց զիմաղբական ողին կոտորելու, որոնց մասին վատ լուրեր տրուած էր կառավարութեան որ Հաւաքը տեղագրին կը պատրաստուի թուրք զիւղերու վրայ յարձակիլ զանոնք կոտորելու: Վերջէն կը հասկցուի Հաւաքի բարեկամ թուրքերէն որ այդ հազարապետը իր զինուորներով կարգ մը թուրք զիւղեր ալցելած եւ անոնց բաժնէ է որոշուած օրը հայ զիւղերու վրայ յարձակելու, թալլելու եւ կողոպտելու: Կոտորածի ահն ու սարսափը տարածուած էր ամբողջ Բալահովտի հայերուն մէջ, որ ամէն ոք իր զէլուին ազատելու մասին կը խորհի: Հաւաքի շուրջի հայ զիւղերը յուսահատուած զիմուսներ կը կատարեն թէ ի՞նչ պէտք է ընել: Հայերու բարեկամ թուրքեր, նոյնիսկ կառավարական պաշտօնեաներ լուր տուած էին որ այդ անգուժի կոտորածէն կարելի չէ խուսափիլ: Թեւ լազրած էին որ ջարդն ու թալանը չսկսած, իրենց ապահովութեան համար զան իրենց յանձնուին, անոնց պատասխանուած էր որ լաւ է որ միտսին կոտորուինք, քան թէ ասոր անոր պաշտպանութեան յանձնուինք: Հայը միշտ որոշած է հաւատար կոտորուիլ:

Հայուն համար նախընտրելի եղած է, բայց խաղաղ օրերուն կարելի չէ եղած միաձայն հողիով հաւաքուիլ որեւէ հարցի շուրջ, որքան ալ արդար եւ ճշմարիտ ըլլայ այդ հարցը. անմիաբանութիւնը Հայերու մէջ միւս եւ ոսկոր գործած է: Այդ միտքով հիմնուած է Հայկաւանը, որուն մէջ ընակողներ պէտք է ըլլան զուտ Հայեր, որ օտար տարրը կրնայ պատճառ դառնալ աւանի մէջ անմիաբանութեան առաջ բերել: Հաւաքիներու համար անմիաբանութիւնը խորթ եղած է եւ ամբողջ 2000 տարի մնացած է զուտ հայաբնակ: Բարբարոս Բալահովտի մէջ իր դոյուրութիւնը պաշտպանելու համար կուտած է յարձակող խուժանի դէմ, որոնց զեկավարը կառավարութիւնը չէ եղած: ԾԾի կոտորածը կառավարութեան կողմէն կազմակերպուած էր, որ անկարելի եղաւ զիւղը ազատել: Գիւղին հերոս Հաճին իր համախոհներով զիւղէն դուրս Սօշնդուտ ըսուած տեղ մը ժողով կը գումարէ, ուր ներկայ կ'ըլլան 50 երիտասարդներ:

Հերոս Հաճին ժողովը կը բանայ եւ անոնց կ'ըսէ որ թալանի

և ջարդի լուրերը թեև առած կը թռչին, որ իմ բարեկամ թուրքեր ըսած են որ կոտորածը անխուսափելի է: Մեղի կը մնայ մարդու պէս մեռնել, ոչ թէ ոչխարի պէս պատկիլ թուրքին սուրին տակ: Այդ անպսիթ թուրքին պէտք է լաւ դաս մը տալ: Բացառեմ իմ նպատակս, կ'ընէ Ներոս Հաճին, երբոր խուժանը զիւրը պաշարէ, սմանք թող զիւրը պաշտպանեն, ոմանք ալ զինուած խուժերով յարձակին անոնց զիւրերուն վրայ եւ կրակի տան անոնց բնակարանները, ապապէտով լաւ գործ մը կատարած կ'ըլլանք. ոչ մեղի, ոչ անոնց: Լաւ է որ ապապէտով մեռնինք, քաջի պէս մեռնինք եւ անուն մը թողած կ'ըլլանք: Հերոս Հաճին յայտնած գաղափարը չի գործադրուելիք այն վախով որ զիւրին բոլոր ժողովուրդը անինայ կը կատարուել, զիմազրելով պաշտպանուելը նախամեծար կը համարուի:

Յաջորդ օր զիւրը կը պաշարուի մեծ խուժանով մը. զիւրը կը զիմազրէ երկու շաբաթ, որ այլևս չի մնար ոչ կապար, ոչ վառօղ: Յուսահատութիւն կը տիրէ, Մանուկ Թիլիկեան եւ Գէորդ Լուսաւորեան ձեռք հեծած՝ զիշերով կառավարութեան կը զիմեն օգնութիւն ստանալու համար, որ զիւրը պաշարուած է մեծ խուժանով:

Կառավարութիւնը կը մերժէ եւ կը պատասխանէ անոնց. Դուք զայցէք ձեր անձնական ուժերով պաշտպանուեցէք մինչև որ կառավարութեան զօրքը ձեզի օգնութեան հասնի: Մենք կեղբոնէն զօրք ուղած ենք: Իրականութիւնը այն եղած է որ կառավարութիւնը անղեակ Հաւաւցիներու բուն զիմազրութեան, կեղբոնէն զօրք ուղած է անոնց վրայ յարձակելու, որ ամբողջ երկու շաբաթ զիմազրած է պաշարող խուժանին զէմ, անոնցմէ տասնեակ մը աւելի զոհեր խլելով: Որ Հաւաւցիները կառավարական զէնքերով կը կռուին խուժանն ահ ու քարսափի մատնուած՝ չէ կըցած զիւրը աւարի տալ: Մինչդեռ Հաւաւցիներուն ունեցածը հասարակ հրացաններ եղած են: Կառավարական զէնք արձակողը աւազակապետ Չէյնօն եղած է, զիւրէն դուրս զիրքի մէջ մտած կը կրակէ, որ իր զնդակները խուժանին վրայէն սուրալով կ'անցնին, անոնց հաւատացնել տալու որ Հաւաւցիները փամփուշտաւոր հրացաններով կը կռուին, թէ խուժանը զբողբու եւ թէ կառավարութեան ուշադրութիւնը զբաւերելու: Չէյնօն յիս ունէր Հաւաւցիներու զէմ, որ անոնք մօտիկ անցնալին իր եղբայր Վօյխը նոյնպէս աւազակապետ, սպաննել ջանացած են, որ մտապարտ չաղտած է, շնորհիւ Արթըրիան զիւրի քահանային: Վօյխի եւ Հաւաւցիներու միջև թշնամութիւնը ծագում առած է որ Գարբիէլեաններու եւ Վօյխի զէպք անունը արուած էր:

Գծի զէպքէն առաջ, Կիրակի օր մը Աղլային Ընկերութեան անդամները իրենց բացօթեայ ժողովէն վերադարձած պահուն, լիբան ալդիներուն մէջ քարերու տակ պահուած պղնձեղէն, գործեղէն, անական պիտոյքներ կը գտնեն, ամենայն դահուսակութեամբ կ'իրաւացնեն, մէջլերին բաժնելով, ամէն մէկ ընկեր բան մը տաւած, արձակ համարձակ իրենց տուները կը տանին: Այդ սպրտանքները պատկանած են աւազակապետ Վօյխին, որ Խարբերդ զիւրերէն գողցած, բերած պահած է ալդիներէն մէկուն մէջ, քարերու տակ, յարմար օր մը գտնոնք փոխադրելու իր տունը: Որոշուած օրը կուգայ Վօյխը գտնոնք տանելու, բայց բան չի գտներ: Քաջ զիտնալով որ Հաւաւցիներէ զատ ոչ ոք ըլլալու է սպրտանքները տանողները: Յուսահատ, բորբոքած Վօյխը իր զիւրը կը վերադառնայ:

Յարմար օր մը, երեք ընկերներով կը յարձակին լեռնէն փայտ բերող Հաւաւցիներուն վրայ Հաւաւցի դուրս ձանապարհին վրայ, աւանակները բեռնաթափ ընելով կը տանին ամենայն արագութեամբ, Արթըրիան հայ զիւրի ուղղութեամբ: Փայտ բերող Հաւաւցիներ հաւաքը կը փրցնեն, բարձրաձայն պոռալով զէպի զիւրը կը վաղեն: Հաւաւցի խուժանը զինուած շուտով կը հասնի աղէտին վայրը: Կը հասկնան որ աւազակապետ Վօյխը եղած է աւանակները տանողը որ Արթըրիան զիւրի ուղղութեամբ կը յառաջանայ, անկէ զէպի իր բնակած զիւրը, որուն առջև պէտք է կտրել: Հաւաւցիներու զինուած խուժանը կը յառաջանայ Աղլային Ընկերութեան զինուածներու զլիսաւորութեամբ, Արթըրիան զիւրին վերեւ կը պաշարեն Վօյխը եւ իր ընկերները, որոնք քարերու ետեւ զիրք բռնած, հրացաններով կը սպառնան սպաննել իրենց վրայ յարձակողները: Սակայն Հաւաւցիները առանց կարեւորութիւն տալու անոնց սպառարութիւններուն, աւելի կը մօտենան անոնց զիրքերուն:

Աւազակները քանի մը հրացան կը սպորպեն օգին մէջ, այն մտքով որ Հայերը երբ հրացանի ձայն տունեն կը փախն: Հաւաւցիները հրացանի ձայն տունելով՝ աւելի կը կատարին, իրենց առաջնորդ Հաճի Մարտիրոս Գարբիէլեան խոշոր Խարտաղ վեցհարուած մը ի ձեռին զէպի Գիւրբաբ յառաջանալով կը նետուի Վօյխին վրայ: Վօյխը կը սպառնայ. չմօտենաս, կը գրանեմ. Գարբիէլեան կը պատասխանէ, եթէ կրնաս զարկ, դուն ունիս մէկ կրակ, ես ունիմ վեց կրակ, ցոյց տալով իր վեցհարուածը. Վօյխը այս անգամ հայերէն լեզուով կ'ըսէ. Մզսի արար, մի գար կը գրանեմ, մեղք կ'ըլլայ քեզի, մենք բարեկամ մարդիկ ենք: Այդ վայրկեանին Մինաս Գարբիէլեան քարին ետեւէն հրացանն ուղղած Վօյխին, կը հարցնէ, Մզսի արար,

զարնե՞մ. դեռ կը սպասե՞ս, զարկ սատկեցուր այդ շունը. Վօյխին թեւն ու թիկունքը կը թուշան, որ Հաւաւցիները զինք պիտի ըս- պաննեն: Մինաս իր հրացանը չպարպած՝ իր եղբայրը Մելքոն կը նետուի Վօյխին վրայ եւ անոր ձեռքի թուրը կը յափշտակէ: Վօ- յիսը եւ իր ընկերները դերի կ'իջնան Հաւաւցիներուն ձեռքը: Օղնու- թեան կը հասնի Արթըրսան զիւրի քահանան, կը տանի իր տունը Վօյխը իր ընկերներով եւ Հաճի Մարտիրոսը իր քանի մը հետեւորդ- ներով եւ կը հաշտեցնէ դանոնք: Հաւաւցիներ յազմական զիւր կը վերադառնան խուռն բազմութիւնով:

ԳՅի կոտորածէն յետոյ Վօյխը Հաւաւցի երեք վարպետներ կը վարձէ տուն մը շինելու իր հողին վրայ: Յակոբ Կատարեան, Յա- բուրթին Նէմցեան, Մինաս Մանկիկեան, նկատելով անոր քաջ եւ անվախ ըլլալը, բարեկամարար կը հարցնեն Վօյխին. ի՞նչպէս ե- ղաւ որ թուրդ յանձնեցիր Մելքոնին: Կըսէ անոնց. ես իմ կեանքս կը պարտիմ հայերէն զիտնալուս, երբ Հաճի Մարտիրոսը ըսաւ Մի- նասին, տակաւին կը սպասե՞ս, սպաննէ այդ շունն ալ, իմ թեւս եւ թիկունքս կոտրաւ, ալ չկրցի թուրս շարժել եւ յանձնեցիր Մելքոնին, որ ասոնք զիս կը սպաննեն էթէ զիմադրեմ: Թուրքերու, Քիւրտե- բու մէջ բերնէ բերան խօսուած է միշտ որ Հաւաւցիներ իրենց աւա- զակներ, զողեր կառավարութեան չեն յանձներ, կը սպաննեն կամ ազատ կ'արձակեն:

Դաշտին կենդանիները զողջոյ աւազակ մը գերի կը բռնուի Հաւաւցիներէն, զայն զիւր կը տանին, Մելքը կը յանձնէ երկու ե- րկասարգներուն որ զայն տանին զիւրէն դուրս, սպաննեն. տղա- ները կը տանին, ձեռնակապ, կը պտտկեցնեն զայն, զանակը անոր կոկորդին չըբած, աւազակը կ'ըսէ անոնց հայերէն, մեղքըցէք ինձի, ազաքը ասանց սպաննելու զայն ետ կը տանին զիւր: Մելքը կը զար- մանայ, ազաքը կ'ըսեն. Մելք, աւազակը հայերէն խօսեցաւ. մենք չսպաննեցինք. Մելքը ինքն ալ կը ներէ անոր եւ կ'ըսէ. դուն քու կեանքը կը պարտիս հայերէն զիտնալուր: Դրամ կու տայ աւազա- կին եւ կ'ըսէ անոր. զնայ, եղ առ, արտ առ, զողութենէ հեռու կե- ցիր: Այն ատենէն սկսեալ զողեր, աւազակներ, ցեղապետներ, պէտք զգացած են հայերէն սորվելու:

Վօյխը կը խոստովանի որ Հաւաւցիները շատ քաջ ժողովուրդ են. եղած է նեղ պարտաւ որ պաշարուած գողեր, աւազակներ ըս- պանութիւն կատարելով փրկած են իրենց կեանքը. մեզի համար ան- կարելի եղաւ, Հաւաւցիներու ձեռքէն ազատիլ, եթէ յաջողէինք սպանութիւն կատարելով ազատիլ: Այդ զինուած խուժանը պիտի

յարձակէր մեր զիւրին վրայ, որ շատ հեռու չէր, եւ քարուքանդ պիտի ընէր ամբողջ զիւրը: Հաւաւցիները գերի ինկող զողերու հրա- ցաններուն փոշիներ բռնած՝ կը քաշեն կ'առնեն անոնց ձեռքէն, կար- ձեւ ըսել կ'ուզեն որ Թուրքեր զէնք կրելու իրաւունք չունին: Շատ զժուար բան է Հաւաւցիներու ձեռքէն ազատիլ. Թուրքերը երկ մը յօրինած են անոնց մասին, որ կ'ըսէ. «Հաւաւ տէտուզն պիւր քուչուկ նայա, հէրսի քի չըխտի, խուրդ ամաս քիմասայ» բառ է Վօյխը երեք վարպետներուն որ եթէ Հաւաւը պէտք եղածին չափ զէնք, վա- սող, կապար ունենար ԳՅի կոտորածին, զիւրին վրայ յարձակող կա- ռավարական զօրքին ալ պիտի զիմադրէր, եւ լաւ դաս մը պիտի տար անոնց, ՚հին հին զարեւէ ի վեր Հաւաւը կուտող ժողովուրդ ե- դած է, բոլոր Թուրքեր, Քիւրտեր ծանօթ են անոնց անցեալին, որ կ'ուրէ չեն վախնար բնաւ:

Դարձեալ գանք ԳՅի կոտորածի պատմութեան. Հաւաւցիները ամբողջ երկու շաբաթ քաջարար զիմադրելով զիւրը պաշարող խու- ժանին զէմ, խլելով անոնցմէ տասնեակ մը զոհեր, անոնց ամենա- կարեւորը ռազմանիւթը եղած է, ունեցածնին գործածելով զուրսէն ռազմանիւթ ձեռք ձգել անկարելի եղաւ: Ա՞յ զոհեր տալով, յուսա- հատած կառավարութեան կողմէն խոստացուած զինուորական օդ- նութեան, կը զիմեն զիւրին ծանօթ երեք թուրք ցեղապետներու օդ- նութեան: Երեք ցեղապետները զիւրանց Հաւաւ կը մտնեն Ատական թիկնապահներով, զիւրը պաշտպանելու կեղծ մտօք: Հաւաւցիները 500 օտմանեան ոսկի կը խոստանան զիւրը պաշտպանելու պաշարող խուժանին զէմ: Գեղապետները ոսկի պատահութիւն համարելով որ մատաղն իր ստքով եկած է, իրենց հրամցուցած կերակուրները ու- տելէ վերջ կը սկսին իրենց ծոցերը խաթիլ պղնձեայ փայլուն պնակ- ները: Հաւաւցիները սաշած կը մնան որ զիւրին այնքան ծանօթ ցե- ղապետներ կը փոխեն իրենց զոյնը, իրենց այնքան բարեկամական անցեալը ստքի տակ կ'առնեն, եւ կատարելա թշնամիներ կը դառ- նան: Մուլթան Համիտէն եկած հրամանը բոլորին մտքերը թունա- ւորած է:

Հաւաւի այնքան բարեկամ կառավարութիւնը Ալի էֆ. հարիւ- բապետը կը զրկէ թուրք զիւրերը, զանոնք կազմակերպելու, Հա- ւաւի վրայ յարձակելու, թալանելու, կոտորելու արձակ համար- ձակ, եթէ խուժանը չյաջողի իր ուժերով կառավարութիւնը ամե- նայն սիրով օչնութեան պիտի հասնի խուժանին, զինուորներով եւ թնկանութիւններով: Այսպէս ալ եղաւ: Առաւօտուն հազիւ արեւը ծա-

գած գինուորական շեփորի ձայնը ամբողջ զիւրը թուող հանեց, փախող փախողի եղան. ամէն ոք իր գլուխն աղատելու: Իսկ դուրսէն եկող ցեղապետներ իրենց թիկնապահներով կոխ սկսան. Հաւաւի անմիջական թուրք զրացի զիւղացիներու ղէմ, Հաւաւի հարբառութեան տիրանալու համար: Հաւաւցի կարգ մը բնասնիքներ ապաստանեցան իրենց թուրք ծանօթներու տուները: Իսկ Հաւաւցի կուռուղներ վանքը ապաստանեցան իրենց զիմազրութիւնը յառաջ տանելու: Սակայն անկարող եղան շարունակելու ղէնքի եւ փառօղի եւ կապարի պահասութեամբ:

Վանքը պաշարող Զազաներ եկած էին մեծ խումբերով քաղելով Գ-5 ժամ հեռաւորութեամբ Ծարիֆ Պէկի հրամանատարութեամբ, ոչ թէ միայն թալանելու նպատակով, այլեւ Հաւաւցիներ կտարեկտոր ստիպուած կը հեռանան վանքի ետեւի դռնէն: Բալահոյիտի թուրքերը, Զազաներ, մեծ ոխ ունէին Հաւաւի հանդէպ, որ չէին կրցած զինու զորութեամբ գլուխ ելնել, զարբերով ոխ ու առեւտրութիւն պահելով յարմար ժամանակի մը կը սպասեն զայն կործանելու, որոնց զիմազրական ուղին կարելի չէ եղած կտարել, որ մնացած են մինչեւ վերջ զորապաշտ: Սիրտ չզիմանալիք տեսարան մը. Զազաներ իրենց կեռ թուրերը մերկացուցած՝ խառք կեպալուներ գոտարով չափահասներ կը փնտտէին կտորելու, քան թէ աւար ձեռք ձգելու. Զազաները մասնաւոր զրգուած էին Ծարիֆ Պէկի կողմէն որ անդթօրէն կտորեն Հաւաւցիները. Ծարիֆ Պէկի աջ ու ձախ յայտարարած էր որ Հաւաւ գիւղին տեղ զարի պիտի ցանեմ, որուն պատասխանած էին կարգ մը ազգեցիկ թուրքեր. «Պէկ քու այդ յոխորտանքներդ մէկ կողմ գիւր, այս օրերը շուտով կ'անցնին, Հաւաւցիները կը տիրանայ իր նախկին գիւրքին»: Պէկը չի հասնիր իր մուրազին: Հաւաւցիներու համար անկարելի բան էր խուսափել ջարդի, կտորածէ, որ խուժանին չկրցածը կտալարութիւնը պիտի ընէր, թնդանօթի բռնելով ամբողջ զիւրը: Ամբողջ զարբերու ընթացքին, շարաթով կտու ունեցած է եւ պաշարուած է խուժանէն, բայց անխորտակելի եւ անպարտելի դուրս եկած է շնորհիւ կտալարութեան չկորուսեալները:

Այսպէս, 95ի կտորածը աւերակի դարձուց պատուական Հաւաւը: Կարգ մը չափահասներ եւ երիտասարդներ զիւղին մէջ եւ զիւղէն դուրս կտորուեցան: Միայն հերոս Հաւաւ կրցած էր իր կեանքը փրկել ապաւինելով իր ղէնքին, որ չէր կրցած համողել Հաւաւցիներուն, որ զինուած երիտասարդներ յարձակին թուրք զիւղե-

րու վրայ եւ կրակի տան անոնց բնակարանները երբ անոնք զրապուած էին Հաւաւի պաշարումով: Հերոս Հաւաւի նախօրք իր պատրաստութիւնը տեսած էր, զիւղին այգիներուն մէջ քարայր մը, իրեն պաշտպանութեան զիւրք եւ ապաստան: Հոն գետեկելով անկողին, հաղնիք եւ քանի մը շարթուայ ուտելիք եւ զինամթերք, խմելիքներ:

Աւարտու թուրքերու կողմէն կը տեսնուի Հաւաւի, զայն հաւաւելով կը հասնին անոր բնակարան-քարայրին առջեւ, անտոխի զիւրք, հակայ հողաշերտերով ծածկուած. հետեւին անկարելի քանդակ, իսկ քարայր խոռոչին մուտքի անցքի առջեւ ամենափոքր թերուսն մը անպամ չի կրնար աղատել հրացանի ղնդակէն: Կը հաւաւը ուրի շատ մը թուրքեր, անկարելի կը գտնեն քարայրը գրաւելու: Կտալարութեան լուր կու տան որ Հաւաւցի ֆետայիներու ապաստանարան մը գտած են Հաւաւի այգիներուն մէջ որ անտոխ է, որուն մէջ ապաստանողներ համբարողներու վրայ կը յարձակին: Հաւաւցիներու ծանօթ զինուորական Ալի էֆէնտի որ թուրք զիւղիք այցելած եւ անոնց հրահանգած էր Հայերու կտորածն ու թալանը, այս միեւնոյն հարիւրապետը 10 զինուորներով խուժանին հետ միացած՝ կը պաշարեն հերոս Հաւաւին քարայրը, բայց անկարող կ'ըլլան քարայրը գրաւելու եւ Հաւաւի կայանաւորելու:

Ալի էֆէնտին իր զինուորական ուժերով եւ խուժանով կը զրտնուի անկարելիութեան մը առջեւ, անոնց կողմէ կղած բոլոր ապանալիքները կ'անցնին ապարդիւն, քարայրը անտոխ է: Պէտք է մեծ զոհեր առ: Ալի էֆէնտին անկարելի կը գտնէ քարայրը զիւրին զիւրին գրաւելու: Անոր խոստումները կ'անցնին ապարդիւն՝ զայն դուրս բերելու: Հաւաւի հաստատ իր որոշումին վրայ, կուռելով մեռնիլ՝ կ'ընէ անոնց. «Ես մէկ անձ, իսկ դուք խուժան մը եւ զինուորական ուժ մը, հրամայէք կուռիք, ասոր կ'ըսեն քաջի ասպարէզ»: Հարիւրապետը կը պատասխանէ. «Կը մեղքեմ քեզի պէս քաջի մը համար եւ չեմ նախընտրել պարտապակառ զոհեր առելու, քանի որ դուն այսքան քաջ եւ կեանքիդ յարգը զիւրացող մէկն եղած ես, պատուայ խօսք կու տամ եւ թաղաւորիս անունով երդում կու տամ, ելիք քարայրէն, իմ մահուանս դնով պիտի պաշտպանեմ խուժանին ղէմ, քեզ զինուած վիճակի մէջ կը տանիմ քաղաք, քու ղէնքերովդ յանձնուիր կտալարութեան եւ այսուհետեւ դուն կը մնաս բանտ, մինչեւ հրապարակը խաղաղ. քու բանտէն արձակուելու օրն ու ժամը պիտի պահուի վաղանի բոլորին համար որ դուն արձակուած ժամուն անակակալի չգաս, որ քու թշնամիներդ դարանակալ չսպասեն քեզ սպաննելու եւ քու կեանքդ խնայուի»:

Հերոս Հաճին դուրս կու գայ քարայրէն, ոտքէն գլուխ զինուած, զոյգ փողով փամփուշտուտը հրացանով, աջ կողմէն չէրքեզ դաշոյն, ձախ կողմէն Խարատայ խոշոր վեցհարուած, կուրծքը խաշածև փամփուշտակայներով: Տուզարկներով փամփուշտ իրանին ամբացած, կատարեալ Ֆետայի: Այլ էֆէնտի զլխուտուրթեամբ կ'անուէր զինուորական շլթայի մէջ, առօք-փոսօք կը տանին մեծ հպարտանքով: Հարկը քաղաքապետարան հասած, հաւարուած Հայ, Թուրք, Չազա խուժանին մէջէն, Թուրքեր կը սկսին պոտալ. «Տեսէ՛ք, տեսէ՛ք, անգութ Հնուացի Ֆետայիներու պետը, տեսէ՛ք, մինչևև ոտքերու եղունգները զինուած. սպաննեցէ՛ք, սպաննեցէ՛ք, ողջ չթողուք այդ անգութը»: Թուրքի հոգեբանութիւնն, որ Հաւաւցին անգութ է իրենց համար, որ զէնք կրած է և զինու գորութեամբ թուրք խուժանին զիմադրած է, ներելի չէ Հայուն համար զէնք կըրել, իր կեանքն ու պատիւը պաշտպանել: Պարթևահասակ Հաճին ծիծաղ զէմքով, զլուխը բարձր բռնած, զէնքը ձեռքին՝ կ'անցնի խուժանին մէջէն, աջ ու ձախ կողմ շարուած զինուորներու մէջէն, կը կանգնի քաղաքապետին դէմ և իր ամբողջ զէնքերը կը թափէ անոր առջև: Այլ էֆէնտի կը յայտարարէ բարձրաձայն. «Ո՛ր ոք իրուանք չունի ձեռք վերցնելու այս հերոսին վրայ: Անոր բանակն արձակման օրն ու ժամը ինձի կը վերապահուի:

Ջարդն ու կոտորածը վերջ դառած և հրապարակը խաղաղած էր: Առաւօտ մը հերոս Հաճին կը տեսնուէր Հաւաւի հրապարակը, ծիծաղկոտ զէմքով. Բայաճովտի Հայեր, Թուրքեր կը հիանան որ կրցած է իր կեանքը ազատել զինու գորութեամբ:

Այս միևնույն հերոս Հաճին չէ կրցած իրեն համակիրները դրանել զիւզին մէջ 1915ի դէպքին: Ըսած է ժողովի մը մէջ. «Ինձի հետեւեցէ՛ք և ես առաջինը կ'ըլլամ կալերուն մէջ սեղանի նստած դայ-մազամ պէլի հետ և հետևորդներուն վրայ յարձակիլ գանձք յանկարծակիի բերել, զնդակահարել բոլոր այդ սճրապարծները որ Հաւաւի զէնքերը կը պահանջեն»: Ժողովականները կ'ըսեն Հաճին. «Դուն արիւնարբու մարդ ես, քեզի համար արլուն թափել, պաւաթ մը ջուր թափել ըսել է»: Հաճին նորէն իր զէնքին ապաւինելով կ'ազատի իր աղուն երուանդի հետ, Տէրսիմի վրայով Խարբերդ և անկէ ալ Ֆրանսա կ'անցնի և հոն իր բնական մահովը կը մեռնի: Հերոս Հաճիի և իր աղուն երուանդի կատարած քաջադարձութիւններու մասին, իրենց կեանքը փրկելուն մասին երկար պատմութիւն մը կայ Պր. Պօզոս կատարիկեանի Մարոզ ձրագնի գրքակցին մէջ: Կուսուլու փորձ եղած է: Հաւաւցիները գոհ գացած են իրենց այն խարկան-

քին որ 1915ի դէպքը Կիլիկեան դէպքին պէս խաղաղ դուրս պլտի գայ: 1908ին Սուլթան Համիտի գահէն վար առնուելու շրջանին որ Կիլիկիան թէ՛ ջարդեց և թէ՛ ջարդուաւ: Այս պատմութիւնը դրողը տակաւին Հաւաւ էր, ամբողջ շարաթ մը արհաւիրքի մէջ ապրեցանք ... ջարդի ու թալանի վախերով անցուցինք. ամէն օր լուր կ'առնէինք բարեկամ Թուրքերէն որ Հաւաւի մօտ բոյն դրած 100 տունէ բազկացած Գիւրում ըսուած թուրք զիւզը որ դարերէ ի վեր Հաւաւէն վրէժ ունէր առնելու:

Գանի մը զիւղերներ յարձակումի փորձեր կատարած են խումբերով, բայց ետ դարձած են կէս ճամբով: Իրենց զիւզին զլխուր Մըլա Իպիշը զուշացուցած է գանձք, որ Հաւաւը կարող է մեր ամբողջ զիւզը կրակի տալ. անոնք հիմա լու զինուած են (հերքիթիւն), անոնց իրաւունք տրուած է ամէն կարգի զէնքեր կրելու: Իսկապէս ալ Հաւաւը բուսական կոտորակական զէնքեր ունէր, ամբողջ շարաթ մը զիւղերները խումբերով կը շրջագայէինք: Պատրաստ ամէն յարձակումի զիմադրելու զինու գորութեամբ: Հաւաւը ազատեցաւ որոշ կոտորածէ և թալանէ, սոսկ անոր համար որ Բալուի կոտորակութիւնը հեռու կեցած էր թուրք ամբոխը հրահրելու:

Դարձեալ գանք 95ի կոտորածի շրջանին. ինչպէս Բալահովտի կարգ մը հայ զիւղացիներ, նոյնպէս և Հաւաւցիներու մաս մը, խումբերով Բալու քաղաքին Ս. Լուսաւորիչ Եկեղեցին ապաստանեցանք: Անգութ Ջաղաներ նորէն իրենց կեռ թուրքերով յարձակած անգէն ժողովուրդին վրայ, Եկեղեցիին պատուհաններուն մէջ պահուած մարդիկները դուրս քաշելով կը սպաննէին. մենք փոքրիկներով, ահով սարսափով երբ ուրիշ հայ զիւղացիներու մէջ կը մտնէինք, արհամարհանքով մեզ կը վստակին բռնելով. որ այս թալանն ու կոտորածը Հաւաւցիներուն երեսէն էր որ պայթեցաւ, բնաւ չեմ մոռնար այդ պարագան: Ս. Լուսաւորիչ Եկեղեցիէն զէպի Բողոքականներուն ժողովարանն ապաստանեցանք, հոն աւելի ապահով վայր համարելով: Կառավարութեան մէկ հրամանով խիստ կերողով վերջ տրուեցաւ կոտորածին: Որ ամէն ոք, հոս ու հոն պահոււթողներ դուրս եկան իրենց թաքստոցներէն, քաղաքին մէջ: Իսկ իրենց տուներէն հեռացող զիւղացիներ սկսան վերադառնալ իրենց կիսաքանդ, կլտավու բնակարանները:

Այդ կոտորածի ձմեռն անցաւ շատ մեղմ, հակառակ ուրիշ տարիներու ձիւն չտեղաց. տոտուածային բարիք մը, Բայաճովտը չէր տեսած: Սակայն վախէ, սարսափէ և անգութ կոտորածի արհաւիրքներէն ազատուողներ իրենց քաջած առապանքներէն, ան-

թի, կիսամերկ, տառապած շարժմաներով, ամիսներով, ուժառույժ, յուսահատ, Հայրենական մէջ ծագում առաւ հիւանդութիւն մը, կոտորածներէ աւելի մեռնողներ: Կիներ, մարդիկներ, երիտասարդներ. սիրտ չզիմանալիք պարագայ մը, որ ձեռքով դարձնող աղօրիներով, դարբի, կըլիւլ աղալ՝ հոյ պատրաստելու, որ ստատու-թեան մէջ աղբող Հայր բնաւ չէր անցըներ այդպիսի տառապանք: Չգոյութիւն ուսելիքի եւ վառելիքի: Գիւղն ալ եկողներ կիսաքանդ փլիւլուած, կիսալստ առներ կը քանդուէին շուտ եկողներէն, վառելիքի համար: Գրացի, բարեկամի, աղղականի հարց չէր մնացեր: Թշուառութիւնն ամէն բան ընել կու տար որ բերնէ բերան լըսած էի: Ամենէն ուշ գիւղ վերադարձող Պոյաճանց քաջ վարդանի հայրը, Բամպաստիկ Խըշարարը, Հաւաւ կը մտնէ իր ընտանիքով, կը տեսնէ իր սուներ բոլորովին քանդուած տարուած վառելիքի համար. կը կանչէ իր դրացի Լուսաւերենք Գեւոն եւ կ'ըսէ «Գեւո, օ-դուլ, դրացիներով տունս քանդեցիք, տարիք վառելիք. դոնէ եկուր սունիս տեղը ցոյց տուր:

Քաջ վարդանը 95ի դէպքէն առաջ մեռած էր Քերտեքուն մէջ իր ընտանի մահով: Ողջ ալ մնար՝ պիտի չկրնար Հաւաւը աղատել կատարած է եւ թալանէ, ալ Տէրտիմիանի կ'ըսէր, օգնութեան պալու հարց չէր մնացած, որքան ատեն որ Հաւաւը քանդուած մտքով կատարութիւնը զինուորներով եւ թնդանութիւններով քաղած էր Հաւաւի վրայ: Ջարդի եւ կատարածի օրերը վերջ գտած էին ամէն տեղ, բայց Հաւաւը հանդիստ չէր:

Շարիֆ Պէկի կողմէն հրահանուած գողութեամբ դրացի թուրքեր զիշերները յարձակում կը գործէին, ջարդ եւ թալան կերած կիսաքաղց եւ կիսամերկ, թշուառ վիճակի մէջ Հաւաւիներու վրայ, անոնց չունեցածը ձեռք ձգելու. կը տեսէ օրեր, շարժմանը. Հաւաւիները ճարահատ՝ 10 հոգինոց յանձնախումբ մը կը զրկեն Շարիֆ Պէկի խօնար, պէկին պաշտպանութիւնը խնդրելու, քաջ զիտնալով հանդերձ որ իրենց վրայ յարձակողները զիշեր տան, պէկին կողմէ լարուած դաւադրութիւն մ'է՝ Հաւաւիները ծունկի բերելու, դանտն քաղթահարելու, իր շար նպատակին հասնել, որ Հաւաւիներ ճարահատ՝ թող տան, խօնար հաստատելու գիւղին մէջ: Երբ պէկին խօնարը պայտ յանձնախումբը կը պատմէ պէկին իրենց կրած շարժարանքներն ու տանջանքները իրենց վրայ յարձակող գողերու եւ աւաղակներու կողմէն, պէկը կ'ըսէ անոնց որ այդ ձեր քաջած շարժարանքներն ու տատապանքները վերջ կը գտնեն այն ստեն, երբ ես գիւղին մէջ հաստատուիմ:

Դուք պարտուորուած էք ստորագրութիւն տալ ինձի գիւղին մէջ խօնար չիւնելու: Յանձնախումբը կը պատասխանէ անոր որ մենք քու պաշտպանութիւնը խնդրողներս կարող չենք հովիւ մը վարձելու առանց բոլոր գիւղացիներու հաւանութեան: Ի՞նչ արժէք պիտի ունենայ մեր առած ստորագրութիւնն ու հաւանութիւնը, երբ վաղը Հաւաւը դորանայ եւ բեզ նորէն գիւղէն դուրս քշելու զիմէ: Պէկը կատարած, փրփրած՝ դուրս կը քշէ յանձնախումբը եւ կ'ըսէ անոնց որ շարքն ու կտորածը կարելի չէ եղած ձեզ յաղթահարելու: Դուք միեւնոյն մարդիկներն էք, ձեզ պաշտպանելու ոչ մէկ քայլ պիտի չառնեմ, դացէք, քաշեցէք: Յանձնախումբը ձեռնունայն գիւղ դառնալէ վերջ, ուրիշ յանձնախումբ մը կ'երթայ պէկին, գոյն համոզելու որ յանձն առնէ գիւղը պալ: Կ'ըսեն անոր՝ գիւղը քուզ է, որ կ'օգտուիս դուն ալ, մենք ալ, եւ մենք կարող չենք մեր ուժերով այդ գողերուն եւ աւաղակներուն զիմադրել: Փորձ մըն է որ կը կատարեն խեղճ Հաւաւացիները: Շարիֆ պէկ իր որդին Թէֆօն կը զրկէ Հաւաւ: Թէֆօն, որ Թէֆիկ պէկ անունով կը յորձրոջնէր, կու պալ Հաւաւ, զիւղին մէջ շրջան մը ընելէ յետոյ կը կանդի վառուած դպրոցին սաջեւ, կը հրամայէ պարաններ բերել՝ կանդուն մնացած լեբի պատերը վար առնելու: Իր քով կանդնողներ կ'ըսեն. «Պէկ, դուն իրաւունք չունիս այդ պատերը վար բերելու, մենք շուտով մեր դպրոցը պիտի ունենանք»: Քաջ եւ անվախ Հաւաւացի վիրաւոր առիւծի մը պէս տակաւին կանդուն կը պահէ իր գլխուն բաշերը:

Պէկը հագիւ երկու շարժ կը մնայ Հաւաւ: Անկարելի գտնելով Հաւաւիներու հետ գլուխ ելնելու: Պէկի հետանալէն յետոյ գողեր, աւաղակներ նորէն կը սկսին իրենց շարժարձութիւնները յառաջ տանելու: Հաւաւիները կատարութեան կը զիմեն, գիւղին մէջ պահակ հաստատելու վեց ամսուայ համար: Կատարութիւնն կը մերժէ, այն առարկութեամբ որ իր տրամագրութեան տակ զինուոր չունի: Նախապէս պէկը համոզած է կատարութիւնը որ Հաւաւիներու պահանջներուն դոհացում չտան, որ անոնք բիրտօրէն մերժած են իր պաշտպանութիւնը: Հաւաւիները բուն կերպով կը բողբեն, անոր անտարբեր կեցուածքին դէմ, որ յանձն կ'առնեն ձեր ճանտարժան մը տրամագրել անոնց, պարտալ չձգելու անոնք եւ կ'ըսեն անոնց եթէ անով կը դոհանք: Հաւաւիներու անցելուն ծանօթ ճանտարժան յանձն կ'առնէ Հաւաւ երթալու. կ'ըսէ անոնց. «Ես անկարող եմ վաղվելու հոս ու հոն գիշեր ստաններ, բայց ծանօթ եմ ձեր քաջագործութիւններուն: Դուք ձեր բրտ-

նաձ գոգերը բերէք իմ սենեակս, իմ գրած ճուռնայնները կը բաւեն զանոնք կառավարութեան ներկայացնել, գոգեր, աւագակներ բանտարկութեան արժանի են»: Գոգեր, աւագակներ գրգուռած Շարիֆ Պէկէն՝ նորէն կու գան, որ այլ ծեր ճանտարման անկարող է զիրենք բռնելու: Հաւաւցիներ ամբարպետած ծեր ճանտարմայի ներկայութեանէն, խումբ-խումբ գիւղին մէջ շրջան կ'ընեն զիշեր ատեններ, քանի մը գոգեր կը բռնեն, լաւ ծեծելով կը յանձնեն կառավարութեան: Գոգեր կը գոռաւանան որ Հաւաւցիներ նորէն զօրացած են: Ճանտարման պէտք չունենար Հաւաւ մնալու, կ'երթայ քաղաք:

Հաւաւցիները, չնորհիւ իրենց արհեստագիտութեան, շատ գիւրտութեամբ կը սկսին գործեր գտնել գիւղերու, քաղաքներու մէջ, զբամ շահիլ, դէնք առնել, գիւղին մէջ Թուրքեր ծեծել, ցոյց տալով անոնց որ կտորածն ու թալանը չէ կրցած զիրենք ստրկացնել: Նորէն առներ կը բացուին, դաշտի կենդանիներու վրայ յարձակելէ քաջ եւ անվախ Հաւաւցիները լաւ մը ծեծելով թող կու տան, առանց կառավարութեան յանձնելու: Պէկը ուշի ուշով զիտելով Հաւաւցիներու քաջագործութիւնները, կը խորհի ուրիշ կերպ մնասել. սեւցընել զանոնք կառավարութեան առջև որ անոնք Ֆետայիներու հետ կապ կը պահեն: Պոլսէն նոր եկող Թուրք երիտասարդ քաղաքապետ Ալի Հոյլին կը համոզուի պէկին կողմէն որ Հաւաւ ֆետայիներու բոյն է, զանոնք զգաստացնելու պէտք կայ, որ երթալով չգորանան: Ինձի պէս Հաւաւցիներու մէջ յիշողներ կան որ այդ խնձ ու խելաւ քաղաքապետ Ալի Հոյլին երեք զինուորներով եկաւ գիւղ, կարգ մը աչքի գործուելիք երիտասարդներ բերել տուաւ կալին մէջ, որոնց անունները պէկը տուած էր գրաւոր: Ալի Հոյլին սկսաւ բարձրաձայն սպառնալիքներ կարգալ, որ դուք զիւղին մէջ Ֆետայիներ կը պահէք, յեղափոխական գործեր կը վարէք. պէտք է զանոնք ինձի յանձնէք, եւ սկսաւ վեցհարուած պարպել օդին մէջ: Իր շուրջ հաւաւքուած կիներ, երեխաներ սկսան լալ, պոռայ:

Ալի Հոյլին մէկէն զգաստացաւ իր ըրածներէն. անմիջապէս հեռացաւ գիւղէն: Երբ քաղաք կ'երթայ, քաղաքին կարգ մը ազդեցիկ առեւտրական Թուրքեր երբ կ'իմանան Ալի Հոյլին ըրածները, կը կշտամբեն զինք որ գուն իրաւունք չունէ իր Հաւաւցիներ անարկել. անոնք միշտ հլու եւ հնազանդ եղած են կառավարութեան: Ալի Հոյլին քանի մը շարաթէն կը հեռանայ Բալուէն: Մամսոնէն Պոլիս գացող նաւին մէջ Հաւաւցի երիտասարդ մը կը ճանչնայ զինք, կը խօսի անոր հետ: Ալի Հոյլին կ'ըսէ Հաւաւցիին որ զինք հրահրողը

Շարիֆ Պէկը եղած է: Հաւաւցիները պէտք է գոռաւանար, անոնց զիշեր ցերեկ լարած դաւերէն: Շարիֆ Պէկը օր մը Քիւրուսիցի Մըլլա իպիշը Հաւաւ բերել կու տայ եւ դպրոցին տանիքին վրայ զինք շրջապատողներու ներկայութեամբ գայն ծեծելու: Ամառուայ սկիզբի օրերուն, իրիկուն մը ուշ առնեն, մենք ազաններով Հաւաւքուած գոգերոցին առջև կը լսէինք որ պէկը շափա զափու Մըլլան կը ծեծէ, որ Մըլլան յանդիմութիւն ունեցած էր պէկին վրայ աւար աւելցնելու: Այդ զիշեր մենք կ'ակնկալէինք որ Քիւրուսիցիներ Մըլլային 10 արդաներով յարձակուած պիտի գործէին պէկին վրայ, ինչ որ տեղի չունեցաւ: Հաւաւցիները մեծ նախատինք կարգացին Քիւրուսիցիներուն որ գուք պոռտախօս մարդիկներ էք. մենք ընաւ պիտի չհամբերէինք որ պէկը մեր քահանան ծեծէք: Գասպարեան Հաճի Մարտիրոսը օր մը ըսած էր պէկին բարեկամ Քիւրուսիցի Սաֆօին որ պէկը իրաւունք չունի դուրսէն մարդ բերել գիւղին մէջ ծեծել: Սաֆօն Շարիֆ Պէկի տղուն Թէֆիկ Պէկի ականջը կը հասցնէ: Շարիֆ Պէկ երկու տղայ ունէր ձէմալ եւ Թէֆիկ: Ձէմալը վաղուց ստակած էր: Թէֆիկ Պէկ բարձր, Մասո Մարթայիք Մարտուպին խանութին ղէմ վորքիկ պարտէզին մէջ բերել կու տայ Գասպարեան Հաճի Մարտիրոսը, զայն ծեծելու, գոռալով բարձրաձայն մայր, կին հայհոյելով. Հաճի Մարտիրոսը կ'ըսէ բարձրաձայն. «Պէկ, քեզի ալ մայր, կին կայ»: Պէկը կը հրամայէ իր ծառաներուն. «Այս արեւցողը հեռացուցէք»: Հաճի Մարտիրոսը կ'ըսէ. «Պէկ, այսօր խմուած չեմ»: Պէկը կը գոռաւանայ անոր վրայ ձեռք վերցնելու, քաջ գիտնալով որ հետեւանքը կ'ընայ գէշ ըլլալ, որովհետեւ Հաւաւցի մը համար տանելի պիտի չըլլար հրապարակով ծեծ ուտել: Գճի կտորածէն վերջ Թէֆիկ պէկի ազգական Մահմուտ Սաղըխ պէկ, որ ան ալ Հաւաւի հողերուն մէջ բաժին ունէր, Հաւաւ կ'այցելէ, զիւրացիներուն վիճակը հասկնալու: Խումբ մը Հաւաւցիներ առջեւէն անցած առնն ոտքի չեն կանգնիր. աստիճանաւոր պէկը կ'ըսէ. «Ձաւակներս, ես ձեր պէկն եմ, սաքի կանդնեցէք, գուք զիս լաւ կը ճանչնաք»:

Տղաները իրենց նստած տեղէն կը պատտախանեն որ մենք պէկ չունինք: Ո՞ր էիք դուք երբ Թուրք խուժանը գիւղին վրայ յարձակեցաւ եւ քարուքանդ ըրաւ ամէն ինչ: Պէկը առանց ձայն-ձուն հանելու կը հեռանայ: Դարձեալ կտորածէն քանի մը տարի անցած՝ Թէֆիկ պէկ Մ. Յակոբ Լէյլէկեանի տանիքը բարձրած էր ծառաներով, ականատես կ'ըլլան որ Մարգիս Պըրեան Թուրքի մը կողքէն յափշտակած վեցհարուածը՝ կը գոռայ. «Թուրք Թուրքերը իրաւունք

չունիք դէնքով պտըակելու Հաւաւի մէջ»։ Թուրքն ի դուր կը ջանայ պէկին ուշադրութիւնը գրաւելու, որ Հայ մը Թուրք մը կ'անդատուէ։ Չէ պատահած ոչ մէկ ատեն որ զիւրը այցելող Թուրքեր իրար պաշտպանեն Հաւաւի մէջ։ Ծի կոտորածէն անմիջապէս վերջ, արեւը դեռ չպատած՝ զիւրին հերոս Աննան, այս պատմութիւնը զրոյզին մայրը, աչիւն գացած պահուն կը տեսնէ որ մասնաւոր շինուած աղբիւրին ջուրին գուռին առջեւ թուրք աշարճի մը հրապարակով աղակտէ կ'առնէ արձակ համարձակ, անպատկառօքէն։ Զուրի համար եկող հարսներ, հաւաքուած մէկ կողմ, կոնակներն դարձուցած դէպի աշարճին, կը սպասեն որ աշարճին ապառքը լմնցնէ։ Աննան քուլակ մը խլելով հարսներուն ձեռքէն, կ'անցնի աշարճիին կողքի միւս ջուրի գուռը եւ կը սկսի բուլակով արագ-արագ ջրջկնել աշարճին քաջարար, դայն ոտքէն դուրս բոլորովին թրջուած դուրս կը քէն աղբիւրին մէջէն, անոր երեսին դռաւով. «Գուն չե՞ս ամ չնար այս կիներէն եւ աղջիկներէն ու եկեր ապառքի կ'առնես հոս, անիծած Թուրք. դուն չե՞ս գիտեր որ այս աղբիւրը խմելու ջուրի համար է»։ Աշարճին սարսափած կը հեռանայ առանց ձայն-ձուն հանելու։ Որմէ յետոյ հարսներ, աղջիկներ կը հաւաքուին հերոս Աննային շուրջ, անոր ձեռքերն ու երեսները համբուրելով կ'ըսեն. «Աստուած ինչո՞ւ մեզի չէ տուած այդքան քաջ եւ անվախ հոգի. ո՞րչափ քաջ կին ես եղեր դուն»։

1900 թուականին երկու եղբայրներն՝ Արմենակ եւ Արամ Փափաղեաններ հաց եփելու փուռ մը շինել տուած էին։ Հաց եփած օր մը զիւրը տուրք հաւաքողի մը կը թելադրուի զիւրացի նախանձող անձէ մը որ նեղութիւն տայ այդ Փափաղեան երկու եղբայրներուն, որ իրաւունք չունին զիւրին մէջ հացի փուռ հասցնելու։ Գիւղը եկող հարկահաւաքներ միշտ առիթ կը փնտռէին Հաւաւիցիները նեղացնելու, միշտ ու միշտ զրգուած պէկին կողմէ։ Երկու եղբայրներս փութին առջեւ դրաղած, ես եւ մայրս Աննան ալ անոնց քով կանգնած՝ կը զիտէինք։ Մէկէն հարկահաւաքն ու ճանտարմաններս մտան եւ հարկահաւաքը սկսաւ եղբայրներուս վրայ պոռալ։ Եղբայրս Արամ ըսաւ. «Մենք մեր տուրքը վճարած ենք»։ Տակաւին խօսքը բերանը՝ մարակի հարուած մը ստացաւ հարկահաւաքէն։ Մայրս Աննան անմիջապէս պատասխանեց զօրաւոր աքացիով մը։ Հարկահաւաքը գառնարով ճանտարմային, տակաւին կը սպասե՞ս դուն, ըսաւ։ Էֆէնտի, ո՞վ կարող է Հաւաւի կնոջ վրայ ձեռք վերցընել. դուն յանցաւոր ես. ես քեզի ըսի որ զրուշանաս, դուն ինձի մտիկ չըրիր։ 40 տարուայ ճանտարմա եմ, տարուան մէջ քանի մը

անդամ Հաւաւ եմ եւ կամ Հաւաւէն կ'անցնիմ, իսկ դուն՝ հոգի թէ տարուան մէջ անդամ մը Հաւաւ կու դաս։ Հարկահաւաքը եղբայրս Արամը տարաւ, քանի մը փոքրց անցնելէ յետոյ թող տուած էր, ճանտարմային ստիպումով։ Հաւաւիցիներ ընդհանրապէս, կիներ, մարդիկներ պէտք եղած ատեններ իրենց քաջութիւնը ցոյց տուած են, շնորհիւ այն առաւելութեան որ Հաւաւի մէջ բնակող Թուրքեր չէլային որ հակառակ զիրք բռնէին։ Հաւաւի մէջ ճամբորդող կամ առեւտուրով եկող Թուրքեր կը վախնային Հաւաւի մէջ Թուրք պաշտպանելու։ Որ Հաւաւիցիներ կարող են զիրենք գատարան քաշել եւ պատմել զիրենք։ Ծի դէպքէն վերջ, Այոճայեց Յակոբն ու Զօյնեց Խաչիկը Զօյնեաներուն երեք բեռ բնկոյցներն աւարի կու տան զիւրին հրապարակին վրայ Թուրքերու ներկայութեամբ։ Ոչ ոք չի համարձակիր ձայն հանելու։ Զօյնեց Խաչիկը պոռալով կ'ըսէ Զօյնեաներուն. «Բնաւ չեմ մտնար որ դուք ձեր կեռ թուրքը մերկացուցած, կիներու, երեսներու ներկայութեամբ Խաչիկ Կեալուր դռաւով մարդիկներ կը փնտռէիք սպաննելու, որ ես պահուած էի քերածի կարասի մը մէջ, սարսափած, կարասը բերանին վրայ զարձուցած, որպէս պարսպ։ Ո՞ւր են ձեր այդ կեռ թուրքերը»։

Զօյնեցը պարսպ աւանակներն առած, ետ կ'երթան իրենց զիւրը։ Ծընաղ զիւրի եւ Հաւաւի դաշտին մէջ կը հանդիպին քաղաքէն վերադարձող Հաւաւիցի տղաներու, բարկութեամբ անոնց ֆէսերը կ'առնեն, քիչ մը հեռու երթալէ վերջ կը նետեն ճամբուն եղբրքին. տղաները կ'երթան կ'առնեն իրենց զլխարկները։ Զօյնեցը քաղաք կ'երթան եւ կը բողբեն կոտորուածներն որ Հաւաւիցիները իրենց բեռներով ընկոյցներն աւարի տուած են։ Կ'ըսուի անոնց. կարելի չէ դանտը գատապարտել, երբ չէք գիտեր թէ ովքեր են, անունով մականունով։ Կատալարութիւնը կ'ըսէ անոնց. «Գացէք ձեր միջոցներով բարեկամացէք Հաւաւիցիներու հետ, անոնց աղբանք ծախելու»։ Բայու քաղաքէն երկու ժամ հեռաւորութեամբ Եփրատ գետի եզրքին Յուն անունով զիւր մը կար, հնուց ի վեր զիւրացիները զեղեցկազէմ, չէկ մաղբով ցեղ մըն էին։ Աւանդութիւնը կ'ըսէ որ այդ Յոյն զիւրը Յոյներէն մնացած է տակաւին յոյն զերեգ-մանաքարեր մնացած են։ Լաւ առեւտրակներէն Ալի անունով, կը բարեկամանայ Կարապետ Ալլահանի որ Զօյնեաներ եւ Հաւաւիցիներու մէջ հաշտութիւն կը դոյացնէ, որմէ յետոյ Զօյնեան ազատ համարձակ իրենց ապրանքները կը սկսին ծախել Հաւաւիցիներուն։ Զարանձաղ-Փերեցի Կոփօեան Ալեքսան Էֆէնտի փէրի քաղաքին

կառավարական պաշտօնեայ, զինուոր մը արամազրուած էր անոր հոս ու հոն ճամբորդած պահուն: Կօփօհանին քոյրը Հաւաւցի Սըլաւոնիան Պաղատասարին կենն էր: Ամէն անգամ Կօփօհանը մեր զեւղը կը հանդիպէր Բալու քաղաք երթալու գալու ատեններ, 1895ի զէպօհն բաւական վերջ զիւղին կալին մէջ Ալեքսան Էֆէնտին իր թիկնապահ զինուորը կը ծեծէ ամբողջին ներկայութեամբ: Քիւրումցի քանի մը թուրքերու անմարտելի եղաւ որ Հայ մը հրապարակով զինուոր մը ծեծէ: Զինուորն արբեցած, իր հրացանը զողցնել տուած էր. հրացանը զողցողները Քիւրումցիներ եղած էին, որ երկու Հաւաւցի տղաներ տեսած էին: Հաւաւցիներ անմիջապէս զիրք բռնեցին Քիւրումցիներու գէմ եւ սկսան սպաննալ որ դուք իրաւունք չունիք Հաւաւի մէջ զինուոր պաշտպանելու. շուտով զինուորին հրացանը բերէք, եթէ ոչ ձեզ անմիջապէս քաղաք կը տանին իրբեւ զողեր: Քիւրումցիներ շուտով հրացանը բերելով՝ կը յանձնեն զինուորին:

Ալեքսան Էֆէնտին դաւադրարար սպաննուեցաւ Չարսանճազի պէկերէն: Հաւաւցիներ իրբեւ զերիշխող եւ անիրաւութեանց գէմ ծառայող տարր մը եղած են դարերէ ի վեր: Անգլո ջարդն ու կոտորածը չէր կրցած քաջ եւ անվախ Հաւաւցին ստորացնել, եւ զլուրիս ծուկու թուրքերու առջեւ զիւղին մէջ, զիւղէն դուր: 1902ի ամբան Հաւաւէն 35 հողինոց խումբ մը կ'երթար Արդընի Մատենի Զերմուի քաղաքի հանքային բաղնիքները կաղզուրուելու: Սուբրին մէջն էր Տ. Բաշլեան իր մեծ հօր հոգ տանող, իսկ եւ Տ. Փափաղեան իմ մեծ եղբորս կնոջ հօգատար: Սուբրին առաջնորդն էր մեր զիւղի համբաւուոր Պօղոս Աղա ձէլալեան, պարթեւահասակ, խելացի եւ անվախ եւ Պր. Յակոբ Թղթիկեան, հասակով փոքր, նոյնպէս խելացի եւ անվախ: Մեր ջորեպանները երկու թուրքեր, հասակաւ, չորս օրէն հասանք Զերմուի, տեղաւորուեցանք կոշտ քարերով տաղաւարներու մէջ, բաղնիքին մօտ: Տաղաւարները կը պատկանէին երեք թուրք եղբայրներու, երեքն ալ արատաւոր: Մենք վարձեցինք մեզի պէտք եղածին չափ տաղաւարներ մէկ ամսեայ պայմանով, կանխիկ վճարումով: Պայմանաժամը լրանալուն վերջին օրը Պօղոս Աղան եւ Պրն. Թղթիկեան յայտնեցին տաղաւարներու հողատար երեք եղբայրներուն որ մենք վաղը պիտի մեկնինք: Անոնք ըստ իրենց սովորութեան, զբամական նուէր պահանջեցին, որոնց պատասխանեցին ձէլալեան եւ Թղթիկեան թէ մենք պարտաւոր չենք քեզի նուէրներ տալու, ընդհակառակը դուք պէտք է մեզի նուէր տաք որ մենք ձեզմէ միշտ դնումներ ըրած ենք, հաւ, հակկիթ, կաթ, մածուն: Դուք փոխանակ չնորհակալութիւն յայտնելու, վերջին օրը

մեզ նեղելու կը ջանաք, որ մենք Աստուծմէ եւ կառավարութիւնէն զատ ոչ ոքէ վախ ունինք:

Անոնք անդրբրուելի մնացին, որ եթէ նուէր չտանանք, վաղը ճանապարհին յարձակման պիտի ենթարկուիք, անոնց պատասխանուեցաւ որ մենք չենք վախար ուեւ մէկէ, եթէ կեղ ըլլայ տեսնող ալ կ'ըլլայ. մենք պարտաւոր ենք, թող գան անոնք:

Պօղոս Աղան եւ Թղթիկեանը որոշեցին առաւօտուն կանուխ ելլենք, որ շուտով Զերմուի հողէն դուրս գանք որ մեր վրայ յարձակողներու դէմ իրաւունք ունենանք կոբւ բանալու իրենց հողէն դուրս: Մենք ունէինք կարճ շէշխանէ մը, որ Տիգրան Թղթիկեան պիտի գործածէր, իսկ Արբահամ ձէլալեան վեցհարուած մը 50 փամփուշտով:

Միեւնոյն ճամբայով դուրս ելանք Զերմուիէն. հաղիւ արևը ծայր տուած՝ թթենիներու տակ իջեւանեցանք: Տեսանք երեք զինուած թուրքեր մեզ շրջապատեցին: Անմիջապէս մեր երկու ջորեպանները վախով բռնուեցան, Պօղոս Աղան գանոնք հանդարտեցուց եւ անցաւ երեք զողերուն առջեւ, հարցուց անոնց թէ ի՞նչ կ'ուզեն: Անոնք ըսին որ՝ պէտք է մեզի յանձնուիք: Յ. Թղթիկեան, հրամեցէք, ձեզ տեսնենք. Արբահամն ու Տիգրանը խոշոր ծառի մը բունին կռթնած մտիկ կ'ընեն. թուրքերը հարցուցին ո՞վ են այդ երկու երիտասարդները. հայր Թղթիկեանը խիստ մեաթով մը պատասխանեց մեր պաշտպաններն են: Թուրքերը վիրաւորանք կրեցին որ քալելու անկարող Թղթիկեանը աւելի սպառնական կը խօսի, ձեռքի շարժումներով, ջորիին վրայ հեծած: Սկսան ծաղրել զանոնք. այդ հրացաններով եւ թուրքերով մեզ պիտի թալլէք, հրամեցէք, մենք զինուած ուղիք են ձեզ զրկողները:

Թուրքերը տեսան որ այս Հայերը տարբեր մարդիկներ են եւ սպառնական խօսքերով հեռացան. ըսելով որ՝ զիչերը մենք ձեզի հետ կը տեսնուինք. Պօղոս Աղան սրտաց անոնց ետեւէն. մենք ալ կ'ուզենք որ զիչերը առեն գաք. Աստուած կամ մեզի կամ ձեզի կու տայ: Մեր թուրք ջորեպանները տեսան որ Հաւաւցիները քաջ մարդիկներ են զիւղէն դուրս:

Այդ շրջաններուն Մուշի, Մասունի մէջ պատահած կռիւներու, տեղ-տեղ պատահած դէպքերու ձայներ բերնէ բերան կը լսէինք, թէ՛ Հայեր, թէ՛ թուրքեր: Միշտ վախի, սարսափի տակ կ'ապրէինք. Բալուի ամենէն շատ յոխորտացող հարկահաւաքը Զիլֆիլթար պէկ Հաւաւ եկած է տուրք գանձելու, Դիլիս Նչանի տունն իջեւանած է, սենեակի մը մէջ. Դիլիս Նչան զրպէտ, Նիկողոս Աղան մուխթար,

Չափաանկնից Սարգիսը՝ սպասարկող: Զերֆիխար պէկը միշտ պո-
ռալով կը խօսի, իրեն կ'ըսուի որ շատ չպոտայ: Հաւաւցիները աւելի
կը բարբաբին, աուրք չեն վճարեր դիւրութեամբ: չի հայհոյեր,
միայն Սարգ կեանքներն կը պոտայ: Չափողուն Սարգիսը, Մելիք
Չափողունին արժանի գաւակը, միտքը կը դնէ լաւ ճեմ մը քաշել
Զերֆիխար պէկին:

Իրիկուն մը լաւ խմած, գիտմամբ որոշուած ժամուն ուշ կու
գայ, ներս մտած պահուն Զերֆիխար պէկը նորէն կը սկսի գոռայ:
Մարգիս ձեռքին փայտը քաշած, մէկ մը նիկոզոս Աղային մէկ մը
Դիպի նշանին, երբորդ արուած մը կու տայ լամբին, սենեակը մութ
խաւար կը դառնայ: այս անգամ փայտի հարուածները կը դարձնէ
Զերֆիխար պէկին, որը կը պոտայ կը կանչէ, Աստուծոյ սիրուն
լամբը վառեցէք: հողիւ լամբը վառած, Մարգիս հեռացած է: Զեր-
ֆիխար պէկ կը փախի գիշերանց:

Աստուծուն ամէն ոք գիտցաւ որ Զերֆիխար պէկը մէջտեղ
չկայ: ոչ ոք գիտցաւ թէ ինչ պատահած է: Որմէ յետոյ կ'երթայ
Մատեն քաղաքի բանտին վերակացու կ'ըլլայ: Անոնք որոնք Տիրան
Բաշարեանի յուշերը կարգացած են, պէտք է յիշեն որ Զերֆիխար
պէկը ըսած է Տիրանին, որ Հաւաւցիները քաջ մարդիկներ են: Գո-
ռացող պոռացող հարկահաւաքները եւ ճանտարմաները միշտ ճեմ
կերած են, բան մ'ալ չեն կրցած ընել:

Ծճի դէպքէն քանի մը տարի առաջ, պոռացող գոռացող հար-
կահաւաք մը Հաւաւ կու գայ: լսած է Հաւաւցիներուն մասին եւ
կ'ուզէ ինքզինք քաջ մէկը ցոյց տալ: բռնութիւն կը բանեցնէ որ
դանձումները արագ ըլլան, եւ չ'ըլլար, որովհետեւ Հաւաւցիները
բռնութեան չեն հաստար, որ ոմանց տունը քանի մը անգամ պէտք
է երթալ: Հարկաւաքը յայտադումի պատճառը կ'ուզէ հասկնալ:
Մուխթար Աղան կ'ըսէ անոր որ Հաճի Պետրոս Տօլպաշեան եւ իր հե-
տեւորդները թելադրած են հասարակութեան որ ընդգրիմանան տուրք
տարու:

Մուխթար աղային նպատակը եղած է օրուան հարկահաւաքը
ճեմել տալ: Զինուորը անմիջապէս կ'երթայ Հաճի Պետրոսը կը բերէ
Չախտարեաններու գոմի սենեակը ուր իջեանած է հարկահաւաքը,
որ ձեռն առնէ է: Կ'ըսէ: «Դուն Հաճի Պետրոս, ժողովուրդը կը հը-
բահրես որ տուրք չտան»: Զինուորին կը հրամայէ որ Հաճի Պետ-
րոսը ձգէ մտրակի հարուածներուն տակ: Հողիւ մտրակի հարուած
մը, Հաճի Պետրոսը կ'առնէ մտրակը գիշուորին ձեռքէն, եւ այն-
պիսի աքայի մը կու տայ անոր որ իր հաւասարակութիւնը կ'ը-

սրւած՝ աքառ-թափառ կ'իյնայ կենդանիներուն մէջ, առանց չար-
ժուս ընելու: Հաճի Պետրոս մտրակը կը դարձնէ հարկահաւաքին,
առանց խնայելու, լաւ մը խարազանելէ յետոյ անոր գլուխը կը խօ-
թէ քուշնայի սմանին մէջ. մարդը կը պոտայ, կը ճշայ, կ'աղբթէ,
աման, Հաճի Պետրոս հիմա կը խեղդուիմ, թող տուր դիւ: Հաճի
Պետրոսը ազատ կը ձգէ դայն, որն ահ ու սարսափի մատնուած՝ ա-
նոր ձեռքը կը թօթուէ, ըսելով: «Դուն շատ քաջ մարդ ես եղեր,
հիմա գիտցայ որ մուխթարը քեզ հաս բերել տուաւ դիւ ճեմելու»: Եւ
յետոյ ձայնելով գիշուորին՝ ս'ըր ես գուն, թաղաւորին հացն ու-
տող անարժան գիշուոր, չէ՞ որ դիւ պէտք է պաշտպանես: ճորճո-
բալով կու դայ հարկահաւաքին քով, Էֆէնտի, կ'աղբի աքայի մը
կերայ որ ձիւն աքայիէն ալ զօրաւոր, որ կեանքիս օրերուն մէջ ալ-
պիսի հարուած չէի կերած: Վախցայ նոյնիսկ տեղէս շարժելու որ
այդ մարդը դիւ չսպաննէ:

Հարկահաւաքն ու ճանտարման կը հեռանան գիւղէն առանց
գանձումներ ընելու, բուն բողոք մը կը ներկայացնեն կառավարու-
թեան, որը կը պատասխանէ. մենք միշտ պատուէր տուած ենք Հա-
ւաւ դացող բոլորիդ ալ որ Հաւաւցիներու հետ մեղմ վարուիք: միշտ
ու միշտ յանցանքը ճեմ ուտողին է, ոչ թէ ճեմողին: մենք բան մ'ալ
չենք կարող ընել Հաւաւցիներուն:

Կառավարութիւնը չէ ծածկած իրականութիւնը, ըսելով ճեմ
ուտող հարկահաւաքին թէ բան մ'ալ չենք կրնար ընել Հաւաւցի-
նուն: Եկող ու գացող կառավարութիւններ տեղեակ անոնց ուժին եւ
կարողութեան, միշտ աղբարարած են ճանտարմաններուն եւ հարկա-
հաւաքներուն որ զոյճ վարուին Հաւաւցիներուն հետ: Գարբը ա-
ռաջ ձիւնոր ճանտարմայի մը անհետացումը, Շարիֆ Պէկի պէս հը-
զօր մէկ մը Պոլսոյ բարձր գատարանին մէջ յայթհաւարել մէջտեղին
է: Կարելի չէ ուրանալ որ Հաւաւցիներ Պոլսոյ մէջ սուլթանական
պատուանշան կրող Սալիֆաներու շնորհիւ կրցած են պահել իրենց
գիմաղբական ուղին, հետեւելով իրենց նախնիներուն պահած են ի-
րենց քաջութիւնը, ճեմած են բոլոր անոնք որոնք յանդիմած են գի-
ղին մէջ անարդարութիւններ գործելու:

Հաճի Պետրոս 5 հոգիով կուտի կը լսնուի 40 Յոյներու հետ
Պոլսոյ մօտ Գնալը Ատայի մէջ, կառավարական զօրժի մը համար:
5 Հաւաւցիներ 40 Յոյներ ճեմելով, գլուխ, թեւ կտորելով բոլորն ալ
ջուրը կը թափեն: Հաւաւցիները գատարան կը տարուին, անոնց
գատը կը պաշտպանէ Հաւաւցի փաստարան Կարապետ Էֆէնտի Սան-
լեան, ազատ արձակելով զանոնք: Գովարանելով զանոնք, բարձր-

ձայն յայտարարելով դատարանին մէջ, պատիւ Օսմանեան կառավարութեան, որ իր երկրին մէջ ունի աշտպիսի քաջեր որ օ անձեր կըրցած են զիրենք պաշտպանել իրենց վրայ յարձակող ԱՕ հողիներու դէմ, թեւ ու զլուս կտարելով ջուրը թափել: Օսմանեան կառավարութիւնը պէտք ունի աշտպիսի քաջերու, ոչ թէ թոյլ ու վախկոտներու: Կարապետ Էֆէնտի պաշտպանողական հրաշունչ ճառը կը ծափահարուի բոլոր հանդիսականներէն: Այս Կարապետ Էֆէնտին եղած է Հաւաւցիներու դատը պաշտպանող Շարիֆ պէկի դէմ Պոլսոյ բարձրագոյն դատարանի առջեւ, զայն չարաչար պարտութեան մատնելով: ԱՕ Յոյներու կրած պարտութիւնը, օ Հաւաւցիներու ազատ արձակումը մեծ յուզում կը բերէ Պոլսոյ Յոյներուն մէջ:

Հրապարակի վրայ մեծ անուն ձգող յոյն պոռոտախօս մը Պոլսոյ բացօթեայ սրճարանը բազմած բարձրածոյն կը հայհոյէ Հայ ազգին, Կարապետ Էֆէնտիին ներկայութեամբ, որն անմիջապէս վեր ցատքելով, վեցհարուածի մէկ հարուածով կը սպաննէ այդ մեծերան Յոյնը: Դատարանին մէջ Կարապետ Էֆէնտի կը յայտարարէ. Այո, ես սպաննեցի Մօջօ Էֆէնտին, իմ ազգիս հայհոյողը: Սպանութեան արժանի են բոլոր անոնք որ հրապարակով ազգի մը կը հայհոյեն: Այսօր իմ ազգիս, վաղը Օսմանեան ազգին պիտի հայհոյէ: Աշտպիսիները պէտք է մտքերը հրապարակէն: Կարապետ Էֆէնտին նորէն կը շահի իր գատը, մեծ խանդավառութիւնով ազատ կ'արձակուի:

Պոլսոյ մէջ Սանյեաններ մեծ անուն ունեցած են իրենց խալիֆաներով եւ փաստարաններով: Հաւաւցի Սանյեաններ Պէլքուրթի մէջ: Հաւաւցիները միշտ ալ դտնուած են կազմ ու պատրաստ կրուուելու որեւէ աեղ:

Պէկը իր գատը կորսնցնելէ յետոյ կը տանի Խարբերդ, շահելու մտք: Հարիւրաւոր Հաւաւցիներ դատարան կը լեցունին, պէկին դորձած չարազործութիւնները հաստատելու: ԱՕ գիւղերու տիրապետող պէկը չի յաջողիր մէկ վկայ անգամ ունենալ: Ո՞վ կը համարձակի դատարան դալ Հաւաւցիներու հակառակ վկայել: Կառավարութիւնը կը զարմանայ Հաւաւցիներուն վրայ: Դատարան, դատաւոր, պէկ, բոլորը թուրք, չեն կրցած Հաւաւցիին ծունկի բերել, դաբերէ ի վեր Հաւաւցիներ միշտ ալ յաղթական դուրս եկած են, որեւէ աեղ, իրենց իրաւունքները պաշտպանելու: Անոնք եղած են խելացի, իմաստուն մարդիկներ, որ գիւղը պահած են միատարր, ոչ թուրք, ոչ Բիւրա, ոչ Բողոքական, ոչ Կաթոլիկ, գուտ Լուսաւորչական, արտակարգ զոհարերող ազգին, եկեղեցիին եւ զպրօցիին հա-

մար: Անոնք եղած են լաւ արհեստաւոր, կառուցանող, հայրենասէր, ազգասէր: Անոնք վաղուց ունեցած են Ուսումնասիրաց եւ Ազգային Ընկերութիւն, ինքնապաշտպանութիւնը, հայեցի դաստիարակութիւնը համաչափ առաջ տարած են: Ազգային Ընկերութեան հիմնադիրը եղած է Լ. Կարեան 1895ին:

Իսկ Հաւաւի Ուսումնասիրացը հիմնուած է Պոլիս, որուն թուականը ոչ ոք գիտէ: 57 տարի է որ Հաւաւի Ուսումնասիրացը կը շարունակէ Ամբրիկայի մէջ կանոնաւոր, առանց բաժանմունքի:

Ուսումնասիրացի եւ Ազգային Ընկերութեան հիմնադրուածը ցոյց կու տայ որ Հաւաւցիները վաղուց ի վեր հաստատուող եղած են զէնքի եւ ուսմունքի:

Եղած են ճշմարիտ Հայեր, իրենց հաւատամքին վրայ հաստատ, օտար վարդապետութեան, օտար դաղափարի չենթարկուող: Կոտորածէն առաջ եւ վերջը շատ փորձեր եղած են գիւղին մէջ Բողոքականութիւն հաստատելու, բայց յաջողութիւն դտած չէ: Կոտորածէն յետոյ չըլլիկ հայ պատուելի մը գիւղին մէջ դաղափի ժողով մը կը գումարէ քանի մը միամիտներու ներկայութեամբ: Բարոյի ատեն քանի մը երիտասարդներ վրայ կը հասնին, պատուելին ծեծելով տունի մը մէջ եւ դուրս կը քշեն զիւրիցն:

Գիւղին մէջ աւելի ուսեալ եւ Բողոքականութեան յարող Պրն. Պետրոս Աւագեանի հետ բարեկամութիւն կը հաստատէ զիւրիցն քահանայ Տէր Պաղտատար Փափագեանը իր եղբորդին անոր աղուն կնութեան աւրով իսպառ կը հեռացնէ Պրն. Պետրոսը Բողոքականութենէ: Անգամ մը միտինար մը եւ իր կինը ձիով զիւրը կու դան եւ զիւրիցն պատուելին կ'ուզեն տեսնել. անոնց կը պատասխանուի որ մեր գիւղը պատուելի չունի, մենք Բողոքականութեան չենք հաւատար: Պատուելի մը գիւղը եկած էր Բողոքականութիւն հաստատելու, զայն մերժելով դուրս քշած են: Միտինարն ալ չաթ ու փաթ հայրէջնով կ'ըտէ. «Կ'ուզեմ ձեզի ողորմիլ»: Անոր կ'ըտուի. «Նախ դուն քեզի ողորմիր, քիչ մը մաքուր հայրէն սորվիր»: Միտինարը կը հեռանայ:

Հաւաւը ըլլալով պատմական գիւղ մը հին դարերէ ի վեր, եւ կեղքոն՝ հայ մշակոյթի՝ ունեցած է այցելուներ թէ՛ օտար եւ թէ՛ հայ նշանաւորներ: Հոս զանց պիտի առնեմ հայ այցելուներու անուններ յիշատակել, որ շատեր թէ՛ զրքերու մէջ կարգացած են եւ թէ՛ բերանացի լսած են:

Գեռ Պր. Կարեան գիւղն էր եւ Մկրտիչ Փափագեան ոչ: Թրքախօս գիտակից Արար մը կու գայ գիւղը, ձիով եւ իր ազգային

տարազով, կ'ըսէ անոնց որ արարեւին զերբ մը կարգացած է Բայու-
քաղաքին անունով, որուն մէջ մեծ յիշատակութիւններու տեղ տըր-
ուած է այս զիւղով, հին և պատմական հնութիւններու և կեդրոն
հայ մշակչութի: Փափաքեր է տեսնել զիւղին ունեցածները: Անոնք
ցոյց տուած են զիւղին զլիտուն ինքնարուխ ազրիւրը, զիւղին քարա-
հանքը, վանքը, եկեղեցիներն ու սրբավայրերը տարած են, զաշտ,
տեսած է բուրբ, վրան ելած է, ցոյց տուած են բուրբ շուրջ կու-
տակուած կլոր-կլոր քարերը: Արարը շատ գոհունակութեամբ կը
հեռանայ:

Կու զայ զիւղը շէյխ մը և կ'իջեւանի իմ ազգական Յարու-
թիւն Փափաղեանի տունը իր երկու ծառաներով, ձիով և պատկա-
ռելի դէմքով և հասակով: Տեսութեան կու գան զիւղին քահանա-
ներն ու երեւելիները, կու զայ և իմ մօրեղբայրս Սաշատուր Փա-
փաղեանը: Կը տեսնէ շէյխը, երեսին քաշած սեւ շորաշ մը, շքա-
պատուած այցելուներով, կը խօսի արձակ համարձակ, բոլորին ալ
ուշադրութիւնը դրուելով իր խօսքերով: Սաշատուրը երիտասարդ,
25-27 տարեքին մէջ, իր տառջին տեսութիւնով կ'ըսէ շէյխին.
«Պուն Հայ ևս ևս քու Հայ ըլլալը չես կրնար ծածկել»: Շէյխը կը
բորբոքի, կը յուզուի, քահանայ հայեր, այցելութեան եկողները
կը բարկանան Սաշատուրին, որ դուն իրաւունք չունիս այդպիսի
մտքեր յայտնելու: Շէյխը իր զրուրիկ քարը ցոյց կու տայ, հա-
կիթի մեծութեամբ, կարմիր, կլոր, վանդակաձեւ է և կ'ըսէ. այս
քարը կը ստացուի անձամբ Մէքէէ գացող շէյխութեան արժանի
անձնատրութիւններ: Սակայն Փափաղ Սաշատուր անդրդուելի կը
մնայ, կրկին ու կրկին անգամ ըսելով դուն Հայ ևս: Հրեշտակ ըլ-
լաս, երկինք ելլես՝ դուն Հայ ևս ևս Հայու դաւակ ևս: Կը յուզուին,
կը բորբոքին Շէյխին երկու ծառաները, որ իրենց պաշտելի տէրը
այսպիսի փորձանքի մը մէջ ինկած է: Միտ օրը շէյխը կը հեռանայ
զիւղէն: Բաղահայրի բոլոր թուրք զիւղերէն զբամական նուէրներ
զանձելով իրբեւ շէյխ: Կ'իջեւանի Հաւաի մօտ Պէտէվին ըսուած
թուրք զիւղ մը, բուական ունեւոր Իսմայիլին տունը, ևս անոր զե-
ղեցկաղէմ աղջկան հետ կ'ամուսնանայ: Իր երկու ծառաները ամ-
բողջ ձեւեր Իսմայիլին տունն ապրելէ յետոյ զարնան զէպի Կովկաս
կ'ուղևորուին, աղջկան հայրը Իսմայիլին հետը առած, որ Կով-
կասի մէջ իր ունեցած կալուածները ծախելով ևս պիտի զայ Բայու
Պէտէվին. հոն հաստատուելով իր բնակարանը, համաձայն իր տուած
մեծ խոստումին: Շէյխը, երկու ծառաները, Իսմայիլը, Բայուի
հողէն դուրս, անմարդարնակ ճանապարհի մը վրայ Շէյխը մէկէն

կանգ կ'առնէ և կ'ըսէ ծառաներուն. «Տակաւին կը սպասե՞ք, քարո-
տեցէք այդ շուրջ: Իսմայիլ հայերէն զիտնալով, շուտ մը կը փա-
խի, ևս կու զայ Պէտէվին և կը պատմէ իր զլիտուն եկածը: Ամբողջ
զիւղը թունդ կ'ելլէ, լուրը կը տարածուի ամբողջ Բայուսովիտի
մէջ, որ այդ շէյխը Հայ եղած է, որ կերպարանափոխուելով մուսու-
լման է Բայուի թուրք զիւղերուն մէջ, նուէր անուան տակ կո-
ղտուած է բոլորն ալ սուսիկ-փուսիկ. և ամենասարսափելին որ
մեղքը մտած է թուրք աղջկայ մը, զայն կ'նութեան առնելով, յետոյ
ձգած ու փախած է: Բոլոր Հաւաւցիները սփ ի բերան կը մնան որ
այդ շէյխը Հայ եղած է: Անոր իջեւանած օրը Հաւաւի մէջ ոչ ոք
կուտած է անոր Հայ ըլլալը, բայց Փափաղ Սաշատուրին, այդ ի-
մասուն և քիտասարդէն, որ իր տառջին նայուածքով բաժն է անոր
երեսին քաջարար՝ դուն Հայ ևս, որ երկինք ելլես, չես կրնար հա-
մուրել: Այսպէս եղած են Հաւաւցիները, խորագէտ, իմաստուն մար-
դիկներ, որ մէկ նայուածքով կրցած են մէկու մը զէմքին վրայ կար-
գալ իր խելութիւնը, անոր կեղծ ու խարդախ ըլլալը անխալ:

Գ՛նի կոտորածէն յետոյ, ամբողջ Հայութիւնը կորսնցուցած
ամէն ինչ, շուարած մնացած էր: Ո՛չ դրոճ, ո՛չ դրամ, ամէն ոք
բանտարկուած կը մնային քաղաքներու և զիւղերու մէջ. երկրէն
դուրս ելլելու ոչ մէկ հնարաւորութիւն, իր երկրին մէջ ճամբորդե-
լու նոյնիսկ արգելք դրուած էր:

Հայ ազգային դրոճի, աշխատանքի հաւատացող, հանդիստ
չէր աւներ, ծուլ մնալ, անհող նստիլ: Մեծ փափաք կար Հաւաւցի-
ներու մէջ Պոլիս երթալ, Ամերիկա անցնիլ, բայց Օսմանեան կա-
սովարութիւնը չորս կողմէն զուտները գոցած էր. հիմակուան Ռու-
սիայի պէս. ոչ ոք իրաւունք ունէր դուրս ելլելու, երկրին մէջ
ճամբորդուներ կը բռնուէին, ևս կը դարձուէին: Հաւաւցիները
զազանի ճանապարհներով կրցան Ամերիկա ստգ կոխել, զբամ վա-
տըկիլ և զազանի ճանապարհներով զիւղ մտնել, զիւղին մէջ զազանի
սպրիլ, զբոցիներու բնաւ չերեւնալ, որովհետեւ Օսմանեան կա-
սովարութիւնը արտասահմանէն եկողները միշտ կը հետապնդէր.
Թուրք լրտեսներու կողմէն միշտ, մասնաւորապէս Քիւրում ըսուած
թուրք զիւղացիներ, Հաւաւի դարուոր սխերիմ թշնամի, զիւղին
մէջ կը պտտուէին, որպէսզի Ամերիկայէն եկող մը նշմարէին, անու-
նով մականունով կատարութեան մատնէին. ոմանք կաշառքով
ժամանակ մը ազատ կը մնային, բայց միշտ ծածուի:

Այդ թուականներուն Հաւաւ կու զային զազանի յեղափոխա-
կաններ, ծպտուած, մուրացիկներ կերպարանքով, միշտ զիտուիլ

աչքով: Մայրս ըսած էր որ երբեմն եկեղեցիին դրան վրայ կեցող աղքատներ բեր մեր տունը, մի սպասեր որ միշտ ուրիշներ աանին այդ խեղճերը:

Իրիկուն մը եկեղեցիին առջև կանգնած երկու աղքատներ առի՝ տուն բերելու: Ղեռ մեր տունը չհասած՝ անոնք կանդ առին Թղթիկանց ձկնի հանքին դրան առջև, հոն գործող տղաներու ձայները առնելով: Այդ միայրկանի շէնքը Թղթիկանց կը պատկանէր, որ կատաւորի, շուշմայի իւզեր հանելու, կորկոտի, պղլուրի թեփեր հանելու համար էր: Աչուն երեկոյ մէջը ինծի ըսին որ երթամ մեր տունէն կերակուր, անկողին բերեմ, զիշերը հոն մնալու: այդպէս ալ ըրի. ես ալ հոն կեցայ մինչև կէս զիշեր: Անոնք ամբողջ զիշերը երգելով անցուցին: Առաւօտուն կանուխէն հեռացած էին:

Օր մըն ալ խանութն եկաւ եւրոպական տարազով երիտասարդ մը, իր զգեստները գլխամար ցեխտած, կարտած, ինքզինք խնթ ձեւացնելով, Թուրքեր, Հայեր իր վրան խնդալ տալով, տունէն կերակուր բերել առի, կերաւ, իր կտակածելի զիրքէն բան մը հասկնալու համար՝ իմ փեսաս Սարգիսը իր տունը տարաւ, Սարգիս չէր կրցած բան անոր բերնէն առնել: Միայն փամփշակալով միտտեղ վեցհարուած մը ունենալը նշմարած էր շատ գծաւարութեամբ, որ պատեւած ատեն շատ գագանի կերպով պահած էր բարձին տակ: Այս երիտասարդն ալ առաւօտուն կանուխ հեռացած էր:

Գիւղին մէջ այդ չըջաններուն կոմիտէ գոյութիւն չունէր: Կարեանի զիւղէն հեռանալէն յետոյ Ազգային Բնկերութիւնը կամաց կամաց գոյութենէ զազրած էր, անոր տեղ հիմնուած էր Հնչակեան Կուսակցութիւն, յետոյ Դաշնակցութիւն, Ռուբէն Զարգարեանի միջոցով, որ զիւղը կեցած էր շարաթէ մը աւելի: Իր կազմած կոմիտէն վերջ գտած էր, ոմանց Ամերիկա երթալով: Իրականութիւնն այն էր որ Հնչակեան եւ թէ Դաշնակցական երկու կուսակցութիւնները իրենց քարոզած դադարներով պաշտելի դարձած էին Հաւայցիներուն հաւատարապէս: Սոսկ անոր համար երկուքն ալ հայ ազգի ծոցէն դուրս եկած էին: Որեւէ դադար, վարդապետութիւն որ օտարէն ծնունդ առած էին, Հաւայցիներուն համար չափազանց առելի էր: Պարզարեանի օրով քարոզուած Դաշնակցութիւնը չուտով վերջ գտաւ: Անկէ յետոյ Սարգիսեան Եւ Տիգրան Պաղտիկեան վերակենդանացուցին նորէն Դաշնակցութիւնը, կուսակցութեան մասին տեղեկութիւններ տալով դպրոցի աշակերտներու առաջին կարգի տղաներուն, շատ դադանի, Շարաթ օրեր կէսօրէն

վերջ դուռը գոցուած սենեակի մը մէջ: Ա. կարգի աշակերտներուն մէջ էր այս պատմութիւնը զբողը, որ մեր ծնողքներն անգամ չէին գիտեր թէ մենք Դաշնակցութեան մասին դասեր կ'առնէինք: Նախ Տիգրան Սարգիսեան, անկէ յետոյ Տիգրան Պաղտիկեան, Մանուկ Պալեան, Բալու քաղաքացի, Մանասարեանի աշակերտ: Բայց ոչ կազմակերպուած կոմիտէ: Այս երեք դասատուները աշխատանք կատարած են Դաշնակցութիւնը տարածելու, դպրոցի աշակերտներուն մէջ, յետոյ ալ կարգ մը երիտասարդներու հետ ծանօթանալով, անոնք ալ յեղափոխեցին, բայց շատ դադանի: Առանց դպրոցական շրջանու աւարտելու առեւտուրի գործին մէջ մտայ. չիթ, չիթարա, օճառ եւ այլ ապրանք ծախելու խանութ ունեցայ: Որ այս պատճառով տարին երկու-երեք անգամ Սարգիսը կ'երթայի դնումի համար. վեցհարուածներ ձեռք ձգելու դադանի միջոցով, Մաղրայի խալաչինոցի շրջանի տալլալ Պաղտասարին հետ ծանօթացայ, որն եղաւ ինծի զէնք հայթայթողը: Ես եւ իմ հօրեղբորորդի Պարոյրը միտտեղ Սարգիսը կ'երթայինք, առած ապրանքներու մէջ վեցհարուած եւ փամփուշտ պահելով, բեռցուած աւանակի վրայ զիւղ կը բերէինք: Օր մը անտանկալ կերպով ձերբակալուեցայ Սարգիսը քաղաքի շուկային մէջ, վրաս բան չգտաւ ոստիկանը, հարցուց ինծի ո՞վ կը ճանչնամ, ըսի Թէրթիկեաններ, Թիւֆէնկեաններ, Տարազ-ձեաններ. Ոստիկանը զիս տարաւ Զէնճիլի խանը, Տարախեանին հարցուց, դուն այս տղան կը ճանչնաս: Ըսաւ այո, ան կտակածելի մէկը չէ, թող տուր:

Ամէն կերպով ես կ'երաշխաւորեմ: Եւ ես ազատ ձգուեցայ: Տալլալ Պաղտասարին պատմեցի. ըսաւ մի վախնար, քեզի պէս շատեր կը ձերբակալուին շուկային մէջ քալած ատեններն իրբեւ կտակածելինք. յետոյ սպասող կը թողուն երբ վրանին բան մը չեն գտներ: Այդ տարիներուն ջարդի եւ թալանի վախերը միշտ կային, որ ամէն ոք զէնք ձեռք ձգելու մասին կը խորհէր, որ Ամերիկայէն եկող Հաւայցիներ, դադանի զիւղ մտնողներ կը թիւադէին որ զէնք զենքը: Դարերէ ի վեր Հաւայցիները միշտ զինասէր եղած են: Զէնքի ձայնէն ախորժող, որ հարսանիքի օրերուն զէնք կրէի, զէնք պարպել մեծ հաճոյք էր: Յետոյ այդիներու ատենները զիշերները, մասնաւոր Շարաթ եւ Կիրակի երեկոները պարպուած զէնքերու ձայները կարելի չէր միտք պահել:

Մասքաճի Սայիտ Պէկ զիւղին աշարն առնող, զիւղը կը մնար մինչև կալերէն վերջ: Գիշեր ատեն այդիներ պահելու աստջին

Շարքի երկուցան երբ հրացանի ձայնը կ'առնէ կը զարմանայ, թէ ի՞նչ է որ տեղի կ'ունենայ: Կ'ուզէ պարզուած հրացաններուն համարանքը պահել, որ միւս օրը քաղաք երթայ եւ կառավարութեան պատմէ: Ծանօթ շարճիներ կ'ըսեն պէկին, այդ սրուածը քեզի պահէ, ոչ դուն, ոչ ալ կառավարութիւնը կրնայ արդեւ ըլլալ, ա՛նոնց հրացան պարպելուն: Չգոյշ կեցիր որ զնդակ մը քեզի չզպի:

1907 թուականներուն Ամերիկայէն դադարի եկողներ մասնաւորեցան թուրքերու կողմէն, որոնք ձերբակալուելով զրկուեցան Պարսերդ, Աւստրիա վրայով երկրէն դուրս քշելու: Հաւաքները Պարսութեան Յ. Էֆէնտին կը դիմեն զիրենք բանախն ազատելու համար: Ան կ'ըսէ անոնց, կարելի է ձեզ ազատել կաշառքով, զրկել զիւզ եւ ձեր տեղ ուրիշ 5 Հաւաքները Ամերիկա երթալ փափաքողներ զրկել: Գիւղէն 5 Հաւաքները կը բերուն եւ կը փոխանակուին, որոնք իբր Ամերիկայէն եկողներ ճամբայ կը հանուն երկրէն դուրս քշելու: Ամերիկայէն իսկական եկողներ բանախն կը հանուն եւ ծածուկ զիւզ կը բերուն: Չար բախտի բերումով տուն գացող 5 Հաւաքները կը նշմարուին Հաւուկ զիւզի առջեւ, զետեղեքը նախապէս Բալուէ Պարսերդ տանող ճանտարմային կողմէն, որն ափ ի բերան կը զարմանայ թէ՛ այս մարդիկները Բալուէ Պարսերդ տարի երկրէն դուրս աքսորելու: Հիմա ազատ համարձակ զիւզ կ'երթան: Նորէն կը ձերբակալէ եւ կը տանի Պարսերդ: Կեղծիքը երևան կ'ելլէ, կառավարութեան կը հեռագրէ, կեղծ միջոցով Ամերիկայէն եկողները կը ձերբակալուին Կիրասոնի նաւահանգիստը եւ ետ կը բերուն Պարսերդ Մազրան, անոնք ալ կը բանտարկուին: Հոչակաւոր փաստարան Պօղոս Էֆէնտի Հատկանն է: Այդ օրերուն ես ալ Պարսերդ կը դանուէի, հինգ Հաւաքներէն մէկը իմ ազգականներէս էր: Պօղոս Էֆէնտին հոգն ու մտածումն էր Պարսութեանն ազատել, եւ յաջողեցաւ ալ: Այդ 5 Հաւաքներէն Մազրաք Բարէլեան յանձնառու եղած էր Ամերիկա երթալ: Միւս չորսը բերուեցան գասարան, եւ որովհետեւ զսրուած կեղծիքը կատարուած էր Պարսութեան Էֆէնտի միջնորդութեամբ եւ փոխ Համտինի հաւանութեամբ, անոր երկու թուրք փաստարանները ջանացին գործուած կեղծիքը բեռնել Պարսութեանի վրայ: Սակայն 4 Հաւաքները մէկ բերան յայտարարեցին որ զիրենք համոզող փոխ Համտին էր, ոչ թէ Պարսութեանը, բարձրաձայն յայտարարելով որ փոխ Համտին էր որ առաւ մեր դրամները: Կատրած թուրքեր եւ փոխ Համտին իրենց բարկութենէն կտոր-կտոր կ'ըլլային, որ առանց զոյգն վախ ունենալու կը սեւցուի եւ անարդանքի սիւնին կը գամ-

ուի, այնքան վարք ու բարք շահող փոխ Համտի մը Պարսի կեանքներու կողմէն: Քաջ եւ անվախ Հաւաքները զսրուած կեղծութիւնը հազուեցին սամալ բիրքի պէս փոխ Համտինին: Դատարանի մէջ ներկայ գտնուող Հայերու սրտին մէջ լոյս կը վառուի որ փոխ Համտինի պէս ամբարտաւան մը իր գործած շարճերն պատիժը կը դանէ հրապարակով: Որ անգիծողներ արիւնք մտած էր Յարէթ Յակոբի պէս մաքուր յեղափոխականներու: Վրիժառու Հաւաքին եթէ չի կրնար Ֆիդէլիտայէն մեռցնել, զոնէ բարոյսպէս մեռցուց այնքան ամբարտաւանացած փոխ Համտին, Պոլիսէն ստացած իր շքանշաններով ու պատուանշաններով շփացած, որ պատիժ ու պատուհաս դարձած էր Պարսերդի Հայութեան:

Մէկը չիյնար Հաւաքին երկաթէ զարշապարին տակ, անոր ազատու չկար: Պարսերդի գատարանին առջեւ էր որ Շարքի Պէկի պէս բարբարոս մը ստին իրենց զարշապարին տակ եւ ճգմեցին: Հաւաքին ամբողջ երկու հազար տարի զարնելով պահած է իր գոյութիւնը: Բոնապարտներու առջեւ զլուխ չէ ծոած: Անոնք եղած են մեծով պղտիկով քաջ եւ անվախ, կոռուղ, մարանչող: Փօլիս Համտին երկու թուրք աղուէսպէս փաստարանները ի զուր ջանացին ազատել փոխ Համտինը անուանի հայ փաստարան Պօղոս Էֆէնտի նարեանին ձեռքէն: Ինչպէս զժուար է ազատել որս մը առեւծի մազիյներէն: Ամէն անգամ որ Պօղոս Էֆէնտին կը խօսէր, ամբողջ գատարանի ժողովուրդը հիացումով մտիկ կ'ընէր: Պատմութեան մէջ չէ տեսնուած որ Հաւաքին գատ կորսնցնէ: Թշնամիին յաղթելու համար տուեղալոյնն ըրած է, հիմք բանելով իր նախնիներուն քաջութիւնը: Ապահովարար փոխ Համտին կորսնցուց իր վարկը, անիրաւորէն շահած անունը, պատուանշանն ու ստիճանը:

Չորս աքսորուածներու պատճառաւ Ամերիկայէն դուրս ելլողները դեռ թուրքիա ոտք չըրած ետ կը վերադառնան, ոմանք ալ թուրքիա մտած, անտեղեակ ոմանց աքսորուելուն, զիւզ եկան: Ծածուկ պահուելով, միայն զիշերները դուրս կ'ելլէին, իրենց բարեկամներուն եւ ծանօթներուն այցելութիւն տալու: Որովհետեւ տուեղալոյնի պատրուակով զիւզ եկող Ֆիդէլիտներ որսի չունեցան պէս Ամերիկայէն եկողներ կը փնտռէին կառավարութեան մասնաւոր: Անասնելի կացութիւն մը ստեղծուած էր ոչ միայն Հաւաքներու, այլեւ ամբողջ թրքահայաստանի մէջ:

Օր մը ամառուայ առաջին ամսուն քաղաք գացողներ լուր բե-

րին զիւրը, որ Սուլթանն Համիտ պատուութիւն շնորհած է ամբողջ թուրքերոյ ժողովուրդներուն, հին ութիւր փոխուած է: Երկրին մէջ երթեւեկութիւնը ազատ ձգուած է թէ՛ Հայերու եւ թէ՛ թուրքերու: Անոնք պատմեցին որ քաղաքին շուկաներուն մէջ մուսուլմանները պտուղացած է, Աղատութիւն, Աղատութիւն. շուկայի մէջ Հայեր, թուրքեր համբուրուած են իրարու հետ, տալու զուտնայով էտլուանը քաշած, մաշալլա պտուղացած, մաշալլան թուրքերուն ամենարարձք արտոյտութիւնն է ուրախութիւններու եւ հարսանիքներու, տոնամաներու ատեն: Տեսնուած են պատերուն վրայ փակցուած յայտարարութիւններ ու Պալիսէն եկած հեռագիրներու պատճէններն որ պատուութիւն կուտան համայն թրքարմակ ժողովուրդներուն:

Հետեւեալ օրը խումբով քաղաք վազեցին, հասնելու համար թէ իսկապէս պատուութիւն եղած է, թէ ոչ պարագ պտուղացուածութիւն է. երկրորդ օրուան քաղաքէ կողմեր նոյնպէս պատմեցին թէ Պալիսէն եկած լուրը շիտակ է: Ամբողջ քաղաքը իրախճանքի մէջ է: Այնպէս եղաւ որ շարքեր երեք անգամ քաղաք զացողներ եղան, նոյնիսկ ամէն օր զացողներ, գիտնալու համար թէ տեսական պիտի ըլլա՞նք: Անքէ մտքէ շանցնելիք բան, արտակարգ բնութենէ զերջ, արտակարգ պատուութիւն: Օր մըն ալ Լեւոն Փափազեան, Օննիկ Պոյաճեան քաղաքէն իրենց հետ բերին Չարսանճաղցի Ֆետայի Աւետան, մաղիւր հինայով ներկուած, խումբ մը ձեռին: Լուր սանոզն եկաւ, Պոյաճի Մարտուպին տանիքին վրայ սոք զնելիք սեղ չմտայ: Ամբողջ գիշերը անցուցին զուարճանալով, ուրախանալով Աւետայի երգերով ու պատմութիւններով. միւս օրը ուղեւորուեցաւ իրեն ծննդավայր Իջմայիլ, Փերին: Ինչչափ ուրախ կը զգայինք որ ազատութիւն կը տիրէ: Ամենայետին արարածէն սկսեալ մինչեւ մարդն ազատութիւն բաժնն անփոխարինելի է: Ամբողջը կողմեր իրենց սնտուկներու յատակը մարթիկի փոփոք պահած, իրենց գործիքներով առանց խօստախի, վրան տախտակ մը քաշած, որ կէտմուկը բան շտանէ սնտուկին մէջ, բացի լաթիւրէ, կոշիկներէ եւ այլ գործածելիք առարկաներէ: Ձէնքը Հաւայիներուն համար ամենապաշտելին էր: Ինչ սիրով, զուրպուրանքով, շուտ մը շուտով այլ մարթիկները կը սարքուրէին իրենց գործիքներով, շուտ մը շուտով փայտէ խօստախ կցելով փողին: Ամենազժուարին գործը փամփուշտ ճարտին էր, որովհետեւ թուրքերոյ մէջ դանտուած գէնֆերուն փամփուշտները չէին յարմարեր Ամբերկայէն բերուած գէնֆերուն, բաւական ժամանակ այդ գէնֆերն անգործածելի եղան, մինչեւ որ կարելի եղաւ փամփուշտ ձեռք ձգել Խարբերդէն: Ամբեր-

կայէն երդուներ, Հնչակեան, Դաշնակցական ազատ համարձակ իրենց ինքնութիւնը պահելու պէտք չունէին, քանի որ համախառն բունպետութիւնը վերջ գտած, սահմանադրութիւնը հնչակուած էր: Ձէնք զնել, կրել Հայերու համար ազատ էր այլևս: Թուրքեր տեսակ տեսակ մարթիկի զէնքեր կը բերէին զիւրը ծախելու ազատ համարձակ: Առաւուտ մը խանութիւն գուրը նոր բացած, տեսայ ձիով մը կանդ տուա խանութիւն առջև, իր ձիուն սանձն առանց բանի մը կապելու: Երես մտաւ մարդը բոլորովին այլակերպուած, մէկ կողմէն դաշոյն մը, միւս կողմը տասնհարուած մը, խաչարի փամփուշտակներ կուրծքին, կուրծքին քանի մը նշաններ, կրկնակ պէրէվիչներով, ձեռքն ինձի երկարելով ըսաւ. «Փափազեանը դո՞ւք էք»: Թուրք առեւտրականներու ներկայութեամբ, աչքով ինձի իմացուց զուրը ելլենք եւ դուրս ելանք միտաղ. առեւտուրի սպասող թուրքեր կ'ըսեն. «Աննա պանի, տղադ Ֆետայիներու հետ կը տեսնուր»: Մայրս կը պատասխանէ. «Հիմակ ուրիշք է, ամէն մարդ ազատ է»: Երբ դուրս ելանք, Քեաֆիք Համօն ինձի յայանց իր Դաշնակցական ըլլալը, որ իմ անունս մականունս իրեն տրուած է: Յետոյ երկուքս միասին նորէն խանութ մտանք. թուրքերը հեռացած էին: Մայրս տուն զրկեցի կերակուր բերելու:

Չորս կողմէն եկան խանութս լեցուեցան, սկսան պիշ պիշ նայիլ, որովհետեւ առաջին անգամն էր որ մեր զիւրը Ֆետայի մը կ'այցելէր: Լեւոն Փափազեանը յանձն առաւ իրենց տունը տանելու գիշերելու համար, որ ես մեր տունին մէջ աւելի սենեակ չունէի: Իրիկուան անոնց տունն եկան զիւրին դաստառներն ու ծանօթներ: Սկսանք խօսիլ, հարցնել իր մասին ո՞ր շրջանէն կու գայ, ըսաւ որ Քզիի շրջանէն կու գայ, իր ինքնութիւնը հաստատող որեւէ դրութիւն ցոյց չտուա, քանի որ զիւրին մէջ կոմիտէ չունէիք: Ըսաւ մեզի որ Քիտի Պիլիպպոսի զարմուտն եղած է: Առաջին պահահանութեամբ կարել տուի մետաքսէ զգեստ մը իր լաթին նման, քանի որ իմ անոնովս եկած էր Հաւա: Ըսաւ որ ինք որեւէ բանի կարօտ չէ: Երկու շարքով Բուլուի մէջ շրջան ըրաւ. երբեմն երեկոններն ալ զիւր չէր գար: Չուզեց որեւէ դրամական նուէր, մեզի թելազրեց շուտով կոմիտէ կազմել զիւրին մէջ: Ամբողջ զիւրը շուտով տարածուեցաւ թէ Ֆետայի մը եկած է զիւրը: Թուրքեր մեծ ապշանքով կը դիտէին զինք: Եկած շարքուն կիրակին թափօր մը կազմակերպեցինք զիւրին կալերուն մէջ: Թափօրին միացաւ Մարգիս Փափազեան, Լեւոն Փափազեանի հօրեղբայրը, Ամբերկայէն նոր եկած, իր Հնչակեան ընկերներով:

Գրեղին մէջ գոյութիւն չունէր ոչ Հնչակեան եւ ոչ ալ Գաշ-
նակցական կոմիտէներ: Քափորէն վերջ սեղան մը տրուեցաւ ի յար-
զանս Քեաֆիր Համգոյին: Տունին օճախին վերեւի մէկ կողմը բազ-
մած Սարգիս Փափազեան, միւս կողմը բազմած Քեաֆիր Համգոյն,
15 սեղանակիցներով ուրախ զուարթ դաւաճներ կը պարզէինք յա-
նուն Հնչակեան եւ Գաշնակցական կուսակցութիւններուն: Յանկարծ
զինուոր մը ներս մտաւ, հրացանը ձեռքին՝ քալլլով պոտայ. Քեա-
ֆիր Համգոյն իր տանհարուածը զինուորին դէմ շտկելով բտաւ.
«Զէնքդ վար առ. զինուորը դէնքը վար գրաւ. Քեաֆիր Համգոյն բըռ-
նեց անոր օճիքէն. ո՞ւր է քու հրամանադիրդ զիս ձերբակալելու:
Զինուորը սկսաւ խնդրել, աղաչել որ իրեն ներէ. սխալ մը զործեցի-
քնձի բռուեցաւ որ դամ քեզի վախ մը տամ: Քեաֆիր Համգոյն սկսաւ
զինուորին վրայ պոտալ ըսելով անոր. «Ի՞նչն չե՞ս զիտք որ Քե-
տայիին համար մարդ մը սպաննել դաւաճ մը ջուր խմել ըսել է:
Քեզի կ'ազդարարեմ որ ուրիշ առթիւ այսպէս բաներ չընեն. պարտազ
տեղը կեանքդ վրայ կու տաս»:

Համիտեան ուժիմը կործանուած, նոր սահմանադրութիւն
յայտարարուած, բոլոր Հայերս ազատ կը զգայինք, որ այլևս
Հայի, թուրքի խորութիւն չկայ օրէնքին առջև: Երկար չտեսեց.
ժողովուրդին մէջ նոր տարածայնութիւն մը ծնունդ առաւ, որ հու-
րիէթը չօրհուղներու դասակարգ մը, թուրք հոսանք մը սկսած է
զազտնի բաներ մը իօսել, որ իրենց համար անհանդուրժելի է որ
ստրուկ Հայը թուրքերու չափ ազատ պիտի ըլլայ, երկրին բարիք-
ները վայելելու: Կառավարութիւնն ալ որպէս հուրիէթը պաշտպա-
նող, հարաչօրի չըջանէն թուրք մոլլա մը բերած բանտարկած է
հուրիէթին չհաւատացող, որը կառավարութեան շէնքին փողոցի
վրայ նայող սենեակի պատուհանէն իր տազ գլուխը դուրս հանելով
ազերսաղին եղանակով կը պոտայ. «Ես հուրիէթը կը սերեմ, հու-
րիէթը կ'ընդունիմ»: Փողոցէն անցնող զարձոյներու ծիծաղը շար-
ժող տեսարան մը: Կառավարութիւնը տկարները կը բանտարկէր,
զօրաւորներն ազատ կը մնային: Թուրքերը նորէն սկսան ջարդի եւ
թալանի սպառնալիքներ ընել որ զէնք գործածելու կարողները սկը-
սան զինուել, իրարու նայելով. զիւրի մէջ Հնչակեան, Գաշնակ-
ցական սկսան զինուել հաւասար:

Քաղաք գացողներ միշտ լուր կը բերէին որ թուրքերու միտ-
քը փոխուած է հանդէպ հուրիէթին, որ կարելի չէ Հայ եւ թուրք
հաւասար ըլլան, որ Հայը իրաւունք չունի զինուոր ըլլալու, զէնք

կրելու, ռայան պէտք է միշտ ռայա մնայ, այլապէս անոնք մեր
վրայ տիրապետող պիտի դառնան: Կառավարութիւնը Պոլսէն եկած
հրամաններով կը շարժի: Ամերիկայէն եկողներ իրենց զազտնի
զէնքերով կը հրահրեն հասարակութիւնն որ զինուել, որ անոնք Պո-
լսի վրայով անցած, հրահրող ստացած են որ Հայերը պէտք է
զինուել, նոր նոր զէնքերու պատրաստ ըլլան զիմադրելու. խոսա-
պէս ալ Սուլթան Համիտի վահճակցութեան օրերուն՝ Հաւաւցինե-
րու բարեկամ թուրքեր օրը օրին մեզի լուր կու տային որ Քիւրուս-
ցիներ ամէն գիշեր փորձեր կ'ընեն զիւրի վրայ յարձակելու: Որով
զիւրը զինուած խումբեր միշտ չըջան կ'ընէին զիշերները. յարձա-
կում չունեցանք:

Քաղաքէն լուր առինք որ Սուլթան Համիտը վար առնուած է,
Կիլիկիոյ մէջ կոտորած տեղի ունեցած է: Վերջնականապէս ջախ-
ջախուած Համիտական ուժիմը, փէօն թիւրքերու բերած սահմա-
նազրութիւն հռչակուած է, շուտով ստացանք հուրիէթին նուիր-
ուած երգը՝ Եաշաուսի հուրիէթ, մուսավաթ, ուխուվաթ, Երմէնի
միլլէթ: Հայեր աւելի սրտոտան, թուրքեր աւելի չըմեցան: Զէնք
կրելը այնքան յառաջացաւ որ Հաւաւցիներ մարթիէի զէնքով թու-
մաթ գիւղը հարսնաուում գացին:

Աշնան առաջին ամիսը Հաւաւցիներ մտացու ոչխարներ թա-
րերը տարած, ծախած եւ վերադարձած, թարբերգի Հաւուկ զիւրի
փտանդաւոր եւ անմարդարեակ ճանաարհին վրայ, Բալուի գետը
չհասած՝ կը նշմարեն երեք թուրքեր զէպի զիւրենք կը յառաջանան:
Հաւաւցիներ չորս հոգի, միայն Մարգար Սասապեան զինուած
թարտաղ վեցհարուածով եւ նոր չէշխանայով մը որ թարբերգէն
գնած զիւր էր բերելու: Մարգարը անմիջապէս թուրքերուն դէմ
զիւր կը բռնէ քարի մը ետեւ, իր երեք ընկերները կը բարկանան
Մարգարին հանդէպ, որը կը պատասխանէ. «Այ ինչո՞ւ առած եմ
այս զէնքերը»: Թուրքերը լաւ մը մօտենալով կը ճանչցուին որ Իպ-
րահիմ Պէկի ծառաններն են: Մարգարը վեր կը կանգնի, նորէն
պատրաստ, զինուած ծառաները կ'ըսեն Մարգարին. «Սիւլի փուլալի,
եթէ այս երեք ընկերներդ չըլլային, մենք քու հետո տարբեր պիտի
վարուէինք»: Անոնց կը պատասխանէ Մարգարը քաջարար. «Եթէ
անոնք հետո չըլլային, ես ալ ձեր հետ տարբեր պիտի վարուէի»:

Սասապեանները մեր զիւրից քաջ զերդաստաններէն եղած են:
Առեւտուրով զբաղող եւ Բազուսի սեղանին խնկարկող: Մարգարին
այլը՝ Կարապետ առաւօտուն իր չիթ-չըթարայթ խանութը բացած,

երեք Քիւրումցիներ իրր յաճախորդ ներս կը մտնեն, Կարապետը
խմուած կօզակն կը քաշէ երկու թուրքերու հետ կողք կողքի՝ միւս
թուրքը կը յաջողի երկու թօփ չըթարա դողնալ ձեռն իր խուրճիկին
մէջ. կօզանը քաշող թուրքերը երգելով կ'ըսեն. «Հաւալի սրսէ քօփ
տրտունկէ»: Ըսել կ'ուզեն՝ մենք երեք հաս ենք, դուն երկու թօփ
դողցած ես: Կօզանդէն վերջ թուրքեր մէջմէկ թեթեւ բաներ դնելով
կը հնտանան: Յետոյ Կարապետը կը հասկնայ որ երկու թօփ չըթարա
դողցուած է: Կարապետին հօրեղբայրը՝ Սասայ Յակոբ օր մը զիւ-
ղին մէջ իր դանակը քաշած կը յարձակի այն երեք Քիւրումցիներէն
մէկուն վրայ, իր քով կանգնողները հաղիւ կը յաջողին Սասայեանը
կանգնեցնել թուրքը վերադարձնել, սպաննել: Սասայեանը կը պո-
ռայ. «Ինձի Սասայեան կ'ըսեն, որ մարդէն մարդ դուրս կը հաննեմ»:

95ի կտորածէն առաջ Պոլիս, Չուխուր Ձէշմէ Խանին մէջ
քնակող Հաւալցի եւ Սալմաթցի ամուրիներու մէջ երբ կռիւ պատա-
հէր, Հաւալցիներ միշտ յաղթական դուրս կու գային երբ Սասայ
Յակոբը ներկայ էր. անոր թակի մեծութեամբ ձեռքերուն մէկ հար-
ուածը մէկ մարդ կը ձգէր: Գիւղին մէջ օր մը Ջարման Կարապետը
հասակով փոքր, կը յարձակի Սասայ Յակոբին վրայ իրենց դրան
ստջեւ եւ կը սկսի արագ արագ դարնել. Սասայեանը կ'ըսէ. Կարա-
պետ օղու, քանի հաս պիտի դարնես դարկ. վերջի անդամին մէկ
մը կը զարնեմ կ'երթամ. յաղթանդամ Սասայեան մէկ հաս կը
զարնէր:

Բարեկենդանի Կիրակին քահանան կ'ըսէ քարոյին մէջ. քիչ մը
քիչ խմեցէք. չափով խմեցէք. Սասայեանը կը պոռայ. Տէր Հայր,
այս առաւօտ չափ մը խմած եմ: Չմեռա ստեն օր մը Կարապետ Էֆէն-
տիին տունը կ'երթայ, արեւիով դորդերուն վրայ քալելով երբ ներս
չը մտնէ, Կարապետ Էֆէնտին կ'ըսէ Սասայեանին. արեւիով դոր-
դին վրայ չեն քալեր, որը կը պատասխանէ. Էֆէնտի իմ արեւներս
մատաղի փոստով պատրաստուած են:

Ի յիշատակ պէկին զիւղէն դուրս քշուելուն, Սասայեանը
փոքրիկ պարտէզ մը շինած էր Կանտարաձորի բերանը. ինքնարուի
աղբիւրի մը ստջեւ, որ մինչեւ մեր օրերը մնացած էր:

Դարձեալ դանք Ազատութեան օրերուն. օր մը լուր բերին
զիւղը քաղաք գացողներ. դեռ նոր զինուորագրուած Տիգրանա-
կերացի զինուոր մը լաւ ծեծ մը քաշած է քաղաքացի հռչակաւոր
փուտունճի Գեալգօ Աղային, որը պոռալով նետած է քառասուն վա-

րանոցն ըսելով. Խառք Կեալվար, դուն չես կրնար հոց ստանալ այդ
մաշուած քառասուն վարանոցով. հասակով, տարիքով փոքր Օննիկը
կը յարձակի մէկէն, վար կը քաշէ զայն նստած տեղէն, ալուօր մը
անոր բերնին բիժն հարուածելով, դուն կառայարութեան սիլվեսն
անդատուեցիր, ըսելով. խուժանը կը հաւաքուի, հաղիւ կրնան
Հաճի Գեալգօն աղատել. ո՞վ կրնայ Օննիկին վրայ ձեռք վերցնել,
չէ՞ որ ան զինուորական զգեստ կը կրէր. կատարած թուրքեր առանց
ձայն-ձունի իրենց տեղը կը մնան չճամփ:

Այդ շրջաններուն Ամերիկայէն զիւղ եկաւ իմ հօրեղբորդի
Կիրակոս Փափաղեանը, թրծուած Դաշնակցական: Իր առաջին
դործը եղաւ կոմիտէի մը հիմքը դնել, որ զուրթիւն չունէր: Կա-
թողիկէ եկեղեցիին ետեւ Աւկանց պարտէզին մէջ կլոր ծառի մը
տակ 7 անձերով՝ Կ. Փափաղեան, Տ. Փափաղեան, Հ. Փափաղեան,
Լ. Փափաղեան, Կարապետ Կատարեան, Պ. Պրեխան, Օ. Պօյաճեան:
Մինչեւ այդ օրը զիւղ գանուղներս անհատ Դաշնակցականներ էինք:
Կ. Փափաղեան կարգաց մեզի կուսակցութեան կանոնադիր ծրարիբը,
բացատրութիւններ տուաւ, աղաքարեց մեզի որ վարուց բարուց
ընթացքին մէջ պէտք է գտնուինք: Երկրորդ ժողովը տեղի ունեցաւ
իւր տունին մէջ, առանց անեցիներու ներկայութեան: Մեզի տուաւ
բացատրութիւններ Դաշնակցութեան մասին: Մտեցաւ հրապարա-
կային ժողովի մասին. յարմար գատուեցաւ Սեբրոյ կղզադարեանին
տունը, մեզի թելազրեց որ մեր զիւղած անձերուն խօսիք որ ու-
րոշուած օրուան երեկոյեան հոն ըլլան:

Ժողովի երեկոն ունեցանք 23 նոր ընկերներ. Կ. Փափաղեան խօ-
սեցաւ Դաշնակցութեան մասին. եղան հարցումներ, որոնց պատաս-
խանեց լաւ հասկնալի կերպով: Այդ երեկոյ եկած էր անդամազը-
ուելու Տէր Կարապետ Ոսկանեան, որուն ըսաւ թէ քահանայ հայեր
չեն կրնար անդամ դրուել. անոնք կը պատկանին լոյր ժողովուր-
դին: Դուն կրնաս սարղ համակիր ըլլալ Դաշնակցութեան: Մեր ան-
դամական ժողովները տեղի կ'ունենային միշտ Մ. Էլազարեանին
տունը, Կ. Փափաղեանի ձեռքով փոքրիկ տետրակներ պատրաստ-
ուած էին, անդամատուրքի համար, անունով, մականունով: Հաս-
տատուեցաւ խմբական զրութիւն, նշանակուեցան խմբակետներ:
Կոմիտէն երթալով զօրացաւ, շատ ուրախ էինք որ Կ. Փափաղեանի
պէս պատրաստուած Դաշնակցական մը մեզ կը զլխաւորէ: Կազմը-
ւեցաւ Հնչակեան Կուսակցութիւն մեզի չափ անդամներով. չկար
էրարու հանդէպ նախանձ, հակառակութիւն, միայն մրցում. երկու

կուսակցութիւններն ալ շատ սիրով կը յարդուէին հասարակութենէն հաւասար կերպով, որ անոնք ծնունդ առած են Հայ ժողովուրդէն:

Հաւաւցիներ սկիզբէն ի վեր հակառակ եղած են օտար գաղափարի, օտար վարդապետութեան, որուն շնորհիւ գիւղը մնացած է զօրաւոր եւ ինքնիշխան: Իսկական Հաւաւցիին օտար գաղափար մը միշտ արհամարհելի եղած է, անոր ետին կեղծիք տեսնելով: Ամէն անգամ որ գիւղը միսիոնար մը կու դար, չէին ուզեր որ մէկ իրերկուն անգամ գիւղը գիշերէ: Գիտէին գիւղացիները որ միսիոնար մը ինչ նպատակով գիւղէ գիւղ շրջան կ'ընէ: Եւրոպացիներու վարած քաղաքականութիւնը դէպի Հայերը որքան կեղծ եղած է. հիմա կը հասկնամ թէ Հաւաւցիները որքան խորադէտ մարդիկներ եղած են, որ ոչ մէկ կապ չեն ուզած հաստատել անոնց հետ, հաւատալու անոնց քարոզած գաղափարներուն եւ վարդապետութիւններուն: Որ Հաւաւցիներ մնացած են անգերազանցելի Հայեր ամբողջ 2000 տարի: Անոնք հաւատացած են մէկ տեսակ եկեղեցիի եւ զպրօցի:

Երիտասարդ թուրքերու բերած սահմանադրութիւնը որ իրաւունք կու տայ Հայ ազգին զինուոր տալու, զինուոր արձանագրուելու, Հաւաւցիներու համար պիղծ էր, ինչպէս գիւղին մէջ թուրքերու հետ ապրելը պիղծ համարուած էր: Օսմանեան սահմանադրութիւնը հռչակուելէն յետոյ գիւղին ամէն երիտասարդ ճար մը, ճամբայ մը կը փնտռէր Ամերիկա անցնելու: Քիչեր յաջողեցան: 1909ի Զատիկէն վերջ եւ ալ հետագայ իմ պաշտելի Հաւաւցին, որմէ յետոյ գիւղին մէջ կը կազմուի վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան Մասնաճիւղ մը: Որով գիւղին մէջ զոյութիւն կ'ունենայ երեք կուսակցութիւն: Երկու կուսակցութիւններու հետեւորդներուն եւ անդամներուն թիւը հազիւ կը հաւասարէր Գաշնակցութեան ունեցած հետեւորդներուն եւ անդամներուն:

Ամերիկայի ճամբան քաղաքի ճամբայ դարձած էր. զինուորութենէ խուսափողներ Ամերիկա եւ Ամերիկայէն եկողներ դէպի գիւղ: Սուլթան Համիտի օրով Պոլիս արդելափակուածներ եկան գիւղը: Գիւղին մէջ մեծ ոգևորութիւն կը ստեղծուի, նոր-նոր տուներ շինելու, պարտէզ, այգի աւելցնելու: Ամերիկայէն եկող կուսակցականներ պատճառ կ'ըլլան Հաւաւցիներու մէջ պայքարի ոգի ստեղծելու, մեծ ու պղտիկ իրարու դէմ վարենլով: Պայքար ստեղծուեցաւ Ուսումնասիրացի մէջ ալ, ոչ մէկ վտանգ զայն քանդելու: Միշտ ու միշտ աշխատելով զպրօցին մակարդակը վեր բարձրացնելու, շնորհիւ Ամերիկայէն եկած տալէրներուն: Գիւղին զպրօցը ամէն տարի

շրջանաւարտներ տալով, անոնցմէ ոմանք մինչեւ հետաւոր շրջաններ ուսուցչութեան կանչուեցան: Այդ շրջաններուն Հաւաւցի վանքը վարձապետանոցի կը վերածուի Միացեալ Ընկերութեան նախաձեռնութեամբ եւ զոհողութեամբ: Գլխաւորուած Փրօֆ. Մինասեանի, Բալասոյի յաջող զպրօցականներէն վարձապետներ պատրաստելու: Իրենց մասնակցութիւնը կը բերէին Սարբերդի քանի մը փրօֆէսօրներ ամառուայ երկու ամիսներն անցնելով Հաւաւցի վանքը: Կարճ ժամանակուայ մէջ ուսուցչութեան ասպարէզ մանուկներու թիւը 45ի կը հասնի, թէ՛ Հաւաւցի եւ թէ՛ Բալասոյի շրջաններէն: Արտակարգ ետուգեալ կը ստեղծուի Հաւաւցի մէջ, լծուելով կուսակցական եւ հայ մշակոյթի աշխատանքներուն: Գիւղը զուտ հայաբնակ, ազատ համարձակ եւ ինքնիշխան: Զարկ կը տրուի աղջիկներուն հայեցի դաստիարակութիւն տալու: Հաւաւցի կը դառնայ իսկապէս Բալասոյի Աթէնքը: Հայ մշակոյթի կեդրոն: Հաւաւցի կը հասնի իր փառացի գաղափարակէտին եւ կը դավարանուի: Գիւղին համար ամենախոցելի եւ անդարմանելի եղած է կուսակցական պայքարը որ տենդազին կերպով առաջ կը տարուէր, առանց անոր հետեւանքը խորհելու, ի դուր տեղը իրենց ուժերը վատնելով, առանց արդիւնք մը ձեռք բերելու: Որ բնաւ ժամանակ չեն յատկացուցած մեր զարաւոր թշնամիին դէմ կազմակերպուելու: Գոնէ պատուով մեռնելու:

Ինչպէս բոլոր քաղաքներու, նոյնպէս Հաւաւցիներուն հանդէպ միեւնոյն թաքթիքը դորձածուած է թուրք կառավարութեան կողմէն. նախ անուշ լեզուով մօտեցած են հաւաւցիներուն, զանոնք համոզելով որ իրենց որեւէ վտանգ պիտի չսպառնայ եթէ խաղաղ կերպով իրենց պէնքերը յանձնեն, այդ բանակցութիւնները կը տեսն շարաթի մը աւելի: Որ Հաւաւցիներ քիչ քիչ կը կախուղնան եւ կը հաւատան կեղծ ու պատիւր գայմագամ էֆէնտիի խօսքերուն, որը յանդգնութիւն կ'ունենայ քանի մը զինուորներով եւ զինուորական պետով Հաւաւցիներուն կողմէն բարեկամական սեղան սարքել տալու գիւղին կալերուն մէջ, միեւնոյն ատեն պատեհութիւն տալով անոնց որ գիւղական ժողով գումարեն, միարբերան որոշում տալու իրենց ղէնքերը յանձնելու, քանի որ կառավարութիւնը պատերազմի մէջ պիտի մտնէ իր երկիրը պաշտպանելու, յարձակող թշնամիներու դէմ:

Ժողովը միաձայն որոշում կու տայ, որոնց դէմ բուն կերպով կ'ընդդիմանայ գիւղին հերոս Հաճին, բռնելով անոնց. միւր մի՛ հաւատաք այդ կեղծ ու պատիւր գայմագամ էֆէնտիին որ այն-

քան շնականօրէն բարեկամացած է ձեզի հետ: Որ Արդին Մատէն գացած իր տղուն Լեւոնին տեսութեան, որը քրէական յանցանքով բանտարկուած էր: Վերադարձին կը հանդիպի ԳՏԻ կոտորածին զինք մահուանէ ազատող զինուորական Ալի Էֆէնտիին, որն ըսած է այս պալիք կոտորածը շնանցնէք ԳՏԻ կոտորածին, այս անգամ անխնայ պիտի կոտորեն ձեզ բոլորդ ալ, մեծ ու պզտիկ, ոչ ոք պիտի չազատի: Այսպէս հրաման կայ Պոլսէն որ պիտի գործադրուի»:

Հերոս Հաճիին բոլոր խօսքերը կ'անցնին ապարդիւն: Հին օրէն ի վեր առած մը կայ որ կ'ըսէ. «Արարիչը մարդուն հոգին առնելէ առաջ նախ անոր խելքը կ'առնէ»: Հայերս խարուող ազգ մը եղած ենք, զո՛հ գացած ենք մեր անկեղծութեան: Գայժազամ Էֆէնտին կը հասնի իր նպատակին, կը զրաւէ Հաւաւցինբու զէնքերը խաղաղ միջոցով, անոնց վստահեցնելով որ որեւէ վտանգ չ'սպառնար: Կեղծ ու պատեր գայժազամը կը սկսի իր կիճը ցոյց տալ:

Նախ կը ձերբակալէ իրեն այնքան բարեկամացած անձնաւորութիւնները, եւ յետոյ չի դո՛հանար իրեն յանձնուած զէնքերէն, կը սկսի ամէն տեսակ մահացու խտտութիւններ ի գործ դնել որ տակաւին պահուած զէնքեր կան, պէտք է յանձնել: Ամբողջ զիւղը զիւրաքանչիւր կ'ըլլայ: Միայն հերոս Հաճիին եւ Ոսկանեան Պրն. Պետրոս ո՛չ զէնք կը յանձնեն եւ ո՛չ ալ անձնատուր կ'ըլլան: Երկուքը միասին իրենց զէնքերով զիւղին զէ՛մ Պօլսնուս ըսուած փոքրիկ լեռը կ'ապաստանին, քարերու մէջ պահուելով:

Կառավարութիւնը ամէն տեսակ շարձարանքներ, տանջանքներ տալով՝ բոլոր ազամարդիկները Բալու քաղաքը կը տանի, սրախող խող պետը կը թափէ, սրմէ յետոյ կիներ, փոքրիկներ խուճերով դուրս կը հանէ զէպի Տէր-Զօր աքսորելու: Այն կարաւաններուն մէջ կը գտնուի իմ մայրս Աննան: Հազիւ զիւղէն դուրս ելած՝ Քիւրումցիներ կը զանեն մայրս եւ կ'ըսեն անոր. «Տղադ Արամը եւ թող Մինասը սպաննեցինք լեռան մէջ, պահուած տեղը գտնելով: Երանի թէ տղադ Տիգրանն ալ հոս ըլլար որ զայն ալ սպաննէինք»:

Մայրս քաջարար կը պատասխանէ անոնց. «Իմ Ապամս հոս ըլլար, ձեր բոլորին ալ զլուխը կը կտրէր»: Այդ խօսքին վրայ տեղն ու տեղը կը զնդակահարեն իմ այնքան սիրելի մայրս. հերոս մըն էր ան եւ հերոսի պէս կը մեռնի: Քիւրումցիներ վրէժ ունէին առնելիք ինձմէ: Այս պատմութիւնը զրոյց Տիգրանէն, որ երկու ընկերներով փորձ կատարած էր սպաննելու իրենց զիւղացի Զանկին Մտտին տը-

գան Մըլլա Հասանը, որ անցած էր անյաջող: Եղբայրս Արամը եւ մեծ եղբօրս որդին Մինասը լեռան մէջ պահուած են ձեզի բարեկամ թուրքի մը կողմէն, յարմար առնին զանոնք Տէրսիմ անցրնելու: Բախտի չար բերումով, աւարառու Քիւրումցիներու կողմէ կը նըշմարուի անոնց թաքստոցը եւ կը սպաննուին: Հերոս Հաճիին եւ Պր. Պետրոս Ոսկանեանը իրենց թաքստոցէն կը դիտեն զիւղացիներուն ախուր վիճակը, որ խուճերով զուրս կը հանուին զիւղէն:

Պրն. Պետրոս կ'ըսէ հերոս Հաճիին. «Նս պէտք է անգամ մը զիւղը իջնեմ»: Վարժապետ Պրն. Պետրոս զինուած մարթիինի հրացանով զազատագողի զիւղ կը մտնէ պարտէզներու մէջէն եւ կը մտնէ իրենց տունը որ պարտէզին կից էր: Աւարառու թուրքերու կողմէ կը նշմարուի, կը շրջապատեն Պրն. Պետրոսի տունը, կուրը կը սկսի: Երեք թուրքեր կը սպաննուին եւ Պրն. Պետրոս ծանրապէս վիրաւորուած՝ կ'իյնայ իր անկողինին վրայ, իր հոգին աւանդելով:

Հերոս Հաճիին տեսնելով զիւղին քայքայումը, կը հեռանայ զիւղէն իր տղուն Երուանդին հետ: Երկուքն ալ զինուած, կուրելով ճանապարհին վրայ հանդիպող թուրքերու հետ եւ կ'անցնին Տէրսիմ, անկէ Պարբերդ, յետոյ Ֆրանսա, ուր կը մեռնի իր բնական մահով մեր հերոս Հաճիին, հայ Ֆետայի պետերուն հաւատարմէ կը եղած է, իր քաջութիւններով եւ յանդուպն ծրագրիներով:

ԳՏԻ կոտորածին, ժողովի մը մէջ խորհուրդ կու տայ որ երբ թուրքեր զիւղը պաշարեն, պէտք է խուճեր զուրս զրկենք թուրքերու զիւղերը կրակի տան, որ կը մերժուի: Մեր այնքան քաջ եւ անվախ հերոս Հաճիին թէ՛ ԳՏԻ եւ թէ՛ 1915ի կոտորածին կ'ազատի զինու զօրութեամբ: Հերոս Հաճիի մահանունը Մըխաի Պաղտիկեան եղած է, իր անունը՝ Պաղտասար, իր մեծ հօր անունով մկրտուած: Հերոս Հաճիին սկսեալ եկող սերունդը Արամեանի փոխած են իրենց մահանունը: Մ. Պաղտիկ եւ Մ. Մարկոս երկու եղբայրներ եղած են խալիֆա, շէնք կառուցանող: Հաւաւցիներ հին դարերէ ի վեր շէնք կառուցանող եղած են Օսմանեան տէրութեանէն ալ առաջ: Այս երկու եղբայրները ուսմութուրք պատերազմէ մը շատ զբամ վատկած, զիւղը բերած են: Իրենց ոսկի զբամներէն զատ բոլորի մէջ լցելուած դետին թաղուած կը պահեն: Մ. Մարկոս կը մեռնի յանկարծամահ: Թաղուած զբամին տեղը կը մնայ անյայտ իր ընտանեկան պարտզաններուն: Իսկ Մ. Պաղտիկ իր զբամները կը ծախէ ստատօրէն: Կը շինէ զեղեցիկ պարտէզ մը մարգարտիներով եւ պտղատու ծառերով, ինքնաբաւալ ազգիւրի մը առջեւ, Ոսկանց պարտէզներուն

դէմ ձորին բերանը: զեղեցիկ փարք մը: Մ. Պաղտիկ եղած է շատ քաջ մէկ մը, զոր Թուրքերը Տալու Պաղտո անունով յորջորջած են: Հայ մը երրորդ արտակարգ քաջութիւն մը զործէր՝ անոր խնեթ (տալու) կը կոչէին. զոր օրինակ, Ասլի պէկի խոնախը կրակի տուող Տէր Միմոնին Տալու Քէշիշ անահանը տուած են: Իրենց օրով Հաճի պաշարատարի մեծ հայրը, 125 տարեկան, ըսած է Մ. Փափաղեանի, Հ. Կարեանի որ Հաւաւը տալու քէշիշ մը ունեցած է, բերնէ բերան սոյդպէս լսած է:

Մ. Պաղտիկին տղան Կարապետ հերոս Հաճիին հայրը նոյնպէս խալֆա էր, մասնագէտ՝ կամուրջ շինելու: Հաճին եղած է իր մեծ հօր պէս քաջ մէկը: Հայ ազգի փայլուն հերոսապետներուն պէս՝ պարթևահասակ, ճերմակ մորթով, կարմիր երեսներով, առեւծադէմք, ծիծաղը դէմքին: Պէտք եղած ատեն պատրաստ կուսկու: Արհեստով կօշկակար եւ մսալաճառ, զոմէջ մորթելու մասնագէտ, զիւրին մէջ ամենախոշոր եւ խնեթ դոմէջ մորթելու համար պէտք էր Հաճին կանչել: Բալահովիտի բոլոր ցեղերու լեզուն իր մայրահանին պէս կը խօսէր: Մտադրօր խոշոր զանակը միշտ առջեւը զարկուած զիշեր ցերեկ: Լաւ նշանառու, արտաքին երևույթով ազդու մէկը, իր երեսէն քաջութիւն կը ցրար: Հայ եւ Թուրք կը վախնալին անոր հետ մէծի բռնուելու: 95ի կոտորածին իր թաղըստոցէն զուրս կլլելէն ետք, պաշարող խուժանին մէջէն Քիւրումցի Աշշակիլիսօ անունով մէկը դաշոյնով թիթեւ հարուած մը տուած էր կոնսկին: Ալի էֆէնտին սաստիկ բարկացած էր, ըսելով բոլորին. «Ոչ որ իրաւունք ունի այս հերոսին վրայ զէնք վերցնելու»: Կոտորածէն յետոյ քանի մը անգամ հրապարակով ըսած էր. «Քպօ, քեզմէ վրէժ ունիմ առնելու», որն աղաչանքով ըսած է. «Հաճի, մոռցիր, յանցանք մը զործեցիր»: Իր կեանքին յարզը զիտցող հերոս Հաճին չէր կրցած իրեն հետեւորդներ ճարել յարձակելու դաժմագամ էֆէնտիին եւ իր հետեւորդներուն վրայ, բոլորն ալ զնդակահարելու, որոնք Հաւաւցիներուն զէնքերը կ'ուզէին:

1885ին Հաւաւ զիւրի Ազդալին Ընկերութեան հիմնադիրներէն Օհան Վարժապետին տղան Պրն. Պետրոս Ոսկանեան նոյնպէս վարժապետ, 95ի կոտորածին նոյնպէս կուսած է Հաւաւի պաշարման ատեն: Գիւրը անձնատուր ըլլալէ յետոյ Պր. Պետրոս Բալու քաղաքը կ'ապաստանի զիշերանց, դեռ քաղաքը անձնատուր չեղած: Այդ կուսին մէջ Լարչեան եղբայրներ եւ Պարսկաստանի հրապատու Վարդան էֆէնտիի աջակը Վարդանոյշ իր հետ մեծ գիմադրութիւն ցոյց

տուած եւ Չաղաներ սպաննած են, յետոյ իրենք ալ սպաննուած են Չաղաներու անխիւ խուժանին կողմէ: Յաւալի է որ հին եւ պատմական Բալու քաղաքին պատմութիւնը զրոյց մը չզտնուեցաւ: Քաղաքը անձնատուր ըլլալէ վերջ Պր. Պետրոս եւ իմ մեծ եղբայրս Արժեանակ Փափաղեան կը պահուին տունի մը տակի յարկը զիջուած փայտերու ետեւ 40 անձերով: Չաղաներ կը յարձակին անոնց վրայ: Առաջին անգամ զուրս կը հանեն Փրօտ Չաղարին տղան, ըսելով անոր. «Եկուր, Եկուր Ինկիլիզին գօնօլը», եւ կը սպաննեն. հաղիւ 3-4 հօգի սպաննած՝ բարեխրտ մօլլա մը վրայ կը հասնի, կ'ազատէ ողջ մնացողները, կը տանի զանոնք ճամին, անոնց գլուխները ճերմակ փաթթելով, որպէս Իսլամութիւն ընդունողներ: Զէ՞ որ Պոլսէն եկած ջարդի հրամանը կ'ըսէր. «Ոյլ որ Իսլամութիւնը կ'ընդունի, աչէկ ոյլ որ չընդունի՝ գլուխը կարեցէք»:

Մենք Հայերս, մեր յոյսը գրած այդ կեղծ ու պատիր Անգլիացիին վրայ մասնաւորապէս եւ ամբողջ Քրիստոնեայ Եւրոպացիին վրայ, միշտ ալ յուսախար եղած ենք: Սուլթան Համիտի օրով հայ յանձնախումբ մը կը զիմէ անգլիական ղեկավարին, որ Պօյաճեան Համբարձումին եւ Արխանեան Գալուստին համար զիմում կատարէ, զանոնք բանտէն ազատելու: Անգլիացիին զործին չի դարբարիք ընել: Սուլթան Համիտին նախապէս լուր կու տայ ղեկավարը որ Հայերու խնդրով քեզի զիմում պիտի կատարեմ Հ. Պօյաճեանի եւ Ա. Գ. Արխանեանի ներում շնորհեաւ: Բացարձակապէս մերժէ: Եւ երբ ղեկավարը պալատ կ'երթայ, Սուլթան Համիտը կ'ըսէ. «Բացի Պօյաճեանէն եւ Արխանեանէն ինչ առաջարկ որ ընես՝ պիտի ընդունիմ: Անոնք պէտք է բանտը մնան»:

Եւրոպացիները իրենց շահերուն համար մեզ միշտ կոտորել տուած են: Ըսուած է, չէ՞. «Անգլիան մէկու մը տղատելու ամենէն ուշը կը հասնի, վնասելու համար՝ ամենէն շուտը»: Եթէ մարդկութիւնը չկարողանայ այդ կեղծ ու պատիր Անգլիային պատիժ տալ, Արարիչը պիտի պատժէ, այդ կողին ամբողջութեամբ ջրամոյն ընելով ուկիլիստիին յատակը: Հայերու անէծքը պիտի բանի: Ծէնցնող, կոռուցանող Թրքահայաստանը կ'ոչնչանայ, բարարտս Թուրքը կ'ապրի: 1915ի կոտորածին՝ մեր պատուական Հաւաւը քարուքանդ կ'ըլլայ, տղամարդիկ բոլորը սուրի քաշուած, ողջ մնացող կիներ, փոքրիկներ աքսորի ճամբաներու վրայ անօթութենէ եւ ծարաւէ մեծամասնութիւնը կը մեռնի Տէր-Չօր չհասած: Մաս մ'ալ Տէրսիմի վրայով Թարբիք կ'ապաստանին: 1915-1920 ջարդն ու կոտորածը

անընդհատ շարունակուելով հազիւ իրենց չոր հողին աղատած կիներ եւ փոքրիկներ նամակներով յարարելութիւն կը հաստատեն Ամերիկա գտնուող հայերու, ամուսիններու հետ, յոյս ունենալով նորէն Հաւաւ վերադառնալ, Ամերիկայէն եկած օգնութիւններով:

Այս անգամ վատահամբաւ, հայասեաց Մուսթաֆա Բեմալ մը դուրս կու գայ ջարդարար Թուրքիայէն, կազմակերպուած կեղծ ու պատիր Եւրոպացիներէ թէ՛ նիւթապէս եւ թէ՛ բարոյապէս: Այսպէս կեղծ ու պատիր, Բրիտանիայ Եւրոպացի թող կու տայ որ Հայերու արիւնին մէջ լողացող Թուրքիան յանձին Մուսթաֆա Բեմալի որ երկաթէ աւելով դուրս քէ բոլոր ազատուածները իրենց պապեանական հողերէն, որ Հայերու հետքն իսպառ վերջանայ հայաբնակ նահանգներէն: Այս ազատուած, իրենց բնավայրէն դուրս քշուածներ կ'ապաստանին Մուրիա, Լիբանան եւ արաբական երկիրներ, որոնք շատ սիրով աեղ կու տան անոնց, պաշտպանելով անոնց դոյութիւնը, յանուն իրենց պաշտած Աստծուն:

Հայերու անէծքը մասամբ բանեցաւ Եւրոպացիներու վրայ: Կ'ակնկալենք աւելի գորուորը: Արարչին կողմէ պաշտպանուած Հայեր պիտի ոչջ մնան եւ աստղերուն պիտի հասնին: Իսկ այդ բարբարոս, ջարդարար Օսմանեան կառավարութեան հետքն անգամ պիտի չմնայ այս մոլորակին վրայ: Ջարդուած Հայերու արիւնին հոտը մինչեւ Ամերիկա հասաւ: Որ Թուրքէն իրենց վրէժը անելու բուռն ցնցումով 45·000 Հայեր արձանագրուեցան բոլոր նահանգներէն, որոնց 4-5000ը հազիւ կրցաւ արտասահման անցնիլ, Կովկասի եւ Կիլիկիայի հայ կամաւորական խումբերուն միանալ: 200 տունէն քիչ մը աւելի Հաւաւ գիւղը տուաւ 34 կամաւորներ, որոնք կուռեցան Կովկասի եւ Կիլիկիայի ճակատներուն վրայ, մասամբ առնելով իրենց վրէժը այդ Թուրք բարբարոսէն:

Ողագոյութիւն բերել յետոյ բոլոր Հաւաւցի կամաւորները վերադարձան Ամերիկա, առանց կորուստի, ոմանք Ֆրանսա մնալով: Հաւաւցիներու առաջին կամաւորը եղած է Մինաս Տօլպաշեան, որ 1902ին Ամերիկայէն դացած է Կովկաս, հոն միանալով Հ. Յ. Դաշնակցութեան խումբերուն: Թուրքիոյ եւ Ռուսիոյ սահմանին վրայ զէնք փոխադրած պահուն կը սպաննուի քաջարար կոռելով, որուն պատմութիւնը գրուած է Վահան Փափազեանի Յուշերուն Ա. հատորին մէջ Գալլ Վահան — Մինաս Տօլպաշեան անունով, Բալու Հաւաւցի: Մինաս Տօլպաշեանի եւ 34 Հաւաւցի կամաւորներու կենսագրականները, իրենց անուններով, պատկերներով լոյս պիտի

տեսնէ «Պատմութիւն Հաւաւի» զբոյժի մէջ: Հաւաւցիներ ոչ միայն աւելի կամաւորներ տուին իրենց գիւղին թուին բազմաամբ, այլեւ զբաժական մեծ դուժարներով մասնակցեցան Ազգային Միութեան բացած հանդանակութեան ի նպաստ հայ կամաւորական խումբերուն: Հաւաւցիները միշտ ալ զոհուող եղած են ազգային, եկեղեցական եւ կուսակցական հանդանակութիւններուն հաւաքական թիւով, ունեցողն ալ, չունեցողն ալ:

Հաւաւցիները միշտ ալ դործի մարդ եղած են, գիշեր ու ցերեկ գործած են չարաչար իրենց նոյատակին հասնելու, իրենց դոյութիւնը պահելու: Եղեռնէն ազատուածներուն օգնելու, ոմանք ալ այս երկիրը բերելու, ջարդն ու կոտորածը չլուսահատեցուց ոչ միացողները, Հնչակեան, Դաշնակցական, Ռամկավար բոլորուեցան իրենց այնքան սիրելի Հաւաւ Գիւղի Ուսումնասիրացին շուրջ, որը հիմնուած է Պոլիս, դար մը առաջ, թերեւ աւելի: 1900էն սկսեալ հոս շարունակուած է: Գանուեցան դաժան մարդիկ որոնք ջանացին բաժնել Ուսումնասիրացը, սակայն չյաջողեցան:



ՄԻՈՒԹԻՒՆԸ ՈՅՑ Է

Միութիւնը ոյժ է, եղած է Հաւաւացիներու հաւատոյ հան-
դանակը, որուն վրայ հիմնուած պահած են իրենց այնքան զօրաւոր
գոյութիւնը: Մէր եւ միութիւն քարոզուած է: Հետեւ օտար ազդու-
թիւններէ, օտար վարդապետութիւններէ, հաւատարիմ Հայաստան-
եայց եկեղեցիին: Ոյժ տալ հայ մշակոյթին, բոլորին համար պար-
տազիր հայեցի դաստիարակութիւնը: Հայութիւն քարոզել ազատ
համարձակ, որ Հայ ազգը ունեցած է փառաւոր անցեալ: Սուրբին
եւ զէնքին վրայ զնել իրենց յոյսը: Ոյժ տալ զինավարժութեան:
Տոյց տալ թուրքին եւ Քիւրտին, որ իրենց շափ իրաւասութիւն ու-
նինք զէնք կրելու, պէտք եղած ատեն զէնքով խօսելու մեր վրայ
յարձակողներու, զլուս չծուել ոչ սքի սոջե:

Թուրքեր, Քիւրտեր կը զարմանային որ Հաւաւը իրենցմէ ետ
չի մնար, որ կառավարութիւնն անկամ անուշազիր է անոնց զին-
ուած մնալուն: Գիւղին մէջ զինուած պտըտիլ զիշեր ցերեկ: Հար-
սանիքներու եւ ալիներու ժամանակ ականջ խլացնելու շափ հրա-
ցաններ կը պարպուին: Կարեւորութիւն չի արուիք թէ զիւղին մէջ
զինուոր կայ: Ոչ ոք զիտոյութիւն ընելու իրաւունք ունէր, քաջ
զիտնալով որ Հաւաւը զարեւրէ ի վեր այսպէս եղած է: Անոնց այդ
սովորութիւնները մէկ կողմ գնելու ոչ մէկ փորձ եղած է: Ով կըր-
նայ բողոքել, որքան ատեն որ զիւղը դուռ հայարնակ է, դուռ Լու-
սաւորչական է: Այսպէս եղած է մեր Հաւաւը որ կրցած է պահել
իր դուռ հայկական ոգին:

95ի կոտորածէն վերջ թուրքերն ու Քիւրտերը կը զարմանային
որ Հաւաւը պահած է իր նախկին կորովը. նորէն զէնք կրել, զիշեր
ցերեկ զէնքով պտըտիլ: Հաւաւը գերութեան շղթայ չէ տեսած, ու-
րով մնացած է մինչեւ վերջ զօրապաշտ, անպարտելի:

Հաւաւը միշտ տեղեակ մնացած էր ուրիշ նահանգներու, քա-
ղաքներու եւ զիւղերու մէջ թուրքերու կողմէն զործազրուող բռու-
նութիւններուն. առանց ձայն ձուն հանելու մենք կը լսէինք սուե-
ւանդումներ հայ ազգիկներու եւ կիներու, վարդապետներու եւ քա-
հանաններու սպանութիւններ, վանքերու եւ զիւղերու աւերումներ

այդ բարբարոս թուրքերու կողմէն:

Չի կոտորածէն վերջ զարնան տռաջին ամիսներուն զինու-
որապետութիւն մը յայտարարուեցաւ, որ Մուշ, Վան զինուոր զրկելու
պէտք ունեցաւ Բայրուի կառավարութեան: Հաւաւի մէջ էրը հար-
ցումներ կ'ըլլար թուրքերուն, անոնք կը պատասխանէին թէ՛ ամ-
զահայ մը վար իջած է երկինքէն որ անխնայ մարդիկներ կ'ուտէ եւ
կ'ուտէ, որ շատ զինուորներու պէտքը կը զգացուի զայն մեռցնելու:
Յետոյ հայկական ալրիւրներէ լուր առինք որ Սասունն ապստամ-
բած է, կոտորած տեղի ունեցած է: Յետոյ թուրքերն ալ բացուեցան
եւ սկսան յոխորտալ, սպառնալ որ նորէն ձեզ պիտի կոտորենք:

Հայեր ու բարեկամ թուրքեր չէին հաւատար որ ընդհանուր
կոտորած տեղի կ'ունենայ, որքան ատեն որ կառավարութեան կող-
մէն հրաման չըլլայ: Եւ այդ հրամանը կ'ըլլար կեղծ ու սպառի եւ-
րոպացիներէն շահեր սպահովելու:

Այդ շրջաններուն Հաւաւը նորէն լսեց որ իտալացի զօրավար
մը զօրք ուղած է իր կառավարութեանէն յարձակելու այդ վայրերն
ու բարբարոս թուրքին վրայ, որ թարած Եւրոպայի սրտին վրայ
զարեւրէ ի վեր կը ջարդէ ու կը ջարդէ քրիստոնեայ ազգեր: Հաւաւ
ամէն կարգի լուրեր միշտ կը ստանար, նամակներէ եւ թերթերէ:
Գիւղը միշտ թերթեր կը ստանար Պոլիսէն. պատահած է կովկասէն
թերթ ստացած է գաղտնի միջոցով: Գիւղը զերազանցօրէն հետա-
քըքրուած էր ազգային հարցերով եւ լուրերով: Մենք, փոքր հաս-
կաւորներս, մեծերու պէս հետաքրքիր էինք ազգային լուրեր լսելու,
եկեղեցիին խորհրդատունը հաւաւուած զիւղին իմաստուն զխա-
կիցներէն: Եէյս ձէլալէտախիի պատմութիւնը զիւղին մէջ մուտք
գործեց. մեծ ու պղտիկ կը հաւաւուէինք եկեղեցիին խորհրդատունը
իրիկունները մինչեւ ուշ ատեն կը սպասէինք, ընթերցումը լսելու
ամբողջութեամբ:

Այնուհետեւ բերել տրուեցաւ շատ գաղտնի կերպով Բաֆֆիի
միւս գրքերէն: Մեր մեծերը միշտ կը բարեկանային մեզի որ երեկո-
ները չուշանանք տուն երթալու: Մենք ընկերներով շատ գիւղաբու-
թեամբ ստացանք Եէյս ձէլալէտախիի պատմութեան փոքրիկ զերբը
մէկ զիշերուայ համար: Հաւանարար կարգալու, զրելու փափաքը
տարածուած չըլլար զիւղին մէջ, ազգային գործերով եւ հարցերով
այնքան հետաքրքրուած չըլլայինք: Հին զարեւրէ ի վեր Հաւաւի մէջ
ուսմունքը պարտազիր եղած է, անպաղտոյթութիւնը հազուադիւս ե-
ղած է:

Չմեռ ատեններ զոմերու մէջ մասնաւոր սենեակներ չինուած

են փոքրիկներու համար ուսումնարան, որ հողագործներու զաւակներ անգամ պէտք էր ձմեռ տանն քանի մը ամիս ուսմունք առնեն: Սուսափում չէ եղած: Այս ինքնազարգացումով Հաւաւը յառաջացած է, իմաստուն դարձած է ինքզինք կառավարելու, Ձինք շրջապատող բարբարոս թուրքերու հետ խաղաղ ապրելու, առանց անոնց մէջ զբոլուծիւն ստեղծելու դէպի Հայերը: Թուրք հասարակութիւնը լաւ կերպով բարձրած է որ Հաւաւը ոչ մէկ տանն թշնամական զիրք բռնած է հասարակ ժողովուրդին դէմ, որ անոնք դէմ եղած են պէկերու, աղաներու եւ ցեղապետներու, որ անխնայ կը հարստահարեն թուրք, Քիւրտ եւ Հայ հասարակութիւնը:

Հաւաւցիները բլլալով զիտակից տարր, կրցած են իրենց հետ կապել Գրժըզան ցեղը (20 զիւղերով) հին դարերէ ի վեր, որ անոնք առերես ընդունած են մահաձեռնակութիւնը: Հաւաւի սխերիմ թշնամի մնացած էին մօտ դրացի Քիւրում ըստած 100 տունէ բազկացած թուրք զիւղը, Սելնուէ ըստած ցեղի պատկանողներ, որ Օսմանեան տիրապետութենէն յետոյ լաւ կազմակերպուած էին Հաւաւի առաջին պէկ Ասլի ըստած բարբարոսէն, նոյնպէս Սելնուէ: Ձեն կրցած Հաւաւը քանդել, որ իրենցմէ աւելի զինուած, կուռելու ընդունակ, կրցած է զսպել Ասլի պէկի սերունդն ալ, Քիւրումցիներն ալ ամբողջ 500 տարի առանց զլուխ ծոկելու:

Քիւրում զիւղի Մըլլայ Իպիշի տունին դէմ Ազառոսիւն վրայ քանդակուած դրութիւնը ցոյց կու տան զերմանացի երկրախոյզի մը Մ. Փափաղեան եւ Հ. Կարեան, որ կ'ըսէ անոնց՝ հոս քրմանոց եղած է շատ շատ հին դարեր առաջ: Չարմանալին հոն է, պէկերու, աղաներու, թուրք, քիւրտ ցեղապետներու օրօրան Բալահոյիտի մէջ չորս կողմէն պաշարուած Հաւաւը կրցած է կռիւ մղել բոլորին դէմ, իրարու կից տուններու մէջ զուռեր բանալով, ոչ թէ ձգած փախած է: Հաւաւցիին քաջ, զիւղին զիրքը քաջ, մինչեւ վերջ յաղթական դուրս եկած է, այդ հոշակատը բլուրը որջափ թշնամի կեանքեր խլած է, ոչ ոք չի դիտեր: Դասատուները մեղ կը տանէին բլուրը, կը հիանայինք կառուցուածքին վրայ:

Հաւաւը պաշարում ունեցած օրերուն, թուրք խուժանը իր մասնակցութիւնը չէ բերած զիւղին սխերիմ պէկերուն եւ ցեղապետներուն, որոնք անկարող դարձած են իրենց քանդումի դործը առաջ տանելու. եղած են 40-50 պաշարողներ, որ շեն կրցած զիւղին ներս մանել ու ձգած հեռացած են: Դարերէ ի վեր Հաւաւը շրջապատող թուրք զիւղեր լաւ ճանչցած են Հաւաւը, կոռուղ, դիմազրոյ, իրենց իրաւունքը պաշտպանող, շինող, չհնցող եւ հասարակութեան հա-

մար չարիք չի մտածող: Գիւղը միշտ հարուստ եղած է, առանց խտրութեան օգնած է աղքատներուն: Հաւաւցիներու դուրս միշտ բաց եղած է ճամբորդներու համար, առանց վճարում ստանալու, որուն համար մեծ համբաւ թողած է:

Թուրք կառավարութիւնը լաւ կերպով ուսումնասիրելով թուրք հասարակութեան բարեկարգութիւնը դէպի Հաւաւցիները, ԳՅի կոտորածին Սուլթան Համիտի հրամանը զործադրելու համար Բալուէի կառավարութիւնը պէտք տեսած է հարիւրապետ մը հինգ զինուորներով թուրք զիւղերը զրկելու, զանոնք զբոլուծելու Հաւաւի դէմ, որ որոշուած օրը բոլորը միասին պաշարեն Հաւաւը. եւ եթէ չի յաջողին ներս խուժելու, կառավարութիւնը դորքով եւ ինկանթութով պիտի հասնի օգնութեան Հաւաւը քանդելու, թալլելու, կոտորելու. եւ այդպէս ալ եղաւ:

Կոտորածին վերջ Հաւաւցի բարեկամ թուրքեր ըսած էին, եթէ կառավարութեան հրամանը չըլլար, մենք ոչ մէկ տանն պիտի փորձէինք այս ջարդն ու կոտորածը: Թուրք կառավարութիւնը առաջին օրէն ի վեր որզեցրած է ջարդն ու կոտորածը: Բնաւ չէ խորհած զանոնք քաղաքակրթելու, խաղաղ աշխատանքով իրենց սպորուստը ճարելու մտքով յառաջացնելու: Ամբողջ թուրք աշխարհը իր սպորուստը ճարելու բանուկ արհեստ դարձուցած է զոգրութիւնն ու աւազակութիւնը: Անոնց փրկութիւն չկայ, պիտի անհետանան: Հայ ազգը իր աշխատասիրութեան, բարոյական հոգիով պիտի ապրի, զարգանայ, իր նպատակին պիտի հասնի, Հայը ստեղծող ազգ է, այս աշխարհի մէջ ստեղծող ազգն է որ պիտի ապրի յաւիտեան:

Հաւաւը սպրելով այդ բարբարոս թուրք իշխանութեան ներքեր, բնաւ չէ փոխած իր բարեպալկամ ոգին, ցոյց տուած է պէտք եղած տանն որ ինք արժանի յաջորդն է այն հին ու պատուական ցեղին:

ԳՅի կոտորածէն անմիջապէս վերջ իմ ազգական Ստեփան Փափաղեան Բալու քաղաքէն իր գնումները բեռնուցած աւանակի մը վրայ, Հաւաւ չի հասած, կը կողոպտուի քիւրտ աւազակ մը: Ստեփան օգնութիւն պոտալով, օգնութիւն կ'աղիբսէ: Գիւղացիք մեծով պղտիկով շուտ մը կը հասնին աղէտին վայրը եւ աւազակը կը բռնեն, պոտալով, կանչելով զիւղ կը բերեն եւ կը յանձնեն օրուան զիւղապետ Պ. Յակոբ Լէյլէկեանին, որ տեսնելով երկտասարդ աւազակին արիւնլուսայ դէմքը, կը սխի պոտալ կ'ունչել. Հաւաւցիներ ինչ է որ կ'ընէք, դուք չէ՞ք զիտեր որ զերին չեն ծեծեր, մեծ նախատինք է մեր զիւղին համար:

Արդարամիտ դատաւորի մը պէս հարցաքննելով աւագակը, կը հասկնայ որ չբաւար մէկն է: Անոր երեսի արիւնը սրբել տալէ վերջ կը կերակրէ զայն, զոյգ մը կօշիկ, շաքէթ մը, հրացանը, մէնիտիէ մը դրամ տալով աւագակին, կ'ըսէ անոր.— Գնայ գործ փնտռէ, աւագակութենէ հետս կեցիր:

Ո՞վ զիտէ այդ աւագակը քանի տեղ խօսեցաւ, պատմեց զիւրագակարն այնքան մարդասիրական սպին, իսկական քրիստոնեայի վարժունքը տեսնելով: Այսպէս եղած են իսկական Հաւաւցիները հին դարերէ ի վեր: Աւագակ չեն յանձնած կառավարութեան. իսկական աւագակները սպաննած են, չբաւարները ազատ արձակած:

Հաւաւը բոլոր մարդերուն մէջ ցոյց տուած է որ ինք դարգացած ցեղի մը գաւազնեղէն է: Գիշեր ու ցերեկ դարգացումի մասին խորհած եւ գործած է, յառաջդիմութեան ճանապարհը միշտ բաց ձգուած է իր առջեւ, չկար օտար ցեղ, օտար վարդապետութիւն, մէկ տեսակ քրիստոնեայ Լուսաւորչական: Հայ մշակոյթը, Հայաստանեայց Եկեղեցին միշտ ալ պահած են իր բարձրութեան վրայ: Գիւղին նշանաւոր դասատուներ կը տեսնենք նուիրուած, զէպի Հայ Եկեղեցին, հայ մշակոյթը. հին Փափաղաններ, Տէրոյեաններ, Կատարեաններ եւ Ոսկանեաններ իրենց տուած քահանաներով եւ դասատուներով, որ իրաւամբ ըսուած է Պոլիսի Խոռվխափաւ է. եկեղեցական արարողութիւնները, իր համաչափ երգեցողութիւնները, կարգով կանոնով միայն Հաւաւի մէջ է որ կը լսուի ամբողջ գաւառներուն մէջ:

Հին դարերէ ի վեր արհեստագիտութիւնը Հաւաւի մէջ վազուց հիմք դրած էին հիւսնութիւն, ատախճադործութիւն, որմնագործութիւն, քարակոփութիւն այնքան առաջ դացած էին որ բոլորն ալ արհեստաւոր գարձած էին, որ դարգացուցած էին Պոլիսի մէջ, շնորհիւ զիւղին սուլթանական պատուանշան կրող ճարտարապետներուն: Ամբողջ Հաւաւը ներշնչուած էր իր նախնիքներու թողած արհեստական նմոյշներով, հոշակաւոր բլուրը, դաշտերու, ճամբաներու, հողերուն տակ մնացած շարան շարան փայլուն կարանները, ջուրի խողովակները, բոլորն ալ պտուտակներով պատրաստուած, միածեւ, այնքան գեղեցիկ ու փայլուն եւ զիմացիուն որ կը կարծէիր թէ գեո երկէ պատրաստուած են: Տեսնողներս կը հիանայինք մեր նախնիքներուն վրայ թէ որքան հմուտ եւ զխաւից մարդիկներ եղած են. գործարաններու հետքեր չէինք տեսներ. ինչպէս պատրաստած եւ ինչպէս թրծած եւ փայլունցուցած են այդ անհամար կարասները: Սնամքով պահուած կմախքներ, մասնաւոր շինուած

քարէ պահարաններու մէջ, բոլորն ալ խորունկ գետիններու տակ մնացած են: Հին արհեստագիտութեան չէ հետեւած Հաւաւը, Օսմ. տիրապետութենէն վերջ: Զրագած են կառուցանելու, չենքեր շինուելու արհեստով: Ինքնապաշտպանութեան հարցերով դրագած են զիւղին գոյութիւնը պահելու, բարբարոս ցեղերու դէմ կռուելու:

Թուրքը ուր որ մտած է բարբարոսութիւն տարած է: Առաջին օրէն ի վեր անոնք շինող, ստեղծող ազգ չեն եղած, մինչև մեր օրով աւելի կոթ մը չէինը չէին զիտեր, գործիք բռնել չէին զիտեր, գեոնափոք տուններու մէջ կ'ապրէին, զոյրութիւնով, աւագակութիւնով ապրուստ կը ճարէին: Անոնց կերածը միշտ կըլկըլ հացահատիկը եղած է, սեւ հաց մը: Անոնք Հայերու պէս ճերմակ հաց պատրաստելու թոնիր չունէին. սաճի վրայ կ'եկէին իրենց հացերը. Հայերս կը պփփայլիք վրան նայելու: Կանոնաւոր հազուստ կարելու շնորհք չունէին: Իրենց ըրած հոգադործութիւնն ալ գործի չէր պար. անոնք լեռներու վրայ, ձորերու մէջ կ'ապրէին. տափարակ գետինները Հայերու յատկացուած էին:

Շատ քիչ ունեւոր թուրքեր կային, որ եղջերու կենդանիներու հօտեր ունէին. հասարակութիւնը վերջին ծայր թշուառութեան մէջ կ'ապրէր: Հայերու ճերմակ հացերուն համար կը խնդկենային:

Կառավարութեան հոգն անգամ չէր թէ ինչպէս կ'ապրին, տուրք չէին տար Հայերու պէս. իրենց հանած բերքերէն կառավարութեան բան ցոյց չէին տար, որպէս թէ զինուոր տայու պարտաւորուած են, շատեր փախուստ կու տային. այսպէս էին Բալահոփտի թուրքերը:

Կային Չագաններ. ոմանք կը խորհին թէ ասոնք քրիստոնէութիւնը չընդունող Հայեր եղած են, ըստ Պր. Կարեանի ասոնք Մասան ցեղի մնացորդներն են որ Արտաշէս թագաւորի օրով հաստատուած են Հայաստանի մէջ: Ասոնք Հայու շնորհք չունէին. Մասան Չագայի փոխուած է. գեղեցկազէմ մարդիկներ, ոսկեզոյն մազերով. Բալու քաղաքի շուրջ տեղաւորուած լեռներու եւ գետին եզերքները հաստատուած, չափազանց հայտեաց, հոգադործութեամբ կը դրագէին: Անոնք կ'արտադրէին ծխախոտ, ընկոյզ, թութ, չամիչ, պաստեղ, ըռուպ, ըղին, խալրնձիլ, չոր պտուղ, մանաւանդ չոր խնձոր, չորգան, վայրի կենդանիներու մորթ: Անոնք կը պատրաստէին վառօղ: Ունէին կապարի հանք մը, լու չգտուած. կապարը դաղտնի կը ծախէին, աժան գնով: Կառավարութիւնը միշտ հետապնդում կը կատարէր. բռնուողները տուգանքով կ'ազատուէին: Չագան մինչև վերջ հաւատարիմ մնաց Օսմ. կառավարութեան. զտարին ցեղ մըն

էին: Անոնց սիրած զէնքերն էին կեռ թուրը, կեռ դաշոյնը: Անոնց խօսած լեզուն խառն էր, թուրքերէն, քրտերէն, արարերէն, նոյնիսկ հայերէն բառեր. ամէնէն շատը սասաներէն. կրօնքով մասձետական, անոնք չէին հաւատար բարձրակրթական: Արտակարգ հակաքրիստոնեայ էին: Գեղեցիկ պարոզ եւ երգող, զարգացումի չէին հաւատար. թուրքերու պէս շատ քիչ զրեւ կարգացողներ կային: Լաւ առևտրական մարդիկներ էին, շարաշար աշխատող. իրենց արտադրածները կը ծախէին Բալուի բոլոր շրջաններուն մէջ:

Ձագաներու շրջանը ապրող Հայեր Ձագաներու պէս կը հագուէին, որ կարելի չէր դանդաղանել. կը խօսէին անհասկնալի հայերէն մը. չին բարբառով շատ քիչեր զրեւ կարգալ զիտցող կային: Չունէին ոչ եկեղեցի, ոչ դպրոց: Արդնիի ջերմուկը վացած տարին ծանօթացանք այս հայերուն: Զէնքով եկած էին, տաղաւարներու տակ սեղան շտկած, ուրախ դուարթ, կ'երգէին, կը պարէին, հրացանները ձեռքերին: Մեր ջորեպանին միջոցով ծանօթացանք այս հայերուն: Մեր ջորեպանը, Հաւաւի մօտիկ գրծրգանցիմ մեղ տարաւ Խօնա ճապուռի տաղաւարին մօտերը: Հաւաւցիներս վաղուց լսած էինք Խօնա ճապուռի մասին, որ քրիստոնեայ է, որ 95ի կոտորածներուն քաջարար կոչուած եւ ջարդէ պաշտած է իր ամբողջ զերպատանը: Հաւաւցիներս շատ քաջասէր էինք, կը սիրէինք տեսնել քաջ Հայեր, քաջ քրիստոնեաներ:

Հաւաւը չին գարերէ ի վեր հաւատարիմ քրիստոնեայ ազգեկամ է, քրիստոնեասէր. ուրած է պահել իր բարեկամական կապերը զինք շրջապատող գրծրգան ցեղախումբին հանդէպ, տեսնելով անոնց մէջ ոչ հայատեաց ատելութիւն: Պր. Կարեան կ'ըսէր որ հաւանարար զրծրգան ցեղն ալ հայ եղած է, եւ զրծրգանի թարգմանութիւնը զրջէպան եղած է, թէեւ քրիստոնէութիւնը չեն ընդունած, բայց մնացած են հաւատարիմ Հաւաւի հանդէպ. աշխատասէր, հոգազործութեան հաւատացող, Հաւաւցիներու մօտ ծառայող, վստահելի, շատ շուտով հայերէն խօսիլ սորվող, շատ քիչեր աւագակութիւն կ'ընէին: Անոնց ցեղախումբերու պետերը կ'ապրէին Հաւաւի մօտ Կօզարագ անունով զիւրի մը մէջ, քաջ մարդիկներ էին, Հաւաւի կողքին կանոնողներ, շատ հարուստ մարդիկներ, Պինկօլի մէջ մանր կենդանիներու հօտեր ունեցող, բոլոր թուրքերու հանդէպ պատկառաղու. ձիերով, մրգրալս նետով պտրտող, բառին բուն առումով հայասէր:

Օսմ. կառավարութեան զրգումով բոլոր ցեղերը թշնամի դարձած էին Հայերուն, միայն Գրծրգան եւ Տերիմ մնացած էին

հաւատարիմ Հայերուն: 1905 թուականներուն, Հաւաւի այգիներուն պահապան Օննիկ Պօյաճեան եւ Սարգիս Գասապեան կը հրատարակեն Հաւաւի մօտ, մըղթացի այգեպանէն շարաթ երկեղ մը, իրենց այգիներուն մէջ, որոշ ծառի մը տակ: Սարգիս Գասապեանի մայրը, մըղթացի, ծանօթ էր անոնց այգիներուն. նպատակը չէ եղած անոնց տաւար տալու, այլ մըղթայի Աղային կողմէն լարուած թակարդ մը, Հաւաւցիներ բռնելու, Բալու քաղաքի կառավարութեան յանձնելու: Ֆէտայի անուան տակ: Սարգիսն ու Օննիկը միամտօրէն կ'երթան եւ որոշուած ծառին տակ մարդ չեն տեսներ. կը սուլին. այդ սուլոցին վրայ, ազգակի մը կը իրթի. «եկեք հա եկէք, դողեր եկած են»: մութ զիշերով մըղթացիներ կը հասնին իրենց Աղային հետ, Սարգիսն ու Օննիկը կը տանին. Աղան զանոնք կը բանտարկէ Տէրտէրանց զոմը եւ լսը կը զրկէ քաղաք, որ երկու ֆէտայիներ բռնած է: Կիրակի առաւօտ Օննիկն ու Սարգիսը ի զուր կը փնտառին իրենց տընեցիներէն: Մըղթային լուր կու գայ Հաւաւ որ Օննիկն ու Սարգիսը բանտարկուած են իրենց զիւրի մէջ Տէրտէրանց զոմը, Մահմուտ Աղայի կողմէն: Սարգիսը այս պտտութիւնը զրոյնք քրոջ ամուսինն է. շուտով Մըղթա հասայ Սարգիսին մօր հետ, երկուշաբթի ստաւու, Տէրտէրանց Չարտալը, արեւը հօղի քիչ մը բարձրացած, վար իջանք ես եւ Սարգիսին մայրը, զոմին դռն ետեւէն կանչեցինք աղաներուն, խօսեցանք, եւ յուսադրեցինք զանոնք որ չի վախնան, եւ վեր ելանք. բոլորն ալ արտում տխուր կը սպասեն ելքին, թէ ինչ պիտի ըլլայ այս տղաներուն վիճակը:

Մէկէն տեսանք որ Տէրտիցի սահմանակից կօլլանցի Ալի Զօռէն, իր հինգ ընկերներով վեր ելաւ, տեսաւ Չարտալսին մէջ հաւաւը անձները արտում տխուր: Հարցուց. — մահ պատահած է. ըսուեցաւ, ո՛չ. հապա ի՞նչ է: Տունին տարեց կինը ուղեց մօտեալ Ալի Զօռէնի եւ ըսել պատահածը: Տանակը Օհաննէս արարն արդիւց. Ալի Զօռէն մէկէն բարկացաւ, նստած տեղէն վեր ելլելով, հրացանը ձեռքին, սիսու արաղ-արաղ զոզալով պտտառը հասկնալ:

Այս հաւաւքոյթին, տարեց կինը լալով մտեցաւ Ալի Զօռէնի, պատմեց անոր որ մեր զիւրի Աղան երկու Հաւաւցի երիտասարդներ բանտարկած է մեր զոմը, քաղաքը լուր զրկած է որ երկու ֆէտայիներ բռնած է: Երկու մարդու հասակի չափ հսկան սկսաւ դոռալ, շուտով այդ Աղան կ'ուղեմ. իր մարդիկները շուտով բերին Աղան, վախկոտ կատու դարձած: Ալի Զօռէն այնպիսի ապտակ մը հազցուց որ Աղային զլխարկը տասը ոտք հեռու իյնալով ինք ալ զետնի վրայ փռուեցաւ, անկարող ստքի վրայ կանոնելու. վախէն

սարսափէն Ալի Զօռէին օյնականները կանդնկուցին Մամատ Ազան: Դուն Մամատ Ազայ ով ես որ մարդ կը բանտարկես: Ձի բաւեր ձեր բոլոր բրածները այս խեղճ Հայերուն: զնայ, աղօթէ, որ իմ բարեկամներուս տունին մէջն ես. եթէ քեզի զուրսը բռնէի, պատառ պատառ կ'ընէի: Շուտով վար իջիր, այդ բանտարկեալները վեր բեր:

Սարգիսն ու Օննիկը վեր ելլելով երբ Ալի Զօռէն տեսն, կարծես օձ տեսն: Ալի Զօռէն նորէն բերանը բացաւ. — դուք թուրքերդ այսպէս անմեղներու վրայ կը յարձակիք, ձեր կոտորուածներ, ձեր օրէնքին, ձեր հաւատքին: Ականջ չլսելիք հայհոյանքներ: Օննիկն ու Սարգիսը իրենց զէնքերն առած Ալի Զօռէին հետ իր հեռուորդներով Հաւաւ մտանք. Պօյաճի Մարտուպի տունին տանիքին վրայ պատրաստուած սեղանին բազմեցաւ Ալի Զօռէն իր հեռուորդներով, տանիքին վրայ տակ ձգելու չափ տեղ չի մնաց. եկողները սկսան կարգաւ Ալի Զօռէին ձեռքը համբուրել. կերուխումէն վերջ պատկառազու Ամբակումեան թաղէտը, Պօյաճի Մարտուպը Օննիկին հայրը, Սըրտոյնց Պաղտասարը, Նէմցէեան Մանուկը, սկսան գանդատիլ թուրքերուն բրածներէն, որ զիշեր ու ցերեկ ջարդով ու կոտորածով կը սպառնան մեզի: Աչքովդ տեսար, եւ լսեցիր որ խորհանքով տանելով այս տղաները, բռնած բանտարկած է, եւ կոտորուածներու լուր գրկած է Մամատ Ազան, որ երկու Հաւաւցի Փէտայիներ բռնած է: Եթէ դուն Ալի Ազայ, վրայ չի հասնէիր, չազատէիր այդ երկու տղաները, անոնց վիճակը շատ զէշ պիտի ըլլար, թուրքերը աւելի պիտի կատուէին մեր վրայ, որ Հաւաւը վար չէ գրած իր Փէտայիական գործառնութիւնները:

Ալի Զօռէն նեղուած, զգացուած Հայերու քաշած չարչարանքներէն, ըսաւ. Հաւաւցիներ ձեզի խորհուրդ կու տամ որ քանի մը աչքառու թուրքեր պարնէք եւ լեռը ելլէք, որպէսզի թուրքերը զգուշանան, զարնոյին վրայ մարդ չի մտներ: Ձեզի խորհուրդ կու տամ որ, եթէ կոտորուածներ վորձ կատարէ այս տղաները քաղաք տանելու եւ բանտարկելու, ինծի լուր տուէք. եթէ չէք կըրնար մինչեւ իմ գիւղը գալ, ձեզի մօտ Չութուք գիւղը բնակող Ռըսի Գալէիմ լուր տուէք, ան շուտով ինծի լուր կու տայ:

Հայ, թուրք, բոլորն ալ Ռըսի Գալէն լու կը ճանչնային, քաջ քերտ մը, կոտի մէջ ձախ թեւէն զարնուած հաշմանդամ մէկը. զիշեր ցերեկ մարթինի հրացանով կը պարտէր. ճանտարմաները կը զգուշանային զայն ձերբակալելու, որովհետեւ Ալի Զօռէին խումբին կը պատկանէր: Ալի Զօռէն եւ Ռըսի Գալէի Մամատ Ազան 10.000 հրա-

ցան բռնող կրնային հրապարակ բերել պէտք եղած տեսն:

Քանի մը ամիս անցնել վերջ, կոտորուածները տարաւ Օննիկն ու Սարգիսը եւ բանտարկեց. քանի մը ամիս բանտ պահել վերջ, կաշտեցով ազատ ձգեց զանոնք: Հաւաւցիներ վախցան Ալի Զօռէին լուր տալ, որ աղիտարեր կ'ըլլայ մեզի համար: Տէրսիմցիներ որքան հայասէր, հաւատացող հայ եկեղեցիին, խաչին ու Աւետարանին ցոյց տուած են:

Օսմ. Մահմանազուրուլներն վերջ Հաւաւցիներ իրաւանայ պաղին կ'երթան խումբով, ամառ տուն, հոն հանքային տաք ջուրով բաղնիք առնելու, որ շատեր բուժուած են: Այդ խումբին մէջ կ'ըլլայ իմ հօրեղբայր Պաղտասար Քէնյ. Փափաղեանը: Սըրտանայ պաղին շրջանի Տէրսիմցիները երբ կը լսեն որ Հաւաւցի Քահանան ալ եկած է, լուր առնողը կու գայ. մեծ, պղտիկ, կիներ, մարդիկներ, շարան շարան, ոմանք իրենց նուէրներով, հաւ, հաւկիթ, մածուն, սեր, կարգով Տէր Զօր խաչն ու Աւետարանը համբուրելու: Հաւաւցիները կը զարմանան անոնց ունեցած հաւատքին վրայ, որ չեն մոռցած, որ զարեւ անցած է, եւ անոնք մնացած են կատարեալ հաւատացեալներ հայ եկեղեցիին:

Ամենավերջը ձերունի մը կու գայ եւ կը կանգնի Տէր Զօր առջեւ, խաչն ու Աւետարանը համբուրել վերջ, կ'ըսէ. — Տէր Հայր, ես հայ եմ. մենք ընտանիքով Տէրսիմցիներու մէջ կ'ապրինք, քիչ վերջ իմ ընտանեկան պարագաները պիտի գան: Անոնք գալէ առաջ քեզի պիտի բողբոջեմ որ իմ թոռանս կիներ զիս ձեռնելով գործի կը զրկէ, կինս վազուց մեռած է: Տէր Զօր խաչն ու Աւետարանը համբուրել վերջ, կը մնայ կանգնած:

Երբ իր պարագաները կու գան, խաչն ու Աւետարանը համբուրել վերջ, Տէր Հայրը կը նկատէ հայ ընտանիքին տարեբաւոր կիներ եւ կ'ըսէ. դուն հոս կեցիր, քեզի ըսելիք ունիմ: Բոլորը երթալէ վերջ կ'ըսէ. — Դուն ի՞նչպէս չես մեղքեմար այս մարդուն վրայ, որ ձեռնելով գործի կը զրկես: Այս մարդը 125 տարեկան է:

— Տէր Հայր, կ'ըսէ հարսը. եթէ չաշխատի, այսքան երկար տարիներ չի ապրիր:

Բոլոր Հաւաւցիները կը զարմանան, մարդը հազիւ 60 տարեկան կ'երեւի, մինչդեռ 125 տարեկան է: Տէր Հայրը իր ուրախութիւնը յայտնելով հայ մարդուն երկարակեցութեան համար, կը յորդորէ զանոնք, որ երթան խաղաղ ապրին:

Այս պատմութիւնը ընողը եղած է իմ մեծ եղբորս կիներ, հոս

Ամերիկայի մէջ, Փրովիտէնս եղած միջոցին: Մեծ եղբայրս Արմենակը ինծի պատմած է հոս, Ամերիկա, Փրովիտէնսի մէջ, որ 95ի կոտորածէն վերջ, Չարսանճաք, Սողաթ դասատու եղած ատենը, շարաթ օր կէսօրէն վերջ, Առաջնորդ Հայր Սուրբին հետ միասեղ Առաջնորդարանի մէջ նստած պահուն, մէկէն ներս կը մտնէ տեղւոյն զօրանոցին հաղարայեալը ալլալլա՛մ, կ'ըսէ. Մաւրախաչ է՝ Ֆէնտի, Տէրութեցիներ եկան մտան զօրանոց խումբով, բոլոր ուղղմամբերէնքը առին փախան. եթէ այդ ուղղմամբերէնքը ետ չզան, իմ զլուխս կ'երթայ, ինծի պէտք է օպնես: Ի՞նչպէս կրնամ քեզի օպնել, կ'ըսէ Առաջնորդը: Հաղարայեալը կ'ըսէ. եթէ դուն զրկես Գարբիէլ էֆէնտի Մոմճեանը Տէրութիմ, անոնք չեն մերժեր ան, եւ իրենց տարածները ետ կը բերեն ստանց ալլալլալլի:

Եւ իսկպէս ալ Սրբազանին անունով դնաց Գարբիէլ էֆէնտին եւ բոլոր գէնքերը ետ բերել տուաւ: Սրբազան Հօր վարկը այնքան բարձր էր Տէրութեցիներու առջեւ:

Եղբայրս ուրիշ շարաթ օր մը կէսօրէն վերջ կ'այցելէ տեղւոյն նորակառոյց եկեղեցիի շինութեան ակնատես ըլլալու, կը տեսնէ որ քերտ մը պատանայի շաղախը կը խտոնէ, կը պարտաստէ, կ'ըսէ քերտ, ինչպէ՞ս կ'ըլլայ որ թող տրուած է քերտ մը դործելու եկեղեցիին մէջ, ես հայ եմ. դադարս եւ խօսած լեղուս քերտերէն է. ես կը պատկանիմ Խարակեալու զերդաստանին, մենք հոս 100 ընտանիքներէ կը բաղկանանք, մենք ազգականներ ունինք Խարբերդի մէջ Խառակեալու անունով որ բաւական թիւ կը կազմեն:

Եղբայրս Արմենակը կը պատմէ նաեւ որ Սրբազան Հօր հետ պարտած ատեն քաղաքէն դուրս փոքրիկ լեռներու վրայ կը տեսնէինք քանդուած ազօրիքներ որ ջուրի շղոյտի վրայ պատճառու հոլով կը դարձուին ազօրիքին քարերը, շինուած պտուտակներով, հին աստեղները Չարսանճաղի հայերը եղած են լաւ արհեստագործներ: Օսմ. տիրապետութեան վերջ ամէն ինչ քար ու քանդ եղած է: Մեծ եղբորմէս փոքրը, ինձմէ մեծ եղբայրս Արամը, որ այնքան պատմութիւններ կարգացած եւ միտքը պահած էր, կը պատմէր որ կիրիտի պատերազմին, Յոյները կը պարտուին, թուրքերը կը յառաջանան, որ կարելի չէ կասեցնել: Օրուան յոյն թաղաւորին կէնը, թաղուհին օգնութիւն կ'աղերսէր իր եղբոր՝ Գերմանիոյ Վիլհելմ Կայսրէն: Վիլհելմ Կայսրը քէն պահած էր իր քրոջ հետ որ օրբօտօքն մը հետ ամուսնութիւն կնքած էր: Գերման Կայսրը, տէրն ու տիրակա՛նը Օսմ. պետութեան, որ իր խօսքը արժէք ունէր Սուլթան

Համիտի առջեւ, կը հեռադրէ որ Յոյներու հետ եղած պատերազմը պէտք է կանգ առնէ. բանակը ուր որ է, առանց շարժելու իր տեղէն, մնայ հոն ուր որ է ստանց մէկ զինակ արձակելու:

Օրուան պատերազմի հրամանատար Էտիէմ փաշա, անմիջապէս արշաւանքը կը կանգնեցնէ, եւ կը հրամայէ զինուորներուն, որ ոչ մէկ զինակ պէտք չէ արձակուի: Սամաթիայի ձկնորս մակոյկավար Լեւոնը, իր խումբով կը յարձակի թուրք զինուորներու վրայ, զիչեր ատեն, մութ ձորի մը մէջ, ուր թուրք բանակը կանգ առած է: Թուրք զինուորները կ'ըսեն. Փաշա, մեր վրայ յարձակում կը դործեն: Հրամանատար փաշան կ'ըսէ. զէնք մի դործածէք, քարկոծեցէք:

Լեւոնն ու իր ընկերները օգուտելով առիթէն, կը յաջողին փախցնելու թրքական թնդանօթները եւ դրօշակները եւ յանձնել Փիրէ քաղաքի յոյն կառավարութեան, որով յոյն կառավարութիւնը խաղաղութեան սեղանին վրայ ցոյց կու տայ հաշտարար մարմին թրքական դրօշներու եւ թնդանօթներու դբաւումը: Լեւոնի կատարած քաջագործութիւնը կ'արձանագրուի Փիրէ քաղաքի տոմարին մէջ:

Կանցնի ժամանակ մը, որմէ յետոյ երեք հայ յեղափոխականներ կը ձերբակալուին Կիրիկեան նաւահանգիստի մը մէջ թուրք կառավարութեան կողմէն, Խըրտիի նաւով դէպի Պուլիս, Սուլթան Համիտի յանձնելու: Նաւը Փիրէ քաղաքի նաւահանգիստէն անցնելու պայմանաւ: Յեղափոխական կոմիտէին կողմէ նշանակուած անձնաւորութիւն մը ձկնորս Լեւոնին կը զիմէ, որ ամէն միջոց դործ զնէ երեք յեղափոխականները նաւին մէջէն փախցնելու:

Լեւոն կը զիմէ Փիրէի կառավարութեան որ իրեն պատահութիւն տան երեք յեղափոխականները փախցնելու Խըրտիի նաւուն մէջէն, որ խարխիս նետած է ծովափին: Փիրէի նաւահանգիստը խորշի մը մէջ է, քաղաքէն անտեսանելի: Կառավարութիւնը կ'արտօնէ Լեւոնին առանց սպանութիւն կատարելու, յիշելով Լեւոնի կատարած քաջագործութիւնը Կիրիտի պատերազմին առթիւ, որ Օսմ. կառավարութեան թնդանօթներն ու դրօշակները փախցուցած եւ յանձնած յոյն կառավարութեան:

Նաւը Փիրէի նաւահանգիստը չհասած, իր ստանայական պատրաստութիւնները տեսած էր թէ ինչպէս պէտք էր փախցնել այդ յեղափոխականները Սուլթան Համիտի ձեռքը չիյնալու:

Նաւը կը պաշարուի 10 հաս նաւակներով. դաղանի զինուած

երեք երիտասարդներ շուտ մը կը մտնեն նաւուն մեքենատունը, զէնքով կը սպանան մեքենավարին որ նաւուն փողը հնչեցնելու փորձ ընէ: Նաւը պաշարող մակոյկավարները կը սկսին նաւուն կողերը հարուածել երկաթի դոյնով ներկուած փայտէ կացիններով: Նաւապետը կը հրամայէ օդնութեան փողը հնչեցնել, լուր կը տրուի որ կարելի չէ: Նաւապետը կը հարցնէ Լեւոնին. Ի՞նչ է ձեր ուզածը: Լեւոն կ'ըսէ. կ'ուզեմ այդ երեք յեղափոխականները տեսնել կանդանա՞ծ նաւուն տախտակամածին վրայ: Յեղափոխականները կարանաւորող թուրք զինուորականը կ'ընդդիմանայ: Լեւոն սպտակով մը զայն մէկ կ'ըզմ կը քշէ: Նաւապետը կը հանդատացնէ Լեւոնը, ըսելով անոր թէ պէտք չունին զանոնք տեսնելու, անոնք մտնաւոր սենեակի մը մէջ կը մնան: Լեւոն կ'ըսէ. եթէ չի թողուս, նաւը ծովը պիտի իջեցնեմ: Իր բերնի սուլիչը փչելուն, նաւը պաշարողները նորէն կը սկսին նաւը կացինահարել: Նաւուն ճամբորդները ահարեկուած, կու լան, կը սրտան: Լեւոն ուրիշ սուլիչով մը զարկեցնել կու տայ հարուածները: Նաւապետին առջնորդութեամբ կը հասնի յեղափոխականներուն գտնուած վայրը, ուր անոնք շրջապատուած, ածուխներուն վրայ ինկած կը մնան: Լեւոն բորբոքած կ'ըսէ. կեղծաւոր քրիստոնեայ Եւրոպայի մարտը սենեակը ա՛յս է, որ ինձի կը հաւատացնէիր քիչ մը առաջ: Կը հրամայէ թուրք զինուորականին որ կարանաւորուածներուն շրթաները քակէ: Զինուորականը կ'ընդդիմանայ, աղաչելով, իմ գլուխս կ'երթայ, եթէ այս յեղափոխականները ձեզի յանձնեմ: Այս վայրկեանին ձեր գլուխը ոչինչ կ'արժէ ինձի համար: Այս անմեղները պէտք է սպասեմ: Շրթանները կը քակուին: Ազատուած երիտասարդները իրենց ուրախութենէն կը սկսին լայ, հեկեկայ: Լեւոնը տղաներն առած նաւէն դուրս կ'ելլէ արագարար, նոյնպէս նաւուն փողին վրայ հսկողները, որմէ յետոյ նաւուն փողը կը սկսի գոռալ:

Ոստիկանութիւնը շուտով կը հասնի, բայց ուշ է արդէն, տմենայն արագութեամբ անհետացած են արդէն նաւը շրջապատող մակոյկները:

Թուրք զինուորականն ու նաւապետը կը սկսին պոռալ, կանչել, արհամարհական խօսքեր ընել ոստիկանապետին եւ ոստիկաններուն երեսն ի վեր. ձեր զայն ինձ օգուտ, տարին, տարին, փախցուցին այն երեք սճրագործները, որոնք պէտք է Պոլիս տարուէին. ո՞վ կարող է ազատիլ Մուլթան Համիտի ձեռքէն: Այդ անաստուածը, այդ մակոյկավարներուն պետը իր քանի մը ընկերներով այնպիսի

զաղտազոյի կերպով նաւ մտած էին որ ոչ ոք չէր տեսած: Գրուեցին նաւուն մեքենատունը, որ փողը չի հնչեցնէ: Այդ անգութ, անաստուած մակոյկապետը վեց հարուածեանը ձեռքը, մահ կը սպասար տմենաթեթեւ շարժում, ձայն ձուն հանողին: Այն մակոյկավարները ամէն անգամ որ կը հարուածէին նաւուն կողերը, կացիններու հարուածի ձայները դող կը հանէին նաւուն ճամբորդները, սիրտ չլիմանալիք տեսարան, որ մաղաչափ չէին աղչեր այդ հրէշին վրայ, սուլիչը բերնին դրած, կը սուլէր ու կը սուլէր, որուն կը պատասխանէին նաւը շրջապատող մակոյկավարները, կացիններու հարուածներ տալով նաւուն կողերուն: Ահարեկուած ճամբորդները ամէն վայրկեան կը սպասէին նաւուն ընկղմելուն:

Յունաստանի այդ Փիրէ քաղաքին նաւահանգիստը, քաղաքէն անտեսանելի, ցած ծովախորշի մը մէջ հաստատուած է: Սամաթիացի այս քաջ եւ անվախ պալըզի Լեւոնի տարած յայթանախը չէ կարողացուած հայ թերթերու մէջ, որ Արամ կըրայրս գիտէր:

Միութիւնը ուժ է, եղած է Հաւաւցիներու հաւատոյ հանդանակը, որուն վրայ հիմնուած պահած է իր գոյութիւնը ամբողջ 2000 տարի: Հաւաւցիներուն արուած է անդերպանցելի Հայեր պատուանունը, անոր համար որ, պահած են դիւրը զուտ հայարնակ, մնացած են հաւատարիմ դաւակները Հայաստանեայց Եկեղեցին: Հաւաւցիին համար կրօնասիրութիւնը եղած է համազօր ազգասիրութեան, որ մնացած են զուտ լուսաւորչական, մինչեւ վերջ:

Հայ մշակութիւնը նուիրումը Հաւաւցիներուն մէջ վաղուց հիմք դրած է, որ սերունդ պահուած է, որ տուած է ականաւոր մտաւորականներ, որ միշտ կապ պահած է Պոլիսի հետ: Իրենց դաւակները Պոլիսով յառաջացած են: Իրենց արհեստադիտութեան շնորհիւ ստացած են սուլթանական պատուանշաններ: Հաւաւցիին դարերէ ի վեր եղած է կեզրոն արհեստադիտութեան եւ մտաւորականութեան, ճարտարապետներու, ուսուցիչներու թիւերը սպայոց են, որոնցմով միշտ ալ հպարտացած է Հաւաւցի:

Իսրէ մը ասելի գոյութիւնն ունեցող Ուսումնասիրացը հիմնուած է Պոլիսի մէջ, իր Ազգային Ընկերութիւնը, ինքնապաշտպանութեան համար, հիմնուած զիւզին մէջ, որ դեռ կուսակցութիւններ գոյութիւն չունէին: Յեղափոխականի ողին Հաւաւցիներու մէջ մշտավառ կանթեղի պէս, մոխիրի մէջ անմար կայծի պէս մնացած է, որ իր գոյութիւնը առած է, այն ատենէն երբ Օսմանեան տիրապետութեան տակ ինկած է Հայաստանը: Մինչեւ վերջ մնացած է

զինապաշտ, որուն համար հրացանի ձայները այնքան ախորժելի էր եղած միշտ:

95ի կոտորածը ամենամեծ հարուածը տուաւ. չի յուսահատեցաւ որ ձգէր հեռանար. մնացին Հաւաւ: Ոմանք իրենց ապրուստը ճարելու հեռացան զիւզէն: Ուարրերթ, Պոլիս հաստատուեցան, իրենց արհեստով ապրուստ ճարելու: Գիւղ մնացողները Հայու յամառութեամբ մնացին, չի յուսահատեցան, լծուեցան աշխատանքի, նախկին Հաւաւը վերականգնելու, քով զիտնալով որ աշխարհի որ կողմ հաստատուին Հաւաւի ադատութիւնը պիտի չի վայելեն: Գրամ շահելու համար Ամերիկա երթալու յանձն առին զազտնի ճանապարհներով. ոմանք սահմանը չանցած կը բռնուէին, ետ կու գային եւ նորէն կ'երթային եւ վերջապէս զուրս կ'ելլէին թուրք սահմանէն: Գիւղը լուր կ'առնէր այս ինչ խումբը կովկաս ելած է անկարագրելի չարչարանքներով եւ կաշառքներով ազատ աշխարհ ելած են, շուտով Ամերիկա պիտի ուղևորուին: Բոլոր զիւզը կ'ուրախանար որ մեր ազաներն ողջ առողջ հասած են իրենց նպատակին:

Ազատութիւնը Հաւաւցիներուն համար ամէն բանէ վեր էր: Միութիւն եւ ազատութիւն Հաւաւցիներուն հաւատոյ հանդանակը եղած է որուն վրայ հիմնուած պահած է իր դոյութիւնը, պահած է իր ազգային բոլոր սովորութիւնները, Հայ Եկեղեցին, հայ մշակոյթը, իր ազատութիւնը. բուռ մը Հայեր գիրենք չըջապատող տեսակ տեսակ բարբարոս ցեղերու դէմ ցոյց տուած են իրենց անընկճելի կեցուածքը: Հայաստանի վրայ կատարուած արշաւանքներէն Հաւաւ կործանում չէ տեսած: Գիւղը մնացած է իր գիրքին վրայ միշտ, որ անոնք մնացած են զուտ Հայեր: Մնացած է ինքնիշխան կէս անկախ. Հաւաւը ստրկութեան չզթայ չէ տեսած, ոչ ոքի առջեւ գլուխ չէ ծոած, մնացած է զօրապաշտ, մինչեւ վերջ իր յոյսը դրած է իր գէնքին վրայ, վար չէ դրած: Հաստատ մնացած է իր հաւատքին վրայ, որ Հաւաւը պէտք է մնայ զուտ հայաբնակ, զուտ յուսաւորչական, որ իր հաւատացած Հայաստանեայց Եկեղեցին կարելի չէ փոխել: Ոչ Օսմ. բարբարոս կառավարութիւնը, ոչ օտար քրիստոնեայ քարոզչութիւն չեն կրցած փոխել սիրտն ու հոգին:

95ի կոտորածէն անմիջապէս վերջ Եւրոպայի միախնարներու արշաւանքը թրքահայաստանի վրայ, զանոնք կըրօնափոխելու աշխատանքը ի դուր անցաւ. Հաւաւցիներ ընդդիմացան անոնց: Այցելող միախնարները առանց իրենց ձիերէն վար իջնելու կը հեռանային, անկարելի դոնելով անոնց հաւատքը փոխելու: Մինչ Հայաստանի

տանի ջնջին զիւղերէն սկսեալ մինչեւ մեծ քաղաքները, ունեցան կրօնափոխներ, որոնք զբամով ուրացան Հայաստանեայց Եկեղեցին, շատ շուտով եղան եղբայր Պօղոս, եղբայր Մարտիրոս:

Կառավարական տոմարներու մէջ զատ արձանագրութիւններ բացուեցան «փրօտեաթան էրմէնի միլլէթ» անունով, առաջնութիւն տալով թուրքերէն խօսելու, ինչպէս հոս անգլերէն խօսելու, անգլերէն լեզուով պատկներ կատարելու հայ եկեղեցիներու մէջ: Զատեցին զպրօցն ալ, եկեղեցին ալ:

Միայն Հաւաւն էր որ մնաց իր բարձրութեան վրայ: Հուրը, սուրը, զբամը կարող չեն փոխել Հաւաւցիին հաւատքը: Անոր համար հաւատափոխութիւնը համազօր է ազդուարցութեան:

Ի՞նչ բանով օգտուեցան բողոքականութիւն ընդունող հայեր. ջարդերու, կոտորածներու ատեն խնայուեցա՞ւ իրենց: Ինչո՞ւ մոռցան Պերլինի համաժողովը, որ Անգլիացին կ'ըսէր, իմ նաւերս Աւրապաի վրայ չեն ելլեր. Գերմանացին կ'ըսէր. «...» փրօտիացի զինուորի փոսած ոսկորն անգամ չեմ տրամադրեր Հայ ազգի ազատութեան համար: Այս խօսքերը չէին որ թուրքը աւելի դօտեպընդեցին հայկական ջարդերը սաստկացնելու որ Հայը պաշտպանող Եւրոպա գոյութիւն չունի: Տակաւին խրատ չառինք որ կարգ մը Հայեր պօլշօլիթութիւնը կը փառարանեն, որ Հայ ազգի փրկիչը կը դաւանին, այն Ռուսիան որուն երկրպագուն դարձած են ստրկանալով անոր առջեւ, եղան պատակաբէնք Հայ ազգի մէջ, վարակեցին կարգ մը անմիտ Հայեր իրենց սնապարձ պաղափարներով, եկեղեցիներու բաժանում, հայ բարեսիրական հաստատութիւններու պառակում, արին քրտինքով վաստկուած զբամներ դատարններու եւ փաստարաններու կեր ընելով: Ովքե՞ր էին ասոնք. ուրացողներու դասակարգ մը որոնց դէմ զիրք բռնած չի ըլլար ազատատենչ հայութիւնը խափ խայտառակ պիտի ըլլայինք օտարներու առջեւ: Յիմարութիւն է ուրացողներէ ազգաչինութիւն ակնկալել: Պօլշօլիթեան դաղափարով սնած, բողոքական ոգիով մեծցած Հայեր էին որոնք իրենց առած ուսմունքը սպաս դրին միամիտներ մոլորեցնելու, հայը հայուն դէմ հանելու:

Նիւ Եւրօքի մէջ եկեղեցականի մը սպանութիւնը անոնց համար երկիրքէն ինկած պատահութիւն մը եղաւ, իրենց խօրական արշաւը աւելի առաջացնելու: Դժբախտութիւն: Սեւքէ միտքէ չանցած դէպք մը: Ծնունդի կիրակի եկեղեցիին մէջ պատարադիչ եկեղեցականի մը սպաննողն ալ, կազմակերպողն ալ չի զիտցուեցաւ մինչեւ:

այսօր: Պատուելիներ, փրօֆէսէօրներ, օտար վարդապետութեան ծախուած հայեր շահագործեցին այս դէպքը. ջուրի փոխարէն իւղ լեցուցին կրակին վրայ. կարծես այդպէս օրուայ մը կը սպասէին: Մտան հասարակ խաւերուն մէջ, զրդուցին միամիտ հասարակութիւնը. թթու լուսաւորչական դարձան, աներեւակայի խուճապավարութիւն մը ստեղծեցին, հայաշատ քաղաքներու մէջ բողոքի ժողովներ գումարեցին, ցոյցեր կատարող թափօրներ պարտացուցին: Տուններու, խանութներու, կայարաններու մէջ կիներ մարդիկներ ծեծուեցան, որոնց ամենասոսկալին Նիւ Եորքի մէջ զորմագրուեցաւ: Օտարներու առջև խափ խայտառակ եղաւ Հայութիւնը: Ովքեր էին ասոնք, այս գերակատարները, պօլշօլիքեան դոյնով ներկուած պատուելիներ, փրօֆէսէօրներ յաջողեցան մոլորեցնելու բարձրաստիճան եկեղեցականներ, քահանայ հայրեր, որոնք դարձան կատարելա դաւաճաններ հայ ազգի մէջ: Անոնք մէկ կողմ դըրին իրենց քրիստոնէական դաւանանքը. եկեղեցիի բեմէն ոխ եւ տտելութիւն սերմանեցին Հայ ժողովուրդին մէջ, առանց խղճահարկութեամբ, առանց մեղքանալու Հայ ազգին վրայ, թէ ի՞նչ է որ կ'ընեն: Անոնք չի խորհեցան որ կ'ապրին Ազատ Երկրի մը մէջ, որուն արդարագոտ կառավարութեան գործն է գտնել մարդասպանները եւ պատժել: Անոնք եղան օտար վարդապետութեան մը գործիք, դարձան ազգաբանդ, իրենց բնական երկրի կառավարութեան կասկածելիներ դառնալով: Սպանութիւնը քիչիքէն ինկած պատհասութիւն եղաւ անոնց: Այս մոլորուածները օր մը օրանց չրդրեցին Հայաստանի մէջ կատարուած սպանութիւններու եւ աքսորուածներու մասին օտար պետութեան մը կողմէն: Այդ պէտք չէ. Ե՞րբ տեսնուած է որ ստրուկը բողոքի իր բռնատիրոջ դէմ:

Այս մոլորուած խուճանը, դժբախտ եկեղեցականին սպանութիւնը փաթթեց մեր Հաւաքի երկու երիտասարդներու, Մատթէոս Լէյլէկեանի եւ Նշան Սարգիսեանի գլուխը. իրենց խիղճն ու հոգին ծախած օտար վարդապետութեան մը, անդամ մարդիկներ, կիներ, իրենց սուտ ու փուտ վկայութիւններով իրենց սիրտն ու հոգին սեւցուցին դատարանին առջև, երկու երիտասարդներ երեքտրական աթոռ նստեցնելու: Չյաջողեցան: Արդարութիւնը յաղթանակեց: Օրուան բարեսիրտ կառավարիչը մահապատիժը փոխեց ցմահ բանտարկութեան: Իրականութեան մէջ անոնք անմեղներ էին, որ զոհ գացին կուսակցական հակառակութեանց: Մատթէոս Լէյլէկեանի եւ Նշան Սարգիսեանի հանցանքը եղած էր դաշնակցական ըլլալ, եւ սպանու-

թեան օրը եկեղեցի դաճուելը. սուտ վկայութիւնները:

Այդ անիծածները չհասան իրենց նպատակին: Արդարագոտ կառավարութիւնը փաստեր չգտաւ այս երկու երիտասարդներուն վրայ. սպանութիւնը կատարողը եղած էր ուրիշ մարդ, որ չի գրտնուեցաւ:

Հաւաքի պատուական զերդաստաններու այս երկու երիտասարդները 25 տարի բանտ մնալէ վերջ, ազատ արձակուեցան օրուան կառավարիչէն: Սպանութիւնը կատարուած չըջաններուն քանի մը մոլորուած Հաւաքիներ, զրդուած ոչ Հաւաքի չարամիրաներէ, փորձ կատարեցին իւրացնելու Հաւաքի դարուոր Ասումնասիրացը որ հիմնուած էր Նիւ Եորքի մէջ 1900 թուականին. քանի մը բանտամաց Հաւաքիներ խորհուրդ տուին Կ. Վարչութեան որ դադար յայտարարէ անժամանակով, որով կարելի եղաւ առաջին առնել Ուսումնասիրացի քայքայումին: Բորբորուած սիրտերը հանդարտելէ վերջ, Ուսումնասիրացը նորէն սկսաւ իր շինարար գործին. անդամական պատգամաւորական ժողովներ գումարել, ձեռնարկներ տալ, հասցիները զոյացնել պատրաստ դումարին վրայ, օգնութեան հասնել Պէյրութի, Հալէպի Հաւաքի ազատածներուն: Յնձացին, ուրախացան արտասահմանի եւ Ամերիկայի Հաւաքիները որ մեր Ուսումնասիրացը մնացած է կանգուն, որ մինչեւ այսօր կը մնայ անբաժան. պատիւ բոլոր Հաւաքիներուն: Ուրիշներ ինչո՞ւ չի գրտնուեցան խելացի մեղի պէս, բաժան բաժան եղան, պատրաստ դըրամը կը ըրին դատարաններու եւ փաստարաններու: Ո՞ւր էին այդ մոլորուած պատուելիներն ու փրօֆէսէօրները, ինչո՞ւ չի մեղքացան այդ արիւն քրտինքով վաստկուած դրամներուն եւ հայրենակցականներու վրայ:



ՄԵՐ ԴՊՐՈՅՔ

Ս. Աստուածածին մայր եկեղեցին, զպրոցը, խաղարանը չըը-
ջապատուած քարէ պատերով, կը գտնուէին առանձին հողամասի
մը վրայ, գիւղին վերի մասին մօտ, կայերուն դէմ:

Հողամասին երկու բանուկ փոքրներուն անկիւնը կառուց-
ուած էր զպրոցը, ուղղանկիւն, բարձր առաստաղներով, խոշոր
ճաշակաւոր լուսամուտներով երկու յարկանի: Հայ մշակոյթի
տունն էր, գիւղին փառքն ու պարծանքը, որով կը հպարտանար:
Նոյնքան տպաւորիչ էր զպրոցին ներսի մասը: Ունէր վայելուչ սը-
բահ, դասարաններ, տեսուչի սենեակ, բոլորն ալ կահաւորուած,
զբասեղաններ, աթոռներ, իրենց կարգին. ամէն ինչ հիացումի ա-
ռարկայ: Գիւղին ճարտարապետները ամէն ջանք եւ աշխատանք թա-
փած էին ներկայանալի զպրոց մը ունենալու:

Գարեբէ ի վեր Հաւաւը պաշտամունք ունեցած է հայ մշա-
կոյթի հանդէպ:

ՅՅի կոտորածէն վերջ երբ գիւղ եկանք, եկեղեցին, զպրոցը
վառուած գտանք, նոյնպէս գիւղին կէսը: Կաթողիկէ եկեղեցին մը-
նացած էր անվառ: Հրաշքով մը: Խուճ մը թուրքեր, եկեղեցին կո-
ղոպտոզներէն մէկը փորձ կ'ընէ, տախտակամածէն կոտոր մը փրցնե-
լու, եկեղեցին կրակի տալու, հաշմանդամ կ'իյնայ: Իր սարսափա-
հար ընկերները զայն գիւղ կը տանին. պատահածը կը տարածուի
բոլոր թուրքերուն մէջ: Հաշմանդամը աւանակի մը վրայ, իր ըն-
տանիքով, գտնուի մը հետերին, կու գան կաթողիկէի ոտքը, մա-
տաղ կը մորթեն: Հաշմանդամը կը փրկուի, քալելով իր գիւղը կ'եր-
թայ:

Եկեղեցիին կողպտուած անօթները եւ կը բերուին թուրքե-
րու կողմէն: Բախտաւոր Հաւաւցին կը լուսայ, կը մաքրէ եկեղեցին:
Գիւղին երկու քահանաները դո՛հ դացած էին կոտորածին: Իսպաիկ
գիւղի Տէր Խորէնը քահանայ կ'ունենան. քանի մը քահանաներ ալ
եկեղեցին կ'օժեն: Իրիկուն առտու ժամ, արարողութիւն, ամէն կի-
րակի պատարալ: Դպրոց չունին: Եկեղեցիին կից խոշոր սենեակը

զպրոցի կը վերածեն: Կու գան աշակերտներ, կու գան Հաւաւցի
ուսուցիչներ, փոխն ի փոխ ձրի դասեր տալու:

Կէս կուշտ, կէս անօթի, Հաւաւցին վերաշինելու սկսաւ վառ-
ուած զպրոցը: Երկու տարի կաթողիկէ եկեղեցիին սենեակը զրպ-
րոց ըրին, օրերով առանց ուսուցիչի կը մնայինք, ուսուցիչները
վճարում չէին ստանար, կամաւոր ստանձնած էին զալ մեղի սոր-
վեցնելու պարզ կարգալ գրեւ, ձեռք ձգուած քանի մը դիրքերով:
Շատ պաղ օրեր, ձիւնի օրեր զպրոց չկար: Գարունը բացուելուն
պէս մեր պարապոյ ժամերը կ'անցընէինք եկեղեցիին ետեւի պար-
տէզները, որ կը պատկանէին Աւիկեաններուն, հիմակուայ թաղ-
ւորաններուն:

Մենք տղաներս 10-12 տարեկան, պարտէզներուն ծառերը
վայնիվրան կը բերէինք, սալորներն ու մըշմիչները դեռ չի հասած
ուտելով կը լմնցնէինք, խոտերուն վրայ կը տապալակէինք, պարտէզ-
ներուն տէր տարիքաւոր մարտիկ Արալուն, երբ մեզ կը տեսնէր,
մեղի բան չէր ըսեր. միայն կ'ըսէր. այդ աղաւնիներուն եւ տամբե-
րուն նեղութիւն մի տաք, անոնք ձաղեր ունին: Ձէր մեղքնար իր
պարտէզներուն, որ ամէն ինչ տակնուվրայ կ'ընէինք. կը մեղքնար
թոռուններուն վրայ: Կը հիանայինք այդ պատուական մարդուն
վրայ, չէինք վախնար. ամէն անգամ դալուն կը հաւաքուէինք անոր
չուրջը, գատ-գատ կը հարցնէր մեր բոլորիս անուններն ու մակա-
նունները:

Դպրոց դացողներուն մէջ, տարիքաւորներն էին Հայկ Արդու-
մանեան, Ղազար Բարեւեան, Միհրան Տէր Աստուրեան, հիմակուան
նոր Փափաղեան: Անոնք կ'ըլլային փոքրիկները կառավարող երբ
ուսուցիչ չկար:

Օր մը լսեցինք, որ Ղազարը Պոլիս տարած են, զպրոց դնելու,
Միհրանն ալ կարծեմ Խարբերդ գնաց: Քաջ, անվախ, ուսումնասէր
Հաւաւցիներ զպրոցը վերաշինեցին, շնորհիւ իրենց լաւ արհեստա-
գիտութեան: Փոխադրուեցանք զպրոցը, մասնաւոր մարդիկներ
տունէ տուն երթալով ահագին դիրքեր բերին զպրոցը:

Բայց գիւղը շատ աղքատ էր: Ամէն ինչ կողոպտուած, տար-
ուած էր: Ոմանք կրցած էին իրենց զարթեցնենքն ու գրամները
թաղել կրտսիներու տակ, զոյրերով ջրհորներու մէջ ձգած. գէպրէն
վերջ զբնան զործածել զանոնք:

Շուտով եկան Եւրոպացի նպաստամտոյցներ, անոնց ետե-
ւէն միսիոնարներ: Գերմանացի նպաստ բաժնող մը, սեղան չակած

գիւղին աղբիւրին դէմ, Բարարենց պարտէզին մէջ, կարողով շարուած կարօտ Հաւաւցիներուն անունները կը դրէր, անոնց ցորեն հատիկ տալու: Յորեն հատիկ ունեցող պէկեր եկած էին ծախելու իրենց ունեցածները Գերմանացիին, որ պատուիրած էր, ամէն ոք իր ունեցած կէս օլշակը հետը բերէ: Թուրքերէն զիտոցող Գերմանացիին իր զրպանին մէջ ունեցած մէթրաչափով կը ճշդէր կէս օլշակներուն անխարզախ ըլլալը: Շիտակ չափերուն բերանին մօտ կնիք կը զարնէր որպէս ուղիղ չափ:

Եկաւ Քիւչաւի պէկը: Գերմանացիին գտաւ անոր չափը զիտուամանաւոր կերպով պղտիկցուած: Ըսաւ անոր, թուրքերէն. դուն պղտիկ, անունդ պղտիկ, կէս օլշակդ պղտիկ. քեզմէ դնում պիտի չընեմ: Բոլոր հանդիսականները խնդացուց:

Բաւական կրօնադէտ, բողոքականութեան հաւատացող Պետրոս Աւագեան սկսաւ կշտամբել Հաւաւցիները, որ Եւրոպացիներուն նպաստները կ'առնեն, իսկ միտիոնարները կը հալածեն, որ առանց իրենց ձիւրէն վար իջնելու կը հեռանան: Ասիկա քրիստոնէավայել զործ չէ:

Ամբոխը պոռալով պատասխանեց. անոնք կեղծ քրիստոնեաներ են, որ չպաշտպանեցին մեզ, որ Թուրքը մեզ քար ու քանդ ըրաւ. մենք սղորմութեան կարօտ ազգ մը չէինք. աշխարհի վրայ միակ ճշմարիտ քրիստոնեաները Հայերն են, որ կը գոհօրին, բայց աներ եղան. որ գոցեն իրենց խօսակցութիւնը:

Գիւղը երկու տարի նպաստ ստացաւ, առանց բողոքականութիւն ընդունելու:

Հաւատափոխութիւնը Հաւաւցիներուն համար անկարելի եղած է: Անոնց զիմադրական ուղին շատ զօրաւոր եղած է. ոչ ոք չէ կրցած դաշխիլ անոնց հաւատքին եւ ազատութեան, որով Հաւաւը մնացած է զօրաւոր եւ անպարտելի: Հաւաւցիները, ջարդէն ու թաւանէն ազատուածները շատ ուրախ էին որ զպրոց ու եկեղեցի կըրցան կանգնեցնել: Մայրեր իրենց փոքրիկներուն ձեռքէն բռնած կու դային զպրոցը տեսնելու, չէնքն ի վեր նայելու, զպրոցը իրենց զաւակներուն սիրցնելու: Ամէն ոք, փողոցներուն մէջ թափառող տղաները կը հալածէին որ պէտք է զպրոց երթան:

Գիւղը ինկած էր աղքատութեան ճիրաններուն մէջ: Սկսան թուրքերէն զրամ փոխ առնել, բարձր տոկոսով, հողադործութեան ոյժ տալ: Նահանգներու, քաղաքներու ճամբորդութիւնը արտօն-

ուեցաւ: Հաւաւցիները, բոլորն ալ արհեստաւոր, շուտով կրցան զործ գանել: Պոլիս մարդ ունեցողներ կրցան զրամ ունենալ: Ամերիկա շատ քիչ մարդ ունէր Հաւաւցիին, որոնք նոյնպէս սկսան զրամ զրկել:

Հաւաւցիին սկսաւ շահուիլ, ազատ չունջ քաշել, հող տանիլ իր ապրելակերպին, հազուատին, կօշիկին, ալյուրներուն, պարտէզներուն: Մանաւանդ զպրոցն ու եկեղեցին, այնքան մօտ իրենց սրտին եւ հոգիին, որմէ կարելի չէր հեռանալ:

Գիւղին երկու քահանայ հայերը զոհ դացած էին ջարդին: Գիւղին մօտ Խապէի գիւղի Տէր Խորէնը քահանայ բերին. Պրն. Պաղտասար Փափագեանը Ուրֆա օծուելու գրկեցին, շուտով երկու քահանաներով եկեղեցին կառավարուեցաւ: Դպրոցը տխուր վիճակ ունեցաւ. այդ շրջաններուն կարգ մը ուսուցիչներ ուրիշ քաղաքներ պաշտօնավարելու դացին, իրենց ապրուստը ճարելու: Դպրոցը բաց կը պահուէր, բայց կարգ կանոն չկար. գիւղը զրամ չունէր ուսուցիչներ վարձելու:

Տէր Պաղտասարը շարժուն մէջ միշտ կու գար փոքրիկներուն դաս տալու. կամաւոր հողարարձութիւն մը կազմուեցաւ. եղան շարաթներ, որ Նիկողոս Ամբաղումեան, Պետրոս Պրեսեան, կոտորածէն առաջ Հաւաւի զպրոցը աւարտողներ, ճրի դասաւանդութիւն յանձն առնեն, որոշ ժամանակներ յատկացնելով: Անոնք իրենց ապրուստը ճարելու համար կտաւ զործելով կը զրաղէին, կտաւազործութիւնը գիւղին մէջ բանուկ արհեստ դարձած էր: Ամենայն յամառութեամբ զպրոցը բաց կը պահուէր:

Դպրոցը երկարիանի էր, շատ պաղ կ'ըլլար, աշակերտները, ամէն ոք իր տօշակը պէտք էր ունենար զպրոցին մէջ, վրան նստելու. չկային ոչ զբասեղան, ոչ աթոռ: Ատկէ դատ աշակերտները իրենց տուներէն կտոր մը փայտ պէտք է բերէին ամէն առաւօտ, զպրոցին վառարանը վառ պահելու: Կաթողիկէ եկեղեցիին սենեակը մէկ յարիանի էր, մէկ պատուհանով, հաստատուն չիտուած. այնքան պաղ չէր ըլլար: Դպրոցին շէնքին մէջ շատ չարաբանքներ քաշեցինք ձմեռ ատեններ. ոմանք կիտամերիկ, առանց կօշիկի զպրոց կու դային, վառարանին շուրջ շարուելով կը տաղնային, կը սպասէին դասատուին:

Աւելի տարեցներ յանձն կ'առնէին փոքրիկներուն Ա. Բ. Գ. սորվեցնել: Կամաւոր հողարարձներ կու դային, մեզ կը քաջալի-

րէին որ շուտով կարգ ու կանոն պիտի հաստատուի դպրոցին մէջ, մնայուն ուսուցիչ պիտի ունենանք:

95ի կոտորածէն առաջ դիւղին փառաւոր դպրոցը յաճախողներ կը պատմէին մեր դպրոցին անցեալը, որ հինգ մնայուն ուսուցիչներով կը կառավարուէր. 200ի մօտ աշակերտներ ունէին կանոնաւոր գրասեղաններ եւ աթոռներ: Քանի մը վառարաններով կը տաքցուէր դպրոցին երկու յարկերը: Գիւղը պէտք եղածէն աւելի հարուստ էր: Աշակերտները առատօրէն կը ստանային գիրք, թուղթ, գրիչ, մեկն, մատիտ:

Մենք բնաւ չէինք յուսահատեր. կու գայինք դպրոց, ուսուցիչ կար կամ ոչ. իսկապէս մեզի տրուած յոյսերը իրականացան: Պոլիս դոյութիւն ունեցող Ուսումնասիրացիին պահ գրուած գրամները գիւղ եկաւ. մնայուն ուսուցիչներ ունեցանք: Աշակերտներուն թիւը երթալով շատցաւ. դպրոցը կարգի կանոնի գրուեցաւ: Դըպրոցը այնքան սիրելի դարձաւ, որ աղջիկներն անգամ սէր ու բաղձանք ունեցան դպրոց գալու, կարգալ, գրել սորվելու: Մինչեւ այդ թուականը գիւղին մէջ գրել կարգալ գիտցող երկու աղջիկներ կային. Ազատեան հաշմանդամ, տարեքաւոր Վարդուհի, քոյրս Պաղտատը, որուն անունը յիշած եմ նախապէս, 1902ին Գանիէի գիրքը կարգացող Զատիկին:

Դպրոցը սկսաւ յառաջանալ. գրասեղաններ, աթոռներ ունեցանք. գիւղ մը գիւղով այնքան կը սիրէր դպրոցը, որ պէտք էր դպրոցին քովէն անցնէր, չէնք ի վեր նայէր, պատուհաններու առջեւ նստած աշակերտները տեսնէր. գիւղ եկող ոչ Հաւաւցիներ բաղձանք ունէին անգամ մը դպրոցին քովէն անցնելու, սկսան իրենց դասակները Հաւաւ, դպրոց գրկել: Եկողները կը հիանային Հաւաւի վրայ. միաձոյլ, զուտ հայարնակ, զուտ լուսաւորչական, կատարեալ Հայաստան: Ազատ համարձակ, ոչ մէկ խորութիւն, ոչ վճարում դպրոցին, դուրսէն եկող աշակերտները կը մնային իրենց բարեկամներուն եւ ազգականներուն քով:

1900ին երբ Ուսումնասիրացը դոյութիւն առաւ Ամերիկայի մէջ, դպրոցը քայլեր առաւ դուրսէն ուսուցիչներ բերելու. բերին Արամ պատուելին, ծագումով Տիգրանակերտցի, Բալու քաղաք հաստատուած, բերին Խարբերգի կեղրոնականէն առաջնակարգ աշակերտ Տիգրան Սարգիսեանը: Բալու Արգամ գիւղացի Յովհաննէս էֆէնտի Տէր Մանուէլեան, Պոլիս բարձր ուսմունք առած, որուն

յօդուածները միշտ փնտռուած են Պոլսոյ թերթերուն մէջ, իր ընտանիքով, դաւաններով Հաւաւ հաստատուեցաւ: Հաւաւը հոգարտ կը զգար անոր պէս մէկը ունենալուն համար: Գիտէր քանի մը լեզուներ, պատկառազգու անձնաւորութիւն, իր կազմուածքով եւ դոյութիւնով, աղբիւն ցաւերով տառապող: Քանի մը օրով Հիւանդացաւ, մեռաւ գիւղին մէջ: Ամբողջ Հաւաւը սպաց անոր մահը: Անոր եղբայրներն ու աղբականները սայլով եկան տարին անոր գիւղը: Այդ օրը Բալահովիտի գիւղացիները կինով մարդիկներով եկած էին Հաւաւ. աներեւակայելի բազմութիւն մը:

Յովհաննէս էֆէնտին Բալահովիտի փառքն ու պարծանքն էր, փայլուն աստղի մը պէս, մէկէն անհետացաւ, սուգի մասնելով ամբողջ Բալահովիտի հայութիւնը:

Անկէ վերջ Բալու քաղաքացի Մանուէլ Պալօեան, Սանասարեանի առաջադէմ աշակերտներէն, քաջ եւ անվախ, լաւ ուսուցիչ, գիտէր քանի մը լեզուներ: Անկէ վերջ Տիգրան Պաղտիկեան, Խարբերգի, կեղրոնականի առաջնակարգ աշակերտ: Տիգրան Պաղտիկեան կը կրէր իր դէմքին վրայ քիթ մը դուրս ցցուած սրածայր, բարեձեւ, խորունկ ինկած աչքեր, որուն համար կ'ըսուէր. Քիթն է նման էֆէնտի դազաթին, եւ աչքերը Մեռեալ ծովի յատակին:

Հաւաւի դրոցին տեսուչները եղած են առաջնակարգ ուսուցիչներ, նոյնպէս բարձր ուսմունք առած օյնական դասատուներ, վերեւ յիշուած ուսուցիչներու կողքին, պատրաստուած Հաւաւցի դասատուներ, հեռաւոր շրջաններ պաշտօնի կանչուեցան: Բոլորին բաղձանքն էր Հաւաւ ուսուցիչ ըլլալ. Հաւաւցի ուսուցիչ ունենալ, Հաւաւի դպրոցը ուսմունք առնել:

Հաւաւը անուն ունէր հին դարերէ ի վեր, անոր Բալուի Աթէնք անունը տրուած էր. Հաւաւ եկողներ կը հիանային, տեսնելով զուտ հայարնակ, զուտ լուսաւորչական, ազատ, անվախ, վելչեր ցերեկ ազատ համարձակ զէնք կրող, հիացած անոնց արքայավայել հարսանիքներուն վրայ, այդիներու առեն խրացուցիչ հրաձանտձըղուիթեան վրայ: Թուրքերու վրայ թողուցած սարսափը, առանց կոխներու: Շարիֆ պէկի գիւղէն դուրս հանելը, շջմեցուցած էր պէկեր, ցեղապետներ, աղաներ:

Հաւաւը փոքրիկ Հայաստան մ'էր, որ ունէր բոլոր այն առուելութիւնները որ ունեցած էր հին Հայաստանը: Հաւաւի ունեցած, վայելած ազատութիւնը, ոչ ընդհատուած է, եւ ոչ ալ կանգ առած

է, դարերով միեւնոյն ուղղութեամբ յառաջացած է մինչև մեր օրերը:

95ի կոտորածէն առաջուայ դպրոցը կը յիշեմ: Հայրս զիս զըզրոց տարաւ, որ կը կառավարուէր Միացեալ Ընկերութեան կողմէն հինգ ուսուցիչներով, տեսուչ Պետրոս Էֆէնտին կրօնագիտութիւն տուաւ կարգալու, ջուրի պէս կարգացի. զիս դրաւ ինձմէ տարիքոտ աշակերտներու կարգը, միշտ աչքիս առջեւն է, նիհար կազմով, երկար հասակով, ճերմակ մորթով փոքրիկ սեւ մօրուքով այդ պատուական անձնաւորութիւնը: Ներսէն դուրսէն կառուցուած ճաշակաւոր դպրոցը, պէտք եղած դրասեղաններն ու աթոռները, ու մօքրութիւնը: Շէն ու պայծառ եկեղեցին ու վանքը, գիւղին հարուստ կեցուածքը, որոնք բոլորը ոչնչացան 95ի կոտորածին: Հաւաւը չի յուսահատեցաւ, մէկ կողմ չի նստեցաւ. նորէն լծուեցաւ. դործի, բերաւ ամէն ինչ իր սեղը:

1909ին գիւղէն մեկնելէս վերջ, դպրոցը կը յանձնուի նորէն Միացեալ Ընկերութեան, 8 ուսուցիչներ, 2ը ուսուցչուհի, վանքը վարժապետանոցի կը վերածուի. Հաւաւը կը դառնայ հայ մշակութի կեդրոն: Ետագետը իր զազաթնակէտին կը հասնի. Հաւաւը իր վանքով կը փառաւորուի:

Վրայ կը հասնի Մեծ Եղեւնը:

Երկու հազար տարի փայլող Հաւաւի աստղը կը մարի. ամէն ինչ վերջ կը դռնէ:

Հայ մշակութիւնը, հայագիտութիւնը, հայեցի ուսմունքը Հաւաւի հիմնադրութենէն սկսեալ ծնունդ տուած է, որ միս ու ոսկոր դարձած է անոնց մէջ, որ պահած, պահպանած է, առանց դադարի, զբարբարէն աշխարհարար ամենաչուտը մուտք գտած է Հաւաւի մէջ, որ երթալով զարգացուցած են, որ ամենամաքուր եւ հասկնալի լեզուն կը խօսէր մեր Հաւաւը, եւ մեր Պոլիս հաստատուող մտաւորականները արտակարգ աշխատանք թափած են աշխարհարարը դօրացնելու եւ տարածելու: Դուք կը տեսնէք որքան նուիրուած է դէպի հայ մշակութիւն:

Դարեր առաջ իր զաւակները Պոլիս զրկած է բարձր ուսմունք տոնելու: Այդ սովորութիւնը անխախտ պահուած էր մինչև մեր օրերը: Նախանձամիտիքի Հաւաւը մինչև 1895 Պոլիս ուսմունք առած ուսուցիչներով կառավարած է գիւղին դպրոցը: 95էն վերջ Կարնոյ Սանատարեանի եւ Խարբերդի Կեդրոնականի առաջնակարգ աշա-

կերաներով մղում տուած է իր դպրոցը բարձր մակարդակի վրայ պահելու:

Հաւաւը գիւղ մ'էր, բայց նահանգէ մը աւելի ուսուցիչներ դուրս տուած է համեմատական չափով, Բաղահոյժի եւ հետաւոր չըջաններու պահանջներուն զոհացում տալու համար, ամէն տարի մեծ թիւով վարժապետացունէր պէտք էր պատրաստել: Աշակերտներուն մէջ ալ մեծ ձգտում կար ուսուցիչ ըլլալու: Հաւաւը վաղուց ճանչցուած էր հայ մշակութի կեդրոն: Զուտ հայաբնակ, զուտ լուսաւորչական, յեղափոխականի կեցուածք, բոլորին ծանօթ իր կատարած զործունէութեամբ, որ յանդգնութիւնը ունեցած է գիւղին հողերուն տէրն ու տիրական պէկը գիւղէն դուրս քշելու, որ Հաւաւի մէջ գինուած կը պտտէին գիշեր ցերեկ, ազատ ձգուած կառավարութեան ուշադրութենէն: Գիւղը այցելողներ կը հիանային Հաւաւի վայելած ազատութեան վրայ: Կարելի չէր գիւղը համարել Օսմ. կառավարութեան մասը: Բոլորովին ինքնիշխան, ուրախ զբարթ, ազատ համարձակ:

ՊՈԼԻՍ ՀԱՍՏԱՏՈՒԱՅ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐ

Գրիգոր Օտեան, օրէնագէտ, զբողէտ, ամենահին Հաւաւցի: Կարապետ Էֆ. Խանլիեան, օրէնագէտ, փաստաբան: Երուանդ Օտեան, զբողէտ, հայագէտ: Մելքոն Կիրճեան (Հրանդ), զբողէտ, հայագէտ: Լեւոն Բաշալեան, զբողէտ, հայագէտ: Համբարձում Կարեան, ուսուցիչ, պատմագէտ:

ՊՈԼԻՍ ՈՒՍՄՈՒՆՔ ԱՌԱՅ

ՀԱՒԱՒ ՀԱՍՏԱՏՈՒԱՅ ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐ

Անդրէաս վարժապետ, հայկաբան: Կատարեան, Պոլիս պաշտօնավարած: Յակոբ Էֆ. (Սիմոնեան) Զախտուրեան, Խարբերդի Կեդրոնականի տեսուչ:

Հայրապետ Կատարեան, ուսուցիչ, երաժիշտ. Քըղի, Արզնի Մատէն պաշտօնավարած:

Մկրտիչ Փափազեան, վաղուց մեռած: Աւետիս Տէրոյեան, ուսուցիչ, Խարբերդի Կեդրոնականը պաշտօնավարած:

Ասատուր Տէրոյեան, ուսուցիչ, ՔՀՆԿ. օծուած Բալու քաղաքին, Առաջնորդին. Տեղապահ:

Նշան էՖ. Քէօսէեան, ուսուցիչ, փաստաբան:

Պաղար Մանկունի, ուսուցիչ, ձայնադրող, Պարբերգ մաղան պաշտօնավարած:

Կիրակոս Կատարեան, ուսուցիչ, ձայնադրող, ՔՀՆԿ. օծուած Բալու քաղաքին:

Թովմաս ձէլարեան, ուսուցիչ, վաղուց Ամերիկա ժամանած:

Մարտիրոս Աթրիկեան, ուսուցիչ, երաժիշտ, Ֆրանսագէտ:

Գրիսակ ձէլարեան, ուսուցիչ, հայագէտ:

Օհան վարժապետ Ոսկանեան, հին ուսուցիչ, երաժիշտ:

Կարապետ Ոսկանեան, ուսուցիչ, երաժիշտ, ՔՀՆԿ. օծուած Հաւաւ դիւին:

Պետրոս Ոսկանեան, ուսուցիչ, երաժիշտ:

Պաղտասար Փափաղեան, ուսուցիչ, երաժիշտ, ՔՀՆԿ. օծուած Հաւաւ դիւզին:

Յարութիւն Մերկեան, ուսուցիչ, լաւ հայագէտ:

Արմենակ Փափաղեան, ուսուցիչ, երաժիշտ, ձայնադրող, ուրարակիր:

95ի կոտորածէն վերջ, որ Հաւաւի դպրոցը կոռուարուած է Պոլիսի, Սանասարեանի, Պարբերգի Կեղրոնականի առաջնակարգ ուսուցիչներով, Հաւաւի դպրոցը միշտ ալ ունեցած է 4 - 5 ուսուցիչներ, իսկ Մեծ Եղիանի անմիջական շրջանին ութը ուսուցիչներ, երկուքը աղջկանց:

95ի կոտորածէն վերջ Հաւաւի ուսուցիչներ եղած են հետեւեալները, որոնք թէ՛ դիւզին մէջ եւ թէ՛ դիւզէն դուրս պաշտօնավարած են:

Նշան Տեստէկիւրեան, Պարբերգի Կեղրոնականին (Ամերիկա մեռած): Տիրան Փաշալեան, Հաւաւի դպրոցին (Ամերիկա մեռած):

Վարդան Կատարեան, Պարբերգի Գերմանակ. դպրոցին (Ամերիկա): Աղամ Իսըրէկեան » » (Հայաստան):

Համբարձում Փափաղեան Հաւաւի դպրոցին, կոտորուած Պօղոս Պրիսեան » » կոտորուած

Կարապետ Կատարեան » »

Լեւոն Էլլիեան » » Ամերիկա մեծ.

Մանուկ Փերեցեան » » (Ամերիկա)

Գարեգին Փաշալեան	Հաւաւի դպրոցին, կոտորուած
Յակոբ Նէմցէեան	» » »
Կարապետ Սուլթանեան	» » (Ամերիկա)
Պետրոս Թաղարեան	» » »
Մինաս Փափաղեան	» » կոտորուած
Յովսէփ Փափաղեան	» » »
Սիմոն Չափուլեան	» » »
Մելքոն Փօլատեան	» » »
Պետրոս Տոլպաշեան	» » »
Աղապապ Ոսկանեան	» » »
Տիգրան Եղիապարեան	» » »

ՄԱՐՏԻՐՈՍ ԱԹԻԿԵԱՆ

Պոլիս ուսմունք առած, ուսուցիչ, երաժիշտ, հայագէտ, ծանօթ Ֆրանսերէնի եւ թրքերէնի: Մեղի երաժշտութեան դաս տուած ժամերուն միշտ կը յիշէր երաժշտագէտ Լեւոն էՖ. Պանճեանը:

Պր. Մարտիրոս ունէր մեղմ ձայն, մաքուր զիւր, ծանօթ էր տեսակ տեսակ ծաղկազրբու: 95ի կոտորածէն վերջ ան եղաւ Հաւաւի դպրոցին մէջ Ֆրանսերէնի ուսուցիչ: Բաւական պաշտօնավարեց զիւզին դպրոցին մէջ, լաւ ուսուցիչ էր: Չար նախանձներ դադրեցուցին զիւզին դպրոցը պաշտօնավարելէ: Շատ երկար շապրեցաւ, շուտով մեռաւ: Կը յիշեմ անոր աքսոր զալը Պոլիսէն, 95ի կոտորածէն վերջ: Մեծ եղբայրս նոյնպէս Պոլիս ուսմունք առած, զիս զրկեց անոնց տունը բարեկենդանի հինգշաբթի երեկոյան զայն մեր տունը հրաւիրելու:

Գացի, տեսայ զինքը նստած սեղանին վրայ իր ծեր մօրը եւ ամուսնացած միակ ջրօջը հետ սեր կ'ուտէր: Ըսի իրեն որ եղբայրս Արմենակը քեզի հրաւիրեց մեր տունը: Մերով հացը առաւ եկաւ հետս մեր տունը: Չայն յարեցինք, պատուեցինք: Իրելուան ուշ տեսն, երեք եղբայրներով զայն տարինք իր տունը:

Մայրս ըսաւ մեզի որ Աթրիկեանը, անոր հայրը, նշանաւոր մարդ եղած է զիւզին մէջ, Պոլիս մեռած է: Պր. Մարտիրոս պատուական ուսուցիչ էր, բոլոր աշակերտներս կը սիրէինք զայն. շատ ճաշակաւոր մարդ էր, բարեխիղճ, ճամբարտասէր, կարգ ու կանոնի հաւատացող: Հաւաւի մասին բաւական բաներ գիտէր: Մեղի կ'ըսէր որ Պր. Կարեանը Հաւաւի մասին շատ բաներ գիտէ. անոր գէմ պայքարած է առաջները զիւզին մէջ ուրիշներու խորհուրդով երբ ալ զայ էի:

ԿԱՐԱՊԵՏ ԱՅԼԱԵԱՆ

Ճարտարապետ Յարութիւն Այլաեանի որդին, Պոլիս բարձրագոյն ուսմունքը առած, հմուտ հայերէնի, թրքերէնի եւ Քրանսերէնի՝ ծանրաբարոյ, խելացի, սակաւարօտ, կատարեալ մտաւորական, ամէն ոք կ'ուզէր Այլաեանը լսել:

95ի կոտորածէն վերջ աքսոր եկաւ Պոլսէն. հայրը Պոլիս մնացած էր: Արտակարգ ընթերցասէր ըլլալով, ամէն շարժու թերթ կը ստանար հօրմէն:

Իր եղբայրները հողագործութեամբ կը զբաղէին. ինք ըլլալով գիտնական մարդ, չէր սիրեր այդ գործը:

Կիլիկիա կ'երթայ Ամերիկա անցնելու. նաւ չմտած կը բռնուի, բանտ կ'առաջնորդուի: Չունենալով ոեւէ ծանօթ, նամակ մը կը գրէ օրուան առաջնորդ Մուշեղ Վարդապետ Սերոբեանին, որ հիանալով գրի մաքրութեան, նամակի ոճին, անձամբ կը զիմէ կատարաբիչ Բիւրս Պաիրի փաշայիմ, որուն այնքան մտերիմ էր, նոյն օրը բանտէն կը հանէ եւ ճամբու կը զնէ Հաւաւ:

Կարապետ միշտ անհանդիստ, երկրորդ փորձ մը կ'ընէ եւ կը յաջողի: Կը հասնի Ամերիկա: Կ'ունենայ նպարավաճառի խանութ, երկու փոքր եղբայրներուն հետ: Դրամ կը շահի, Օսմ. Սահմանադրութենէն վերջ կ'երթայ երկիր. իր հայրը առնելով Պոլիսէն Հաւաւ կ'երթայ. իր ճարտարապետ հայրը գեղեցիկ տուն կը շինէ, լաւ կեանք կ'անցնէ:

Աւա՛ղ, Մեծ Եղեռնը վրայ կը հասնի, գիւղին տղամարդոց հետ Բալու քաղաքի կառավարութեան կողմէն հաստատուած սպանդանոցին մէջ կը սպաննուի: Ահուլի եղած է այդ կազմակերպուած կոտորածը: Բալահովտի ամբողջ տղամարդիկը խուճերով կը բերուին եւ կը մահացուին այդ սպանդանոցին մէջ, որ հաստատուած էր զետին բերանը:

Աշխարհի քաղաքականութիւնը ինչ կերպարանք ալ առնէ, Թուրքը անպատիժ պիտի չթողուի. Հայը իր ձեռքովը պիտի լուծէ իր վրէժը. Թուրքին խուսափում չկայ. անոր կորուստը յաւիտենական պիտի ըլլայ. ջարդով, կոտորածով եւ կողոպուտով աղբ մը չի կրնար իր դոյութիւնը պահել:

ՅԱԿՈՒ ԷՖ. (ՍԻՄՈՆԵԱՆ) ԶԱԽՍՈՒՐԵԱՆ

Հաւաւ ծնած, մեծցած, իր ուսմունքը Պոլիս առած, արտակարգ միտք, ուղեղ, գեղեցկադէմ, բարձր, վայելուչ հասակ Արարիչը չէր խնայած այս պատուական Հաւաւցիին, որ գիւղին փոքր ու պարծանքը եղած էր: Այս պատուական գիտնականին հպարտ բարուսածքը, պատժօնը ձեռքին, աշխարհի տէրն ու տիրականը կը կարծէիր: Կ'ըսէ եղէր՝ հպարտ կը զգամ որ Հաւաւ ծնած եմ:

Այն պատուութիւնը որ կը վայելէինք մենք եւ Հաւաւ այցելուողները միայն գիտեն որքան ազատ գիւղ էր. կատարեալ Հայաստան աշխարհ: Դարերէ ի վեր Հաւաւի պատուութիւնը միշտ ալ ծնունդ տուած է հպարտ գիտնականներու:

Այս պատուական գիտնականը ստանձնելով Խարբերդի Կեղըրունականին տեսչութիւնը, շուտ մը կը բարձրացնէ անոր մակարդակը, որուն համբաւը կը տարածուի մինչեւ հեռուոր շրջաններ անդամ:

Անոր ճիղն ու աշխատանքը եղած է զուտ հայկական ողի ստեղծել Խարբերդցիներու մէջ: Անոր անաչառ աշխատանքը կը բազմացնէ իր վրայ հիացողներու թիւը:

Չար ոգիի տէր մէկը անկարող հասնիլ անոր բարձրութեան, շար նախանձէ բռնուած, կ'որոշէ սպաննել տալ զայն: Մութ գիշեր մը, Յակոբ էֆէնտիին իր մէկ բարեկամին այցելութիւն տալէ վերջ, տուն վերադարձած պահուն, փողոցին մէջ քալած ատեն սուրի մէկ հարուածով կը սպաննուի տեղն ու տեղը: Անգութ, անզգամ մարթացի երիտասարդի մը կողմէն, հաւանաբար իրեն աշակերտող:

Յակոբ էֆէնտիի սպանութեան լուրը Հաւաւ հասաւ. սուգը պաշարեց ամբողջ գիւղը, մեծ ու պղտիկ լացին, ողբացին:

Չարմացան Հաւաւի մտաւորական գասակարգը որ հայ մշակոյթի անունով երդուող Խարբերդը, իր Մաղալով հպարտացող, կը սպաննէ հայ մտաւորական մը, որուն այնքան պէտք ունէր Հայ Ազգը:

Չեմ մոռնար այն օրը որ տղաներով հաւաքուած էինք Յակոբ էֆէնտիի ազգականներուն դռան վրայ, ուր կար բաղմութիւն մը: Տարբաւոր Տիկին Չարսուրեանը կու լար, կ'ողբար, ընելով. Մաղաքիք կերան մեր Արգաւէլը: Ալա պտուղը արջը կ'ուտէ: Բոլոր հանդիսականները սկսան հեծկլտալ, լալ:

Կարծես քիչ էր 95ի ջարդն ու կոտորածը: Մերոք փաշային արիւնը մտնողը հայ էր: Խրիմեան Հայրիկի տէնոր պատրաստողը նորէն հայ մը: Հայաստանի անկախութեան դէմ արտայայտուողները,

հայեր, հիմա՝ Անթիլիասի Կաթողիկոսութեան դէմ գաղտնիքը՝ նորէն ու նորէն հայեր: Ի՞նչ է որ կ'ընէք, վատահամբաւ հայեր:

Մահաթմայ Կանտի կ'ըսէր. այնքան յանցաւոր չէն բոլոր բռնապետները, որքան յանցաւորներ են անոնց հետեւորդները, որ կ'երթան անոնց ետեւէն կուրորէն:

Ճիշդ է որ Հաւաւի մէջ սպանութիւններ կը կատարուէին: Սպանուողները կ'ըլլային անոնք, որոնք չարիք դարձած էին, որոնք պէտք էր մէջտեղէն վերցնել, որ չարմատանան գիւղին մէջ:

95ի կոտորածէն վերջ մեր գիւղին տէր Շարիֆ Պէկը, որ գիւղէն դուրս քուսած էր, Հաւաւի դրացի, 100 տունէ բաղկացած Քիւրում թուրք գիւղին Մըլլայ Իպիշը բերել կու տայ, կը ծեծէ զայն մեր դպրոցին տանիքին վրայ, ամառ առնեն. Հաճի Մարտիրոս Գասպարեան կ'ըսէ պէկի ծառային, որ պէկը իրաւունք չունի Մըլլան ծեծելու, մեր գիւղին վարկին դէմ է: Պէկը բերել կու տայ Հաճի Մարտիրոսն ալ ծեծելու. բայց կը դուռչանայ: Այսպէս եղած է Հաւաւցին, որ Մըլլայի մը ծեծուելուն չէ հանդուրժեր:

Հոս, Ամերիկայի մէջ, իսկական Հաւաւցիի մը ներկայութեան եթէ անիրաւութիւն գործես, ան քեզ օդը կը հանէ: Հեթանոսական օրերէն մնացած չին եւ անվախ, քաջ հայ Հաւաւի մէջ մնացած է: Ողբամ քեզ զմայլելի Հաւաւ, որ փլար դացիք:

ԿԱՏԱՐԵԱՆ ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐ

Հաւաւ գիւղի փառքն ու պարծանքը, Անդրէաս վարժապետ՝ հայկարան, Հայրապետ՝ ուսուցիչ, երկուքն ալ Պոլիս բարձր ուսմունք ստած: Մեծ անուն ունէին գիւղին մէջ, Բալահոյիտի եւ շըրջակայ նահանգներու մէջ: Գիւղը, վանքը այցելութեան եկող կարեւոր անձնատուութիւններ, եկեղեցականներ պէտք է անպայման տեսնէին Անդրէաս վարժապետը. կատարեալ փիլիսոփայ մըն էր ան, որուն իմաստուն խօսքերը լսել բազմալի էր: Զինքը հասկցողներ, ունկնդրողներ հիացած էին անոր գրարարի հմտութեան վրայ:

Պր. Կարեան կ'ըսէր. Անդրէաս վարժապետը այնքան սքանչելի, այնքան զօրաւոր յիշողութեան տէր անձնատուութիւն մըն էր, որ երբ որեւէ խրդին բառի եւ նախադասութեան թարգմանութիւնը հարցուէր անոր, կ'ըսէր, գրարար գրքին այսինչ էջին վրայ կ'ընաք կարդալ պատասխանը: Անդրէաս վարժապետին միակ թերութիւնը իր բնածին նախանձն է, կ'ըսէր Պր. Կարեանը, որ իր գիտութիւնը կը զլանար: Իր միակ որդին Կիրակոսը եղաւ իր հօրմէն օգտուողը: Ա-

նոր գիտութիւնը գետինը խոր թաղուած դանձ մ'էր, որուն ոչ ոք չկրցաւ տիրանալ: Դժուարաբաց արկղ մ'էր ան որ ոչ ոք կրնար բանալ, բան մը հասկնալու համար պիտի սպասէիր որ ինքնարկարար բանար իր օրհնուած բերանը բաներ լսելու եւ հասկնալու:

Անդրէաս վարժապետ ձեռք քաշած էր աշխարհի կեանքէն, եւ վայելքէն, ուտել, խմել, դուարձանալ գոյութիւն չունէր անոր համար: Հոգիով մտքով կապուած էր գրել կարդալու, գերի դարձած էր հայ մշակութիւն. կ'ատէր օտար լեզուն, օտար դրակներով, որ բնաւ չէր սորված: Նկատի առնուած էր որ իր գրութիւնները կարդալէ վերջ ոչնչացուցած է ոչ ոքի ձեռք չի անցնելու համար:

Այսպէս մէկը եղած է Անդրէաս վարժապետ, որ բան չի թողուց իր յաւուրներուն: Անպառ յարգանք կար անոր հանդէպ. գիւղ առեւտուրի եկող թուրքերն անգամ յարգանք ունէին անոր հանդէպ: Գիւղին մէջ շրջան կ'ընէր երբեմն: Կը նստեցնէին զինք, անոր իմաստուն խօսքերն ու առածները լսելու: Հմուտ էր Աստուածարանութեան, եկեղեցասէր, կատարեալ քրիստոնեայ: Կիրակի եւ տաղաւար օրեր եկեղեցիին կից խոշոր խորհրդարանը ստք դնելու տեղ չէր մնար, Անդրէաս վարժապետը լսելու:

Գպրոցի քննութեանց օրերուն երկու եղբայրներն ալ ներկայ կ'ըլլային: Հայրապետը հողարարութեան մէջ էր միշտ: Աչակերտներուն մէջ բազմանք կար Անդրէաս վարժապետէն հարցումներ բառանալու: Անոր հարցումները կ'ըլլային շատ մեղմ, աչակերտները չի վշտացնելու համար:

Անդրէաս վարժապետ Պոլիս ուսմունք առնելէ վերջ, հոն բարձրագոյն դպրոցի մը մէջ պաշտօնավարած, դրամ չահած, գիւղ վերադարձած է. գիւղին մէջ, գիւղէն դուրս ուրիշ քաղաքներու մէջ ալ պաշտօնավարած է. գիւղը այնքան սիրելուն համար, վերջ տուած է գուրսի շրջանները պաշտօնավարելուն: Իր վատակամ դրամներուն հետ խնայողութեամբ վարուած է: Վերջին տարիները անցուցած է գիւղին մէջ. մեռած է 15ի Եղեռնէն առաջ:

Իր եղբայրը Հայրապետը լաւ ուսուցիչ, երաժիշտ, պաշտօնավարած է Արդընի Մատէն, Քրդի: Յեղափոխութեան հաւատացող, զինավարժ: Անգամ մը գալղեան կենդանիներուն վրայ յարձակող աւազակներուն դէմ քաջարար կը կռուի գիւղացիներուն հետ: Արապաշարժ գէնք գործածելը այդ օրը կը հասկցուի: Մինչեւ վերջ գիւղին հողարարութեան մէջ էր, դպրոցը կառավարելու հասկցող էր: Մեծ յարգանք կը վայելէր ոչ միայն Հաւաւի մէջ, այլևս ամբողջ Բալահոյիտի մէջ: Աւա՛ղ, որ բոլորն ալ կատարուեցան:

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ

Նախ կը տօնէինք Նոր Տարին. Յունուար մէկը կը բանար Ծընունդի ճամբան: Բոլոր փոքրիկները Գեկտեմբերի վերջին զիշերը կը սպասէին Կաղանդ պապային դալատեան, որ ամէն փոքրիկ իր փափաքածը կը սպասէր զրուած իր բարձին վերելը կախուած չօրասկին մէջ:

Իսկ չափահասներ տանիք տանիք կը պարտէին, ցած բուխերիկներէն վար կախուլու չանթա մը, բսելով «Այլ վըլայ, ալէ վըլայ որ չանթա լեցուն վեր ելլայ»: Վարը՝ օճախի զլուխը նստողներ կը տեսնէին չանթա մը կ'իջնէ. տանախիկներ շուտ մը բնկոյց, չամիչ, պաստեղ պէտք էր լեցնէր, որ չօճուխները վեր քաշէին չանթան: Ու մանք կատակի ճամբար բան չէին լեցնէր, որ տղաները վար դային, հասկնային ու վեր են. այլակերպ հաղուած, երեսները մտրով սեւ-ցուանած տղան տանիքէն վար կ'իջնէր, ներս կը մտնէր, ամբողջ ընտանիքը խնդացնելու: Կարելի չէր հասկնալ որոնց տղան է:

Այլ վըլայ ընող տղաներ իրենց հաւաքած բոլոր չամիչները, բնկոյցները, պաստեղները պահ կը գնէին իրենց մէկուն տունը, Ծնունդի շաբթուն երեկոները ճաշակելու այն սենեակներուն մէջ, ուր կ'անցընէին Ծնունդի քանի մը օրերն ու երեկոները, ուր ամէն ոք իր տունէն տարած կ'ըլլար ամէն կարգի կերակուրներ: 10-15 տարեկան տղաներ, խմբուած բաւական մեծկակ սենեակին մէջ, կ'ուտէին, կը խմէին, կ'երգէին, կը դուարձանային 2-3 օրեր ու գիշերներ: Այդ օրերուն տրուած էր Աւետիսի օրեր: Որ Ծնունդը պէտք էր տօնախմբէին իրենց ծնողներու հսկողութեան տակ: Որ կտիւներ, անկարգութիւններ չպատահէին, որովհետեւ անչափահասներ էին:

Իսկ մեծերը Յունուար մէկի նախօրեակի զիշերը դեռ Նոր Տարին բարեւ չի տուած, ոմանք զիւզին աղբիւրը կը վազէին, որ դեռ հին տարին չմեկնած, նոր տարին չերեցած հրաշք կը պատահի, որ նոր տարուան աղբիւրը ջուրի տեղ սակի կը վազեցնէ վայրկեանտեան, ով որ շուտ հասնի կը տիրանայ ան թուժ սակիներու:

Կար ուրիշ սովորութիւն մը. դպրի հիւանդութիւն ունեցողը կէս զիշերին հին եւ նոր տարիի մէջ, աղբիւր կ'երթար, իրեն հետ օգնական ունենալով. աղբիւրին դուխը ծառին վրայ կ'ելլէր եւ կը սկսէր ծառին տալերը դողացնել. իրեն օգնականները կ'ըսէին, ի՞նչ կ'ընես: Հիւանդը կ'ըսէր, թուի կը թոթուեմ. ի՞նչ կ'ըլլաս, ձմեռը թուի կ'ըլլայ, կը պատասխանէր ձմեռը դող կ'ըլլա՞յ, եւ հիւանդը կ'առողջանար:

Փոքրիկներուն այնպէս հաւատացուցած էին, որ նոր տարուայ եւ հին տարուայ զիշերի միջոցին շրվոյթը կու դայ մանուկներ կը կերպարանափոխէ եթէ չար ըլլան, խի եթէ բարի ըլլան նուէրներ կը ստանան. փոքրիկներ շատ դժուար կը քնանային շրվոյթին դալու վախէն սարսափած:

Առաւօտուն երբ արթննային իրենց դլխուն վերեւ կախուած չօրասկերը թխմուած կը գտնէին չամիչով, պաստեղով եւ ընկոյզով, անշուշտ իրենց ծնողներուն կողմէն: Որքան կ'ուրախանային փոքրիկները ու իրենք շատ բարի եղած են որ շրվոյթը զիրենք չէ չարափոխած:

Հին տեսները Յունուար մէկէն սկսեալ մինչեւ Յունուար 6, Ծնունդի օրը, շատ մը ընտանիքներ պատրաստած կ'ըլլային պահք աւուր կերակուրները, փոխառակ ամէն օր կերակուր եփելու. կերակուրներն էին փէր փէր սպուր, պահք աւուր քուֆթայ, սոխով եւ չուչմայով կոմայ, խմորով պատրաստուած, խաշուած չոր պտուղ, չուչմայի իւղով պատրաստուած բրնձբրնձիկ, ծեծուած չուչմայ, ուրիշ մանր մունր կերակուրներ, ոչ մսեղէն, ոչ կաթնեղէն, եւ գինի, ուռպ, չոր թուի:

Իսկ Ծնունդին առաջին առաւօտուն կանուխէն, եկեղեցին տանիք ճամբուն երկու կողմերը տեսանելի կ'ըլլային, մտրթուած դոմէշներու, եղներու, կովերու մսեղէններով ձիւներու վրայ, ձէթի ճրագներով լուսաւորուած, մագործներու աղաղակները հրապարակը գրաւած, ամէն ոք իր մասցուն գովարանելով: Մութ է, դեռ արեւ չկայ, մարգիկներ, կիներ իրենց փոքրիկներով գէպի եկեղեցի կ'աճապարեն տեղեր գրաւելու:

Եկեղեցիին զանգը անընդհատ կը զօղանջէ, եկեղեցիին մէջ կատարուած երգեցողութիւնները խառնուած զիւրերու, ծննդաներու ձայներուն հետ օղջ կը դնթացնեն. կատարեալ երուսաղէմ:

Եկեղեցիին աւարտումէն վերջ տուն դարձողներ, ամէն ոք կտոր մը միս բռնած տուն կ'երթայ, ունեցողի, չունեցողի հարց

չկայ, բոլոր զնումները կը դրուին տեսարկին մէջ, անունով մակա- նունով, Մնունդի առաւօտուն զբամառութիւն ընել մեղք կը հա- մարուի:

Հաւաւը կատարեալ քրիստոնեայ եղած է: Շատ հին ստեղծներ, Մնունդի առաջին օրը եկեղեցիէն տուն երթալէ վերջ, իրենց կեր ու խումբ ընելէ յետոյ, եթէ օրը բարի ըլլար, թափօր կը կողմեն եղեր, քահանան զգեստաւորուած, սարկաւազ, դպիր երգելով. առջեւէն երեք ձիաւորներ ծպտուած զգեստներով, շինծու մօրուքներով, երեք մողերը կը ներկայացնէին: Մոլեանդ Հաւաւը արտակարգ ցուցադ- րութիւններ կ'ընէր սօնական օրերուն. ո՞վ պիտի ծաղրէ, ո՞վ պիտի արգիլէ. բոլորն ալ մէկ տեսակ հայեր են: Այս շքախումբին ետեւէն կը քալէր բազմութիւնը բարձրաձայն երգելով «Մնաւ նոր Արքայ ի Բեթղեմ քաղաքի» շարականը եւ ուրիշ Մննդեան շարականներ մեղմանուշ երգեցողութեամբ:

Հաւաւը քրիստոնէութիւն ընդունելէն սկսեալ մնացած է մո- լեանդ հաւատացեալ, շատ մը սուրբերու անունով հաստատած էր մատուներ, ուր ամէն շաբաթ երեկոյ ձէթի ճրագներ պէտք էր վառուեր: Ունեցած է եկեղեցիներ, երկրաշարժի պատճառաւ կոր- ծանուած գեանին տակ մնացած. այնքան զօրաւոր եղած է երկրա- շարժը, դաշտին զիւրը բոլորովին ոչնչացած է իր հետ թաղելով հազարաւոր անձեր: Մեր օրուան Հաւաւը որ ապառաժի վրայ հաս- տատուած է, չէ տուած այնքան անձի կորուստ տուներէն դուրս փախելով. բայց շատ մը տուներ, եկեղեցիներ գետնամոյճն եղած են: Ողջ մնացողներ կանգնեցուցած են Ս. Աստուածածին եւ կաթո- ղիկէ եկեղեցիները բոլորովին քարաշէն, որ հաստատ մնացած էին մինչեւ մեր օրերը:

Հաւաւը կատարեալ սրբավայր եղած է. Բալահոյիտի Երու- սաղէմն էր իր վանքովը, ուր հեռաւոր եւ մօտաւոր շրջաններէ ուխ- տի կու դային: Հաւաւը սրբավայր անուան տակ ի սպառ մերժած է թուրքեր հաստատուելու Հաւաւի մէջ Օսմ. տիրապետութենէն վերջ ալ: Հաւաւը շնորհիւ իր ուսմունքին, գիտութեան, եւ արհեստին վառ պահած էր ազգային եւ քրիստոնէական ոգին. Մնունդի եւ Զատիկի օրերուն եկեղեցին մտնէր, կը հիանայի, լոյսերու մէջ վա- ուած կը տեսնէր տաճարը, իր ոսկեղէն եւ արծաթեղէն սուրբ ա- նօթներով, հարուստ էր Հաւաւը, հարուստ էր մեր եկեղեցին իր ոս- կեղծ շուրջաններով, ծածկացներով, շապիկներով:

Այսպէս էր մեր պատուական, գուտ Լուսաւորչական Հաւաւը:

Մ Է Լ Է Տ Ը

Մէլէտը եւ Վարդապետը հեթանոսական օրերէ մնացած էր, որ Հաւաւցիներու համար պաշտելի օրեր էին, որ պէտք էր սօնէին անխախտ: Մէլէտը, այդ կրակավառութեան երեկուն որքան կը սի- բէինք. կը սիրէինք տեսնել կրակին բոցը օդը. Վարդապետ եւ Մէլէտ մեծ խանդավարութեամբ կը սօնուէին:

ԳՏի կոտորածէն առաջ, Մէլէտը կը սօնէինք Բուն Բարեկեն- դանէն վերջ, Մեծ Պահօց մէջ, ձիւն ձմեռ, պաղ, անձրեւ: Այդ տար- ուան նոր փեսաներ, ցերեկին պէտք էր երթային վանքին անտառէն ՊԵՐՔԻ ըսուած ծառի ճիւղերը ջարդած, շալակով բերել Հաւաւ. զբրթին ամառ ձմեռ միշտ կանաչ էր, անոր պտուղը յար եւ նման էր անպիտի, նոյն մեծութեամբ, նոյն գոյնով, չափազանց դառն, անճաշակի, որը կը ձգէին, օղի հանելիք չամիչին եւ թութիւն հետ: Վանքին անտառը զիւղէն կէս ժամ կամ քէչ մը աւելի հետէ էր քա- լելով: Անտառին մէջ կ'աճէին ուրիշ թուփեր եւ ծառեր ալ քանի մը տեսակ. տիրապետող զբրթին էր, նման այս երկրի Քրիստոնէի ծա- տեսակ. տիրապետող զբրթին էր, նման այս երկրի Քրիստոնէութե- կիներէ բերուած տնկուած էին: Վանքին անտառը վանքին տեղը կու- նէն առաջ գոյութիւն ունեցած է. հաւանաբար վանքին տեղը կու- տունէր. վանքին շէնքին կից, սալաշատակին վրայ տեղի կ'ունե- նայ եղեր կրակավառութիւնը, որ վերջերը Հաւաւի մէջ շարունակ- ուած է:

Նոր փեսաներու բերած զբրթիները կը զիւղէն եկեղեցիին կից սալաշատակին վրայ, ցերեկին: Իրիկուան գեռ մօտքը նոր կոխած կրակը կու տային, իւզալից այդ զբրթիներուն դէպը կը սկսէր վա- ուի ճղբտալէն, որուն բոցն ու մուխը իրար փաթթուած երկինք կը ուր ճղբտալէն, որուն բոցն ու մուխը իրար փաթթուած երկինք կը բարձրանային, դէմի զիւղերէն տեսանլի: Ականջ խլացներէք ձայ- ներ, որ կարծես կը բողբէին, ըսելով, անդու՞ չաւառացիներ, եթէ ներ, որ կարծես կը բողբէին, ըսելով, անդու՞ չաւառացիներ, եթէ չէք մեղքնար իմ կանաչ կատարութեանս, մեղքացէք իմ այնքան սի- բուն գոյներով պտուղներուն: Դիզուածքը այնքան խլա կ'ըլար, որ հրկիզումը բաւական կը տեսէր: Հանդիտականները, մեծ ու սղոթիկ, ձեռք ձեռքի տուած, կրակին շուրջ կը դառնային այօթքներ մրմրն- ձեռք ձեռքի տուած, կրակին շուրջ կը դառնային այօթքներ մրմրն-

չելով: Զուտակ չունեցողներ, իրենց մուրազը կ'ակնկալէին: Հիւանդ-կտա կիներու, մարդիկներու հին կօշիկներ, լաթեր նետելով կրա-կին մէջ, բժշկութիւն ունենալու հասարակ:

Կրակի շիջումէն վերջ ամէն ոք տուն կ'երթար, լիովին կա-տարած իրենց պարտականութիւնը: Այդ իրիկուան կերակուրը պէտք էր ըլլար խմորով պատրաստուած միակտոր խոշոր կօխան, տունին օճակին սալալատակին վրայ կրակով եփուած սոխով, տեսակ տե-սակ համէմներով, ճեճուած շուշմայով խտնուած միջուկով կօման ալյուրան համեղ կ'ըլլար որ համէն չէիր կշտանար. սեղանը զարգար-ուած, չամիչով, պաստեղով, ընկոյզով, օղի, զինի առատօրէն, կ'ուտէինք, կը խմէինք:

Այդ երեկոն բնաւ չէր մոռցուեր: Յաջորդ օրը աշխատանք չէր կատարուեր: Տանիքներուն վրայ խմբուած կը պարէին, գնդակ խա-զալ, ցատկերու, վազելու մրցումներ կը կատարուէին: Ամբողջ գիւ-ղը ուրախ գրեւոր իրարու այցելութիւն կու տային, Մէլէտը կը շնորհատուէին:

Հին ստեղծողներ զիր ու զրակնութիւն չէ եղած, Մէլէտի նշա-նակութիւնը զիր առնելու. յայտնի բան է որ հին հայեր կրակա-պաշտ եղած են: Վանքին անտառին փայտերը, ծառի տալերը, Հա-ւաւ տանիք, վառելու համար մեղք համարուած է:

Աւանդաբար կը պատմուէր մեր մամիկներէն, պապիկներէն, որ Հաւաւցի կարգ մը գերդաստաններ, վանքին փայտերը վառած ըլլալուն համար շուտով անհետացած են, հետքերնին չէ մնացած: Կ'ըսուէր նաև թէ կարգ մը գերդաստաններ վանքի անտառին փայ-տերը զաղտնօրէն զիւզ բերած վառած են, որ չեն աճած, բազմա-ցած, մինչև վերջ մնացած են միատունի: Զոր օրինակ, Պուսկըշի փողոցը, որ բաւական երկար փողոց էր, անոր վրայ շարուած ըն-տանիքները բոլորն ալ միատուն էին: Այս փողոցը աւելի մօտ ըլլա-լով վանք տանող ճանապարհին, գիւրութիւն եղած է վանքին ան-տառը. մեզ կը համարուէր վանքին պարտէզին, այդիներուն պը-տուղները Հաւաւ բերել. շատ մը հաւատաւոր ծնողները զգուշա-ցուցած են իրենց տղաները, որ վանքին պտուղները տուն չի բերեն, որովհետև պատիժ կայ:

Մեղք չէր համարուեր վանքին անտառին փայտերը անտառին մէջ վառել. զոր օրինակ Համբարձման օրը առատ առատ կը վառէին անտառին մէջ կերակուրներ եփելու, մեղք չէր համարուեր. զոր օ-րինակ, Վարդապետի, Համբարձման օրերը:

Վանքին հողին վրայ երբ ոտք կոխէիր, կը զգայիր որ սրբա-վայրի մը մէջ կը գտնուես, ամէն կողմէ սրբութիւն կը բարէր գեռ վանք շմտած, այնքան գեղեցիկ կ'երեւէր իր անտառով, պտուղ չե-րով, ծառերով, պարսպ տեղ չէ քաղցրահայտաց անունը տուած են: Անման էին պարտէզին պտուղաւոր ծառերը, թղենիները, փշտանի-ները, որուն պտուղները խոշոր, նման արմաւի, հոտով, համով, խնձորենիներու, սալորենիներու տեսակները գիւղին պարտէզներուն մէջ կարելի չէր գտնել:

Զոր օրինակ, ճըմբո խնձորը, խոշոր, կլոր, կարմիր, շատ ուշ կը հասնէր, ճիշդ քարի պէս, կը մնար մտանի մէջ մինչև ե-կող ամառ. հասարակ թթենիի ծառերը, կլոր, խիստ ճիւղերով, կա-նաչ կակտ, վրայի թուփերը կարծր, այնքան քաղցր ու անուշ, որ համէն չէր կշտանար: Կար շատ խոշոր ահարկու ծառ մը, որուն խոմբն քուր անունը կու տայինք. կոճղը, ճիւղերը երկաթի դոյն ունէին, արտակարգ կարծր, տերեւները կանաչ ու կարծր: Անոր վրայի թուփերը բթամատի մեծութեամբ, նախ կանաչ, յետոյ կար-միր, երբ հասունանար՝ մեկանի դոյն կ'առնէր, ճիւղին վրայէն փըր-ցուցած առեն, ձեռքերը, զգեստները մեկանի դոյնով կը ներկուէին: Արտակարգ անուշ համ ունէր, քաղցր-թթու համով: Այս թուփը գիւղին պարտէզներուն մէջ հասցնել կարելի չէր եղած, ոչ ոք չի կրցաւ անոր պաղտնիքը հասկնալ, նոյնպէս էր թղենիի ծառը:

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ

Բուն Բարեկենդանի առթիւ եկեղեցին դացող ժողովուրդը պատգամ կը ստանար պատարագիչ քահանայէն, որ իր քարոզին զլրատուր նիւթն էր: Եկողը Բարեկենդան է, որ զինին եւ օղին ջուրի պէս պիտի սպառուի. հալալ ըլլայ բոլոր խմորներուն: Բայց չափով խմեցէք. ձեր ուրախութեան ժամերուն համեստ եղէք, որ կուր ի-րարանցում տեղի չունենայ, հանրային ուրախութիւնը չի խանդար-ուի: Կարելի չէ ուրանալ որ քահանային տուած խրատները ապառ-բիչ էին, որ սիրով մտիկ կ'ընէին, եւ կ'ըմբռնէին Տէր Հօր խրատա-կանները:

Մտախ վրայ համբուող չափազանցութեան դացողներն անգամ կը զրուշանային, կուրներ շտեղծելու, որ Բարեկենդանը ուրախու-

թեան օր է, որ պէտք է յարդել:

Իսկապէս ալ 200 տունէ աւելի զիւղին մէջ հազիւ քանի մը թեթեւ կոնկրետ տեղի կ'ունենային. որովհետեւ զիւղը զուտ հայաբնակ էր, զուտ լուսաւորչական:

Առատ դիմելին եւ օղիին առատութեան հետ միտ ալ կը սպառէր: Գիւղին քանի մը հրապարակներուն վրայ, դոմէշներ, եղներ, կովեր կը մօրթուէին. մտավաճառներ զործի վրայ էին. քիչ մը խմուած, ունեւորի եւ չունեւորի հարց չկար, կու տային եւ կը զրէին, զրամները կը դանձէին Բարեկենդանէն վերջ, Պահոց շարաթներու մէջ, ոչ մէկ ստիպում չունեցողներէն, երբոր տրուէր: Շատ քիչ կորուստ կ'ունենար մտավաճառը:

Բարեկենդանի շարթուն մսին, դիմելին, օղիին հոտերը ամբողջ զիւղը կը բռնէր: Իսկ ուրախութեան երգերն ու կանչերը ահանջ կը խլացնէին:

Պակաս չէր հրացաններու ձայները, որմէ այնքան կ'ախորժէին Հաւաքիները: Բարեկենդանի շարթուն, գէնք ունեցողը պէտք էր իր վրայ կրէր. ատրճանակ, վեցհարուած, թուր, գաշոյն: Ո՞վ պիտի դռուչացնէ. բողբոջական պատուելի՞ն, չհանդուրժող թո՞ւրքը. երկուքին ալ հոտն անգամ չկար զիւղին մէջ: Կը պատմէին որ Տէր թորսը դաշոյնը կողքին կապած կը պատարաղէր:

Այսպէս իրիկունները տուներու մէջ հաւաքուած սեղաններու շուրջ, ուտելով, խմելով կ'ուրախանային. ցերեկներն ալ, իրարու կից տանիքներու վրայ հաւաքուած, կիներ, հարսներ, աղջիկներ, մարդիկներ, տղաներ զատ զատ պարեր բռնած կը խաղային: Տղամարդիկ վահանախաղերով, քարիտիներով, վաղքերով, իրարու հետ կը մրցէին:

Մաղբաճուներ, իրենց գէմքերը մուրով սեւցուցած, անշնորհ գզեասներ հագած, փայտէ սրուքներով կը պտրտէին:

95ի կոտորածէն առաջ, Յակոբ Հաճեան, Յարութիւն Մանկունի, Մարտիրոս Սողիկեան Բարեկենդանի Հինդշարթի առաւօտուն կանուխ Բէժ հանելու համար կ'երթան Էրզրոյի մայր Նիկողոս արքայ տունին տանիքին վրայ խոշոր քարէ լող մը կը զլեն լողփայտի զործիքով արագ արագ տանիքին ձիւները թեւ քերուած, բայց տանիքը պողած, տունին մէջի բնակիչները, կը սարսափին, խորհելով որ երկրաշարժ անդի կ'ունենայ. անոնք խոշոր ընտանիք էին. մէկ ոտքէն կաղ հսկայ ծանրութեամբ Նիկողոս արքայը. երեւաղեմայ սիւնն ու գերանը բարձրաձայն պոռայով խոշոր ներսի տան մէջ

կաղալով, անկիւնէ անկիւն շրջան կ'ընէ. անոր ձայնը լսելի բլլալու չափ բարձր տանիքին երգիկին վրայ. դերակատար երեք տղաներուն, որոնք հազիւ իրենց ծիծաղը զսպած, պարան մը կ'իջեցնեն երգիկէն վար, Մանկունին իր խոր ձայնով կ'ըսէ. Ես Գարբէէլ հրեշտակն եմ, ով դու Նիկողոյս, ծառայ Յիսուսի, պլլեայ զպարանա՝ ի մէջք քոյ, պլլեա, երկինք համբանալու, Տիրջը կողքին բաղմելու, քանդի դուն շատ արդար, Աստուծոյ սիրելին եղած ես: Մանրակշիւ Նիկողոս արքայը, պարանին ծայրը բռնած, այնպիսի ուժով մը կը թօթուէ, ըսելով. Դուն վար եկուր, ով Գարբէէլ հրեշտակ: Քիչ կը մնայ որ Մանկունին երգիկէն վար իյնայ: Երեք տղաներ սարսափահար կը փախչին, պարանը վրայ տալով. Նիկողոս արքայը Աստուծամալխ մէկն էր, որ իրիկուն առտու եկեղեցի կ'երթար, թէեւ իրենց տունէն հոտու:

Տղաները շրաւկանանալով իրենց սարքած կատակարանութեամբ, Բարեկենդանի Կիրակին, թէեւ առատ ձիւնի կոյտեր կային ճամբուն վրայ, պատերու տակ, բայց արեւ կար ու տաքուի օդ. Պրեխեան Մըղարարը էշու մը վրայ հեծցուցած, զէմքը մուրով սեւցուցած, անձանաչելի լաթերով հաղուած, կը քալեցնեն Էրզրոյի մայր տանիքին վրայ, ուր նեղ սնցք մը կար փողոցէն վեր բարձրանալու. զիւղին մէջ քանի մը պատի տանիքներ կային, իրարու կից, բաւական ընդարձակ, նեղ ճամբայով վեր ելլելու փողոցէն, Բարեկենդանի օրերու համար յատկացուած: Պատին տանիքը հաւաքուած ժողովուրդը երբ կը տեսնեն էշը հեծած այլակերպ մարդը, աներեւակայիլ ծիծաղ մը կը փրցնեն:

Նիկողոս արքայը, տունին մէջ նստած, աղմուկը տանելով, շուտ մը տանիք կ'ելլէ: Տեսնելով էշուն վրայ հեծած այլաճէշը, կը պոռայ. Երկոտարդներ, ձեզ տեսնեմ, թօփեցէք: Տղաները ձիւնի դնդակներ տեղացնելով, Մըջ արարը էշէն վար կը զլորեն, ձիւնաթաթախ: Շատ զմուսարութեամբ կը յաջողին, Մըջ արարը սաթիլճանէ ազատելու, մօտակայ տունի մը տաք անկողինը պառկեցնելով, որովհետեւ մէջքէն վեր բոլորովին մերկ, իզուած մուրով սեւցուած էր:

Նիկողոս արքայը իր տարած յաղթանակով հպարտացած, ծիծաղելով կը պոռայ. Հը, հը, սըւոնց նայեցէք, զիս ծաղերու եկած են, իրենք ծաղրուեցան:

95ի կոտորածէն առաջ, Հաւաք մեծ փառահեղութեամբ կը տօնէր Վարդանանցը Բարեկենդանի Հինդշարթին. դպրոցին սրահին

ՀՐԱՇԱՓԱՌ ԶԱՏԻԿԸ

մէջ ներկայացում կը տրուէր այդ առթիւ, եկեղեցիին պատարագէն վերջ: Ի յարգանս Քաջն Վարդանի, շատեր թուր կապած կողքերուն կը պարտէին զիւզին մէջ, իրարու այցելութիւն կու տային, սեղաններու շուրջ նստած կ'ուտէին, կը խմէին Վարդանին կենացը:

ԳՏի կոտորածէն վերջ, իմ ազգական Պօղոս Փափաղեան, Կելլի-կիսայն վերադարձած, Բարեկենդանի շարժուն, ծիծաղաշարժ ներկայացում մը տուաւ, Լէյլէկեաններու ընդարձակ տանիքներուն վրայ, կանոնաւոր բեմ շինած, զորքերով, փախաթներով: Բոլոր տաղաւար օրերը, ազատ, համարձակ կը տօնէր, իր միատարր, միազաւան ամբողջութիւնը, մէկ ընտանիք կը ներկայացնէր, կատարեալ Հայաստան, որ նախապէս կրակապաշտ, յետոյ Լուսաւորչահան, հաստատ իր հաւատքին վրայ, հաւատարիմ Հայաստանեայց Եկեղեցիին:

Հաւաւցին այնքան խոտապահանջ էր որ, Մեծ Պահոց մէջ, ձուկ ուտելն անգամ արգիլուած էր: Իրենց պահքը աւերող մարդիկներ կային զիւզին մէջ, որ քաղաքէն զաղանի կերպով ձուկ բերել կու տային, եւ զաղանի կ'ուտէին:

Փոքրիկներն անգամ խոտապահանջ էին. Մեծ Պահոց մէջ զըզըրոց զացող փոքրիկներ իրարու բերանէ հոտ հանելու փորձ կ'ընէին, հասկնալու համար, որ զաղանի, խափութեայ, հաւկիթ, սեր, մածուն կերած չըլլան: Մեծ Պահոց մէջ, մսացու կենդանիներ մորթիլ արգիլուած էր:

ԳՏի կոտորածէն վերջ, Մեծ Պահոց վերջի շարաթներու կիրառի օր մը սուսուտուն, Փերէցիներ ձուկ բերած, հակերով վար զըրած էին, եկեղեցիէն քիչ հեռու փողոցին վրայ, եկեղեցիէն դուրս կլլոցներուն ծախելու համար: Հօրեղբայրս, Պաղտասար Քահանայ Փափաղեանը հրամայեց երիտասարդներուն որ բոլոր ձուկերը կոխկրատելով նեանն ձիւներուն վրայ, պոռալով ձուկ բերող Փերէցիներուն վրայ, Գուք չ՞օք զիտեր որ Մեծ Պահք է, եւ Հաւաւի մէջ փրօղիներու հաստատութիւն չկայ: Փերէցիները տրտում տխուր, պարագ հակերը ստած, հեռացան:

Այսպէս էր մեր Հաւաւը, կարելի չէր օրէնքը սոնակոխել, զիւրը միատարր էր, զուտ հայ, զուտ լուսաւորչական: Գիւրը իր բոլոր եկեղեցական, տօնական օրերը ուրախ, զուարթ, համարձակ կը տօնէր: Մէկ սիրտ, մէկ հոգի, հաստատ բոլոր օրէնքներու վրայ: Ոչ մէկ փորձ ընող չկար փոփոխութիւն մտցնելու, որովհետեւ զիւրը միատարր էր, միադաւան էր, օրէն ի վեր:

Բուն Բարեկենդանի ամբողջ շարժուն օրերը ամենայն շայլութեամբ կերուխոսմի օրերուն կը յաջորդէր Մեծ Պահքի առաջին երկուշարթին, սուրբ օր էր Հաւաւցիներուն. մեծ ու պղտիկ պէտք էր զիմաւորէին Մեծ Պահքը կամայ ախամայ: Ի սպառ մոռնալ մտնողէն, կաթնեղէն, հաւ, հաւկիթ, նոյնիսկ ձուկ ուտել:

Չափահաս տղաներուն զործը կ'ըլլար Մեծ Պահքի 49 օրերը խորհրդանշող խուլլոցնիկը պատրաստել: Մեծ ու կլոր, կարծր սոխ մը հաւի խոշոր 7 փետուրներով բոլորուած, համաշարի, ամուր մխուած սոխին կողերուն, յար եւ նման ծովաստղի, որ պէտք էր կախէին, մարաղներու կամ ոչ պող ոչ տաք սենեակներու առաստաղէն, փոքրիկներու ձեռք չհասնելու բարձրութեամբ: 7 փետուրները կը խորհրդանշէին Պահոց 7 շարաթները, որ ամէն շարաթ պէտք էր փետուր մը քաշէին սոխին վրայէն. վերջին փետուրը կը քաշուէր Զատիկին շարաթ օրը, եկեղեցիէն տուն գալին վերջ:

Փոքրիկները շատ խոժոռ աչքով կը նայէին խուլլոցնիկին, որ Մեծ Պահքը բերած է, որ պէտք էր հնազանդէին. շարահմի տըղաներ, փայտի կտորով հարուած տուած են խուլլոցնիկին, ծնողքներէն զաղանի:

Դժուարութիւն կը հանէին զզրոց երթալու, կակուղ սիրտ մայրեր ստիպուած էին սեր, կաթ, մածուն տալ, ոչ ոք չիմանալու պայմանաւ: Փոքրիկները այնքան հետաքրքիր էին խուլլոցնիկով, որ ամէն շարաթ պէտք էր իրենց ներկայութեամբ քաշուէր փետուր մը սոխին վրայէն ծնողքներուն կողմէ:

Ընդհանրապէս Հաւաւցիները հաւատարիմ էին կրօնքին եւ եկեղեցիին հանդէպ: Մատի վրայ կը համրուէին իրենց պահքը զաղանի լուծող շափահաս մարդիկներ, բայց ոչ մէկ կին. կային անհասներ, որ զաղանի կերպով ձուկ բերել կու տային. զիւրացիները անոնց վրայ նախատինքով կը նայէին. Հաւաւցիներ մեծով պղտիկով աւանդապահ էին, մանաւանդ կին զստակարգը, հաստատ հաւատքով կը պահէին ծոմապահութիւնը, Մեծ Պահքի եօթը շարաթները: Գտնուած էին կիներ որ շարժուն հինգ օրերը բնաւ չէին ուտեր, խմեր, զարմանալի սոսկունութիւն ցոյց տալով:

95ի կոտորածէն վերջ, Տէր Պաղտասար Քահանայ Փափագ-
եանը, Մեծ Պահոց վերջի շարաթներուն, կիրակի, եկեղեցիէն տուն
դացած առնն, կը տեսնէ եկեղեցիէն քիչ հեռու ճանապարհին վրայ
ձուկերով լեցուած հակեր ցուցադրութեան դրուած, ծախելու հա-
մար եկեղեցիէն տուն դացողներուն եւ անցորդներուն: Տէր Պաղտա-
սարը անհանդուրժելի դտնելով, ձուկերը ոտնակոխ ընել կու տայ,
բարձրաձայն պոռալով, կը կշտամբէ ձուկ բերող փերէցիները, ըսե-
լով անոնց. Դուք չէ՞ք գիտեր որ Հաւաի մէջ Փրոզիներ չկան. ո-
րո՞ւ պիտի ծախէիք: Սարսափահար փերէցիները պարապ հակերը
առած կը հեռանան գիւղէն:

Թէ՛ ազգային, թէ՛ եկեղեցական հաւատքը զօրաւոր էր Հա-
ւալեցիներուն մէջ: Մեծ Պահոց մէջ անոնց կերածն էր սոսկ, կորկոտ,
պղլուր, չոր բանջար, շուշմայի իւղ, սոխ, սխտոր, խմորեղէն,
քաղցրեղէն:

Փոքրիկներ ամէն առաւօտ դպրոց երթալէ առաջ, տունին
սերն ու կարագը աչքէ կ'անցընէին, բերաննէն ջուր կ'երթար, բայց
իրենց պահքը լուծելու ոչ մէկ փորձ. հաստատ իրենց հաւատքին
վրայ: Գիւղը զուտ լուսաւորչական, չկար ոչ թուրք, ոչ բողոքա-
կան անոնց միտքը պղտորող. պէտք է հետեւէին իրենց ծնողներուն:
Կային նաև չարածճի տղաներ, իրենց պահքը լուծողներ, ծնողնե-
րէն դաղանի:

Մեծ Պահքի երկար օրերը թէև ձանձրացուցիչ, բայց շատ
սիրով կը տանէին. Հաւաւը կատարեալ քրիստոնեայ, հաւատարիմ
Հայաստանեայց Եկեղեցիին, ոչ մէկ շեղում չէր ունենար: Գիւտա-
կից, բարոյական բմբռնումի տէր: Յարգանք ունէր գէպի եկեղեցին
եւ սպրդ:

Մեծ Պահքի առաջին շարթուն դարնան օրերուն հետ կը բաց-
ուէր գործելու բաղձանքը, ձմեռուայ անշարժ թմբութենէն արթըն-
ցած, հոգադորձը, այգիներու, պարտէզներու մշակողներ պէտք էր
կարճ աշխատանքներ կատարէր Մեծ Պահոց շարաթներուն, եկեղեցի
երթալ, որ գիշեր ցերեկ բաց էր:

Ինչ անուշ էր Մեծ Պահքի օրերը, մանաւանդ Չատիկն ու ի
կած տարին չորս կողմը կանաչ, կակառ, արև, բարի, տաքութիւն:
Անկարագրելի հոտուկեռ, աշխատանքներ կատարելու, Հաւալեցի
աշխատասէր էր, կ'ստէր ծուլութիւնը: Շատ զրազած էին գիւղին
ներկարարները, կառուկէն հաղուսաններ ներկելու: Շատ զրազուած
էին գիւղին կօշկակարները. եկողը Չատիկ է. ամէն ոք նոր կօշիկ

կուղէ. մանաւանդ փոքրիկները, որ պէտք էր կարմիր կօշիկներով
եկեղեցի երթալ:

Հապա Ծաղկադարձի կիրակին, որ Չատիկի գալուստը կ'ա-
ւետէր: Չորս կողմը կանաչութիւն կը տրէր. ծառերու, ծաղիկնե-
րու հոտը ամբողջ գիւղը կը սողոգէր. եկեղեցին ոտք դնելու տեղ
չկար, բաց պատարագը տեսնելու:

Մեծ Պահքը իր ճամբորդութեան կօշիկները հագած պատ-
րաստ գիւղէն հեռանալու: Տարագնաց թոչուններ նոր վերադարձած,
իրենց ճոռուղիներով Չատիկին գալուստը կ'աւետէին. գիւղին ա-
րագիներու կափկափումը, դարնան սիրուն թոչնակ ծիծեռնակին
արագ արագ թօխլը, կառուցին բանած ծեղը, մեծ անապարտնք ցոյց
կու տար, բոլորին ուշադրութիւնը դրաւած. ոչ ոք չէր ձանձրանար
անոնց անուշ ճիւղճիկներէն, մանաւանդ փոքրիկներ, կ'ուղէին իրենց
սփին մէջ առնել այդ սիրուն թոչնակը:

Տարագնաց թոչուններուն մէջ ամենասիրելիներն էին արագիւն
ու ծիծեռնակը: Ուշադրաւ թոչուն մըն էր խժիկը, կանաչ, կարմիր,
կապոյտ, դեղին, համաշափ դոյներով, հաստատուն կտուցով, ա-
ղանիկէն քիչ մը փոքր, կոռուսէր այս թոչունը թէև անվնաս, թի-
ւով քիչ, այմկարար ձայն մը ունէին, օրն ի բուն խթ-խթ ընելով
գիւղին վերեւ, օդին մէջ, ոչ այնքան բարձր թռիչքներ կը կատա-
րէին, սրոնց բոյները գիւղին պարտէզներուն եւ այգիներուն ծառե-
րուն կոճղերուն մէջ հաստատուած էր: Այս թոչունը միշտ կուր կը
փնտռէր օրեւէ թոչունի հետ: Իրմէ քանի մը անգամ մեծ ուրուրին
հետ կուր կը բոնուէր գիւղին վերեւ, օդին մէջ, միշտ ալ յաղթա-
կան դուրս կու գար:

Ուրուրը թուխ դոյնով գիւտաիչ թոչուն մըն էր, որ հաւեր,
հաւու ձագեր յափշտակելով կը զրաղէր, բարձրէն թռիչքներ կը կա-
տարէր, դժուար էր հրացանի բռնելը: Այս տարագնաց թոչունը ա-
չունը ու իրերթար, դարունը շուտ կու գար:

Չատիկէն վերջ, գիւղը կատարեալ զրախտայալը կը դառնար,
տեսակ տեսակ տարագնաց թոչուններով: Գիւղին աշխարհադրական
գիւրքը սիրելի էր թոչուններուն անգամ. փոքրիկ լեռնապարներու
մէջ բարձր գիւրքի վրայ կանաչ կակառ ջրառատ. զբացի գիւղերէ
ամենամօտ մէկ ժամ հեռաւորութեամբ, բոլորն ալ Հաւալէն փոքր,
չունէին այն բնական հարստութիւնները, որ Հաւաւը ունէր ամենայն
ստատութեամբ. աստուածատուր պարզեւ մըն էր գիւղին գլուխին
ստատ ջուրի աղբիւրը, պաղ, բայց աղի: Այս ջուրը կը վաղէր ձոր

մը կազմելով, այս ապրիլի ջուրովն էր քանի մը ջրադայներ դառնալ յետոյ, կ'ողովէր թէ գիւղին պարտէզները եւ թէ գաշաբ:

Աստուածատուր Հաւաւը այնքան սիրուն էր որ երկու հազար տարիէն աւելի միշտ չէն ու պայծառ մնացած էր, դուռ հայարնակ, քաջ եւ անվախ, չէ հեռացած երբեք այնքան սիրելի Հաւաւէն: Հաւաւը նկատուած էր Բայաճովիտի գրախտաւալսը, իր այնքան գեղեցիկ գիւղով:

Աւալ շարժուան օրերը, համարուած սուրբ օրեր, երկիւղածութեամբ կը կատարէր իր գիւղի աշխատանքները: Դաշտերու, այգիներու, պարտէզներու մէջ աշխատողներ, կը շատային շուտով գիւղ երթալ, եկեղեցի երթալ որ բաց էր գիւղեր ցերեկ:

Կին դասակարգը լծուած եկեղեցիին վերաբերեալ գործերը կատարելու դուրս, ներս սրբել, մաքրելու. եկողը Չատիկ է: Դըսըրաց դասի շայկիները տանիլ իրենց տունները կարկտելու, լուարու, նորեր հայթայթելու, պահանջը շատ էր. բազմաճիւղ կար տարեց եւ քաղցիւններու մէջ Չատիկին շայկի հողի, դասին մէջ երեւնալու. ոտք գնելու տեղ չէր մնար. ապա գպրոցը, կատարելալ երաժշտանոց, փորձել կատարելու, տաղեր, շարականներ երգելու. երաժիշտ դասատուն դպրոց գասը ուսուցանելու համար, ճայնաւորի, բազաճայնի չէր նայեր, բոլորն ալ կը շարուէին երաժիշտ դասատուին սենեակը, համաշօք երգելու վարժութիւններ ընելու. Աւալ շարժուան, գպրոցական դասուանդութիւնները կանգ կ'առնէին: Անուշ, անուշ երգեցողութիւնները գպրոցին ամբողջ շրջանակը կ'ողովէր. ճամբորդ, առևտուրով եկող թուրքեր, քիւրտեր մեծ հետաքրքրութեամբ կ'ողովէին մտիկ ընել, կանոնած, գպրոցի վարի յարկի պատերուն կոթած:

Բայաճովիտի հեռուոր եւ մօտաւոր հայ գիւղացիներու մեծ փափաքն էր Հաւաւ գալ, փառահեղ Չատիկը տօնելու:

Անգամ մը Հաւաւ եկող փոքրիկ տղեկ մը իր մեծ մօր հետ, տեսնելով աճալին բազմութիւն մը, Չատիկի կիրակի առաւօտուն շարան շարան եկեղեցի գալը, եկեղեցիին ներսը առատ լոյսերով շողջողուն կերպարանքը տեսնելով կը հիանայ, կ'ըսէ. Մեծ մայրիկ, Յիսուս ալ Հաւաւցի՞ էր: Կը պատասխանէ մեծ մայրիկը. Այո, այո, Յիսուան ալ, Աստուած պապան ալ, Հաւաւցի կ'գա՞ծ են:

Եկեղեցիին ներսը սակզ ձգելու չափ ունկնդիրներ, դուրսը հակելիթ կոտուղներու բազմութիւն. բոլորն ալ ուրախ դուարթ, մարտը հազուած, ոմանց կողքերուն ատրճանակ, վեցհարուած,

գոյնգոյն կոթերով դաշոյն. բոլորն ալ մէկ տեսակ հայութիւն, հայ լուսաւորչական:

Եկեղեցիին արարողութիւնը լրանալէն վերջ, կ'երթային տուն, ուտել խմելէ վերջ, կը հաւաքուէին գիւղին վարի եւ վերի կայրեր, խումբ խումբ, աճալին բազմութիւն. զարկ կու տային հակիթախողին. չորս կողմը խոնուած փոքրիկ տղաներ, աղջիկներ իրենց գեղեցիկ զգեստներով, կարմիր կօշիկներով, նորածին ուլերու ու դաւնուկներու հետ խոնուած, հիանալի տեսարան մը կը ներկայացնէին:

ԳՅի կոտորածէն առաջ կատարուած, բոլոր խողերը, վազվազումները, ուրախ դուարթ տեսարանները աչքիս առջեւն չէն հեռանար: Չատիկուայ տօնի օրերը Աւալ հինգ շարժիկն սկսեալ կը տեսէր 6 օր: Կու դար Կանաչ կիրակին, Կարմիր կիրակին, եկեղեցի եկողներ նորէն խոնուեալ, գուրտի գիւղացիներ իրենց բարեկամներուն, աղականներուն կը մնային երկու շաբաթ:

Ապա Զէթ գիւղացի Առաքելալուսեա Գօլթեան Կարապետ Ազան պէտք էր Հաւաւ դռնուէր ամէն Չատիկ, ժամաղիւրքը ձեռքը, դուրսը քայած առն շրջապատուած: Գիւղէն դուրս ճամբորդած առն երբ նշմարէր թուրք ճամբորդներ, իր վերաբերուն կը փոէր գետնին վրայ, ճամբուն եղերքին, աղօթքի կը կանգնէր. այսպէս պատմած են ինձի իր հետ ճամբորդողներ. Չեթ հաւատացեալ կ'գա՞ծ է Կարապետ Ազան:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

ԳՅի կոտորածէն առաջ Հայութիւնը մեծ եռանդով կը տօնէր եկեղեցական սուրբ տօները մեծ հաւատքով: Նոյնպէս հեթանոսական օրերէ մնացած Մէլլէտն ու Վարդալատը:

Գարնան ամիսներուն վերջինին մէջ կու դար ընդհանրապէս Համբարձուածը. ամէն կողմ կանաչ կակառ, արեւով երկար օրերը: Ամբողջ գիւղը կը բաղձար վանքին անտառը երթալ, ուխտի օրեր, այդ կիրակին որ շրջակայ գիւղերէն անգամ կու դային խումբերով:

Կիրակի առաւօտուն արեւը նոր ծագած, գիւղէն կը տեսնուէր վանքին ճանապարհը մարդիկներու շարան մը որ կը յառաջանար մեծ հապճեպով գրաւելու իրենց ուզած տեղը վանքին անտառին մէջ:

Այդ կիրակին վանքը միայն Հաւաւցիներուն չէր, այլ բոլոր Բաւա-
հովիտի հայերուն: Այդ կիրակի դիւղը պատարագ տեղի չէր ունե-
նար. քահանայ հայրեր, դպիր, դպրաց դաս, սարկաւազ պէտք էր
վանքին եկեղեցին ըլլային եկեղեցական արարողութիւնը շուտով
լրացնելու:

Կէսօր չեղած անտառին մէջ տեղ տեղ մուխեր կը բարձրանա-
յին, քիչ վերջ ամբողջ անտառը բարակ մուխով մը կ'ոյրոյուէր: Ժո-
ղովուզը անընդհատ կու դար, տեղի պակասութեան մասին չէր
խորհեր. անտառը ընդարձակ է. շուտ եկողներ լաւ տեղերը գրա-
ւած, օճախներ շտկած, շուտով իրենց պլլուր փելլաները պէտք էր
եփէին: Ամէն օճախի վրայ քանի մը ընտանիք իրենց հերթին կը
սպասէին. իսկ խելահաս տղաներ, բոլորն ալ դորձի լծուած, չոր-
ցած ծառերու տերեւներ ու ճիւղեր կը հասցնէին անդադար: Բոլորն
ալ կարծես մէկ ընտանիքի գաւակ, կու տային իրենց հաւաքած
փայտեղէնները ասոր անոր որ օճախներուն կրակը միշտ վառ մնայ,
որ փելլաներուն ետը չկանպի. անոնք մտոցած իրենց անօթութիւնն
ու ծառաւը, կը վազէին անտառին չորս կողմերը վառելիք բերելու:
Անտառին տեղանք տափարակ գետինն էր, ճերմակ կտոր մը փռուած,
ուտելիք խմելիք անոնց վրայ շարուած. ամէն ոք իր պաղ կերակուրը
բերած էր. պակասը փելլան էր որ անտառին մէջ կ'եփէին: Կարելի
չէ մոռնալ այդ անուշիկ տղաները որ բոլոր փելլաւ եփողներուն վա-
ռելիք կը հասցնէին, արեւն քրտինք մտած, իրենց մայրերուն չափ
յարգելով փելլաւ եփողները. ո՞ւր մնացին այն օրերուն սէրն ու
յարգանքը:

Աստուածային օրհնութիւն կար, դուն կը կարծէիր Յիսուս
աներեւութապէս ներկայ էր անտառին մէջ, ուտել, խմել, դուար-
ճանալ, Եռուղեք իր դաղաթնակէտին հասած, փոքրիկ թմբուկներու
ձայները, երգերու աղաղակները անտառը կը թնդացնէին, անհամ-
բելի բազմութիւն մը. ոչ կռիւ, ոչ իրարանցում: Արեւոյնքներ աւելի
խոհեմ կը շարժէին հանրային ուրախութիւնները շխմպարելու:

Տեղ մը վահանախաղութիւն, տեղ մը դօտեմարտութիւն, ու-
րիշ տեղ մը հրացանով նշանադրութիւն, շուրջպար, մենապար ամէն
կողմ, իսկ անտառին վրայի ընդարձակ գետինը ձիարչաւութիւն:
Մարդ կը զարմանար ո՞ր մէկուն հանդիսատես ըլլայ:

Համբարձման օրը մեծ պատահութիւն կար նշանածներ դիրար
դիտելու դաղապարով: Այդ օրը մայրեր իրենց նշանած արջիկները
մեծ հսկողութեան տակ կ'առնէին, որ իրենց նշանածներուն չեքեւ-
նան: Հին առեւներ արդիւրուած էր արջիկներուն իրենց երեսները

ցոյց տալ իրենց նշանածներուն մինչեւ ամուսնութիւն. պատահ-
մամբ, աղբիւրը, գաշաք կամ այլին զացած պահուն եթէ իրենց նը-
շանածներուն կը հանդիպէին, լաթով մը իրենց երեսը կը ծածկէին:

Համբարձման օրը վանքին անտառը եկող նշանած արջիկ ու-
նեցող մայրեր իրարու հետ կանգնած կամ նստած կը կենային իրենց
արջիկներով, արջիկներու հետ նշանուած տղաներ հետուէն դարձ-
նակալ կը զիտէին իրենց նշանածներուն շարժուածքը, հասակը, քալ-
ուածքը: Ձնշանուած տարեկից արջիկներ, աղաչելով, պաղատելով
չառ դժուարութեամբ կը յաջողէին համոզել մայրերը արջիկները
տանիլ անտառին մէջ պտըացնելու, պայմանաւ որ իրենց նշանածնե-
րուն դէմ երես երեսի չզգային: Պատյոյ կատարած են տղաներ եւ
նշանուած արջիկներ իրենց տարեկիցներով իրարու բաւական մօտ
հանդիպէին որպէս պատահուածք, չի նշանուած արջիկները շախ-
չախ, ծիծաղ մը կը փրցնէին. ձայն տոնողներ կը հասկնային, որ
նշանուածներ իրարու հանդիպած են: Տղաները շուտով կ'անհետա-
նային, արջիկներուն մայրերը վրայ չհասած. մայրեր շուտով ի-
րենց արջիկները ձեռքերէն բռնած կամթելով կը տանէին: Ասկէ
մնացած է փետաներու եւ գորանչ մամաներու միջեւ ծագում առած
առեւութիւնը:

Հաւաւը միշտ խուռներամ բազմութեամբ տօնած է եկեղեցա-
կան սուրբ օրերը, որ կարելի չէ նկարագրել բոլոր մանրամասնու-
թիւններով:

ՎԱՐԳՍՎԱՌԸ

Հեթանոսական օրերէ մնացած այդ փոռատօնը ամէն տարի
պէտք էր տօնուէր մեծ շուքով: Առաւօտուն գեռ արեւը նոր ծայր
տուած, Հաւաւը մեծով պղտիկով վազուց տրթնցած, պատրաստ,
երբ ձայնը կ'առնէր եկեղեցիին հսկայ դանդին ղողանջներուն, ամէն
կողմէ ուրախութեան ձայներ գլուղը կը լեցնէին: Գիւղին փոքրիկնե-
րը, իրենց նոր դիւտաներն ու կօշիկները հազած, փողոց կը թա-
փէին:

Փամիւղին հսկայ բազուկները չէին խոնջեցնար դանդին դողան-
ջիւնն աւելի ու աւելի սաստկացնելու. լեռ, ձոր, դաշտ, ձայնով
բռնուած ալիքներ. Հաւաւը շրջապատող գիւղեր պէտք էր լսէին որ
Վարգավառ է:

Նոսուզները, երթևեկը գիւղին մէջ երթալով կը բարձրանար. գիւղին դուրսի ճանապարհները, մօտաւոր եւ հեռաւոր շրջաններէ եկող ուխտաւորներով բռնուած կը յառաջանային գէպի վանք. բոլորն ալ ուրախ դուարթ, խաչակնքելով գիւղին հակայ գանդին դօղանջինն առնելով: Ինչ անուշ կու գար այդ ձայնը, դանկ-դանկ, կը գոտար, սիրտեր գոց հանելով:

Օգոստոսի այդ պայծաս արեւը կարծես այդ օր աւելի կը կարմրէր, իր տաքութիւնը աւելի կը սաստկացնէր, լեռ, ձոր, այգի, պարտէզ անձնատուր արեւին ճառագայթները կը համբուրէին, Վարդափառը շնորհաւորելու. ինչ անուշ օրեր էին որ կը վայելէինք:

Հաւաւ կ'ըսէին ու կու գային ամէն կողմերէ, ամէն կողմէ պատուութիւն կը բուրէր:

Բոլորովին միատարր, դուտ հայութիւն, դուտ լուսաւորչական, որ քրիստոնէութիւն բնորոնելէ վերջ, ազատ մնացած էր իր Վարդափառն ու Մէլէալը տօնախմբելու. Հաւաւը շատ ու շատ ուրախ էր, որ երկու օրերը, չարաթիւն ու կիրակին ամենայն պաշտութեամբ կը տօնէ Վարդափառը. աներեւակայելի բազմութիւն մը դուրսի շրջաններէ եկած. գիւղն ու վանքը ծայրէ ծայր լեցուած դուտ հայերով, բոլորն ալ ուրախ դուարթ, ազատ համարձակ, կը հիանային Հաւաւի ազատութեան վրայ. երգել, պոռալ, կանչել, դէնքեր արձակել ամենագոյն անվարութեամբ. դոյութիւն չունի գիւղին մէջ ոչ թուրք, ոչ քիւրտ, ոչ կառավարական հակադութիւն. կատարեալ Հայաստան. Բալահովիտի բոլոր հայերը Հաւաւով կը հպարտանային:

95ի կոտորածէն առաջ, մօրս կարգադրութեամբ, Վարդափառի շարաթ օրը եղբայրներով, քոյրերով, մեր ուսելիքով այգիին մէջ կ'անցընէինք, վանք եկող ուխտաւորներու ականատես ելլալու, մեր այգին կը գանուէր գիւղին ամենափոտաւոր վայրը, վերի գերեզմանոցի կից առաջին անկիւնը, վանք տանող ճամբուն վրայ: Կը սիրէինք տեսնել դուրսի շրջաններէն եկող ուխտաւորները իրենց ձիերով, մատաղցուններով գէպի վանք յառաջանալը:

Իրիկուան արեւը դեռ մարը չմտած, կու գային գիւղին երկտասարդները գէպի վանք. ոմանք գիւնուած, երգելով, խաղալով, խնկալով: Ես եւ երկու քոյրերս պէտք էր տուն երթայինք, իրիկուան, դեռ նոր մութը չկտրած. եղբայրս Արամը կը կենար այգիին իր բնակներով, մինչեւ ուշ ատեն, եկող պացոյններէն այգիին պաշտպանելու: Կիրակի առաւօտուն կանուխէն այգիին կ'ըլլայինք բոլոր բնասնիքով, այգիին մէջ մեր կերակուրը ուտելու, յետոյ վանք եր-

թալով Վարդափառը տօնելու: Բնաւ չեմ մոռնար այդ գեղեցիկ օրուան վայելքները, թէ՛ այգիին մէջ եւ թէ՛ վանքը Վարդափառը տօնելու:

Ինչ ուրախութեան օրեր էին, գիւղը շարան շարան գէպի վանք, բոլորն ալ ուրախ դուարթ, երգելով, պոռալով, կանչելով, հրացաններ պարպելով: Այդքան բազմութիւններու մէջ միայն Հաւաւցիներն էին գէնք կրողները:

Հաւաւը պարզ գիւղ մը չէր, կատարեալ Հայաստան, իր վարքով բարբով, համարձակ, ոչ թուրք, ոչ քիւրտ, ոչ գիւնուորական հակադութիւն: Գիւղին պէկը վաղուց դուրս քշուած էր:

Կիրակի առաւօտուն հայիւ արեւը ծայր տուած, Հաւաւէն սկսուած ամբողջ ճանապարհը սեւ երակ, գիւղացիներով եւ դուրսի գիւղացիներով վանք կը յառաջանան: Այդ կիրակին գիւղը պատարազ չունէր. քահանայ հայրեր, սարկաւազներ, գպիւրներ վանք պէտք էր ըլլային: Վանքին եկեղեցին տակ ձգելու տեղ չի մնալէ զատ, վանքին ներսի հրապարակն անդամ ստք ձգելու տեղ չէր մընար: Ինչ անուշ կու գար պատարազի արարողութիւնը, մինչեւ վանքին դուրսի աւազանին շուրջ, կը լսուէր այդ գեղեցիկ երգեցողութիւնը:

Պատարազէն վերջ ժողովուրդը կը քաշուէր աւազանին շուրջ, թիկնինքնու տակ. աւազանին շուրջ առաջնակարգ տեղերը դուրսէն եկած հիւրերուն յատկացուած էր, որոնք իրենց փոսոցներուն վրայ շարած տեսակ տեսակ կերակուրներ, կ'ուտէին կը խմէին ուրախ դուարթ, աւազանին շուրջ ընդարձակ գետինը շրաւելով, շատեր անտառին մէջ տեղաւորուած էին իրենց կերակուրներով: Այդ ծովածաւալ բազմութիւնը շարժման մէջ էր, գիրար ողջունելու, աւազանին մէջ լողացողները գիտելու: Մարդիկներու ախորժակը կը քաշէր. այդ կիրով ճերմկցուած կապոյտ գոյն ջուրը խմելու, տնոր մէջ վազող ինքնաբուխ պապ աղբիւրի ջուրն անընդհատ զլլալով աւազանին մէջ, ջուրերը կը սկսէին դուրս վազել. քանի մը փայլուն լողուոր երկտասարդներ իրենց մերկութիւնը ծածկող վարտիքէն հազած, հակադութիւն կը կատարէին, որպէսզի մարդիկներ չխեղդուին վեց ոտքէ աւելի բարձրացող ջուրերուն մէջ. հասարակութիւնը անընդհատ ջուր կ'առնէր աւազանէն, սրսկելու համար հասարակութեան վրայ. ոչ ոք պէտք չէր շուր տեսնուէր. ուրախութիւնները վերին աստիճանի հասցնելու համար շատեր իրենց սուղ սուղ զվեստներով աւազանին մէջ կը նետէին: Ոչ կոխ, ոչ իրարանցում չէր պատահէր:

Մտքիս մէջ թարմ մնացած է Բալու քաղաքացի Արօն, հացի դանակ մը բռնած ձեռքին, խմուած կը սպառնար դինք աւագանին մէջ նեակելու. յետոյ ան ալ նետեցին աւագանին մէջ: Կը յիշեմ 1902-Վարք գիւղացի քօռ Մըրօն, Փիլլի Տըմպիկը, շխտցունելով տեսակ տեսակ կանչերով Ժողովուրդը կը խնդացնէր, մարդիկներու շարքին նստած: Աստուած իմ, ինչ ուրախութիւններ կ'ըլլային այդ Վարքայտի կիրակին:

Չտեսնուած բազմութիւն, Հաւաւը Բալահոյիտի Նիւ Եորքն էր. հեռաւոր ու մօտաւոր շրջաններէ պէտք էր Հաւաւ գային բազմութիւն տեսնելու. Հաւաւի ազատութիւնը տեսնելու վայելելու. կ'ընէին երթանք Հաւաւ ազատութիւն շնչելու:

Գրե՛ջ, ուղեղ պէտք է Հաւաւի Վարդավառը նկարագրելու: Ամբոսն այդ դեղեցիկ ամբոսը, օղբ պաճառ, օրերը երկար, ամէն կողմ կանաչ կակառ: Այդ մէկ օրուան մէջ եղած ուրախութիւնները, ամէն չափ, սահման կը դէր կ'անցնէր: Շրջակայ գիւղերու ունեւոր դասակարգը, իրենց ձիերով, հագուստներով, կապոցներով պէտք էր փայլէին այդ օրը:

Ամենայամբ օրն էր Վարդավառի կիրակին այլևիկ ունեցողներուն, խնամութիւն հաստատելու Հաւաւցիներուն հետ, ո՞ր մէկ այլևիկն էր որ պիտի չփախարէր Հաւաւ հարս դալու: Հին օրերէ մընացած խօսք մը կար, որ Հաւաւցիներ իրենց դեղեցիկ ազլիկները ներս կը պահէին, տղեկները դուրս կու տային: Հաւաւէն հարս տանողներ որպէսզի հպարտ զգան, այն կիրակին որ ազլիկը դուրս պիտի հանէին իր ծնողքին տունէն, երկու փառու կիներ զէմի տունի ցուխէն կը պոտային «Վերաբք սօղանի ալտրք սօղանի», որ Հաւաւցիները սօխ մը տունին բազէ մը առին. Հաւաւցիներու փեսաները որքա՞ն հպարտ կը զգային, երբ Հաւաւ կու գային: Պէտք էր շատ մաքուր հագնէին, մէջքի կապոյտ դօտիներ ոլորուած, պաստօն մը ձեռքերնին, հպարտ հպարտ քայլով:

ԱՅԳԵԿՈՒԹՔԸ

Այդեկութիւնը Հաւաւցիներու համար նման էր տօնական օրերու: Շարաթ մը առաջ պէտք էր պատրաստութիւններ տեսնել. կողմները պատրաստել, նորեր գործել, փոքրիկներուն համար ձեռքի կողովներ գործել: Մեծ ու պզտիկ ետուկերի մէջ էին. եկողը այդեկութիւնը էր:

Տղաներ փողոցներ շրջան կ'ընէին, պոտայով այդեկութիւն է:

Խաղողի առատ տարիներուն դուրսի դիւրացի հայ բարեկամներ Հաւաւ կու գային օգնելու համար: Հաւաւի մէջ առանց այլևի չկար ո՛չ մէկ բնտանիք. շատեր քանի մը այլիներ ունէին: Այդին մշակել, հող սանիլ, հայուն ամենախիբի զործն էր:

Երբ խաղողները կը սկսէին հատունալ, իր հողերը կը ծանրանար: Հաւաւցիին դժուար գործերը պազար ըսուած տուրքի մասին համաձայնութիւն գոյացնելն էր կառավարութեան հետ, որ դժուարութիւն կը յարուցանէր, զրդուած պէկերէն, որոնք նոյնպէս կը զրգոէին թուրք խուժանը, որ յարձակում գործեն մեր այլիներուն վրայ, քանի որ Հաւաւ պէկ շունէր որ անկէ վախնային. Հաւաւցիներու դիմադրական ուղին միշտ ալ ցոյց տուած էր թէ՛ կառավարութեան եւ թէ՛ թուրքերուն. քանի մը անգամ թուրքեր սպաննուած են դիշեր ատեն, գոգութեան եկողներ:

Կառավարութիւնը բարձր դին մը կը նշանակէր որպէս պաշարի տուրք, որ միանուազ վճարեր Հաւաւցին, չէր յաջողեր, որուն համար շատ անգամ այդեկութիւնը կ'ուշացնէր կառավարութիւնը: Աշնան պող օրերուն ամէն ոք իր այլին կը պահպանէր գիշերները: Վերջաւորութիւնը կ'ըլլար, որ կառավարութիւնը դարձնանկուած կիրակին խաղողները կշռելով % 10 տուրք առնէր:

Շարաթ մը առաջ դիւզին զգէրը կը պոտար փողոցէ փողոց, երկու երեկոներ, որ կիրակի այդեկութիւն է. պէտք է ամէն տուն պատրաստուի, շուտով խաղողները կթելու, այլիներու կեց. պարտէզներուն մէջ կշիռներ գրուած են ձեր խաղողները կշռելու, զազանի ճանապարհներով փախ տուողներ եթէ բռնուին կրկինը պիտի վճարեն:

Շատ ալի ունեցողներ, կիրակին առաջ խաղողները կթած,

այդին պատրաստ կ'ընէին, կիրակի առաւօտեան կանուխ կը սկսու-
ուէր: Կէտքին վրայ կը հսկէին, երկու Հաւաւցի, երկու կառավար-
ական մարդիկներ, կըսող եւ գրող, անունով մահանունով: Այդ
կիրակին չտեսնուած ետուղու մը կը սկսուէր. ոմանք սալլերով, ո-
մանք աւանդներով եւ շալկներով, կը բերէին խաղողները կողով-
ներով, կէտքէ անցընելով տուն կը տանէին:

Պատահած է ուրիշ տարիներ որ կառավարութեան կողմէ եր-
կու մարդ, Հաւաւցիներէն երկու մարդ նշանակուած, այգիէ այգի
կը մտնէին երկու կողմի համաձայնութեամբ, պաշարի քանակ կ'ը-
րոշէին, ամէն այգետէր քանի դուրուշ պէտք է վճարէ: Կառավար-
ութիւնը իրաւունք ունէր գիւղին պագաթը աճուրդի հանել, ով որ
էր ուզած գումարը վճարէր, ան կրնար սէր դառնայ պագաթին, շա-
հով մը գանձել Հաւաւցիներէն: Թուրքեր չէին համարձակած: Ոչ-
Հաւաւցի շահածով հայեր մնասով դուրս եկած են. աճուրդով պա-
գաթ առնողներուն դուրս ելլել Հաւաւցիներուն հետ, անկարելի ե-
ղած է. որովհետեւ գիւղը միատարր էր, բոլորը մէկ սիրտ մէկ հո-
գի, հաստատ կը մնային իրենց որոշումին վրայ:

Այն շարժումն որ այգեկուծքը տեղի պիտի ունենար, գիւղեր-
ները մեծ ուրախութիւններ տեղի կ'ունենային այգիներուն մէջ, ու-
տել, խմել, զուարճանալ, հրացանաձգութեան ձայներ ականջ կը
խրցնէին:

Այգեկուծքի շարժումն սովորուկ թուրքեր, խաղողի կողով-
ներ իրենց կանակնուն ամբողջացած, գիւղեր ցերեկ այգիներուն շուրջ
կը գտնային. որեւէ այգիի վրայ եթէ յարձակում գործէին, փայտ
բռնողը հոն կը վազէր. բռնուողները ազուտը ծեծ մը կ'ուռէին.
Թուրքեր զոյճ կ'ըլլային որ չբռնուին: Այդ անպիտան ցեղը, ծոլ,
անբան, այգի ունենալու անգամ աշխատանք չէին կատարէր: Անոնց
խելքն ու հոգին գոգութեան վրայ հիմնուած էր. հայուն կենդանի-
ները, արմտիքները, խաղողները, պտուղները գողնալով իրենց ապ-
րուտը ձարել, չկար ոչ աշխատանք, ոչ ուսմունք, ոչ դարպացում,
ոչ յատաճացում, որդուց որդի գեանափոր տուններու մէջ կ'ապրէին.
աւելի կոթ մը անգամ չէին կրնար շինել: Պարտապ տեղը չէր, որ Հա-
ւաւցիներու համար պիտի համարուած էր թուրքերու հետ ապրել
միևնայն գիւղին մէջ:

Թուրքեր կը տեսնէին հայուն ապրելակերպը, մաքուր տուն,
ապրել, պարտէյ, այգի, վարել, ցանել, հնձել, բնու չէին ընդօ-
րինակեր. յոյսերնին զրած էին ջարդի, թալանի վրայ, որ տեղի
կ'ունենար 20 տարին անգամ մը, նորէն մարդ չէին ըլլար. մէկ եր-

կու տարիէն կ'ըլլային նոյն անօթի թուրքը: Իսկ հայերը քանի մը
տարիէն նորէն ինքզինքնին կը շտկէին, որովհետեւ աշխատութեան
կը հաւատային, գիւղեր ցերեկ կ'աշխատէին, փրած, վառուած տու-
ները կը շինէին, կը շտկէին, շուտով իրենց նախկին դիրքին կը տի-
րանային, որովհետեւ արհեստաւոր էին, աշխատակէր էին:

Այգեկուծքէն վերջ, խաղողները քամուած, գինիի կարասները
լեցուած, ուսպի ամանները լեցուած, պատեղ, շարոց, շամիչ,
տեսակ տեսակ անուշեղէններ, խաղողի հիւթէն պատրաստուած պա-
հետի խաղող. տամնիկէս, տամնիկ քքու, թիւրուտն վրայ շարուած
սանձեր: Տանտիկներ մտանին բանային գիւղեր ցերեկ քովը կը պա-
հէր, մինչեւ Բարեկենդան, ամէն ինչ պէտք էր գտնուէր, հիւրերու,
բարեկամներու առջև ձեռնունայն չըլլային: Մայրեր հսկողութիւն
կը կատարէին տղայ գաւակներուն վրայ որ գաղտագողի մտան
չմտնէն. այժիկ գաւակներ շատ համեստ եւ հաւատարիմ էին: Մա-
ռանին մէջ միայն գինին կը մնար մինչեւ Զատիկ, Համբարձում, ո-
մանց գինիներուն հինը նորը կը կոխէր: Ինչքան անուշ էր, եղբւրած
գինին, ուշալ ըսուած անուշեղէնը, որ կարծր դուրմի չերտեր կի-
րով օծելէ վերջ կը թափէին սուպին մէջ, որուն համէն մարդ չէր
կշտանար. ա՛խ, այգեկուծք:

Այգեկուծքը լրանալէն յետոյ, խաղողները քամուած, գինիի
կարասները լեցուած, ուսպ, պատեղ, շարոց, տեսակ տեսակ պը-
տուղներով մտանները լեցուած, ներս մտնէր հոտէն չէր կշտա-
նար: Սովորութիւն եղած էր, ամէն շրջաններու մէջ, փորձառու կի-
ներ, խումբ կազմած, երեքով, հինգով, այցելութիւն կու ային ի-
րենց շրջանի տուններուն, հասկնալու համար, թէ ով ինչքան գինի,
ուսպ, շամիչ, պատեղ, տանձէ թթու, ուշալ, շարոց, եւսլին, ու-
նէր: Ուշաղբութեամբ կը քննէին նոր տուն կազմած երիտասարդ
կիներուն մտանները, որ ինչ կարգով շարուած են կարասներն ու
ամանները, անոնց խրատներ կու տային, պահետի պտուղները եր-
կար պահելու ձեւերը կը բացատրէին: Երկու շարժի կանէր այս
այցելութիւն տուող կիներուն տունէ տուն պարտիլը. ոմանց կողմէն
սեղան կը շտկուէր, շրջապատուած Աճէ աւելի կիներով, կ'ուռէին,
կը խմէին, կը գուարճանային, կ'արբենային, ոմանց կողմէն բըռ-
նած տուն կը տանէին: Այդ երկու շարժումն մէջ արբեցող կիներուն
ներս աչքով կը նայէին իրենց ամուսինները:

Գիւղին մէջ հազիւ քանի մը գինեմով մարդիկ կային. ամե-
նանշանաւոր գինեմոյր Պոյաճոնց Սաչատուրն էր, որ ամէն օր խը-

մած կը տեսնուէր: Գինին, օղին այնքան առատ էր, որ հարսանիքներուն, Մոսկովիին, Կազանիին եւ Բարեկենդանին ջուրի պէս կը դործածուէր. շատ քիչեր կ'արբենային, գիւղին մէջ կային շատ խումոզ կիներ իրենց տուներուն մէջ, ոչ արբեցողութիւն. այդեկութիւնը անուշութիւնը վայելողները կ'ըլլային, այն չբնոյ կիները, որ երկու շաբաթ աղուսը ժամանակ կ'անցընէին տունէ տուն:

ԱՐՔԱՅԱՎԱՅԵԼ ՀԱՐՍԱՆԻՔՆԵՐԸ

Հաւաքներու հարսանիքները կը կատարուէին Նոյեմբեր — Գեկտեմբեր ամիսներուն. կը տեսէր շաբաթ մը. պսակադուրթիւնը կը կատարուէր երկուշաբթի, առաւօտները:

95ի կոտորածէն առաջ, մէկ օրուան մէջ 35 պսակ տեղի ունեցաւ. Փափաղեան գերդաստանը այդ հարսանիքին երեք տղաներ ամուսնացուց, Մկրտիչ, Պօղոս եւ Կարապետ. երեք աղջիկներ հարս առաւ, Աննիկ, Մարգարիտ, Մըրուհի. հարս բերուած աղջիկներն էին, Սաչխաթուն, Մարիա, Մարիամ: Այսպէս մէկ օրուան մէջ երեք դուրս առաւ, երեք ներս բերաւ Փափաղեան մեծ եւ պատմական գերդաստանը:

Այդ հարսանիքին գիւղը շատ դժուարութեամբ 35 դոյզ տալու եւ զուտնա չալողներ ձարել կրցաւ: Գիւղը կ'զրաճիւթի կաթնայի պէս կ'եռար. ուտել, խմել, զուարճանալ, զէնքեր պարպել օղին մէջ: Թուրքեր, քիւրտեր մեծ փափաք ունէին Հաւաքի հարսանիքներուն հանդիսատես ըլլալու:

Եկեղեցիին մէջ պսակ կը կատարուէր, դուրսը տալու զուտնա կը չալուէր, մերկացած սուրերով վաճանախաղերուն կը մասնակցէին թուրքեր, քիւրտեր, մեծ եռանդով, ամէն մէկը իր խաղալու վարպետութիւնը ցոյց տալու հանդիսականներուն: Կուր, իրանացիներ տեղի չէր ունենար:

Փեսացուներ, հարսնցուներ ձիերով դատ դատ կը բերուէին եկեղեցի, պսակուողները դոյզ դոյզ կը կանգնեցնէին բեմին վրայ: Քաճանան կը սկսէր պսակի արարողութեան: Կնքահայրը, մերկ թուրք եւ խաչը պէտք էր բռնէր փեսային եւ հարսին զլուիններուն վրայ. հին հայկական սովորութիւն էր այս արարողութիւնը, ցոյց տալու համար որ Հաւաքը հաւատարիմ կը մնայ իր ազգին հանդէպ,

որ մենք թէ՛ խաչապաշտ եւ թէ՛ զօրապաշտ ենք:

Պսակի արարողութեան վերջ փեսան առջեւ, հարսը ետեւ, գլուխը ծռած, դուրս կը հանէին եկեղեցիէն, հարսնքօրի եւ հարսեղբայրի օղնութեամբ, անոնց ետեւէն փեսամանուկները, ամուսնացողներու ծնողները, ազգականները, բարեկամները, հանդիսականները, բոլորն ալ հարսանեկան զգեստներ հագած, ուրախ զուարթ եկեղեցիէն դուրս կ'ելլէին. դրան վրայ երկու ձիեր զարդարուած թամբերով, պտորաստ հարսին ու փեսային համար, որոնց վրայ կը բաղմեցնէին դատ դատ արքայական վայելքով, անոնց ձակատները արծաթափայլ նըշաներով բռնուած, փեսային զիբիլը, մերկ թուր մը եւ գլխարկ մը դրուած, ցոյց տալու որ մենք թագաւորութիւն ունեցած ենք, թագ ու սուր ունեցած ենք:

Փեսան թագաւորի պէս հպարտ, գլուխը բարձր բռնած, բաղմած ձիուն վրայ, անոր ետին նոր հարսը թագուհիի մը պէս բաղմած իր ձիուն վրայ, գլուխը խոնարհած, սեւ քօղով մը քօղքուած: Հարսնքօրն ու հարսնազրարը հարսին կողքերէն բռնած: Անոնց ետին խոնարհապան հարսնետրները պոսայ կանչելով, գովաբանելով հարսն ու փեսան, հարսն ու փեսային ձիերուն սանձերը բռնող փեսամանուկները զինուած վեցհարուածներով, շիք հագուած: Անոնց առջեւ նոյնպէս շիք հագուած երկու փեսամանուկներ, վեցհարուածներով զինուած, մերկ թուրերնին եւ վահաննին ամուր բռնած, խաղալով կը յատաճանային միշտ ու միշտ վեցհարուած պարպելով օղին մէջ, որոնց բնթացք կու տային հարսնետրները իրենց զէնքերով. մուխ, ծուխ. ձիերու սանձերը բռնողները կը պոսային՝ թագը թագին թագաւորին. ամբօխը կը պատասխանէր խաչացուցիչ ձայներով՝ Ամէն. սանձ բռնողներ նորէն կը պոսային՝ Սուրը կտրուի թագաւորին. ամբօխը նորէն կը պոսային՝ Ամէն. սանձ բռնողները նորէն կը պոսային՝ Աստղը փայլուն թագաւորին. ամբօխը նորէն կը պոսային՝ Ամէն:

Թուրք զիւղացի հանդիսականներ կը զարմանային. կատարեալ արքայական հարսանիք: Այսպէս էր հարսանեկան ընդունուած սովորութիւնը Հաւաքներուն, որ հին դարերէ ի վեր պահած էր հին հայկական բոլոր սովորութիւնները. Հաւաքը հին Հայաստանի մանրանկարն էր. մեծով պղտիկով զօրապաշտ. զէնք կրել բոլորին ալ բաղձանքն էր. արձակ, համարձակ, առանց վախնալու որ Օսմ. իշխանութեան տակ կ'ապրին:

Գիւղը երկարածեւ էր. հարսանեկան թափօրը, պսակի արարողութեան վերջ, գիւղին վարի ծայրէն վերի ծայրը պտորացողներ

հարսն ու փեսան թագաւորի ու թագուհիի նման, թափօրը որու սունին առջեւէն անցնէր, չամիչով, պաստեղով, զինով, սինի կը հանէր, ոմանք ուլ մը կը մորթէին հարսին ու փեսային առջեւ. փոզացնէր չամիչով կը ծածկուէին. բուռերով չամիչ կը նետէին հարսին ու փեսային վրայ, թաղը թագին, սուրը կտրուկ, ասպը փայլուն թագաւորին, միշտ կը պոսային, արծախուած զէնքերու խաչուցիչ ձայներով, մուխով, ծուխով ծածկուած թափօրը անընդհատ կը յտաջանար, մեծով պղտիկով հարսին ու փեսային ձիերուն առջեւ խաղալով, խնդալով:

Ջուրի պէս զինի կը սպառէր. մարդիկներ փորերնին ուռեցրնելու չափ կը խմէին. հանդիսական թուրքեր, քերական, գրացի զիւղեր կը գործանային որ Հաւաւը այսօրն ազատութիւն կը վաճիլէ: Այդ հսկայ թափօրը ամբողջ երկու ժամ կը քալէր, բոլորն ալ ուրախ զուարթ, ոչ մէկ կռիւ, հակառակ անոր որ բոլոր մարդիկ խմած, արբեցած. ամէն կերպով կը զգուշանային, որ հարսանեկան ուրախութիւնը փառաւոր անցնի:

Կարեւորութիւն չունէր, զիւղին մէջ զինուոր կայ, քաղաքէն զինուորներ անգամ Հաւաւ կու գային հարսանիք տեսնելու, որոնք կը հրաւիրուէին հարսանեկանը. գորով զինի կը խմցնէին անոնց, ըսելով անոնց այսօր հարսանիք է, պէտք է խմէք:

Այդ հարսանեկան թափօրը երբ հասնէր փեսային դրան առաջ, անոնց առջեւ ուլ կամ գառնուկ կը մորթուէր, հրացանի ձայները պէտք է տանապատկուէին: Մեր զիւղին համբաււոր Պօղոս Ազար ձէլալեանը իր ազուն Տիգրանին եւ հարսին զլուիններուն վրայ ափ մը լեցուն մանրուք ոսկի ցանած էր իրենց տան դրան վրայ, զեռ ձիերէն վար չիջած: Պօղոս Ազարին հայրը Սարգիս ձիւն Արթինը Սուլթանին հետ թափու խաղցոյ կցած է:

Հարսն ու փեսան ներս տանելէ վերջ կը բազմեցնէին զատ սենեակ մը իրարու քով, հանդստանալու համար. անոնց քով պէտք էր գտնուէր հարսնօրն եւ հարսնադրարը, եւ փեսամանուկները, որ զըրջ կերպով հսկէին, որ ճարպիկ տղաներ ու աղջիկներ բան չի գողնային նոր հարսին, նոր փեսային վրայէն. անոնց վրայէն բան գողնալը յաղթանակ կը նկատուէր:

Նոր հարսին ծնալքին կողմէն նուիրուած զգեստներու, դարձեղններու խոշոր ծրարը, նոր հարսին համար պատրաստուած, կը բերուէր հարսնետունը, կը դրուէր սեղանին վրայ, որ հասարակութիւնը տեսնէր ծրարին մեծութիւնը: Հարսին կողմէն մանուկ մը կը նստէր այդ ծրարին վրայ, որ պօզ կ'ըսէինք. մանուկը գրամական

նուէր առնելէ վերջ թող կու տար որ պօզը բանային, անոր մէջ գտնուածները ցուցադրէին հարսնետունը գտնուողներուն, որմէ յետոյ երկրցուէին միայն իրաւունք ունէր նոր հարսին քոյր վար սուսնելու, հասարակ սեւ քոյ մը ձգելու նոր հարսին զլխուն վրայ: Կրնաքահայրը, կնքամարը, հարսնադրարը, հարսնաքօրը բազմած սեղաններու շուրջ, հարսն ու փեսան պարելու կը հանէին. տափուրէին ու գունակներն զրամական առատ պարգեւ կը ստանային հանդիսականներէն:

Հարսնետունը կը ցնծար եղած ուրախութիւններէն ու զուարթութիւններէն: Աղջիկներ, տղաներ ներշնչուած օրուայ փառաւորութենէն, իրենց ամուսնութիւններու օրուան կը սպասէին: Հարսանիքի օրերուն տղաներ ու աղջիկներ իրարու կը ծանօթանային, նշանուելու խօսքեր կ'ըլլային. հարսանիքներու փառաւորութիւնը խթան մ'էր աղջիկներ ու տղաներ ամուսնանալու:

ՀԱՒԱԻԻ ՄԵԼԻՔՆԵՐԸ

Ըստ Պր. Կարեանի ուսումնասիրութեան Հաւաւը իր հիմնադրութեան օրէն սկսեալ մեկիւրցներով կառավարուած է, հին աստուծոյ ինչպէս տեղ տեղ նախարարութիւններով կառավարուած է: Հաւաւը որուն նախնական անունը Հայկ Աւան կցած է, իրենց կառուցած բլուրին պէս տեղուն, մնացած են կանգուն հաղարաւոր տարի, ցոյց կու տայ որ անոնք եղած են շատ զօրաւոր, մարտնչույ ցեղախումբ մը, ինքնիշխան, տիրապետող ամբողջ Բալասովխով: Երկու առաքեալները նկատի առած են Հաւաւը, որ ամէն ջանք, աշխատանք թափած են քրիստոնէացնելու:

Օսմ. պետութիւնն ալ իր հերթին հողադրկած է Հաւաւը, զանոնք տկարացնելու, գերի դարձնելու, անոնց ճամբան կտրելու, զանոնք շրջապատող թուրք ցեղախումբերու առջեւ:

Սակայն Հաւաւցիներու ազգային ոգին այնքան զօրաւոր եղած է, որ Օսմ. պետութիւնը չէ հասած իր նպատակին: Գիտութիւն, ուսմանք, արհեստագիտութիւն Հաւաւցիներուն մէջ ծաղկեալ վիճակ ունեցած է, որ կրցած է իր գոյավիճակը պահել:

Գրքի հրատարակութիւն չէ ունեցած հին շրջաններու մէջ որ Հաւաւի ըման պատմութիւնը գրուի: Միայն բերնէ բերան պատ-

մուսաճքներով բաներ մը պիտոցուած է եւ թարմ մնացած է շնորհիւ Հաւաւի զուտ հայարնակ մնալուն եւ մոլեռանդ քրիստոնեայ բլաւ-լուն, եւ լուսաւորչական:

Պր. Կարեան կ'ըսէր որ, եթէ վանքին մէջ պահուած մազա-դաթի վրայ գրուածքները ձեռք ձգած չըլլայինք, բոլորովին անգիր պիտի մնայինք Հաւաւի մասին: Այդ ձեռագիրները զիս եւ ձեր Մը-կըրտիչը աւելի զօրացուց որ Հաւաւը իսկապէս զօրաւոր անցեալ ու-նեցած է, որ անոնց մեղիքները եղած են անարկու քաջ մարդիկներ:

Ահարկու, քաջ եւ անվախ եղած է Հաւաւի վերջին մեղիք Չափ-գունը, որ զօրաւոր գիրք բունած է Շարիֆ Պէկի դէմ. Տօլպաչ Մեղ-քոնի մահամերձ ձեռուիւ պէկին խօնախին մէջ, պատեհ առիթ համարած է պէկը զիւղէն դուրս քշելու: Աննախընթաց բազմու-թեամբ ժողով կը դուստարուի զիւղին մեծ եկեղեցիին մէջ լսելու Մե-լիքին կողմէն ասնուելիք քայլը: Խօսողներ, ճատողներ, ժողովա-կանները յուսադրելով, քաջալերելով դանոնք միտձոյլ երկաթի կոյտի մը կը վերածեն: Բոլորը մէկ սերտ մէկ հողի, աներեւակայիլէ եռանդով կողք կողքի եկած:

Ժողովի վերջաւորութեան վերնատունին մէջ հաւաքուած կի-նեք աղիողորմ լաց ու կոծ մը կը փրցնեն, պուսալով. Մեղքոնը, Մեղ-քոնը պէտք չէ մոռնալ: Գոռում գոչում մը նորէն ծայր կու տայ, բոլորը կը սկսին պոռալ. Մեղիք, Մեղիք, ազատողն Աստուած ազա-տէ մեզ այդ բարբարոսին ձեռքէն:

Գանի մը օրուան մէջ, ճամբորդութեան բոլոր պատրաստու-թիւնները տեսած, խնամքով պատրաստուած բողբոջադիրը սուած, աստու մը կանուխ, Մեղքն ու իր երկու օգնականները ճամբայ կ'իյնան իրենց ձիերով, դէպի Տիգրանակերտ: Անոնք Հաւաւի մո-գերն էին, որոնց կ'առաջնորդէր Հաւաւի ազատութեան աստղը: Ա օրուայ ճամբորդութիւն պիտի կատարէին Տիգրանակերտ հասնե-լու: Հօտարտ, գլուխին բարձր բունած, ասպետական բարձր ուղիով մը ձիերու վրայ բազմած, երեք քաջեր, ոչ թէ ոչորմելի արարած-ներ, վալի փաշային գուլթն ու խիղճը շարժողներ:

Ասպետական ցեղի մը յաջորդող Հաւաւցին պէտք է ցոյց տայ իր իսկութիւնը, իր փառաւոր հազուատով, կապուտով: Մեղքը հաղած իր սուղնոց զգեստները, թանձր կերպաս, փայլուն, երկար վերարկուն, խոշոր փայլուն կոճակներով. աջ կողմի կուրծքէն վե-րէն վար համաշափ, առիուն օգակներ մինչեւ ծունկը հասած: Ա-նոնց մէջէն երկնցուած վերէն վար իր ախրան սերելի, ախրածելի, ուշադրութիւն զրուող փայլուն փառաւոր ծխամորձը, Հալպէն

կամ Պոլիսէն մասնաւոր բերուած: Անոր խոշոր գլուխին յարմար գոց մօտ Ֆէսը նման եւրոպական գլխարկի, լայն ճակատով, խոշոր փայլուն աչքերով, առիւծադէմք, պատկառապալու անձնաւորութիւն մը, նման կատարեալ վեհապետի մը, որուն խօսածները արժէք պէտք էր ունենար, իր պաշտօնական հազուատը կը հազնէր երբ կա-ռավարութեան ներկայանար:

Նոյնպէս շէք հազուած էին Մեղիքին երկու օգնականները:

Անոնք երբ վալի փաշային կը ներկայանան, իրենց ախրան բարձր ոճով բողբոջադիրով, կը հիանայ վալի փաշան, որ Հաւաւի մէջ զբուած է բողբոջադիրը, որ իրեն ներկայացողներ ոչորմելի զիւղացիներ չեն: Մեղիքը կու տայ բացատրութիւններ եւ կ'ըսէ.

— Մենք Օսմ. կառավարութեան հըռու եւ հնազանդ խոշոր զիւղ մըն ենք, աշխատող, վարող, ցանող, կառավարութեան մեծ շահ ցուցնող միակ մեծ գիւղը, որ կառավարութեան տոմարին մէջ ոչ մէկ բողբոջ արպէս անհնազանդ, եղած ենք բարեկեցիկ զիւղ մը, բոլորս արհեստաւոր, Պոլիսի հետ կապ պահող, տասնէ աւելի սուլ-թանական պատուանշան կրող խալֆաներ ունինք Պոլիսի մէջ: Ամ-բողջ զիւղը զբող կարկացող, որոշ մասը թրջաղէտ:

Վալի փաշան անկէ վերջ, բողբոջադիրն մէջ զբուածներու ճըշ-գուլթիւնը հաստատող Հաճի Պայրախտարի վրայ ալ կը հիանայ, տեսնելով զայն բարձր զինուորականի զգեստներով, ուս-թուրք պատերազմներու ատեն շահած պատուանշանները:

Այսպէս եղած են Հաւաւցիները, որ կրցած են շահիլ իրենց դատը, ցոյց տալով իրենց աստուելութիւնները: Անոնք ոչ մէկ ատեն հալածուող, ոչորմելի, լացող, աղերսող չեն եղած: Այլ ասպետա-կան ուղիով մարդիկ, որ վաղուց թաղաւորած էր անոնց մէջ:

Երբ վալի փաշան զօրաւոր հաւատարիք կու տայ որ պէկը ան-պայման զիւղէն դուրս պիտի հանէ, Մեղիքը իր երկու օգնականե-րով, բարձր ոգևորութեամբ Հաւաւ կը հասնին, եկեղեցիին մէջ ժողով կը դուստարեն. մէկ զիւղերուան մէջ երեք հազար օսմ. սակի կը հաւաքուի: Կը հետադուրի Պոլիս դանուող Հաւաւցիներուն, որ Տիգ-րանակերտի վալին ապահովցուցած է Մեղիքը, որ պէկը զիւղէն դուրս պիտի քշուի անպայման:

Պոլիսի Հաւաւցիներուն մէջ ալ կը հաւաքուի երկու հազար ոսակի: Ամբողջը հինգ հազար ոսակի պատկառելի դուստար մը: Չոհո-ղութեան ուղին այդ օրէն մնացած է Հաւաւցիներուն մէջ, որ Ամե-րիկայի մէջ աղային բնոյթ կրող հանդանակութեանց կազմակերպ-ուած ձեռով, մեծ դուստարներով մասնակցած են:

Բայանովիտը նախապէս մաս կազմած է Խարբերդի, պէկերու սպիկցութեամբ դարձուած է Տիգրանակերտի նահանգին, որ Խարբերդի նահանգէն երկու անգամ հեռու է, որ բողոքողներ դժուարութիւն ունենան իրենց բողոքները ներկայացնելու նահանգապետին: Եղած բողոքները ապարդիւն անցած են:

Հաւաւր միակն է որ կրցած է իր բողոքը արժեցնել ամէն գրծուարութիւն, գրամական վատնում յանձն առնելով: Հաւաւցիներու տարած յայթանակը Շարիֆ պէկի վրայ բուսական մը կախուղցուցած է Խարբերդի, Չարսանճաքի, եւ Բայանովիտի պէկերը: Հաւաւցիներու տարած յայթանակը համատարած եղած է, Մելիք Չափդունը ուր որ երթար, հայ, թուրք սոքի կը կանգնէին:

Հաւաւի մելիքներուն երեքը յիշատակուած է Հաւաւի պատմութեան մէջ, որոնք եղած են այնքան քաջ եւ անվախ, որ կրցած են դուրս քշել իրենց օրուան պէկերը:

8 զաւակներու հայր, Թաշճեանի սպաննուելը Շարիֆ պէկին կողմէ, այնքան սպրած է Մելիք Չափդունի վրայ, որ վանքին մէջ դումարուած 7 անձնաւորութեանց խորհուրդին մէջ կը գոտայ գնդակ-գնդակ Շարիֆ պէկի, պէտք է սպաննել զայն:

ԳԻԻՂԻՆ ԲՆԱԿԱՆ ՀԱՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գիւղին գլուխը երկու մօրն հեռաւորութեամբ կար ինքնաբուխ աղբիւր մը լայն ձորի մը մէջ, ջրաղացք մը դարձնելու չափ առատ, շատ պաղ եւ աղի: Զուրին բխած սեղը սրբատաշ քարերով պատուած տասը սոք արամաղիծ եւ տասներհնգ սոք խորութեամբ, որ ծորակէ մը կը վաղէր դուրս գէպի քուր:

Ամէն տարի, Զատիկէն վերջ, կը մաքրէին այդ հօրը, որ գարունները հողով կը լեցուէր. բխած սեղը ցած էր փոքրիկ լեռան մը կուրծքին: Եթէ ամէն գարուն չմաքրէին, բխած ջուրը կը քիչնար: Պր. Կարեան եւ իմ սպիական Պր. Մկրտիչ Փափաղեան, գիւղը հանդիսով գերմանացի երկրախոյզ մը տարած ցոյց տուած են այդ ջրբամբարը. կարծիք հարցուցած են բխած ջուրը շատցնելու. երկրախոյզը բուսած է անոնց թէ այս ջուրը կը բխի արդէսեան ջրհորէ մը, որ կարելի է մէկէն պարպուի եւ ամբողջ գիւղը սպողելով քշէ տանի: Արդէսեան ջրհորներուն հետ խաղ չ'ըլլար:

Այդ աղբիւրին ջուրը կը գարձնէր քանի մը ջրաղացքներ, սարուէնները ջրել շարաթը անգամ մը եւ գիւղին տակի արտերը սպողել:

Գիւղին համար մեծ օրհնութիւն մ'էր այդ աղբիւրը:

Գիւղը ունէր երկու անուշ ջուրի աղբիւրներ, մէկը գիւղին վարի մասին, միւսը վերի մասին: Այս աղբիւրներուն ջուրերը կու գային հեռու սեղերէ, անտեսանելի, քարէ խողովակներով, կը լեցուէին փոքրիկ ջրամբարներու մէջ, նոյնպէս սրբատաշ քարերով պատուած, խոշոր, ծանր քարէ կափարիչով մը գոցուած: Այս ջրամբարներն ալ պէտք ունէին ամէն տարի մաքրուելու: Այդ աղբիւրներուն ջուրերը ամառը պաղ, ձմեռը քամաքօլ, շատ անուշ, գիւղին այդ երկու աղբիւրները շինուած էին նոյնպէս սրբատաշ քարերով, մաքուր սալալատակով:

Այդ ամբարուած ջուրերուն համար քանի մը քարէ քուրեր շինուած էին, ուրիշ վաղու ջուրերը ամէն ոք կուժերով տուն կը տանէր:

Հաւաւցիներէն ոմանք իրենց տուներուն մէջ ջրհորներ ունէին 20-25 սոք խորութեամբ, կլոր ձեւով, նոյնպէս քարերով պատուած, մարդ մը վար իջնելու եւ վեր ելլելու մեծութեամբ, այս ջրհորներն մաքրուելու պէտք ունէին: Այս ջրհորներու ջուրը կը գործածուէր կենդանիներու, լոգնալու եւ լուացքի համար, թէեւ շատ մաքուր, բայց անհամ էր:

Գիւղը ունէր քարածուխի հանք մը չորս մօրն հեռաւորութեամբ, գետնին երեսները, բայց շատ դէժ հող ունէր: Ըձլալեան Սարգիսը, գիւղին մէջ երկաթագործութիւն ըրած ատեն գործածած է: Կարծեմ կառավարութիւնը արդիլած է յետոյ:

Հաւաւր ունէր շինաքարի, սպօրիքի քարահանքեր, ունէր կըրաքարի հանք, գետնին սալալատակելու քարահանք, որ քար ատաղձ կ'ընէինք, որ գետնէն դուրս հանել շատ դիւրին էր, ունէր գոյ կապոյտ գոյն: Կրակի գիմացող քարահանք մ'ալ կար. Փափաղեան Արմենակ եւ Արամ այս քարերով շինել տունին իրենց հաց կօնու փուսը: Գիւղը ունէր կաւիճի հանք, կարասներ եւ ջուրի խողովակներ շինելու հողի հանք, որմէ շինուած կարասներն այնքան կարծր, փայլուն կ'ըլլային, որ շատ շարք տալու պէտք չկար: Գարբեր առաջ գիւղը կարասագործութեամբ դրալած, ատեն այս հողով պատրաստած եւ ծախած է Բայանովիտի ժողովուրդներուն մեր օրով այս կարասները մեծ քանակութեամբ կը տեսնէինք թագուած գետնիներու տակ: Տունի ամաններ շինելու կարմիր հող մը, տուներու ներսի եւ դուրսի պատեր, առաստաղներ ձերմիցնելու պատրաստ շաղախի հանք մը: Շատ հաւանականութիւն կար իւրահանքի, Կանտարածոր ըսուած խորունկ ձորի վաղած ջուրերուն երեսը:

ՔԱՐԱԿՈՓՈՒԹԻՒՆ

Ամբակումեան-Եղիազարեան միեւնոյն գերդաստանը, տիրացած քարակոփութեան արհեստին, կը դորձածէին զիւզին քարահանքը, որ ամէն Հաւաւցի ազատ էր երթալ իրեն համար քար կտրել, տուն ասնելու: Քարահանքը կը գտնուէր զիւզին զլուսը, երկու մը-դոն հեռաբութեամբ, ապարակ գետինի մը վրայ, քանի մը երեսուկուկ հօտերով, կից քարայրի մը: Անձրեւ, ձիւն եկած պահուն հոն պատասպարուելու:

Քարը դեռ հոգին մէջ կարմրադոյն եւ կակուղ էր, դուրս հանելէ վերջ կը կարծրանար եւ կաթիլի դոյն կ'առնէր. զիւրատաշ, ոչ շատ կարծր քար ունէր այդ քարահանքը, որ դարերով դորձածուած էր, եւ էջը խորունկնար, վրայէն որքան կտրէին, աակէն կը բարձրանար:

Ամբակումեան-Եղիազարեան հաստատութիւնը հմուտ արհեստաւորներ կը պատրաստէր, գեղեցիկ գերեզմանաքարեր, աղբուրներու քուռեր, աաշտեր, տուներու շինութեան քարեր, շատ քիչեր հանքէն կ'առնէին տունի վարի յարկը բարձրացնելու միայն, սուղ արժեքուն համար: Քարահանքը բաւարարութիւն կու տար Հաւաւի շրջանի բոլոր գիւղերուն:

Ամբակումեան-Եղիազարեաններ հմուտ էին աղօրիքի, ձէթի հանքի համար քարեր պատրաստելու, տուներու համար փոքրիկ երկանաքարեր կտրիտ, պղուր աղալու համար:

Աղօրիքներու քարահանքը կը գտնուէր զիւզէն վեց միոն հեռու փոքրիկ լեռներու մէջ. քարը բաց կապոյտ դոյն ունէր, զըծուարատաշ էր:

Հաւաւի հիմնադիրները եղած են իմաստուն մարդիկներ, որ տիրացած են այսպիսի հանքով հարուստ հողամասի մը, որ իրենց յաջորդները քաջ եւ զիմադրական սպի ունեցողներ, որ պահած են իրենց պապեանական ժառանգը կեր շրջելով զիրենք շրջապատող բարբարոս թուրքերուն: Յիշատակութեան գովասանք մը եւս Հաւաւցիներուն համար:

ԵԿԵՂԵՅԻՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Գիւզին երկու քահանայ հայրերը, Տէր Ասատուրն ու Տէր Թորոսը ձերացած, երիտասարդ քահանայի մը պէտքը կը զգան:

Սորհուրդ մը կը դումարեն եկեղեցիի անմիջական հետաքրքրուողներով: Այն ատենները անդամական ժողով դումարելու զըրութիւն զոյութիւն չէ ունեցած գիւղերու մէջ: Գումարուած խորհուրդը երկու քահանաներով յարմար կը նկատեն Պր. Պաղտատար Փափաղեանը, ուսուցիչ, երաժիշտ, եկեղեցիին նուիրուած անձնաւորութիւն: Եկեղեցիին բեմէն ալ կը յարտարարուի քարոզիչ քահանայէն որ Պր. Պաղտատարը Ուրֆա պէտք է զրկուի քահանայ օծուելու: Գիւզին մէջ ոչ մէկ առարկութիւն Պր. Պաղտատարի հանդէպ, գտնելով զայն արժանաւոր մէկը, իր բարքով, վարքով, իր ունեցած գիտակցութիւնով:

Այդ շրջաններուն վանքը առաջնորդ չէ ունեցած: Պր. Պաղտատար Ուրֆա կը հասնի: Քննութիւն կը կատարուի եւ յարմար կը նկատուի քահանայ օծուելու: Սակայն Փափաղեաններու զէմ անձնական հակառակութիւն ունեցող երեք անձնաւորութիւններ, զիւզական գործերու մէջ ձայն ունեցող, պաշտօն վարողներ, տըրուած որոշումը վիժեցնելու շարամտութեամբ, կը համոզեն Կ. Վարչութեան ատենապետը, անոր անունով հեռագիր մը կու տան Ուրֆայ:

Կիրակի առաւօտուն Պր. Պաղտատար եկեղեցի կ'երթայ օծումը ստանալու: Սորէն Եղիսկոպոս Մխիթարեան հեռագիրը ցոյց կու տայ, Բալուի թեմի Կ. Վարչութեան անունով, որ կ'ըսէ, Պր. Պաղտատար Փափաղեան անարժան մէկն է քահանայ օծուելու: Սորէն Եղիսկոպոս կ'ըսէ. Պրն. Պաղտատար, գաւառնորէն եկողներէն շատ քիչեր ցոյց տուած են ձեր ունեցած կարողութիւնը: Ձեր զէմ առնուած քայլը բոլորովին թշնամական է: Գնա, հաշտուիք անոնց հետ, նորէն եկուր, քեզ կ'օծեմ:

Քահանայացու Փափաղեան տրտում տխուր ետ կու գայ Հաւաւ: Այս չարարատիկ լուրը կը տարածուի, Հաւաւի եւ Բալահոփիտի գիւղերուն մէջ: Փափաղեան գերդաստանը ըլլալով Հաւաւի ամենամեծ եւ գիտակից գասակարգը, անհանդուրժելի գտնելով ի-

բննց դէժ առնուած այս թշնամական քայլը, ժողով կը գումարեն իրենց տան մէջ, իրենց անմիջական բարեկամներով, քառասուն հոգի, բոլորն ալ յուզուած, բորբոքած, որոշում կու տան բարոյական լաւ հարուած մը տալ այդ երեք դաւաճաններուն:

Որոշումը կ'ըլլայ զբաւել զիւզին միւս եկեղեցին. զիւրը ունէր երկու եկեղեցի. Ս. Աստուածածին եւ Կաթողիկէ եկեղեցի: Վերջինս յատկացուած էր Ծնունդի եւ Չատիկի տօներուն: Ժողովականները կ'առնեն իրենց քայլը, սոսնց այլեւայլի:

Իրերկուան կը զրկեն երեք զինուած երիտասարդներ Տէր Աստուր քահանային տունը, Կաթողիկէ եկեղեցիին բանալիները պահանջելու: Տէր Հայրը կ'ընդգիծանայ, տղաները կ'ըսեն անոր որ եթէ բանալիները չտաս, բռնի կերպով քեզ ժողովին պիտի տանինք. այս է ժողովականներուն որոշումը որ պիտի գործադրենք: Բանալիները կը ստացուին: Եկեղեցիին կ'անցնի ժողովականներուն ձեռքը:

Լուրը կը տարածուի ամբողջ զիւզին մէջ, որ Փափաղեանները զրուած են Կաթողիկէ եկեղեցին, բաց պահելով հասարակութեան առջև, երեկոյ, առաւօտ, կանոնաւոր կերպով, եկեղեցին բոլորովին լուսաւորուած, տաճարը լուսափայլ վիճակի մէջ:

Փափաղեանները կը հասնին իրենց նպատակին. հակառակորդներու կողմէ ոչ մէկ զիմադրութիւն, որոնք չնչին թիւ կը կազմէին: Ժամերգութիւն կը կատարուի, առանց քահանայի, կիրակի եւ լուր օրեր, փոխապատկիւն, գրքերու ընթերցում, Աւետարաններու ընթերցում մեծ եզրօրս Արմենակին կողմէն, Պոլիս ուսմունք առած, երաժիշտ, ուսուցիչ, ուրարակիր սարկաւազ:

Գիւղին ճնշող մեծամասնութիւնը պինդ կանգնած Փափաղեաններու կողքին, արգար կը գտնեն անոնց առած քայլը, որոնք իսկապէս ներկայացուելիք զերդաստանի մը համբար կը կրէին: Բոլորն ալ կրօնաւոր, եկեղեցասէր, գրող, կարգացուր, ձայնաւոր, երաժիշտ: Եկեղեցիին երկու դասերն ալ լեցնելու չափ. մեծով պղտրակով եկեղեցական բոլոր արարողութիւններու ծանօթ:

Քահանայացու Պաղտասարը բոլորովին փառաւորուած, իր եզրայրը քաղցրանուէլ ձայնով Պետրոսը, եզրօրորդին բոլորովին երկասարգ ուսուցիչ, երաժիշտ, եւրոպական, հայկական նոթա գիտող, օժուած սարկաւազ Պոլիսի մէջ, արտօնուած Աւետարաններ կարգալու: Շրջապատուած խումբը Փափաղեաններով բոլորն ալ երգող, ընթերցող, արձակ համարձակ, պատկառելի երգչախումբը, բոլորն ալ մեծով պղտրակով հաղուած եկեղեցական գոյնզգոյն չափիկներով: Տէր Ստեփանոսի արժանի թողնիկները, բոլորն ալ ա-

ռանց բացառութեան նուերուած Հայ Եկեղեցիին հոգիով սրտով Հաւաւի մեծամասնութեան յարգանքին արժանացած զերդաստան մը, որ շնորհիւ իր զիտակցութեան կրցաւ իր կորստուած վարկը վեր բարձրացնել իր ստած յանդուգն քայլերով, Փափաղեաններու արտակարգ իմացականութիւնը մինչև վերջ գովարանուած է Հաւաւի մէջ եւ Հաւաւէն դուրս բոլոր ժողովուրդին մէջ:

Փափաղեաններ Հաւաւի մէջ ոչ միայն եկեղեցասէր, կրօնասէր, երաժիշտ, ուսուցիչ, քահանայացու, այլև եղած են լաւ հաշուադէտներ, զիւզին գործերը վարելու, գիւղապետներ, գրագիրներ եղաւ Մինասը, Եազնի երկու Սարգիսները միշտ ալ գնահատուած էին, եւ Հաւաւիներու եւ կառավարութեան կողմէն անկեղծ, մաքուր գործ կատարողներ:

Փափաղեաններու զիտակցութիւնը ժառանգական է, զիւզին ամենահին զերդաստանը, լաւ հասկցող եւ հասկցնող, ոյժ ներկայացնող, որ կրցան մեծ շառաչուն սպտակ մը տալ զբաւելով եկեղեցիին:

Գեո մանուկ էի, տասը տարեկան, լաւ կը յիշեմ, Չատիկը տօնեցինք մեր զրուած Կաթողիկէ եկեղեցիին մէջ մեծ բողոքութեամբ, առանց քահանայի: Միւս եկեղեցիի դատարկութիւնը զգալի կերպով յուսահատեցուցեր էր երկու քահանաները, որ Ազգային Կ. Վարչութեան ուշադրութեան յանձնած էին:

Այդ շրջանին վանքը առաջնորդ չէ ունեցած. Կ. Վարչութիւնը Բալու քաղաքին Հաւաւ գալով հաշտութիւն կը դոյտցնէ երկու հատուածներու մէջ: Հեռագիր տուողներուն ստորագրութիւնները կ'առնէ, Պր. Պաղտասար Փափաղեանը նորէն Ուրֆա զրկելու, քահանայ օժուելու: ԳՏի կատարածը վրայ կը հասնի: Կոտորածէն վերջ քահանայացու Պր. Պաղտասար կ'երթայ Ուրֆա, Խորէն Եպիսկոպոսէն կը ձեռնադրուի:

Լաւ կը յիշեմ, ամբողջ զիւզը առօք փառօք գնաց զիմաւորելու գեո զիւզ չմտած, զլիսաւորութեամբ Խորէն քահանայի եւ զղետաւորուած զպրաց դասի առաջնորդութեամբ: Կարելի չէ նկարագրել ամբողջ զիւզի ուրախ, զուարթ զգացումները: Բոլոր զիւզը գնահատելով անոր կարողութիւնները կը բողբային գայն տեսնել քահանայ օժուելը:

Կ'ըսուի թէ ամէն չարիքէ բարիք կը ծնի, ճիշդ եղած է այդ խօսքը: Եթէ Պր. Պաղտասար ԳՏի կատարածէն տուջ քահանայ օժուէր, զո՞հ պիտի երթար: Այդ կոտորածին, ջարդարար թուրքեր որսի չունեցու պէս տէրտէրներ կը փնտէրին սպաննելու: Միւս չղի-

մանալիք գէպքեր տեսած եմ: Բարբարոս թուրքեր հրկնու Քեաշիշ ըսելով կը յարձակէին անոնց վրայ, տեղն ու տեղը կը սպաննէին: Այդ կոտորածին մեր զիւղին երկու քահանաներն ալ զոհ դացին: Բալահոփիտի մէջ շատ քիչեր ազատեցան: Այդ կոտորածին 200.000 Հայեր ջարդուեցան: Ի՞նչ բռաւ կեղծ ու պատիր քրիստոնեայ Եւրոպացին. ոչինչ: Նորէն ու նորէն թուրքը պաշտպանեց յանուն իր շահերուն: Բողոքականութիւն ընդունող Հայեր պաշտպանուեցան իրենց պաշտելի Եւրոպայի բողոքական կառավարութիւններէն: Հիմակ ալ կարգ մը խուլիզաններ պօլշովիք Ռուսիոյ թէզը կը պաշտպանեն, ստրկութիւն ստրկութեանց: Հին դարերէ ի վեր իմաստուն Հաւաւը ոչ միայն թուրքերու այլեւ այդ կեղծաւոր Եւրոպացիին չէ թողուցած որ բողոքականութիւն հաստատէ Հաւաւի մէջ:

Մնալով հաւատարիմ Հայաստանեայց Եկեղեցիին, քաջ դիտնալով որ կրօնափոխութիւնը զիրենք չի փրկեր այդ բարբարոս թուրքին ձեռքէն: Աւելի զիրենք պիտի ստրկացնէ: Հաւաւցիին համար կրօնափոխութիւնը համազօր է ազգուրացութեան:

Գիւղին միասնականութիւնը պահելու, իր ազգային ոգին աւանդարտ պահելու միակ միջոցը, հետեւիլ իր նախնիքներուն ճանապարհին, ասանց չեղելու, որուն շնորհիւ մնացած է անքանդելի, զուտ հայ, կրօնող, մարտնչող իր ազատութիւնը պահող եւ պահպանող:

Հայաստան աշխարհի մէջ չէ գտնուած Հաւաւի պէս միատարր, միահեծան զիւղ, քաջ եւ անվախ իր իրաւունքները պաշտպանող: Գիւղին մէջ չկար վախ ազդող թուրքը, չկար ստրկութիւն, չկար պաշտութիւն քորոզող պատուելի դասակարգ:

ՕՐԷՆԱԳԷՏ ՆՇԱՆ ԷՖ. ՔԷՕՍԷԿԱՆ

Վարդանանց պատերազմի օրերէն սկսեալ, Հաւաւը պահած էր սովորութիւն մը, որ Վարդանանց շարթուն թուր կապած իրարու ալիքութեան կ'երթային, Վարդանանցը շնորհաւորելու: Նշան ԷՖ. Քէօսէկան, Պոլիս ուսմունք առած, քաջ եւ անվախ, Ազգային Ընկերութեան խմբավար, թուր մը կողքին կապած, զիւղին խահուէն կ'այցելէ ցերեկ ատեն:

Հաւաւի ոխերիմ թշնամի Քիւրում զիւղացի Գալօն կ'ըսէ. զուր, հայերդ, իրաւունք չունիք թուրով պտըտելու:

Հոն գտնուող հայասէր կարիտանցի քիւրտ Սըլօն կը պատասխանէ Գալօնին. Հաւաւցիները քաջ ժողովուրդ են, իրաւունք ունին զէնք կրելու. անոնք յաջողեցան իրենց պէկը զիւղէն զուրս քշելու, հրապարակով անոր խօնախը քանդելով. քու զիւղէդ 60 հոգի երեք ամիս բանտ պահելու. հիմա զուր պատմէ ձեր քաջութիւնները:

Գալօն կը լռէ:

Քիւրտ Սըլօն 95ի կոտորածին շատ մը հայեր պատուարած էր: Անդամ մը պատահմամբ թուրք հազարապետ մը հինգ զինուորներով զիւղը կը զիւղէր: Գիւղապետը Նշան ԷՖ. Քէօսէկանին լռել կու տայ, որը հազարապետին հետ սեղանին շուրջ խօսած ատեն, այնպիսի դրական բարձր բառեր կը զործածէ, որ հազարապետը չի հասկնար, եւ կ'ըսէ. Նշան ԷՖէնտի, յայտնի բան է որ դուն բարձր ուսմունք առած մարդ ես. քիչ մը պարզ խօսիր որ հասկնամ:

Հաւաւի մէջ Քէօսէկանին պէս բարձր ուսմունք ատնողներ անպակաս եղած են: Տիւրքանակերտի, Սարբերդի դատարաններուն մէջ պէկերու դէմ բացուած դատերը պաշտպանած են: Նշան ԷՖ. Քէօսէկանը վերջին տարիները, Բալու քաղաքին դատարանին առջեւ դատեր պաշտպանած է, միշտ ալ յաջող զուրս եկած է:

Նշան ԷՖ. Քէօսէկան դատեր կը վարէր դատարանին մէջ, ուսուցչական պաշտօն վարած է թէ՛ Հաւաւի մէջ եւ թէ՛ ուրիշ զիւղերու մէջ: Վերջին ծայր համեստ, քաղաքավար:

Շատ փոքր հասակիւ մէջ, կը յիշեմ, անոր պղտիկին՝ Նղիւսի յիւսնուելը իրենց տան մէջ, վեցհարուածին հետ խաղացած ատենը:

Արտակարգ ուշիմ մարդ եղած է Նշան Էֆ. Քէօսէեանը: Գճի կոտորածը դուշակած է: Գիւղի դպրոցին մէջ դասուանդած օրերուն, բարձրագոյն աշակերտներուն կ'ըսէ եղեր. անօթի կենալու վարժուեցէք, կոտորածը պիտի գայ, դուք պիտի չկրնաք հաց ձեռք ձգել:

Քէօսէեանները գիւղին հին գերդաստաններէն եղած են: Օսմ. կառավարական շէնքեր կառուցանող, սուլթանական պատուանշան կրող խաղիքներ տուած են: Կ'ողբամ, հազար անգամ կ'ողբամ Նշան Էֆ. Քէօսէեանին կորուստին վրայ: Մեղի, բարձրագոյն աշակերտներուն կը ստիպէր որ թրքերէն կարդալը լաւ սորվինք, թէեւ թուրքը անիծեալ ազգ է, որմէ բարիք պէտք չէ ակնկալենք: Թրքերէն կարդալ-գրել սորվելը անոր բարիք ընելու համար չէ: Այլ թշնամիի մը լեզուն, գրելն ու կարդալը սորվելը շատ կարեւոր է գոյն յաղթահարելու համար:

Քէօսէեանը կատարեալ յեղափոխական մարդ էր, լաւ գիտավարժ, եւ գէշ գործածող: Ամառը, դեռ դպրոցները շփակուած, աշակերտները գրօսանքի կը տանէր գիւղէն դուրս, պարտէզներու մէջ, փայտէ գաւազաններով սուրճամարտիթիւն կը սորվեցնէր եւ կ'ըսէր. Ժամանակը պիտի գայ, որ մենք հայկական կառավարութիւն, հայկական բանակ պիտի ունենանք, գինեավարժութիւն սորվեցէք:

ՀՈՂԱԳՈՐԾ ԹՂԹԻԿ ԱՄՐԳԻՍԸ

Մեր գիւղին ունեւոր գերդաստաններէն, Թղթիկանք, Դիւղլանք, միեւնոյն գերդաստանի գաւակները, խելացի, արհեստաւոր մարդիկէն էին, առատածեռն, աչքը կուշա: Թղթիկանք հողագործ էին: Թղթիկ Սարգիսը հողին հողին կը հասկնար: Թղթիկանց ջաղացքը, Թղթիկանց ձէթի հանքը, ձին: Դիւղլը ամէն ոք գէշք ունէր. անոնց խօլօն տարբեր գէշք էր, խօլօն երկար թօփխանայ հրացաններ. Սարգիս արարը, փողը կարած, կարճեցուցած էր գիւղէն դուրս գիւրին պարտցնելու համար. անոր գնդակը նորէն շատ հեռու կը զարնէր. սեւէ գէնք գործածող չէր մերժուեր. Սարգիս արարը շատ սիրով կը յանձնէր, եւ կ'ըսէր, նորէն ետ բերէք: Այս բարեսիրտ մարդը շուժմայ բեռցած սայլը երբ դաշտէն տուն բերէր, կը կանգնեցնէր իրենց տունին վերի զոան սաջեւ, որ հրապարակ մ'էր. ա-

նոնց խոշոր տունը երկու դռներ ունէր տունէն ներս մտնելու, վարի եւ վերի դռներ: Դեռ շուժման ներս չտարած, կը հաւարուէին սայլին շուրջ գրացի մանուկները. Սարգիս արարը ամէն մէկուն խորձ մը կու տար. սայլը կէս կ'ըլլար. բոլոր գիւղացիներ, գրացիներ կը հիանային այս բարեսիրտ մարդուն վրայ:

Գիւղացի դուրեր անոնց կողմը, մողին, ընձուղը, ոչխարը, աւանակը, ղէնքերն անգամ կը դողնային, Թղթիկ Սարգիս չէր յուսահատէր, կ'ըսէր, թող դողնան, Աստուած կու տայ ինձի նորէն:

Չարամիտ, նախանձոտ մէկը կրակի տուաւ անոնց կալը. ամէն ինչ վառեցաւ: Մարդը չյուսահատեցաւ: Գիւղին հողագործները անոր կալը նորէն լեցուցին, ցորենի, գարիլի, քաշնոցի գէղեր կանգնեցնելով, մեր Թղթիկ Սարգիսն է, պէտք է օգնել, ըսին:

Թղթիկանց տունին աակի յարկը կատարեալ արհեստանոց մ'էր. Սարգիս արարն ու իր տղան Մանուկ արարը, աշխատասէր, անխոնջ արհեստաւորներ էին. ծառաներով դաշտը կը մշակէին. իրենք հայր ու տղայ գիշեր ցերեկ շինութիւններով կը զրաղէին. ներս մտնէիք, կը զարմանայիր. տեսակ տեսակ սնտուկներ, դաւրակներ, ցորեն հոսելու մեքենայ, երկրադործական ամէն կարգի գործիքներ, ատաղձէ ջուրի ամաններ, տեսակ տեսակ փայտի ատաղձներ, ջրաղացքի վերարկերեալ գործիքներ, ջրաղացք շինելու մասնաւոր յատկութիւն ունէր:

Համբարձումեաններու պարտէզին զլուխէն անցնող ջուրին առջեւ փայտաշէն ջրամբարով ջաղացք մը շինելու ատեն ըսած էր. այդ տեսակ ջրաղացներով կարելի չէ աղօրիքի քար դարձնել այն արագութեամբ, իրարու վրայ դիզուած ջուրերու խորունկ օլուխները աւելի ուժ կ'արտադրեն աղօրիքը դարձնելու, եւ իրաւ ալ այդպէս եղաւ:

Թղթիկ Սարգիսը մասնաղէտ էր ծառանկութեան մէջ: Գիւղին վարի ծայրը, իրենց պարտէզին ցած գետինին վրայ բարտենի տունկեր զարնելու ատեն, հետաքրքիր գիւղացիներ իմացան որ Թղթիկը մեծ գործի մը ձեռնարկած է. կու գային տեսնելու իր բացած գործը. տեսան որ ձորէն անցնող ջուրերուն նեղ անցք մը բացած է, լայն մասը յատկացուցած է տունկ զարնելու. կ'ըսեն, Սարգիս արար, դուն թող տուած ես պարտէզին ընդարձակ գետինը, արիւն քրտինքով ձորը կը տափակցնես տունկ զարնելու: Անոնց կը պատասխանէ, որ խորունկ գետինին վրայ, ծառերն աւելի արագ կը հասնին, եւ երկար հասակ կ'ունենան:

Իսկապէս ալ, քանի մը տարիէն բարտենիները շուտ մը շու-

տով հասան, երկար հասակ ձգեցին: Թղթիկ Սարգիսը բնազիտու-
թիւն կարգացած չէր:

Մենք, գոյրացականներս, բնազիտութեան գասաւանդիչ գա-
սասունէն հասկցանք որ ցած գետինին վրայ տնկուած ծառեր շուտ
կը հասնին եւ երկար հասակ կը ձգեն: Բնազիտութիւնը կարգալէ
վերջ, աշակերտներս դարձացանք որ Սարգիս արարը անկասկած
փորձառութեամբ շատ բան սորված է:

Վաթսունը անցած մարդ էր, կ'ըսէր նոր բաներ սորվելու
բաղձանքը տակաւին թարմ է: Արտակարգ աշխատասէր էր. խոն-
ջինալ, յուսահատիլ չունէր. երբեմն քաղաք կ'երթար երկաթագործ-
ներուն տեսակ տեսակ գործիքներ շինել տալու: Փոքրիկ գործիքներ
միշտ հետը կը պտըտցնէր:

Երբեմն ինծի լուր կու տային որ Սարգիս արքր կէսօրուան կե-
րակուր տանէի ջրտունքի օրերը. կէս ժամուան համար կամ աւելի
խանութի կը գոցէի, կը տանէի. բնդհանրապէս պղլուր փիլաւ. ու-
տելէ վերջ կ'ըսէի. երթամ սա մօտի տեղէն քեզի խմելու ջուր բե-
րեմ, մեր դաշտին մէջ տեղ տեղ ինքնարուխ ազրիւրներ կար. կ'ը-
սէր. Տիգրան, ես անջրդի եմ, շարաթնեցող ջուր չիմեմ, հոգս չէ.
դուն կերակուրի ամանը տուն տար:

Անոր բաղձանքն էր ջրաուքը լմննալէն վերջ, բահը ուսին գը-
րած, իր տնկած բարտի ծառերուն հանդիպել, անոնց հասակն ի վեր
նայելու:

Այս հանճարեղ մարդը ծրագիր ունէր գիւղին գլուխը ջրոտ
մարդակետինին ջուրերը վար բերել, վերէն մինչեւ վար՝ գիւղը,
խոշոր հօտեր բանալով: Ան կ'ըսէր որ այդ մարդակետինին մէջ մեծ
քանակութեամբ ջուր կայ ամբարուած. մենք պէտք ունինք ջուրի
ստատօրէն գործածելու մեր պարտէզներն ու այգիները ջրելու: Այս-
պէս պատուական մարդիկ բոլորն ալ ոչնչացան:

ԽԱԼՖԱ ՄԱՐՏԻՐՈՍ ՊՕՌԱՆԵԱՆ

Կամուրջ շինելու մասնադէտ եւ սուլթանական պատուանշան
շահող այս պատուական Հաւաւցին, դունդ ու կլոր դուրով, ճեր-
մակ մորթով, իր ծանրութեամբ ուղեղ, միջահասակ, անթերի կապ-
մըւածքով, արտակարգ զիւրարորբք, քաջ եւ անվախ մէկ մըն էր:
Անոր ծնողքը Սառունէն պողթած, Հաւաւ հաստատուած էր:

Հաւաւ ապաստանողները եղած են հմուտ, ուշիմ, բռնակալ-
ներու ձեռքն փախչողներ. Հաւաւ ըլլալով ազատ, կիսանկախ, ան-
պէտ մարդիկներ անցած Հաւաւ կ'ապաստանէին ազատութիւն վա-
յելելու: Հաւաւը գորացնողները եղած են Պօսանեանի պէս շինող,
կառուցանող արուեստագէտներ:

Յ՛ի կոտորածէն առաջ սուլթանական ճնշումը այնքան խրա-
տացի էր, որ ալ համբերանք չէր մնացեր. հայեր, մասնաւորապէս
Հաւաւցիներ, կարող չէին ճամբորդելու նահանգներու մէջ գործ
փնտելու:

Հաւաւցիները ըլլալով շէնք շինող, կառուցանող մարդիկներ,
չէին կարող Պօրիս երթալ, աշխատել, դրամ շահել, գիւղ վալ, քանի
մը տարի առօրեայ գործերով դրապիլ, նորէն Պօրիս երթալ ու վալ:
Սուլթան Համիտի դրամ արգելքը անտանելի դարձած էր: Ազատա-
միտ, ըմբոտ Պօսանեանը կարող չէր տանելու, որ տարին քանի մը
անցած կը բարբոքէր եւ կը սկսէր բարձրաձայն հայհօյել կառավա-
րութեան ալ, թաղաւորին ալ, օրերով կը պոտար, կը կանչէր, քա-
րեր կը կպցնէր. անոր ձայնը ամբողջ գիւղը, պարտէզներն ու այգի-
ները կը լեցնէր: Ամէն ոք գիտէր որ Պօսանեանը նորէն բորբոքէր է:
Անոր հօգը չէր, գիւղը թուրքեր կան, աշարճի կայ, զինուոր կայ.
բոլորն ալ գիտէին որ Պօսանեանցիներն անգուսպ մարդ է, նշանաւոր
վարպետ է, անուն ունի, սուլթանական պատուանշան կրող խալֆա
է. շատեր գիտէին որ Բալուի Գլղլուի կամուրջը հաստատ հիմի վրայ
դրած է, որուն ոչ հեղեղը, ոչ ալ ջուրերու յորգումը կրնային քան-
դել, որ ճամբորդներ անվախ կը քալէին անոք վրայէն:

Բալուի կառավարութիւնը կը կանչէ Պօսանեանցիներ, Բալուի
կամուրջը նորոգելու, որ հին ժամանակներէ ի վեր կար, բայց միշտ
փրփրուէ, ճամբորդներ կը վախնային անոր վրայէն քալելու: Ատկէ
աւելին, երբ գետին ջուրերը կը յորդէին, ջուրը այնքան կը բարձ-
րանար, որ կամուրջը կ'առնէր կ'երթար: Պօսանեանցիներ կը խոստանայ
կառավարութեան որ կամուրջը այնպէս հաստատուն կրնայ շինել,

որ աշխարհը եթէ կործանէր, կամուրջը չկործանէր:

Պայման կը դնէ որ ոչ ոք իր վրայ պիտի խօսի, ինք ըլլալով արտակարգ զիւրարորոք մէկը, համբերանք չունէր, և կրնայ կամուրջը կիսատ ձգել ու հեռանալ:

Կառավարութիւնը կ'ընդունի անոր դրամ պայմանը: Պօսանօզլին կը սկսի շինութեան, իր օգնականներով: Փախըր մատենէն կառավարական քննիչ մը կու գայ, կամուրջի շինութեան ծանօթանալու: զիտողութիւն մը ըրած պահուն Պօսանօզլին կ'ըսէ. Էֆէնտի, այս կամուրջը շինողը ե՞ս եմ թէ դուն ես:

Քննիչը առանց բերանը բանալու քաղաք կ'երթայ, կառավարութեան կ'ըսէ. այս մարդը ո՞ր կէ ճարեցիք, կարելի չէ հետը խօսիլ: Կը պատասխանուի անոր որ այդ մարդը արտակարգ ջլաշնոտ է, բայց նշանաւոր խալֆա է, որ ան սովորական պատուանշան ունի, մենք անկէ աւելի վարպետ մարդ չկրցանք գտնել որեւէ նահանգի մէջ:

Պօսանեանը կամուրջը կը շինէ, կը լմնցնէ, կը ստանայ լաւ վճարում:

Իսկապէս ալ կամուրջը կը մնայ անխորտակելի. ջուրերու յորդում, հեղեղներ այնքան կը բարձրանան որ կամուրջին վրայէն դուրսով կ'անցնին և կամուրջը չի վիշիւր:

Այս պատուական մարդը 95ի կոտորածին կը պաշտպանուի իր թուրք բարեկամներէն, ինչպէս շատ մը հայեր պաշտպանուեցան, և մահուրնէ ազատեցան: Ջարդէն վերջ, երբ հրապարակը խաղաղած է, ամէն մարդ զիւր կը վերադառնայ. տուն կու գայ նաև Պօսանօզլին իր ընտանիքով: զիւրին աւերակ վիճակը տեսնելով, կը կանգնի իր կիսաքանդ տունին դրան վրայ, և բարձրածայն կը հայհոյէ թուրքերուն ալ, կառավարութեան ալ: Գիւղացիներ կը հաւաքուին անոր շուրջը ու կ'ըսեն մեղմարար. մի հայհոյի, ամօթ է, զիւրէն անցնող ճամբորդ թուրքեր կը լսեն քու հայհոյանքդ, կառավարութեան լուր կու տան զուն զիւրը կրակի կու տաս:

Պօսանեան կ'ըսէ. Մօ յիմարներ, զիւրին ի՞նչը կրակի կու տան. ոչ դուռ մնացեր է, ոչ երդիկ. բոլոր զիւրը վառած, թափած, քանդած, տարած են:

Տունէն դուրս կու գայ իր կինը Ծուչան նազուկը ու կ'ըսէ. Հերիք է քու հայհոյանքդ, քեզ կը տանին կը կախեն:

Պօսանեան կ'ըսէ. Կնիկ, ո՞վ պիտի շտկէ իմ կախաղանս, թուրքը գործիք բռնել անգամ չի գիտեր:

Պօսանեան կը սկսի լալ. կու լսն նաև հանդիսատեսները, որ Պօսանեանին լալը չէին տեսած: Էրիկ կնիկ իրար փաթթուած, լալ լով ներս կ'երթան:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԿԱՐԱՊԵՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Մեր օրով տակաւին կ'ապրէին զիւրին մէջ քանի մը խալֆաներ, սովորական պատուանշան կրող խալֆաներ: Ասոնց կարգին էր Կարապետ Համբարձումեանը, հասակով, ոսկի մազերով, զեղեցիկ դէմքով, պատկառազրու, հայերէն, թուրքերէն զրող կարգացող, Պոլիս ուսմունք առած, քանի մը անգամ զիւրապետ եղած, իր արհեստին լաւ տիրացած, զծող և կառուցանող, Պոլիսի մէջ կառավարական շէնքեր կառուցանող, փաշաներու ապարանքներ, քաղաքային բազմիկներ շինող:

Արտակարգ ջլաշնոտ մարդ էր, իր արհեստին մէջ շատ զարգացած: Պոլիս եղած ատեն Հաւաի Ուսումնասիրացի դործօն անդամներէն եղած. ուսմունքի հաւատարմող, զոհուող անձնաւորութիւն մը եղած է, մեծ հող տարած է Ուսումնասիրացը կանգուն պատարճու տալու, եկած եկամուտներէն Ուսումնասիրացը նախանձելի վիճակի մէջ պահել, ի շահ Հաւաի դպրոցին:

95ի կոտորածէն վերջ, ինչպէս բոլոր գաւառացիները, Պոլիսէն աքսորուեցաւ իր բնակավայրը:

Ճարտարապետ Համբարձումեան, ինչպէս կարգ մը Հաւաքըներ, զիւր եկան, ոմանք դրամով, ոմանք առանց դրամի: Ճարտարապետ Համբարձումեան կրցաւ շուտ մը շուտով շէնքեր կառուցանելու գործի ձեռնարկել Խարբերդի, Ջարսանհալի, Տիւրքմանկերտի նահանգներուն մէջ, շնորհիւ իր ունեցած ճարտարապետի պատուանշանին:

Ան յաջողեցաւ Խարբերդ Մազրայի մէջ կառուցանելու Գերմանացիներու որբանոցը և Բողոքականներու դպրոցը:

Առևտուրի պատճառով տարին քանի մը անգամ Խարբերդ Մազրան երթալու պարտաւորուած էր. ինձի համար մեծ հաճոյք էր շարաթ մը հոն մնալը, մանաւանդ որ իմ մօրաքոյրս ալ հոն հաստատուած էր:

Անմոտանայի էին այդ օրերը ինձի համար: Համբարձումեան հայի շէնքերուն հիմքը դրած, հայ ու գիտողներու խումբեր անպակաս էին հոն ուշ ուշով գիտելու կառուցումն ու շնորհալի ճարտարապետը, որ ձեռքին բռնած յատակագիրին թուղթը, դրագիրը իր սոփեւ արագ-արագ շրջան կ'ընէր նոր սկսուած շէնքին շուրջ: Բարկութեանն իր գիմագիծը կանաչ դոյն առած, նկատելի էր ամէն օրի համար. Համբարձումեան արտակարգ բարկացող մէկն էր. չափազանց ուղղամիտ:

Ամիսներ ետքը երբ նորէն Սարրերդ դացի, տեսայ շէնքերը լրացած, երկու տիտաններու պէս կանգնած Մազրայի հրապարակին վրայ: Անոնց քովէն անցնողներ հիացումով կը գիտէին, ըսելով, ինչ ձեռք, ինչ ուղիղ ունեցող մէկը եղած է այս շէնքերը կառուցանողը:

Հաւացիներու թողած բարձր տպաւորութիւնները Սարրերդը միշտ յիշած է. Շարիֆ Պէկի դէմ բացած ահարկու դատավարութիւնը, Կեղրոնականի տեսուչ Պր. Յակոբ Սիմոնեանը, երկու նշանաւոր շէնքերու կառուցանող ճարտարապետ Համբարձումեանը: Ասոնցմէ վերջ, Փօլիս Համախնի դէմ անպիտան մաքառումը, որ ջարդի, կոտորածի լախտը կախուած էր հանուր հայութեան զլխուն վերեւ: Համբարձումեանները գիրգին արդասէրներէն էին:

SULOH MUJOSU

Հայ մը երբ արտակարգ քաջութիւն ցոյց կու տար, թուրքերը դայն տալու կը կոչէին, խենդ: Մխիթ Պաղտիկը եւ Մխիթ Մարկոսը երկու եղբայրներ, շէնք կառուցանողներ, սուլթանական պատուանշան կրողներ, ուսու-թրքական պատերազմին շատ զբաղ վաստակած, Հաւացի 35 հոգինոց խումբի մը գլուխն անցած, Երուսաղէմ ուխտի կ'երթան:

Դեռ սրբավայրը չհասած, անմարդարնակ ճանապարհին վըրայ, աւաղակախումբէ մը կը պաշարուին. քանի մը հարիւր կանգուն հեռաւորութեամբ, աւաղակապետ անձնատուր կը պոսայ: Մխիթ Պաղտիկը զինուած հրացանով եւ խաբատաղ վեցհարուածով, առանց վայրկեան կորսնցնելու, քարի մը ետեւ գիւրք բռնելով կը կրակէ աւաղակներուն վրայ: Հրացանը նոր ընդհանրացած էր: Աւաղակները

կը հիանան, կը զարմանան որ կարուանը զինուած ուխտի կ'երթայ: Մխիթ Պաղտիկը կը կրակէ իրարու ետեւ. հինգ հոգինոց աւաղակախումբին շարք կը փախչին սարսափահար:

Աւաղակներուն պետը իր խոշոր վահանին ետին պատկած, չի փախչիր: Նախապէս յամառած, յետոյ ալ կը վախնայ փախչել, հրացանի գնդակներէն զոհ չերթալու համար:

Մխիթ Պաղտիկը խարատաղը ձեռքին, կը յառաջանայ աւաղակին վրայ: Կը տեսնէ որ աւաղակապետը վախէն սարսափած է: Մխիթ Պաղտիկը կը հարցնէ անոր. Դուն ո՞վ ես, ի՞նչ ես, այս վահանը ուրի՞շ ստացած ես: Աւաղակապետը կը պատասխանէ. Ես կը պատկանիմ Զանկիմ Արապի ցեղախումբին, մեր ցեղը այս վահանները կը ստանայ Անդլիայէն: Մխիթ Պաղտիկը կը հիանայ վահանին վրայ, որ իր հրացանին գնդակները չեղուած են անոր մակերեսին վրայ առանց ծակեր բանալու:

Մխիթ Պաղտիկը կը տանի աւաղակապետը իր խումբին մէջ, կը կերակրէ, քանի մը ոսկի տալով անոր, կ'ըսէ. Մենք հայ ենք, բոլորս ալ, եւ կ'ըսէ, ջանացէք հայերու նեղութիւն շտալ. աշխարհի շարս կողմը դռնուած բոլոր հայեր, ոչ ոքի իրաւունքին չեն զպած:

Աւաղակապետը մեծ դոհունակութեամբ կը հեռանայ: Հաւացիներու խումբը Երուսաղէմէն զիւր կը վերադառնայ: Մխիթ Պաղտիկի քաջագործութիւնը կը տարածուի ամբողջ Բալահայիտի մէջ:

Երկու թուրք ջորեկանները հիացումով կը խօսին բոլոր թուրքերու մէջ Մխիթ Պաղտիկին կատարած քաջագործութեան վրայ, որմէ յետոյ Մխիթ Պաղտիկը կը յորջորջուի Տալու Պաղտո անունով: 95ի կոտորածէն առաջ Մխիթ Պաղտիկեան մականունն առաւ Արամեան մականունը:

Մխիթ Պաղտիկ եւ իր եղբայրը ուսու-թրքական ճակատէն վերադարձած, երբ պատերազմը վերջ գտած է ընդմիշտ, երկու եղբայր կ'ուղեն այց մը տալ իրենց վաղեմի մէկ զօրավարին, որ հանգստեան կոչուած էր: Զօրավարը կը հիանայ որ անոնք չեն մոռցած զինք, ու կ'ըսէ. Բազմանքա էր քեզ տեսնել իմ խոնավիսի մէջ: Այս խոնավիս առաստաղը միշտ կը կաթկթէ, ամառ ձմեռ, քանի քանի վարպետներ չեն կըրցած կտրել: Այս արեղիքն մէջ հինգ Զէֆէրէֆ ոսկի կայ, մէկ Զէֆէրէֆ քեղի նուէր պիտի տամ, եթէ դուք յաջողիք զաղբեցնել առաստաղին ջուր առնելը:

Երկու եղբայրները կը լծուին գործի, կը գտնեն ծակ մը քիւլին տակ, որ մուկը ծակած է, որ անձրեւին ջուրերը կ'երթան ուղ-

դակի անաստաղը․ ցոյց կու տան Զօրավարին, որ հիանալով անոնց ուշիմութեան վրայ, կը յանձնէ մէկ Զէքմէճէ ոսկին, ամենավերջին սրտի զոհունակութեամբ։

Հաւաւցիներ ոչ միայն կառուցանողներ, այլև քաջ մարդիկներ եղած են, որ աշխարհի չորս կողմը ցոյց տուած են իրենց քաջութիւնը։

ՅՏի կտորածէն վերջ կը յիշեմ, որ Փէրիի կառավարութիւնը ձիով տարաւ Տալու Պաղտոյին տղան, կամուրջի մասնագէտ Կարապետը, Բերդակի աջեւ, զետի վրայ կամուրջ մը ձգելու։ Ճարտարացեալը կ'ընէ Վալի փաշային․ Կարելի չէ այս կէտին վրայ կամուրջ ձգել, հոս զօրաւոր հոսանք կայ, եւ դուք չունիք պէտք եղած դորձիքներն ու մթերքը։

Վալի փաշան եւ կառավարական պաշտօնեաները կը հիանան անոր վրայ, որ տարիներով ի դուր աշխատած են կամուրջ ձգելու, մեծ զոհեր տալով պարսպ տեղը։

Աւա՛ղ, հազար անգամ աւաղ, որ Հաւաւի հին քաջ դերդաստաններէն ոչ ոք չմնաց։ Հաւաւը որ միշտ իր քաջերով հպարտացած է, մինչեւ վերջ յազիբական զուրս եկած է, Մեծ Եղեռնին, 1915ի կոտորածին, միամտորէն խորուած կեղծ ու պատիւր Օսմ․ կառավարական պաշտօնեաներէն, ոչ մէկ շարժում ցոյց տուած չեն, բոլոր զիւզը զինաթափ, տարուած են Բալու քաղաք, եւ անդթօրէն կոտորուած են։

Հին սերունդէն միայն հերոս Հաճին, Տալու Պաղտոյին թողը, պոռացած, կանչած է, ժողովին մէջ, որ պէտք չէ զէնք յանձնել, պէտք է քաջարար կուսիլ․ ոչ ոք անոր կողքին չէ կանգնած, ծաղրած են զայն, ըսելով․ Դուն արիւնարբու մարդ ես, ծառը ելնես, միայն կօշիկներդ կը մնան զետին։

Հին Հաւաւի քաջերուն տեղ, եկած բռնած էին պոռոտախօս նորեկներ, որոնք Հաւաւի ազատութիւնը վայելել զիտէին։ Անոնք կը խորհէին որ Կիլիկիոյ կոտորածին օրերուն պէս պիտի դայ անցնի․ մինչդեռ Կիլիկիոյ ջարդի, սարսափի օրերուն, կառավարութեան կողմէն մեր զէնքերը պահանջող չեղաւ։

Դէպքէն ազատողներ ինձի պատմած են որ զինուորութեանէ հարիւրներով փախչողներ զիւզը ապատանած են, զիւզը զէնք ունեցած է, կազմակերպող չէ եղած, տղաները զինելու եւ յարձակելու թուրք զիւզերու վրայ, բոլորն ալ կրակի տալ, զարնել, զարնուիլ, քաջարար մեռնիլ։

ԷՐԶՆԿԱՑՈՆՑ ԱՐՇԵՍՏԱՆՈՑԸ

Հաւաւը այս ընտանիքը էրզնկայոնք անուճով մկրտած էր, որովհետեւ անոնց մեծ հայրը Ազամ ազան էրզնկայէն փախած է, զինք նեղացնող պէկէն, որ ուզած է տիրանալ անոր դրամին, եւ որ չէ յաջողած։ Ազամ ազան կ'ուզատանի Հաւաւ, զինք հետապնդող պէկը քանի մը խորամներով կը զիմէ Բալուի կառավարութեան, որը կը զգուշացնէ պէկը, ըսելով անոր որ իր հետապնդած անձը քաղաքական յանցաւոր չէ։ Բալուի ազգեցիկ թուրքեր, պէկեր կ'ըսեն անոր որ Հաւաւցիները քու կարծած հայերը չեն, անոնք շատ քաջ եւ կռուող ժողովուրդ են, քեզի մարդ չեն յանձներ։

Իսկապէս ալ չէ պատահած որ Հաւաւ ապատանող մը յանձնեն․ դարերէ ի վեր անոնց բնարանն եղած է՝ մէկը բոլորին համար, բոլորը մէկին համար։

Ազամ ազան կանխիկ դրամի տէր եւ լաւ արհեստաւոր, կը զնէ արհեստանոց մը, երկրադործական փայտէ գործիքներ, առաջձէջութի ամաններ պատրաստելու։ Ծառ գժուարութեամբ կ'ամուսնանայ, որովհետեւ զիւզին մէջ իրեն նախանձողներ եղած են․ կ'ունենայ աղայ գաւակ մը Մինաս անուճով, որը մեծնալով կը տիրանայ իր հօր արհեստին։

Ազամ ազան յանկարծամահ կը մեռնի, իր ոսկի դրամներուն թաղուած վայրը անծանօթ կը մնայ։ Իր տղան իր ձեռքին մէջ ունեցած դրամով եւ արհեստանոցով զիւրքի կը տիրանայ, կ'ամուսնանայ, չորս տղաներ կ'ունենայ․ Սահակ, Նիկողոս, Գէորդ, Ազամ, հաճմանդամ, Նիկողոսն ալ կազոտ, որը կը շարունակէ հօրը արհեստանոցը։

Մեր օրով լաւ կը ճանչնայինք այդ արհեստանոցը․ բոլոր զիւզին եւ չըջակայ հայ, թուրք զիւզացիներուն զոհացում կու տար։

Էրզնկայոնք թէեւ անուս, բայց լաւ հողագործ էին։ Մեծ եղբայրնին Սահալը աշխնդակ հասակով, ուժով մէկը եղած է, որ եղներով լծուած սայլը ետեւէն քալելով կը կանգնեցնէ։

Հաւաւցիներու համար Պոլիս երթալը քաղաքի ճամբայ եղած էր․ կ'երթային դրամ կը վաստկէին եւ զիւզ կը վերադառնային։

Սահակն ալ Պոլիս կ'երթայ, Հաւաւցի չէնք կառուցանողներու քով կ'աշխատի․ Կիրակի աւաւօտ մը ընկերներով պոռոտի կ'ըլլեն։ Պանսեթի մը առջեւ կ'ըլլուք մը կը տեսնեն, սրուն հսկող թուրքը դրամով մարդ կը կ'ընէ․ Սահակը ինք ալ կ'ուզէ կ'ըլլուիլ․ Երբ կ'ըլլաքին վրայ կ'ըլլէ, կ'ըլլաքիւր սկսի զչզաւլ, կ'ըլլաքը կը սկսի պոռալ բարձ-

րաձայն. վար էջեր Անատոլէի հսկայ, հիմա կշի՞քս կը կոտրես: Անթի փորով 85 օխայ կը կշոես: Հաւաւի մէջ միշտ ալ հսկաներ սպրած են:

Էրզնկայոնք կարգալ գրելու չէին հաւատար, ոչ ալ զարգացումի: Հին ատեններ, երաժանիներով եւ հոսելիներով հոսելով հարզը ցորենէն կը դատէին. երբ մեքենան ելաւ, սկսան մեքենայով հարզը ցորենէն դատել: Մեքենայէն միայն հայերն էին հասկցող եւ գործածող. յետամնաց թուրքը պարզ մեքենայ մը անգամ չէր կարող գործածել: Որով էրզնկայոնց արհեստանոցը բաւական տուժեց: Արհեստանոցին տէրը, Նիկողոս արարը թուրքերը համոզած էր որ հետու կենան, այդ մեքենային մէջ սատանայ կայ:

Էրզնկայոնք յատաջղիմութեան չէին հաւատար. Նիկողոս արարը իրենց նոր սերունդը զպրոց գնելու չէր հաւատար: Կըսէր անոնց. Արհեստով զրազեցէք, որ մարդ ըլլաք:

Նիկողոս արարը ջերմեռանդ եկեղեցասէր էր, առաու-իրիկուն եկեղեցի պէտք էր երթար:

ՆՈՐ ՓԱՓԱԶԵԱՆՆԵՐ

Հաւաւի մէջ երկու Փափազեաններ կային, հին եւ նոր: Նոր Փափազեաններու մականունը եղած է Իփէկճեան, անոնք եկած են Սարբերդի Սարի Խամիչ գիւղէն: Անոնք Հաւաւ կը կոչուէին Տէր Աստուրէնք: Տէր Ստեփանի ժախճանելէն ետք Տէր Աստուրը բերուած է Հաւաւ իր երկու եղբայրներով, Օհան եւ Մելքոն, որոնք կարճ կեանք կ'ունենան: Տէր Աստուրը ունեցած է երեք տղաներ, Կարպետ, Սարգիս եւ Պապտասար: Կարպետը հետեւելով Հաւաւ-ցինքու, ինք ալ Պոլիս կ'երթայ ուսմունք ստանալու, կը հետեւի փաստարանութեան. ըլլալով բնականէն մտացի մէկը, բարձր նիշերով կ'աւարտէ իր ուսմունքը, կու գայ Հաւաւ. իր անունը շուտով կը տարածուի Բաղահոյժի մէջ որպէս կարող փաստարան եւ օրէնս-դէտ. Բալուի կատարութեան մէջ բարձր դիրք կը զբաւէ, մինչեւ Տիգրանակերտ, Սարբերդ, Չարսանճաղ կը կանչուի դատեր վարելու:

Եղած է շատ հմուտ փաստարան, բայց վախիտ, որուն համար Բալու քաղաքացի փաստարան Պուսնուզուլ Օհանէն էֆէնտին կ'ըսէ եղեր. Իմ քաջութիւնս Կարպետ էֆէնտին, անոր գիտու-

թիւնն ալ ինծի ըլլար:

Օհանէն էֆէնտին 95ի կոտորածէն առաջ տալիքի կը հրաւիրուի Բալու քաղաքացի Ասլան պէկի խոնարհ, դաւադրարար կը սպաննուի եւ դետը կը նետուի դիակը: Այսպէս եղած է թուրքը: Ասլան կը սպաննուի ամառանոց պարտէզին մէջ գիշեր ատեն, իրեն ծառայող Չարսանճաղի Փուսքիւրան գիւղացի քերատ Հուսէյինին կողմէ, որ տասպարի մէկ հարուածով գլուխը կը գատէ մարմինէն, Օհանէն էֆէնտին վրէժն անելով կը փախի:

Հիմա զանք դարձեալ Կարապետ էֆէնտին: Կարապետ էֆէնտին չհանդուրժելով Հաւաւի զրացի դարաւոր թշնամի թուրք զոյժ աւազակ Քիւրումցիներուն, որոնք Շարիֆ Պէկի զբոսումով գիշեր ցերեկ Հաւաւցիներուն նեղութիւն կու տան, տուններ բանալով գիշերները, կենդանիներ զոյժալով դաշտերէն: Կարապետ էֆէնտի վախճան հողի Քիւրումցիներ բանտ կը դնէ, որոնք երեք ամիս բանտ մնալէ յետոյ դուրս կ'ելլեն. հարիւր տունէ բաղկացած Քիւրում գիւղը լաւ մը կը խելօքայ:

Կարապետ էֆէնտին ուրիշ բարիք մըն ալ ըրած է Հաւաւին: Վանքը տուրքէ ազատած է, որ Շարիֆ Պէկը վանքին հողերէն նօխտան անուան տակ հարիւրին ութը տոկոս կը զանձէր տարիներէ ի վեր: Կարապետ էֆէնտին քննութիւն կատարելով կառավարական տոմարներուն մէջ կը հաստատէ որ վանքը իր հողերով, պարտէզներով, այգիներով մաս չի կազմեր Հաւաւի հողերուն եւ գետիններուն: Այդ պատուական մարդը Չարսանճաղի պէկերէն տալիքի կը տարուի, թունաւորելով կը մեռցնեն:

Տէր Աստուրը 95ի կոտորածին զոհ երթալէ քերջ Տէր Աստուրէնք դարձան Փափազեան: Կարապետ էֆէնտին տղան Լեւոնը Նիւ Եօրք կը մնար, մեռաւ տարիներ առաջ. իր եղբայրը Վահան 15ի Եղեռնին զոհ գնաց գիւղին մէջ: Լեւոնին փոքր տղան Վահանը՝ ամերիկեան զինուոր՝ սպաննուեցաւ երկրորդ պատերազմին Եւրոպայի մէջ: Լեւոնին երկու տղաները Մելքոնն ու Շաւարշը կ'ապրին իրենց ընտանիքներով Նիւ Եօրք: Լեւոնին հօրեղբորորդին Աստուրը իր ընտանեկան պարագաներով կ'ապրի Ֆիլատելիֆիա: Մելքոնը, Շաւարշը, Աստուրը 15ի Եղեռնէն ազատուածներէն են:

ՀԻՆ ՓԱՓԱԶԵԱՆՆԵՐ

Հին Փափագեաններու նախնիքները զազթած են Տերսիմի կից Հալվորի վանքէն, հաստատուած են Չարսանճաղի փէրին քաղաքի մօտ Կէօկտափան գիւղը: Անկէ Տէր Ստեփանը իր ընտանիքով Հաւաւ եկած է: Անոր մեծ հայրը Տէր Յարութիւնը Հալվորի վանքին տէրն ու տիրականը եղած է, որ Տերսիմիցիներէն սուրբի պէս կը պաշտուէ: Տէր Ստեփանը մեծ պատիւներու կարժանանայ երբ Հաւաւ կու գայ. ան եղած է բարձր ուսմունքի տէր քահանայ մը, կատարեալ քրիստոնէայ, Աստուածաբան, մաքուր նկարագրի տէր, հաւատացեալ անձնաւորութիւն մը: Իր օրով ապրող, Պրիսնց մըր Աւան, Նահաւակնց ստասարուկը, երկուքն ալ հարիւրը անց, կը պատմեն գիւղացիներուն որ Տէր Ստեփանը պատարագած աստն, իր ոտքերը վեր բարձրացած տեսած է ժողովուրդը. ան ջերմեանդ, ճշմարիտ հաստացող քահանայ եղած է:

Հին Փափագեաններ հինգ հարիւր տարուայ գերզատան մը եղած են, քահանաներու, ուսուցիչներու, գպիւրներու:

Տէր Ստեփան երբ Հաւաւ կը հաստատուի, գիւղացիները անոր կու ասն գիւղին գլուխը գտնուող աւաղ ահ ինքնարուի աղբիւրին վերեւ գտնուող պարտէզ մը եւ արտ մը, անկէ զատ գիւղին տակ գտնուող պարտէզ մը ջրաղացքով միասին, մէկ խօսքով, Տէր Ստեփան, գուն այս գիւղին տէրն ու տիրականն ես:

Տէր Ստեփան կ'ունենայ եօթը տղայ զաւակներ, չորսը Պոլիս կը գրկէ ուսմունք ստանալու: Հաւաւ միշտ կապ պահած է Պոլիսի հետ, շնորհիւ իր արհեստագիտութեան, գիւղը Պոլիսով շին պահուած է, 200 տունէ բաղկացած Հաւաւի հողերը հողիւ կրցած են 50 տուն պահել. մնացեալները արհեստագիտութեամբ զբաղած են. գիւղէն հեռացողներ, նոր եկողներ միշտ ալ ունեցած է Հաւաւ:

Գարեթէ ի վեր Հաւաւ եղած է ուսումնասէր, իրենց զաւակները Պոլիս զրկելու ուսմունք ստանալու:

Տէր Ստեփանի երկու տղաները թողաթ կը հաստատուին. մէկը Վան, Կոստյ Անուպտ վանքին համար վարդապետ կ'օժուի, մէկը Բալու Շընայ գիւղը, երկուքն ալ Կէօկտափան, Մեծ կերտ կը հաստատուին: Միայն Յարութիւնը Հաւաւ մնացած, Պոլիս ուսմունք ստած, հոն ապրանի մէջ կ'աշխատի: Եկեղեցիի տօնացոյցներու մէջ իր անունը կարդացուած է. «աշխատակիցը մեր Յարութիւն Փափագեան, Բալու Հաւաւ գիւղացի»: Պոլիս աշխատած տարիներուն անոր սենեակը երբ մանկեր, պիտի տեսնէիր փոքրիկ մահճա-

կալ մը գիրքերու ու թերթերու մէջ թաղուած: Եղած է արտակարգ ընթերցասէր: Հաւաւցիներ Պոլիսը ջուրի ճամբայ բրած են գարեթէ ի վեր, միշտ կ'երթան կու գան եղեր. Փափագ Յարութիւնն ալ միշտ Պոլիս կ'երթայ կու գայ եղեր:

Յարութիւնը ունեցած է երկու տղայ, Կիրակոս եւ Մինաս. Կիրակոսը ունեցած է երեք տղաներ. Ստեփան, Յարութիւն եւ Պարոս: Ստեփանը ունեցած է երկու տղայ. Պօղոս եւ Սարգիս: Պօղոսը վաղուց մեռած է. Յարութիւնը որ իր մեծ հօր անունը կը կրէ, ունեցած է հինգ տղաներ. առաջին կնոջմէն՝ Մկրտիչ, Պոլիս բարձր ուսմունք ստած, գիւղ եկած, վաղուց մեռած. Մինաս եւ Կարապետ նոյնպէս Պոլիս ուսմունք ստած. երկրորդ կնոջմէն Ագամ եւ Լեւան. Ագամը հոս Ամերիկա, Նիւ Եորք. Յարութիւն Փափագեանը որ յետոյ Փափագ Տատա անունով ճանչցուած. անոր երկրորդ տղան Մինաս, Պոլիս կը մեռնի. կը թողու հինգ տղայ զաւակներ. Օհաննէս, Սարգիս, Սաշատուր, Պաղտասար, Պետրոս: Պաղտասարը քահանայ կ'օժուի 95ի կոտորածէն վերջ, 15ի Մեծ Եղեռնին զոհ կ'երթայ: Օհաննէսը կ'ունենայ երեք տղաներ. Մինաս, Հայկ եւ Կիրակոս: Մինասին տղան Օհաննէսը Տիթրոյթ. Հայկին տղան Կարապետը Լիոն, Ֆրանսա: Սարգիսը կ'ունենայ երեք տղաներ. Արմենակ, Արամ, Տիգրան, այս պատմութիւնը զրոյր: Արամը զոհ կ'երթայ Մեծ Եղեռնին. Արմենակը հոս Ամերիկա կը մեռնի 1918ի համատարած հիւանդութիւն մը իր զաւակները, Վահանը, Արմենուհին, Մարգրիտը, Գեղամը եւ Աննան կ'ապրին հոս, Փրոփիտենս: Արամին տղան Սուրէնը կ'ապրի Նիւ Եորք, իր ընտանիքով. Սաշատուրը ոչ տղայ զաւակի: Տէր Պաղտասարին տղան Կարապետը կը մեռնի Փրոփիտենս. Պետրոսին մէկ տղան Պետիկը զոհ կ'երթայ Մեծ Եղեռնին. իսկ Պարոյրը կը մեռնի Փրոփիտենս:

Հին Փափագեաններէն տասը ընտանիք կ'ապրին Ամերիկա եւ Ֆրանսա: Փափագ Տատան իր տղուն Մինասին վաղահաս մահէն վերջ, հոգատար կը գտնայ իր հինգ տղայ թոռնիկներուն, կը մեծցընէ զանոնք, լաւ հայեցի դաստիարակութիւն տալով անոնց: Անոնք կ'ըլլան իրենց մեծ հօր պէս ընթերցասէր, երաժիշտ, եկեղեցասէր, սպորտսէր:

Փափագ Տատան իր նիւթականը ապահոված, գիւղ մնացած է իր թոռներուն հետ: Ան եղած է ոչ միայն զրոյց բրոյց, այլիւ քաջ, անվախ, պէնքի հաւատացող: Իր հինգ տղայ թոռները բաւական մեծցած, իրենց մօր հետ, Շընայ գիւղը հարսանիքի կ'երթան. իրենց մայրը Շընայցի Կուլաջ Սաշատուրին քոյրը եղած է:

Կուլաջ Սաչատուր եղած է սուլթանական պատուանշան կրող խալֆա. եղած է ճաշակաւոր մէկը. զիւղին մէջ, ամէնէն նշանաւոր անկիւն մը զեղեցիկ տուն մը շինած է, երկու յարկարաժինով, մէկ յարկը հիւրանոց: Ան ալ միշտ Պոլիս կ'երթայ կու գայ: Ռուս-թուրք պատերազմի շրջանին հարիւրապետ մը երկու զինուորներով անոր տունը կ'օթեւանին: Հարիւրապետը լսած է որ Կուլաջը նշանաւոր ձի մը ունի. միտքը դրած է անոր ձին ձեռք ձգել:

Կուլաջին եզրայրները քաղաքը լուր կը տանին որ հարիւրապետ մը երկու զինուորներով եկած բազմած է ընտանեկան յարկի օճակին զլուխը, քու զայլուսող կը սպասէ ձիդ առնելու: Քաղաքը Շընազ զիւղէն քալելով ժամ մը հետու, Հաւաւ զիւղէն ժամ ու կէս հետու է Շընազ զիւղը:

Կուլաջը կ'ըսէ եզրայրներուն դուք զացէք, մեր բարեկամներով խմբուեցէք մեր տունին առջեւ, երբոր ես երեւցայ, բոլորդ ալ վազեցէք իմ դէմ զիս զիմաւորելու, պտալով «խալֆան եկաւ»:

Կուլաջը հեյալթի մարդ զիմազիծով, հասակով, եւրոպական հագուստով եւ կօշիկներով, խալանը ձեռքին, զիմաւորողներուն պոռալ, կանչելը հարիւրապետին ականջը ինկած, ներս կը մտնէ Կուլաջը, սուլթանական պատուանշանը կուրծքին, խոպածը ձեռքին, կը հրամայէ հարիւրապետին եւ երկու զինուորներուն որ շուտ դուրս ելլեն, ըսելով անոնց. Ո՞վ հրաման տուաւ ձեզի զալ բազմիլ այս կիներու եւ դաւակներու յարկարաժինը:

Հարիւրապետն ու զինուորները կը հասկնան որ սխալ մարդու մը հանդէպ կը դանուին: Կուլաջը զիւղին մէջ նախանձոտներ ունեցած է. իր եզրայրները կը միջամտէին, որ իրբեւ հիւր մնան այս զիւղեր, ժամանակը մութ, եւ պաղ է օդը: Առանց ձայնի ձուռնի, հարիւրապետն ու զինուորները կը զիւղերն հիւրանոցին մէջ, եւ առաւօտուն կ'անհետանան: Կուլաջ Սաչատուրը գոհ գացած է Պապ Ալիի ցոյցին:

Հիմա գանգ դարձեալ Փափազ Տատային. իր հինգ թոռնիկները մօրերնուն հետ Շընազ հարսանիքի գացած օրը, Քիւրումցի երեք զոյգեր առիթ համարելով, Փափազ Տատային տունը կը մտնեն զիւղերանց: Փափազ Տատան կ'արթննայ, կ'ելլէ ճրտղը կը վառէ, պատէն կախուած հրացանը վար կ'առնէ, ամուր մը բռնած, զոլորը կը փնտռէ, որոնք անկիւն մը պահուած զինք կը գիտեն, առանց խորհելու որ այդ 125 տարեկան ծերունին սպանութիւն պիտի կատարէ: Փափազ Տատան մէկէն կը յարձակի զօղերուն վրայ, հրացանին փողը բռնած զօղին փորին կը կրակէ, հրացանը չ'առներ, զօղը կ'ա-

զատի մահէ: Գողերը կը կապեն Փափազ Տատան, պլլուր, խալուրմա եւ հրացանն առած կը փախնին: Գիւղէն դուրս ձորի մը մէջ, հրացանը կը փորձեն, որ մէկէն կը պարպուի եւ գնդակը կուտ կ'երթայ:

Քիւրումցի Չանկին Մոսոն այսպէս պատմած է, որ եթէ հրացանը տունին մէջ պարպուէր զիս սպանուած պիտի գտնէին Փափազեաններու տան մէջ:

Գարեբէ ի վեր Հաւաւցիները զէնք ունենալէ, զէնք գործածելէ չեն վախցած, որ զօղեր, աւազակներ զգուշացած են Հաւաւցիներէն:

Հին Փափազեաններ հետեւելով իրենց տատաներուն եւ մեծ տատաներուն, եղած են զրատէր ընթերցասէր, Հաւաւի ամէնէն զիտակից գերդաստանը, տուած են քահանաներ, ուսուցիչներ, երաժիշտներ, զիւղապետներ, զրազիւրներ, զիւղին մէջ նորութիւն բերողներ: Անոնց գոտըր պաղտատը եղած է առաջինը եկեղեցիին բեմէն Դանիէլի զիւրքը կարգացող, 1902ին: Երկու եզրայրներս, Արմենակ, Արամ Փափազեան, զիւղին շուկային մէջ հացի փուռ հաստատող, գոնաւոր ներկարարութիւն, կտաւի ապածոյի, գործ հաստատողներն են: Տիւրան եւ Պարոյր Փափազեաններ եղած են զիւղ առաջին անգամ կարի մեքենայ բերողներ: Արմենակն ու Արամը եղած են զիւղին մէջ ձիով կառք գործածելու փորձ ընողներ: Եթէ 15ի Եղեւնը չպատահէր, երկու եզրայրներս շատ մը նորութիւններ պիտի բերէին զիւղին մէջ:

Փափազեան գերդաստանը շատ արագ աճած է, զիւղին ամենահին գերդաստաններէն, զիւղին մէջ, 15 ընտանիք, հիմա ալ 10 ընտանիք, Ամերիկա եւ Զրանսա:

1909ին երբ Ամերիկա եկայ, անոնք գոտայ Փրովիտենս քաղաքը, Օլնըվիլի շրջանը: Անոնք եկած էին 1902ի շրջանին. քանի մը տարի գործարան աշխատելէ վերջ, անձնական տուն մը, անոր կից գետին մը, անոր վրայ հաստատուած ամուսին եւ փայտի վաճառումի կոկիկ ետրտ մը ունեցած են:

Ինծի սորվեցուցին մեքենաներով փայտեր սղոցելու եւ մանուրելու գործը: Իսկ իրենք ձիի կառքերով շուտ շուտ կ'երթային տուներու, խնտութիւններու ամուսին եւ փայտ ծախելու: Կէսօրին երբ տուն գային, կերակուրէ տառջ հայերէն թերթ կը փնտռէին: Անոնք քանի մը թերթերու բաժանորդ էին. կուսակցական չէին, բայց համակիր էին Դաշնակցութեան: Անոնք արտասահմանէն զերբեր բերել կուտային: Անոնք սիրահար էին օտար լեզուներէ թարգմանուած մեծ մարդոց գործերուն:

Մեծ եղբայրս Արմենակը Պոլիս ուսմունք առած, երաժիշտ, երրօպական եւ հայկական ձայնադրոզ, ուրարակիր, Աւետարաններ կարգալու:

95ի կոտորածէն վերջ, ուսուցչութիւն բրած, մեր զիւզին, Բալու քաղաքին, Չարսանճագի եւ Սարբերդի մէջ: Արտակարգ կրօնադէտ, կրօնասէր, եկեղեցասէր, ամէն կիրակի պէտք էր առաւուն կանուխ եկեղեցի երթար, շապիկ հագնէր, կարգալու:

Այդ շրջանին Փրովիտենսի եկեղեցին Մարքէթ Մբուարի երկրորդ յարկի վրայ վարձուած հօլ մըն էր: Իրիկուն մը եղբայրս Արմենակը ըսաւ. Եղբայրներ, Պոլսեցի երաժիշտ երուանդը միշտ արդելք կը հանէ, որ շապիկ չհագնիմ եկեղեցիին մէջ: Կիրակի Մբրազանը եկեղեցին պիտի ըլլայ: Արամ եղբայրս ըսաւ. ուրեմն մենք երեք եղբայրներով տասը Հաւաւցիներ հոն պիտի ըլլանք:

Շարաթ երեկոյ համախումբ ունեցանք մեր տունը. որոշուեցաւ կիրակի առաւօտուն կանուխ կաղմ ու պատրաստ հոն ըլլալ անպայման:

Ասանց մէկ անձի պակասութեան, տասը հասաւ ալ, շուտով եկեղեցի գացինք: Բոլորս ալ շարուեցանք եկեղեցի մանկիք դրան միջանցքին առջև: Սբրազանը մեզ տեսնելով, ըսաւ. ի՞նչ է այս, ինչու եկած էք: Մեր ազգական յաղթանդամ վաճանք ըսաւ. մենք եկած ենք կուի հանելու: Սբրազանը ասանց ձայն ձուռ հանելու կեցաւ: Արամ եղբայրս իր օրհնեալ բերանը բացաւ. Սբրազան Հայր, դուն դիտես որ եկեղեցին բաց է բոլոր հայերուն առջև. ո՞վ է այդ Պոլսեցի երուանդը, որ արդելք կը հանդիսանայ: Իմ եղբայրս հասարակ մէկը չէ, Պոլիս ուսմունք առած, հայկական, երրօպական նօթա դիտցող, երաժիշտ եւ ուսուցիչ: Երկիրը ուսուցչութիւն բրած, Բալու քաղաքի, Սարբերդի, Չարսանճագի եւ զիւզին մէջ:

Սբրազանը տեսաւ որ կարելի չէ մեզ մէկ կողմ շարուի: Սոսք տուաւ որ եղբայրս ասանց այլեւայլի կրնայ շապիկ հագնիլ եւ երգեցողութիւններու մասնակցիլ: Մենք յաղթական տուն գացինք:

Այդ շրջաններուն հայերէն թերթին մէջ կարդացինք, որ Ուսար քաղաքին մէջ Քեասրիկ զիւզացի Հայկ Կիլիկեանին շապիկը հանել տուած են Ռամկալարները ստիկանով:

Կարելի չէ այնքան շուտ մը շուտով մոռնալ իմ սիրելի եղբայրներս, նուիրուած հայ ուսմունքի: Հետո ամէն տեսակ մոլութիւններէ: Անոնք յարգուած անձնաւորութիւններ են ոչ միայն Հաւաւցիներէն, այլեւ բոլոր ուրիշ երկրացիներէն:

Մեծ եղբայրս Արմենակը Պոլիս ուսմունք առած, անկէ

փոքր Արամ եղբայրս զիւզին զարոյր ուսմունք առած Միտցեալ Ընկերութեան օրով, 95ի կոտորածէն առաջ: Ամերիկայի մէջ եօթը տարի ինքնօգնութեամբ շատ առաջ գացած էին:

Անոնց հետ երեք տարի ապրիլը ինծի համար երկրորդ զբոսը մը եղաւ. մեծ եղբայրս կատարեալ կրօնադէտ, անկէ փոքրը արտակարգ ուշիմ, զօրաւոր յիշողութեան տէր, կատարեալ պատմարան:

Անոնք կ'երթային հայկական ժողովներուն: Շարաթ երեկոնները կը լեցուէին մեր տունը, եղբայրներ - յետո, ուսմունք ստանալու: Կիրակի օրերը իրենց գրպանները թերթերով թիմուած, Տըկլուզի շրջանը կ'երթային, ձեռքերնին զիրքեր բռնած: Անոնց համար զատ զատ տունը որոշուած, հաւաքուած մարդիկներու մէջ նստած, թերթերէ, զիրքերէ հատուածներ կարգալով, բոլորն ալ ուշի ուշով մտիկ կ'ընէին: Այն ատենները շատ քիչ բնականօրէն ունեցող կային: Երկու եղբայրներս կատարեալ քարողիչներ էին. յարգանքի արժանի մարդիկներ, հանրութիւնը զէպի լաւն ու բարին առաջնորդելու, հետո պաշտօնամոլութիւններէ եւ ցուցամոլութիւններէ, սէր եւ յարգանք ունէին ամէնուն հանդէպ: Լաւ վիճարանող, լաւ հասկըցող եւ հասկցնող, առաքինի անձնաւորութիւններ, ոչ մէկ տեսակի չար նախանձ, կատարեալ ըրիտօնեաներ, փնտուելիք մարդիկներ էին անոնք, ճշմարտութիւնն ու արդարութիւնը պաշտպանող ամէն տեղ, ասանց քաշուելու, ասանց վախնալու, երեսպաշտ մարդիկները միշտ ալ հալածող: Ետեւէն խօսողներ չէին, մարդոց երեսին կու տային իրենց գործած, գիտակցարար գործած սխալները: Անձնասէրներ չէին անոնք, նուիրումի հաւատացող, իրենց օգտակարութիւնը չէին զլանար: Կ'ուզէին ուսմունք տալ, իրենց գիտցածը չլիտցողին տալ, որ տղէտ չմնան, մեր տունը կատարեալ ուսումնարան էր բոլորին առջև դուռը բաց, գալու, սորվելու:

Մարդիկներ կը հիանային անոնց նուիրումին վրայ, որ ողի ի բռն կը ջանան մարդիկներ զարգացնելու, յառաջացնելու, կ'ընէին զէջ բան է տղէտ մնալ, չարն ու բարին չհասկնալ: Հակառակ էին ժամեր պարագայ անցընելու: Պատկած անեականին զիրքերով, թերթերով լեցուն էին: Անոնց ձրի աշխատանքով այնքան մարդիկներ գրել կարգալ սորված էին որ կը զարմանային:

Այն շրջանին բոլոր մարդիկ ամուրի էին, ընտանիքի, գաւալներու հօգ տանելու հարց չկար, որով այդ շրջանի մարդիկներ շուտով կրցան գրել կարգալ սորվիլ:

Բնաւ չեմ՝ մտնար իմ այնքան սիրելի եղբայրներս, որոնցմէ աւելի շատ օգտուողը եղայ:

Յաւալի եղաւ անոնց վախճանը. երկուքն ալ իրենց երիտասարդ տարիքին մէջ մեռան. մեծ եղբայրս հոս, Ամերիկայի մէջ, անկէ փոքրը, իմ մեծ եղբայրս, 15ի Եղեռնին զոհ գնաց, որոնք շատ անդամ տեսած եմ երազիս մէջ, լուս ու մուշկ կերպարանքով:

ՆՈՂԱԳՈՐԾ ՓԱՓԱԶ ԱՐԹԻՆ

200 տունէ աւելի զիւղին մէջ միայն 40 տուն հողագործութեամբ կը զբաղէին, որոնց մէջ առաջնակարգ հողագործներու կարգին կը պատկանէր Յարութիւն Փափաղեան, Փափաղ Տատային թոռը, անոր պէս քաջ եւ անփախ, որ կռիւէ փախչողներէն չէր, ան ճանչցուած, ուղղամիտ մարդ էր:

95ի կոտորածէն առաջ զիւղապետի պաշտօնը կը ստանձնէ: Այդ շրջանին, Պր. Կարեան տակաւին զիւղն էր: Կատգած հարկահաւաք մը երեք ճանտարմաներով Հաւաւ կու դայ տուր մի հարցներ անուշով տուրք մը կը պահանջէ. ամբողջ Բայաճովիտի հայերուն համար նշանակուած էր կառավարութեան կողմէ. այդ տարիներուն սկսած էր գորտուր ճնշում մը հայերու ալք օրուայ զիւղապետ Փափաղեանի վրայ, կը սպառնայ հարկահաւաքը որ, որոշուած գումարը կարճ ժամանակուայ մէջ պէտք է հաւաքուի:

Հաւաւցիներ սպառնացող հարկահաւաքներէ վախոցող չըլլալէ աւելի, ծեծած են դանոնք, Հաճի Պետրոս Տօլպաշեանի ղեկըր առիթ եղած է որ կատգած հարկահաւաքը կ'ուզէ իր կիճը ցոյց տալ: Փափաղեան Արթին չտանելով իր վրայ զրուած բռնութիւնը, դաշտի կրիտայի մեծութեամբ կօշիկները հագած, որոնք միայն լուծք վարելու ստեն կը հագնէր քարմաներ կոտորելու համար:

Քաղաք կ'երթայ այդ անձոնի կօշիկներով քաղաքապետարան կը մտնէ, անփախօրէն կը կանգնի քաղաքապետին առջեւ, կանգնած տեղէն օտքի կօշիկները անոր առջեւ նետելով, կ'ըսէ բարկութեամբ. Ով խայմախայմ է՞Քէնտի, այս ոտնամանները հազնոցը ինչպէս կըրնայ տուր մի հարցներ անուշով տուրք վճարել: Եթէ չուստով դուրս չհաննս զիւղէն այդ կատգած հարկահաւաքն ու ճանտարմաները, այս կօշիկներով մինչեւ Տիգրանակերտ, Պոլիս պիտի երթամ, բողոքեմ քու այս անարդար քայլիդ դէմ:

Քաղաքապետին ծանօթ Հաւաւցիներուն անցեալին մէջ կատարածները, որ անոնք վճարական մարդիկ ըլլալով, կարող են ամէն քայլի զիմեւ եւ իրենց ձայնը լսելի ընել ամէն տեղ: Քաղաքապետը խիստն էր բերել կու տայ հարկահաւաքն ու ճանտարմաները:

Յաղթանակ տանող Փափաղ Արթինը զիւղ կը մտնէ: Գիւղացիներ հիացած անոր վրայ, մեծ զովասանքներու կ'արժանանայ:

Իսկ Պր. Կարեան զինքը Մըհեր անունով կը մկըտէ, որ Հայ ազգի պատմական Մհերին պէս միշտ ալ յաղթական դուրս եկած է: Այնուհետեւ ամբողջ Հաւաւը, մեծ ու պղտիկ, Մհեր անունով կը ճանչնային անոր տղաներն ու թոռները:

Փափաղ Արթին իր այդ պատմական կօշիկներով մինչեւ Պոլիս կ'երթայ, իր սրբուոյն Մկրտիչի հանդէսին ներկայ ըլլալու, որ աւարտած էր իր ուսումը բարձր նիշերով: Գպրոցին օրուան տեսուչ Պր. Փասդալ, զայն բեմ կը հանէ իր զիւղական զղեստներով եւ կօշիկներով, ցոյց տալու հանդիսականներուն, Հաւաւցիներու նուիրումը ղէպի հայ մշակոյթը:

Ահաւասիկ Հաւաւը, որուն Բալուի Աթէնք անունը շնորհուած է: Բոլոր հանդիսականները կը հիանան, բուն ծափահարութեամբ կը պատուեն հայ զիւղացին, որ այնքան չարաչար աշխատանքով կ'ուզէ յաւերճացնել հայ մշակոյթը. Հաւաւցի աշխատուորը թէեւ անուս, բայց ուսմունքի համար եղած է նուիրուող:

Մկրտիչ Փափաղեանի դասատուները, դասընկերները, ծանօթ բարեկամները կը հիանան, կըսեն. Մկրտիչ, դուն այսքան ուսեալ մէկը, ինչպէ՞ս կարելի է հաւատալ որ դուն անոր զաւակն ես, որ չունի ոչ ուսմունք, ոչ գիտութիւն, իր պատասցիի հազուստն անգամ ցոյց կու տայ:

Մկրտիչ ընդարձակ տեղեկութիւններ կու տայ Հաւաւցիներու մասին ընդհանրապէս եւ Փափաղեան զերգաստանին մասին մասնաւորապէս, որ հայ մշակոյթի համար նուիրուած մարդիկներ եղած են, որ կարելի չէ ուրանալ, որ ցիւղային ողին է որ կը զործէ մեր մէջ, եթէ ոչ ես ու հայրս Պոլիս պիտի չըլլայինք:

Փափաղեան Արթինը չէ բուսականացած միայն Մկրտիչը Պոլիս զրիկելով ուսմունք անելու, իր միւս երկու զաւակներն ալ, Միւնասն ու Կարապետը, նոյնպէս Պոլիս զրիկած է ուսմունք անելու: Ինք ծառաներ վարձելով իր հողագործութիւնը շարունակած է զիւղի ցերեկ, չարաչար աշխատելով. իր հայրը Կիւրակոսը, հօրեղբայրը Միւնասը նոյնպէս Պոլսական ուսմունք անողներ եղած են: Ուսմունք եւ զիտութիւն ստանալ Փափաղեաններուն համար այնքան

պաշտելի եղած է, որ ցեղին երեխաները տուներէն դպրոց կը փախ-
չին դեռ դպրոցական տարիքի չհասած, եւ ձգտում կայ իրենց մէջ
կարգին առաջին աշակերտը գտնալու. եկեղեցիի սիրահար, ա-
ռանց բացառութեան պէտք էր եկեղեցի շապիկ հագնէին, բեմ ելնել,
բուրժառ անել, եւ Հաւաւի դպրոցական առաջին կարգի առաջին
աշակերտը Փափագեաններէն միշտ ալ տեսնուած է:



ՍԵՐՔԱՆ ՎԱՀԱՆ ԱՐԱՄԵԱՆ

(ԻՄ ԿԱՄԱԻՈՐԱԿԱՆ ՅՈՒՇԵՐԷՍ)

Ծնած եմ 1898, Փետր. 25ին Բալու, Հաւաւ գիւղ: Փոքր տա-
րիքէս փոխադրուած եմ Խարբերդ, Մաղրոս: Մաս մը ուսումս ստա-
ցած եմ Խարբերդ, Ֆրանսական գոյէճը:

1909ի դարունը պացինք Ռուսմանիա, հօրս քով: 1913ին եկայ
Ամերիկա: 1917ի աշունը կամաւոր դացի դէպի Կիլիկիա: 9 ամիս
Կիպրոսի մէջ վարժութիւն ըրինք, որուն երեք ամիսը Արժամեայ
Ձինուորական Դպրոցի մը մէջ, 40 զինուորներով, զինուորական դա-
սեր ստացանք: Այս 40 զինուորներէն 6 հաստ միայն յաջողեցանք
տասնապետի պաշտօնով դուրս գալ:

1918ի Մայիսին թողուցինք Կիպրոսը, ճամբայ ելանք դէպի
Եգիպտոս. հասանք Փորթ Մայիտ, ուր շուտով շողեկառք զբին մեզ
եւ տարին Պաղեստին, դէպի ճակատ: Հասանք Մէճիտիէ, ամիս մը
մնացինք հոս, մի քանի պատերազմական փորձեր ալ հոս ըրինք:

Եկաւ ժամանակը. զիս իմ տասնեակով, երկու արագահար-
ուածներով զրկեցին ճակատ, առաջին գծին վրայ, պահակութեան:
Մեր ժամանակը դեռ չէր լրացած, երբ սկսաւ կռիւը. 36 ժամ անդա-
դար կռուելով թուրք եւ գերմանացի զինուորներու դէմ, յաջողե-
ցանք զբաւել Արարա լեռը: Թշնամին սկսաւ նահանջել, անդլիական
հեծելազօրքը սկսաւ հալածել:

Մեզի բաժին ինկաւ թուրք զերիները հաւաքել որոշուած կեղ-
բոնը. մեզի բաժին ինկաւ նաեւ հաւաքել մեր վիրաւոր զինուորները
ու նաեւ մեռելները: 105 վիրաւորներ ունեցանք եւ 15 մեռելներ:
Արարա լեռան կողմն է որ կը կռուէինք. մեր վիրաւորները շուտով
տարին բանակատեղի: Մեռելները, Արարա լեռան վրայ խոշոր
փոս մը փորեցինք, գանոնք քով քովի շարեցինք, շրջականերէն քա-
րեր հաւաքելով խոշոր զերեզման մը շինեցինք: Փրօվիտենակն մեզի
հետ կամաւոր եկած էր վաղարշակ վարդապետը. ան կատարեց
թաղումը:

Քիչ մը վարը, Տիարպալու գիւղէն, տղաքը երկու դուռ կոտ-

րած, բերած էին. խաչ մը շինեցինք եւ գերեզմանին մէջտեղը կանգնեցուցինք: Փողը հնչեց, հաւաքուեցանք եւ հասանք բանակատեղին:

Մէկ շարաթ հանդիստ տուին մեզի, ու ելանք ճամբայ դէպի Հայֆա, երեք օր քալելով հասանք Յորդանան գետը, որ կը թափի Միջերկրական ծով: Մէկ օր հանդիստ տուին: Հոս ամէն զինուոր էր լուացքի եւ մաքրութեան ետեւէն էր:

Յաջորդ աւտու ճամբայ ելանք: Գիշերը ուշ ատեն հասանք Հայֆա: Երկու օր միայն մնացինք հոս: Երրորդ օրը նոյնպէս քալելով հասանք Ռապա: Ռապա քաղաքը շինուած է Միջերկրականի եզերքը. քաղաքին երեք մասը Միջերկրական ծով էր, մէկ մասը ցամաք, հսկայ սարխալով մը, մէկ դուռ ունէր, ուրկէ պէտք է դուրս ելլէինք կամ ներս մտնէինք:

Քաղաքէն դուրս մեր վրանները զարկած էինք արդէն: Մէկ շարաթ մնացինք հոս: Հոս էր որ լսեցինք թէ Պէլոսթ ալ ինկած է մեր ձեռքը: Հրաման ելաւ որ զինուորները կրնան քաղաք այցելել, մէկ պայմանաւ որ երեք-չորս զինուոր շարունակ միասին քալեն քաղաքին մէջ. բնակչութիւնը մեծ մասամբ արարներ էին, կային նաեւ թուրքեր եւ բաւական մը հայ դաղթականներ:

Մենք երեք ընկերով գացինք քաղաք. կուզէինք փնտռել հայեր: Հասանք Փրանսական կաթոլիկ եկեղեցին. բաւական դաղթականներ կային հոն. մեծ մասամբ Կիլիկիոյ շրջանէն: 15 տարեկան Կիլիկեցի տղեկ մը մօտեցաւ մեզի. ըսաւ որ այս գիմացի փողոցին մէջ տուն մը կայ, ուր աղջիկ մը կը պահեն. տանտէրը պիտի ամուսնացնէ իր տղուն հետ: Ի՞նչ ազգէ է, հարցուցի. ըսաւ, արար է: Աղջկան անունը ի՞նչ է. ըսաւ, Մարիամ է: Հայր մայր ունի՞. ըսաւ, հօրը անունը Յարութիւն էր, Տէօրթօցի, հայրն ու մայրը խաֆրայ տարին, մեզի ալ այս կողմերը քշեցին. մենք միշտ միասին էինք. երբ հոս հասանք, արարները եկան մեզի տարին. ես դեռ երեք օր է որ փախայ արարի տունէն եւ այս եկեղեցին մտայ, հոս:

Ընկերներս էին Վահան Պօյաճեան, որ այժմ դեռ ողջ է եւ կը բնակի Ճրզի, մեր մօտերը, իսկ միւս ընկերս էր Սուրէն Պօղիկեան, որ կարծեմ դեռ ողջ է եւ կ'ապրի Պոսթընի շրջանը. երկուքն ալ ծարրերդ, Յուսէնիկ քաղաքացի:

Սուրէնը ըսաւ. Գափրալ, դուն աւելի լաւ թրքերէն կը խօսիս. եկէք երթանք, դուցէ կրնանք հանել այս աղջիկը այս տունէն ու երեք միասին, ազան ալ հետերնիս, գացինք այդ արարին տունը. ես սկսայ զարնել դուռը. արար ծերուկ կ'իւն մը բացաւ դուռը, արարերէն բաներ մը ըսաւ. ես չհասկցայ, եւ թուրքերէն ըսի իրեն.

այս աղեկը ըսաւ որ քոյրս ձեր տունն է, քոյրս կ'ուզեմ տեսնել, Կիւնը նախ ստեց, իսկ յետոյ զարձաւ եւ թրքերէն կանչեց. Աշիեայ, վար եկուր:

Երբ աղջիկը եկաւ, ծերուկը հարցուց, թէ այս ասփէրը կը ճանչնաս, կ'ըսէ որ եղբայրդ է: Ան ըսաւ որ չի ճանչնար: Ես ժամանակ շտուի, եւ թրքերէնով ըսի. Մարիամ գիտ չե՞ս ճանչնար, ես եղբայրդ եմ, հայրիկս, մայրիկս ի՞նչ կ'զան, ս՞ուր են հիմա. չե՞ս յիշեր որ ես Ամերիկա գացի. հիմա եկած եմ ձեզի ազատելու համար, կ'երեւի հագուստներս զինուորական են, չես կրնար ճանչնալ:

Աղջիկը նորէն կը պնդէր որ, ես եղբայր չունիմ, հայրս ու մայրս խաֆրայ տարին, չեմ գիտեր ս՞ուր են հիմա:

Մենք այսպէս կը խօսակցէինք, երբ շուրջս զիտեցի որ 10-15 զինուորներ եւս հաւաքուած են հոն: Ծերուկը կը փորձէր դուռը գոցել: Աղջիկը վեր փախաւ: Ահա այդ պահուն էր որ խոշոր կազմով, յիսունը անցած արար մը ներս մտաւ, եւ ծերուկը արարերէն բաներ մը սկսաւ խօսիլ: Վերջը մարդը զարձաւ ինծի, թրքերէն ըսաւ. օղլում, այս աղջիկը մենք մեր գաւաղին պէս կը սիրենք, ազուր հոգ տարած ենք իրեն, ան արդէն բաժն է որ եղբայր չունի. հայրն ու մայրը կորած են. ի՞նչ պիտի ընես, ս՞ուր պիտի տանիս. տղայ դաւալի մը ունիմ, Աստուած ինձի աղջիկ գաւաղ մ'ըն ալ տաւա:

Ես դեռ բերան չբացած, մեր շուրջի զինուորները հազար ու մէկ սպառնալիքներ սկսան ընել, ու ես զարձայ արարին ըսի. Լաւ է որ այս աղջիկը որ քոյրս է, տաս ինծի, թէ ոչ տունդ կրակի կու տան այս աղաքը: Մարդը տեսաւ որ ինչորք կը փոխուի, ըսաւ որ կը տանինք ձեր մեծին քով, եթէ աղջիկը իր կամքով կ'ուզէ քեզի հետ մնալ, թող մնայ, իսկ եթէ ուզէ ինձի հետ գալ, ասոր ի՞նչ կ'ընես:

Ըսի շատ լաւ. եթէ ուզէ տուն գալ, քեզի հետ թող գայ: Իմ նպատակս էր, անգամ մը այդ տունէն դուրս հանել դեռ կոխ մը չպատահած: Կանչեց աղջիկը վար, արարը, մենք եւ աղջիկը սկսանք քալել դէպի մեր քամփը. երբ քաղաքէն դուրս ելանք, մեր զինուորներու թիւը հարիւրը անցած էր, որոնք կը քալէին մեզի հետ: Աղջիկը շարունակ կու լար: Ես ըսի. քոյրիկս, Մարիամ, մի լար, այլեւս ազատուած ես եւ ես ու դուն շուտով կ'երթանք Ամերիկա. օր մըն ալ հայրիկը եւ մայրիկը կը գտնենք ու կը բերենք մեզի մօտ, Ամերիկա:

Երբ հասանք մեր քամփը, գացինք շիտակ սպաներու վրանը, Փրանսացի սպայ մը, որ բանակին աէրաէրն ալ էր, դուրս ելաւ վը-

յանն էր ևս ըստ. Ի՞նչ կայ գափաղ, ո՞վ է այս մարդը, ո՞վ է այս ազնիվը, ի՞նչ են այս զինուորները: Ես բացատրեցի, որ այս ազնիվը քոյրս է, որ քիչ առաջ գտայ այս մարդուն տունը, այս մարդը չ'ուզեր քոյրս ինձի տալ, ես կամաւոր եկած եմ հօրս, մօրս և այս քոյրս համար, և ալյն, և ալյն:

Սպան, որ ժամանակին Խարբերդ Ապունայ եղած է, քիչ մըն ալ հայերէն զիտէ, ինձի ըստ. Տղաս, կը հասկնամ քու վիճակդ, հոգ չէ թէ քու հարազատ քոյրդ չէ, բայց երբ Քոլոնէլը գայ սապէս ըսէ իրեն. Սիրելի Քոլոնէլ, այս ազնիվը քոյրս է, նոր գտայ, այս բանակը մեր տունն է, և դուն ալ մեր հայրը, ես, ահա քոյրս տուն բերած եմ: Մնացածը ես կը բացատրեմ:

Անցաւ բաւական ժամանակ, ահա եկաւ Քոլոնէլը, իր հետևորդ սպաներով, և հազարի մօտ զինուորներ հաւաքուած էին մեր շուրջը: Երբ Քոլոնէլը ձեռն վար իջաւ, Քափթինին հարցուց. Ի՞նչ կը նշանակէ այս, ո՞վ է այս մարդը, ո՞վ է այս ազնիվը, ինչո՞ւ հաւաքուած են հոս: Քափթինը զիս ցոյց տալով, ինչ որ ես պիտի ըսէի Քոլոնէլին, ինք բացատրեց Քրանսերէն:

Քոլոնէլը սաստիկ բարկացաւ ինձի, և՛ Շուտ, բանտ տարէք, հրամայեց: Երբ երկու զինուորներ զիս զէպի բանտ կը տանէին, հոն հաւաքուած զինուորները սկսան մէկ բերան պոռալ. Եթէ Վահանը պատժուի, մենք բոլորս զենքերնիս վար կը դնենք, և ալյն...:

Քամփին մէկ ծայրը, խոշոր վրանի մը մէջ զիս բանտարկեցին: Իրիկուն էր, ժամը եօթի տեսնները, զիս տարին Լէյտնանտ Սահաթեանի քով. մտայ իր վրանը, հրամայեց որ նստիմ, սրկարէթ մը տուաւ ինձի, և ըստ. Աս, ծխէ ու հանգարտէ. կը տեսնեմ որ շատ յուզուած ես: Այո, չափազանց յուզուած եմ, անոր համար որ մենք մեր ապրուստը, մեր հանգիստը, մեր ապագան ձգած և եկած ենք, որ մեր հարազատները, մեր որբերը ապատենք. մեր կեանքն ու արիւնը կու տանք, սակայն մեզի բանտ կը գրկեն:

Ան ըստ. Հանգարտէ, որ քեզի բռնեմ թէ ինչո՞ւ կանչած եմ հոս. քեզի կանչեցի հոս, որպէսզի պատմես ինձի, թէ ի՞նչպէս հանցիք ազնիվը արարին տունն. Քոլոնէլը կ'ուզէ մանրամասնօրէն զիտնալ. սա ալ բռնեմ որ Քոլոնէլը զիս նոր կը վերադասնայ ժողովէն, անպիտանի և Քրանսայի բարձր պաշտօնեաները այսօր ամբողջօրը ժողով ունէին. Քրանսայիները չէին ուզեր հայ զառթականները հաւաքելու դորձը յանձն առնել. այս բանը թողուցած էին անպիտաններու. ու երբ դուն կ'երթաս զառթական մը կը հանես արարի մը տունն, ատոր համար Քոլոնէլը շատ բարկացաւ քեզի. հիմա ճիշդ

ու ճիշդ պատմէ, թէ ի՞նչպէս հանցիք այդ ազնիվը արարին տունն. այժտք է այս իրիկուն իսկ յանձնեմ ձեր պատմածը. Քոլոնէլին, որ վաղը ճշգրտի ամէն բան:

Լաւ, կը պատմեմ, սակայն կրնա՞ս նստի ինձի ըսել թէ ի՞նչ եղաւ ազնիվը, արարի՞ն տուիք, թէ դեռ հոս է:

Սիրազ հանգիստ պահէ զափրալ, ազնիվը և ուրիշ զառթականներ ալ, Վաղարշակ Վարդապետին հետ, մէկ ժամ առաջ համբայ ելան զէպի Հայֆա, որ անկից ալ եզրպոստ, վրանաքաղաքը տարուին:

Ես հանգիստ սրտով պատմեցի ամէն ինչ. ան ըստ որ ես կը քարեփոխեմ և կը յանձնեմ Քոլոնէլին. հիմա ալ շիտակ քու վրանդ գնայ, ալ բանտ չունիս...:

Շնորհակալութիւն յայտնեցի և դուրս ելայ. իբաւ ալ, պահանքերը հոն չէին, ու դացի շիտակ իմ վրանս, ուր մեր տղաքները հաւաքուած էին. պատմեցի ամէն բան:

Երկու օր վերջը ճամբայ ելանք զէպի Պէյրութ: Օրական տասը ժամ կը քալէինք, իրիկունները ծովեզրքի աւաղներուն վրայ կը գիշերէինք: Հասանք Պէյրութ. մաս մը քաղաք մնացին, մաս մը կաշէր զրկեցին: Երկու ամիս մնացինք Պէյրութ: Պէյրութի մէջ ինձի տունն մատակարարի պաշտօն:

Շուտով եկան անգլիական նաւերը, մեզի փոխադրեցին Կիլիկիա: Ելանք Մերսին, նոյն օրը մաս մը Մերսինէն տարին Ատանա: Ատանայի մէջ երկար չպահեցին մեզ. փոքր մաս մը մնաց. միւս 700 զինուորներս փոխադրեցին Այրան: Այստեղ ժամանակին գերմանեթուրք զինուորներու բանակատեղին եղած է. ունէր 21 խոշոր պարագներ, երկու փուռ, մի քանի աղբիւրներ: Հոս է Թուրքիոյ ամենամեծ թունէլը՝ 6600 ոտք երկարութեամբ, Հալէպէն Ատանա թրէնի գիծը սակից կ'անցնի. հոն կար միայն հունարացի ծերուկ ինձիներ մը իր կոտջ հետ, որ այդ թունէլի իրձերուն հոգ կը տանէր:

Իւրաքանչիւր գումարտակ իր սեղը գրաւեց. մեզի բաժին ինկաւ բոլորովին առանձին երկու պարագներ, որ մէջտեղէն կ'անցնէր ձոր մը բաւական առատ ջուրով, և մեզի մօտ էին նաև հունարացի երկու ծերուկները: Օրական մէկ կողմ մեր գումարտակին համար կը սօրթուէր: Մնացած բանջարեղէնները պէտք էր գնէինք շրջակայ գիւղերէն, որպէս մատակարար ևս պատասխանատու էի բանակի ուտելիքին, հապուստներուն և սօրթեայ բոլոր բաներուն. մի քանի զինուոր հետս, շարունակ կը շրջէի գիւղերը, գնումներ ընելու համար:

Օր մը իջած էի Պաղչաճք, բաւական խոշոր գիւղաքաղաք մըն էր, ունէր կոհիկ շուկայ, այտեղէն կը գնէի մեր կանաչեղէնը եւ ծխախոտը: Օր մը Օսման անունով թուրքի մը բանջարանոցը վացած էի կանաչ Փասուլիա գնելու: Օսմանը եւ իր կիները գացին Փասուլիա հաւաքելու: Ես երկու գինուորներով, նստած ծառի մը շուքին տակ, մեր պաղ թանը կը խմէինք. մեր շուրջը կը խաղային քանի մը թուրք լահուաներ. մէկ ալ լսեցի որ լակոտ մը կը պոտար՝ Կեամուրըն գզի, փոքրիկ աղջկայ մը:

Երբ պարտիզպանը բերաւ մեր ուղածը, հարցուցի անոր թէ ո՞վ է այս փոքրիկ աղջիկը, որ աղուզ մէկը կեամուրըն գզի ըսաւ: Ան պատմեց այսպէս. Սիւի հայերը գիշերով տակից անցուցին. առտուն մենք երբ դուրս ելանք, այդ փոքրիկը սա անկիւնը նստած, կու լար. ներս առինք եւ ուտելիք տուինք իրեն ու այն օրէն ի վեր կը մնայ հոս. երկու աղայ ունէի, այդ ալ երեք թող ըլլայ, ու այսպէս, երեք տարի է ի վեր մեզի հետ է:

Ես վստահ եղայ որ հայ էր այդ աղջիկը եւ ուզեցի ունենալ, ու ըսի Օսմանին. Օսման աղա, ըլլա՞ր որ այդ աղջիկը քանի որ քու հարազատդ չէ, տես ի՞նձի: Պէ՛ գարտա՛ ըսաւ, դուն գինուոր մըն ես, օր մը հոս, օր մը ուրիշ տեղ, այս աղջիկը տանք նէ ի՞նչ պիտի ընես:

Ես ըսի թէ Ատանայի մէջ աղգական ունիմ, հոն կը տանիմ: Իրաւ ալ երբ Ատանա եկանք, գտած էի հօրաքոյրս, այսինքն հօրս հօրաքոյրը. ծերուկ կին մը, փեսան եւ իր աղջիկը, ու երկու հաս ալ թոռներ:

Մարդը չէր ուզեր տալ մեզի. Մենք զինքը շատ կը սիրենք, ես աղջիկ չունիմ, Էւայլն, Էւայլն: Սակայն ես շատ պնդեցի. ան նկատի առաւ, որ դուցէ գնումներս ալ դաղընքնեմ: Վերջապէս համաձայնեցաւ, որ մօտ ժամանակէն տայ ինձի, պայմանաւ որ երկու օխայ շաքար եւ մի քանի խալը պատն պամ իրեն. այն օրերուն շաքարն ու սապոնը աւելի արժէք ունէին քան դրամը:

Յաջորդ օրը մեր պահեստէն վերցուցի երեք օխայի շափ շաքար, շորս խալը պատն, բաւական մըն ալ աղ եւ տարի շիտակ Օսմանին. ըսի որ, ես կ'երթամ Ահմէտին խանութը ծխախոտ գնելու, դուն պատրաստէ աղջիկը, որ երբ դամ, տանիմ հետս:

Մխախտը առած էի, սառի քիչ մըն ալ չամիչ, լապլապի եւ դացի շիտակ Օսմանին: Աղջիկը, որ ութը տարեկան կար, մաքրած, պատրաստած էին, հարցուցած էին. ըսի իրեն, թէ ես իր մենք եղբայրն եմ, իր հարազատ մօրը քով պիտի տանիմ. բաւական դրժ-

ուարութեամբ, բայց վերջապէս եկաւ հետս. սառի ձիւս վրայ եւ հասայ քամի: Տարի շիտակ այդ հունգարացի ծերուկին քով, խոտացայ որ թէ իր եւ թէ ալ ձեր ուտելիքը ես կը հոգամ, թող մնայ հոս, մինչեւ ժամանակ ունենամ տանելու Ատանա:

Յետոյ շիտակ դացի Քափթընին քով, բացատրեցի ամէն բան. ան որ զիս շատ կը սիրէր, չմերժեց զիս, եւ ըսաւ, քանի որ այդ երկու ծերուկներուն քով դրամ ես, թող մնայ. շնորհակալութիւն յայտնեցի եւ դուրս ելայ:

Լուրը չուտով շրջան ըրած էր ամբողջ քամիք. մեր գիւղացի տղաքներէն շատերը եկան քովս այդ իրիկուն եւ մանրամասնութիւնը պատմեցի իրենց: Արդէն ամբողջ գինուորները կը խօսէին որ դափրալ վահանը երկրորդ աղջիկ մը եւս աղատած է: Կերակուրներէն բաժին մը, դադանի, կը զրկէի ծերուկին տունը ամէն օր, շատ անգամ կըտոր մը միս, ամէն օր դործս լրացածին պէս կը վազէի աղջկան քով: Անունը Այրիայ էր. երկու ծերուկները, որոնք աղջիկ մը ունեցած են ու մեռած է, եւ որուն անունը Աննա էր, այս աղջկան անունը զրին Աննա. ամիսներ անցան. ծերուկ կիներ իր հարուստէն հաստ մը կտրած, ձեւի բերած, հարցուցած էր, գինուորական դիտարկ մըն ալ զրի զլուրը: Այլեւս համարձակ կը պտրտէր քամիին մէջ: Տղաքը ձեռքէ ձեռք կը խէին, կը տանէին դունդին Չուգլուկը, շուրինըմ կ'առնէին իրեն: Ու օր մըն ալ գործով դացած էի Օսմանի. վերադարձիս Աննային համար գնեցի կօշիկ, ապակիէ ապարանջան, օղեր, եւ մի քանի կանպուն ալ ծաղկաւոր կտոր: Մերուկը կարեց աղուոր Քիւթան մը. ուրախ էի ես, սրտանց կը սիրէի զինքը: Ու յանկարծ կանչեցին զիս պիւտօ, մեր Քափթընը ըսաւ որ ամիսի մը շափ դործդ յանձնէ ուրիշի մը եւ դուն մեր Լէյտենանտին հետ պիտի երթաս, քանի որ բաւական լաւ թրքերէն կը խօսիս ու բաւական մըն ալ Քըրանսերէն. պէտք է երթաք շրջակայ գիւղերը, մարդահամարի համար, զրի առնէք. դուն թարգմանի զերը պիտի կատարես. հրամանը այս է վերէն:

Ճար չկար վախուստի: Ու յաջորդ օրն իսկ ճամբայ ելանք 20 ձիւուրով. քարտէսին վրայ նշանակուած էր թէ ամէն օր ուր պիտի ըլլանք, անոր համեմատ մեզի ուտելիք կը զրկէին ամէն օր:

Սկսանք կարգով գիւղերը երթալ: Ես կը հարցնէի, գիւղը քանի՞ տուն ունի, որքա՞ն բնակչութիւն, ի՞նչ գործով կը զբաղին, ի՞նչ է ձեր ապրուստը: Իսկ մեր Լէյտենանտը կը զրէր Քրանսերէնով:

Այս խումբին մէջ ունէի ինձի հետ մեր Մարտիրոս Տէրոյանը: Օր մը մեր տեղը փոխուած էր եւ մեզի ուտելիք բերողները

էկին գտած մեզ եւ եւ վերադարձած էին: Այդ իրիկուն ուտելիք չունեցանք, հակառակ որ երեք զինուոր շարունակ հոն կը պահէինք որ մեզի ուտելիք բերողը մեզի գտնէ. սակայն պզտիկ սխալի մը համար եւս դարձած էին:

Բայց մեր Տէրոյեանը ճարպիկ տղայ է. փոխանակ ամբողջ օրը սրշուած տեղը սպասելու, կ'երթան վարը, ձորը, լողալու: Հոն կը տեսնեն թուրք լակոս մը, որ հորթեր կ'արածէ. երբ կը տեսնէ մեր զինուորները, կը փախչի. իսկ մեր տղաքը կը բռնեն հորթ մը եւ կը մորթեն. սակայն կը վախնան եփելու. կը սպասեն մեզի:

Երբ մենք վերադարձանք, պատմեցին ինձի ամէն բան, եւ քանի որ մեր ուտելիքն ալ եւս վերադարձած է, կամայ մը հասկցուցի Լէյտենանտին: Ան թիչ մը բարկացաւ թէ եւ, սակայն հաւանութիւն տուաւ որ եփեն: Տղաքը կանխաւ փայտ հաւաքած, պատրաստած էին. շուտով սկսանք եփել. եւ փառասոր ճաշ մը ըրինք այդ իրիկուն: Յաջորդ առտու կանուխ փոխադրեցինք մեր քամփը:

Օսմանիէ տանող ճամբուն վրայ, ազրիւրի մը քով, նոյն օրը երկու զինուոր զրկեցինք կեղբոնը, իրիկունը ուտելիքներով վերադարձան մեր տեղը: Յաջորդ օրը երեք զիւզ հազիւ մնացած էր գրեւու. նոյն օրն ալ մնացինք մեր տեղը: Գիշերը պահակները դրած էի արդէն. մնացածները կը քնանային: Առաւօտը դեռ չբացուած, մեր Տէրոյեանը շարժեցած, ճամբորդի ձայն կ'առնէր ըստ, ելլալ պահակներու քով դացի: Իրաւ ալ, շատ մը ջորեպաններով ճամբորդներ վեր կու գային, բեռնաւորուած խողովով, որ կը տանէին Օսմանիէ, ծախելու: Առանց այլեւայլի ամէնքն ալ կը բերէին խողով կու տային մեզի: Մենք թոյլ առւինք որ անցնին:

Այդ օրը, մինչեւ իրիկուն, լմնուցինք մնացած երեք զիւզերն ալ ու առանց տեղ մը գիշերելու, շիտակ քալեցինք դէպի բանակատեղին: Գիշերը ուշ տեսն հասանք:

Ես դացի շիտակ Աննային քով. պտուկած էին բոլորը. ծերուկ կ'ինը ըսաւ, որ երթալէլ ի վեր կուլայ Աննան. կ'ըսէր որ այլեւս կ'որոնցուց քեզի. նոյնիսկ մինչեւ Քաթիթինին քով դացած եւ բողոքած է, որ ես ինչու հոն չեմ: Մերուկը պատմեց նաեւ որ Սիսէն էրիկ եւ կ'ինիկ մը եկած են Տոքթ. Յակոբեանին քով. կ'ինը շատ հիւանդ եղած է, բերած են հոս. ճանչցած են ալջիկը, անունն ալ Յասմիկ է եղեր. ուզեր են տանիլ, սակայն մեր երկու ծերերը չեն տուած, ըսելով որ անոր տէրը հոս չէ. Այրանի քիւրտերը յաճախ պանիր եւ սեր կը բերէին մեզի ծախելու:

Օր մը երկու հատ ալ ուլ բերած էին հետերնին. մէկը ես առի, միւսն ալ մեր Տէրոյեանը, առին մեր Աննային: Այժմ շիտակ անուռով մեր Յասմիկին, որ արած է. ես նորէն սկսայ շարունակել մատակարարի գործը:

Օր մը նորէն եղած էի Պաղչաճիկ: Գացի շիտակ հեռադրատունը. մարդը ծանօթ էր ինձի. հարցուցի թէ արդեօք կ'արելի՞ է որ ասիկից հեռադիր մը դարնեմ մինչեւ Խարբերդ. քանի որ պատահութիւն չունէինք Ատանայ երթալու. լսած էի որ հօրեղբայրս ողջ է եւ կը մնայ Խարբերդ, Մազրան: Մարդը ըսաւ ինչու չէ, կ'արելի է. ասիկից Ատանա կը դարնենք, անկէ ալ Խարբերդ, ու ես առի հեռագիր մը ստպէս. Բալու, Հաւաւցի Հաճի Պաղտասար, Հայոց եկեղեցի: Մարդն ըսաւ երեք-չորս օրէն երբ գաս, կ'իմացնեմ պատասխանը:

Երբ վերադարձայ քամփ, պատմեցի տղոց. մեր երուանդը սկսաւ ծաղրել զիս. Հէ, տղաք, մեր Վահանը Փրովխտենակն Նիւ Եորք կը կարծէ ասիկից Խարբերդ հեռագիր տալը...:

Այն օրերուն ամէն զինուոր եւ ամէն ոք ալ Հայոց եկեղեցիին հասցէով նամակներ կը գրէին. ես ալ գրած էի Տիգրանակերտ եւ Հալէպ, Հաւաւցի կը փնտռէի: Չորս օր անցած էր, երբ նորէն դացի Պաղչաճիկ. դացի շիտակ հեռագրատուն. մարդը տուաւ հեռագրիս պատասխանը. հօրեղբայրս գրած էր այսպէս. Վահան գրէ Հայոց եկեղեցիի հասցէով...:

Չափազանց ուրախ էի այդ օր: Վերադարձայ շուտով քամփ եւ պատմեցի տղոց. ամէնն ալ սկսան նամակ գրել: Հօրեղբորս երբ նամակ կը հասնի, ամօղլիս երուանդը կ'ըսէ. Հայրիկ, ես կ'երթամ Ատանա. քանի որ մեր տղաքը եւ մեր Վահանը հոն զինուոր են:

Ու հօրեղբայրս շուտով ճամբայ կը հանէ մեր երուանդը դէպի Տիգրանակերտ, անկէ ալ Հալէպ:

Բաւական օրեր անցած էին, օր մը նամակ մը առի Տիգրանակերտէն, Թագուհի ձէլալեան ստորապրութեամբ. ես չէի ճանչնար այս Թագուհին. սակայն մեր տղաքը գիտէին թէ ով է իմ նամակը գրողը, իր ձեռքը կը հասնի ու որպէս Հաւաւցի գրած էր այսպէս. Հօրեղբորը տղան երուանդը մեզի մօտ է, վաղը կը գրկենք Հալէպ. արդէն Հալէպի թրէնը մեր քովէն կ'անցնի, Ատանա երթալու լուր առինք որ հասած է Հալէպ եւ լսեցինք որ յաջորդ օր իսկ պիտի գայ մեր քով:

Իրիկուն էր, ժամը վեցի տեսները, թրէնը կանգ կ'առնէ մեր տեղը. անկէ կ'երթայ Ատանա. մենք բոլոր զիւզացիներս հա-

ւաքուած էինք թունկլի բերանը. ես պատուիրեցի տղոց որ բան մը չըսեն իմ մասիս, տեսնեք կը ճանչնա՞յ զիս. փոքր հասակիս բաժնուած էի իրենցմէ :

Եկաւ թրէնը, Երուանդը դուրս ցատկեց, մեր տղաքը բոլորը ճանչցան զինքը. իսկ նա կը կրկնէր իբրբու ետեւէ. ո՞ւր է մեր Վահանը, ո՞ւր է մեր Վահանը. Թինթիկեան Կարօն բերնէն փախցուց. Վահանը երէկ Ատանս գնաց, վաղը կը դառնայ : Մէկ ալ տեսնեմ մեր Երուանդը ցատկեց թրէն. երբ Գըլտղան Երուանդը վար քաշեց, ես արդէն փաթթուած էի Երուանդին :

Առինք եւ տարինք իմ տեղս, մեր տղաքը հաւաքուեցան բոլորը. երբ եկաւ մեր սերժանը եւ հարցուց թէ ո՞վ է այս սիւլիլը, ինչո՞ւ կեցած է հոս, չէ՞ք զիտեր որ սիւլիլ մարդը զինուորներու մէջ կենալը արդիւրեւած է :

Ես բախ որ երաջարս է, նոր եկաւ Հայկպէն, քսան տարի է որ չեմ տեսած. քիչ մը ժամանակ տուր, շուտով կ'երթամ Քափթընին քով :

Շուտով զացի մեր Քափթընին քով եւ պատմեցի եղելութիւնը. ան խորհուրդ տուաւ որ իմ զինուորական հազուստներէս մէկը իրեն հազցնեմ, ինք կը պատուիրէ սերժանտին որ աչք զոցէ, եւ պատուիրեց որ երկար չպահեմ : Շարաթ մը պահեցի քովս. ամէն օր իրիկունը ճաշէն վերջ կը հաւաքուէին մեր զիւղացի զինուորները, ամէն ալ հազար ու մէկ հարցումներ կ'ընէին. պատմեց շատ բաներ. պատմեց թէ ինչպէս իմ հեռագիրս առած են եւ ինչպէս հասած է նաեւ իմ նամակը. ու երբ լսած է որ մեր զիւղացիներէն շատերը կամաւոր եկած են Կիլիկիա, հօրը շատ կ'աղաչէ, որ ճամբայ ելլէ : շուտով մեր քով զալու, ու հօրեղբայրս Հաճին երկու ոսկի կ'ունենայ քովը եւ կու սայ Երուանդին ու շուտով ճամբայ կը հանէ զպի Տիգրանակերտ, անկէ Հայկպ, ու մեր քով :

Շարաթը լրանալու վրայ էր. կանչեցի Պետրեան Մարտիկը, ըսի որ ուշերը բաւական մեծցած են, վաղը Կիրակի է, կ'ուզեմ որ վաղը մեր աղաներով սղուոր քէՖ մը ընենք. ես իմ ուրս պիտի մորթիլ տամ, կ'ուզե՞ս որ քուզի ալ մորթենք : Ան հաւանութիւն տուաւ :

Լուր տուինք բոլոր մեր Հաւաքի զինուորներուն. Կիրակի օր ուշերը մորթուած էին, զրկեցինք փուր կարմրցնելու : Տղայ մը Պաղչաճիքէն մէկ կալտնի շափ օղի դտած էր : Տղաները օրուան իրենց բաժին զինին չէին խմած եւ պահած էին :

Կէսօրուան ժամը մէկի տեսները քաշուեցանք քամփէն դուրս, խոչոր ծառի մը տակ, սրուն մօտերը կը բխէր աղբիւր մը պող եւ

զուլալ ջուրով. Տղաքը հաւաքուած էին. օղին եւ զինին փոխնիփոխ կը դառնար տղոց մէջ. երկու հողիւղացին բերին կարմրցուած ուլերն ալ :

Երբն ու պարը սկսած էր. երբ ձայներնիս հասած էր քամփը, զինուորներ շարան շարան սկսան զալ զէպի վեր, մեր քովը : Եկան նաեւ մի քանի Քրանտացի սերժանտներ, եկան նաեւ մի քանի սպաներ, որոնց մէջ մեր Քափթընը : Իմացան եղելութիւնը : Մեր Քափթընը հրաման տուաւ որ փոքրիկ տակառ մը զինի վեր բերեն. բոլորս ալ շատ ուրախացանք :

Գինիի առատութիւնը տաքցուց մեր քէՖը. ամբողջ օրը շատ զեղեցիկ ուրախութիւն մը բրինք, սպաներն ալ մեզի հետ :

Յաջորդ օրը, Երկուշաբթի, մեր Երուանդը հազցուցինք կէս-սիւլիլ, կէս-զինուորական հազուստներով եւ ճամբեցինք թրէնով. շուտով զրկեցի Ամերիկա, եղբօրս, որ դրամ հասցնէ, Երուանդը Ամերիկա զրկելու :

Միակ յիմարութիւնը որ ըրի, Յամփին ալ հետը չըրկեցի Ատանս, այն ալ կը մտածէի որ մեր հօրաքոյրը, որ աղքատ էր արդէն, չուզեցի աւելորդ բեռ մըն ալ աւելցնել անոնց վրայ, եւ խորհեցայ որ ժամանակ մըն ալ քովս կը պահեմ, բաւական մը դրամ կ'աւելցնեմ, Ամերիկայէն եղբայրս ալ կը հասցնէ, այն ատեն կը տանիմ, հօրաքոյրս քով, որ իրենց ալ բեռ չըլլայ :

Սակայն ափսո՞ս որ այս հաշիւներս սխալ դուրս եկան :

Անցած էին եօթը ամիսներ, որ մենք Այրան էինք : Քէմալի չէթէները ծայր տուած էին, վայնաստներ ինկած էր Կիլիկիոյ բոլոր շրջանները. Քրանտացին ու անպիտան կ'ուզէին ճգմել զեռ շատ շտաբածուած. ու սկսան հոս ու հոն զինուորներ զրկել : Լուրը հասաւ մեր քամփն ալ. որոշեցին մեր զինուորներն ալ զրկել հոս ու հոն :

Մեզմէ մաս մը զրկեցին Տէօրթ Եօլ. նորէն կանչեցին զիս պիւռօ. տուին ինծի երկու արագահարուած, 30 զինուոր, Քրանտացի սպայ մը. մեզի բաժին ինկաւ Իսլահէն : Այս անգամ նորէն մեր զիւղացի միայն Տէրոյեանն էր ինծի հետ :

Շուտով ելանք ճամբայ. մեզի միացան 100 թրքական ժամատարմա, Քրանտական հրամանի տակ երկու սպայով. երրորդ օրը մեզի միացան անպիտան զուռ մը 200 զինուոր եւ սպաներով :

Մեր ճակատը կը կազմէր Իսլահէնէն Քալթա Քէօրբիւ, մինչեւ Սասս զիւղը. ինձ բաժին ինկաւ Սասս, մաս մը անպիտան զինուորներով եւ մէկ սպայով. անոնք ալ ունէին հայ թարգման մը

հետևանքներն, Պարբերիցի երիտասարդ տղայ մըն էր :

Անցած էր երկու շաբաթ, բայց մենք դեռ թշնամիի չէինք հանդիպած : Յաճախ զիս կը զրկէին Պատայի հեռագրատունը . պաշտօնական թուրք մըն էր, բայց լաւ մարդ էր . հեռագիրները կու գային թիւերով . ես կը վերածէի մեր թիւերուն . մեր սպան կը կարգար այդ թիւերը եւ կը հասկնար եղելութիւնը :

37 օր մնացինք այդ կողմերը եւ բնաւ կոխ չունեցանք . եւ վերադարձանք նորէն մեր քամփը . մեր քամփը դեռ չհասած, կէսօրուան մեր ճաշը բրինձ Բաղլարի մէջ, որ քսան տուննոց հայ զիւղ մըն էր, ուր հազիւ երեք տուն մարդ մնացած էր, դեռ դապիթակա-նութեան մէջ էին . հայ տունի մը բակը քամփ զարկինք . տանտէրն ու իր կինը դուրս ելան . ունէինք աստա քրինձ եւ ալլ ուտելիքներ, բոլորը տունը անոնց :

Անոնք ըսին, զուրք հանդիստ բրէք, մենք ձեզի կ'եփենք ձեր կերակուրը : Մեզի համար եփեցին պղտուրով փիլլաւ եւ աստա թան :

Մարդուն անունը Մարկոս էր իսկ կնիկան անունը Մարօ . շատ քաջ կին մըն էր . յաճախ կ'ըսէր . Տղաք, ինձի Բաղլարի Մարօ կ'ըսեն . . . :

Հասանք քամփ : Երկու տարիէ ի վեր արձակուրդ տուած չէի . իրաւունք ունէի . տասը օր էր թուղթերս եկած էր . սակայն խտուր արդիւրուած էր որեւէ մարդ դուրս ելլել քամփէն . նպատակս էր արձակուրդի երթալ Պոլիս, անկէ մէկ գիշեր կ'առնէր արդէն նաւով Ռումանիս . կուզէի երթալ մեր տունը, հայրս ողջ էր դեռ եւ հոն էր . սակայն չտուն հրամանագիրս եւ հաւատացուցին որ չուտով պիտի տան :

Մեր քամփ հասնելու երկրորդ օրն էր որ մեզ ճամբայ հանեցին զէպի Մարաշ . քամփը ամբողջութեամբ պիտի փոխադրուէր Մարաշ . ժամանակ չեղաւ որ Յասմիկը զրկէի Ատանա . հետո տանիլ անկարելի էր . ունեցած գրամներս տուի Յասմիկին եւ ձերուներուն պատուիրեցի որ չուտով զրկեն Ատանա . տուի Տորաքրոջս հասցէն, եւ չուտով զրկեցի նաեւ Տորաքրոջս :

Այն իրիկուն մինչև կէս գիշեր քովը նստեցայ, հազար ու մէկ խոստումներ տուի իրեն, մինչև քնացաւ, ես ալ գացի իմ տեղս :

Ատուն ժամը հինգ էր, փողը հնչեց, մէկ ժամէն բոլոր գինուորները պտրաստ էին . ես վաղեցի Յասմիկին քով . դեռ կը քնանար . համբուրեցի կամաց մը, դուրս ելայ եւ վաղեցի գինուորներու մօտ :

Ճամբայ ելանք զէպի Մարաշ : Ահա հոս էր որ շատ զղջացի որ

մեր Երուանդին հետ ինչու գայն ալ չզրկեցի :

Երկու օրէն հասանք Մարաշ : Մեզմէ առաջ անգլիացի եւ հինգիկ գինուորները հոն էին . մեզ բաժնեցին քսան տարրեր զիրերու վրայ . յաջորդ օր հնդիկները քաշուեցան : Մնացինք մենք միայն, 500 հայ գինուորներս . ինձի բաժին ինկաւ Մարաշէն երկու քիլոմէթր հեռու տեղ մը, ուր պահակ պիտի կենայինք :

Այն օրերուն իմ գիւղացի Մատթէոս Լէյլէկեանն ու Նշան Թըրթիկեանը հետո էին . մէկ շաբաթ վերջը մենք դարձանք քաղաք, ուրիշներ իմ տեղը առին :

Հոն էր որ նկար մըն ալ հանած ենք, ես, Մատթէոս եւ Քաջեան Պազտասարը :

Մարաշ հասնելով, իմ գինուորներս տեղաւորեցին զօրանոցի տակ, հսկայ ձորի մը բերանը, խրամատներու մէջ : Պահակները իրենց կարգին կը կատարէին իրենց բաժին ինկած պարտկանութիւնը . գիշերները կը քաշուէինք մաս մը զօրանոցին քով, փոքրիկ սնակ մը, ուր մաս մը սպաներ կը բնակէին վերը . իսկ տակի յարկը պատին ծակ մը բացած էինք, ներս կ'երթայինք եւ կը պառկէինք :

Նորէն զիս կանչեցին պիւոս . այս անգամ Մարաշէն Իսլահիէ պիտի երթայի, մեր պահեստը փոխադրելու եւ կարմիր խաչի զեզերը, մահճակալները :

Ինձի տուին տասը գինուոր, 17 կառք, 12 սիփիլ կառուպան : Մեր Քափիթընը որ եկաւ ձի ունէր . պատուիրեց որ փոխն ի փոխ գործածենք, որ միշտ շարժման մէջ մնանք :

Այս փոխադրական գործը տեւեց հինգ շաբաթ . երկու օրէն կը հասնէինք Իսլահիէ բեռնուած, երեք օր կը տեւէր դառնալ Մարաշ, Մարաշէն Իսլահիէ ճամբան ուր մուրը եւ շատ վտանգաւոր տեղ էր, մէկ կողմը լեռներ, թուրք զիւղերով լեցուն, միւս կողմը մինչդեռ Ջանջիլի ճահիճ էր հսկայ տարածութեամբ . վերջին շաբաթն էր որ այլևս կը լրացնէի գործս ու այն օրը որ մենք զէպի Իսլահիէ կ'երթայինք, Ջանջիլի գիւղը չհասած, երկու թուրքեր մեզի ըսին որ Ջանջիլի անդին Չէթէները մարդ սպաննած են . մենք կարեւորութիւն չտուինք եւ շարունակեցինք մեր ճամբան, բայց այս անգամ կարգադրեցի, երբ կը մօտենանք Մակ Քարին, (այս Մակ Քարը տեղ մըն է, որ Ապտաթը ճեղքած, ճամբայ բացած են, որ միակ տեղն է, որ կրնայ կառքերը անցնիլ, մէկ կողմը ճահիճ, միւս կողմը խոտ անտառներով լեռ) : Տուի պատերազմական ձեւ . կառքերէն վեց հատը առաջ պէտք է երթան, վեց հատն ալ վերջը թող հետեւին ու գինուորները իրարմէ բաւական մը հեռու չզրկալ կազմած,

վերան կողին պէտք է քայլին:

Այս ձեւով շարունակեցինք մեր ճամբան, առանց որեւէ վը-
տանդի, անցանք այն տեղէն եւ ելանք անտառներէն դուրս ու հա-
սանք Ջանջիլի, առանց կենալու երանք բաց դաշտի վրայ, կառքերը
կլոր շրջան կաղմել տուի. ձիերը եւ մենք կառքերու ներսի կողմը
քամի գրինք:

Չորս հոգի Նշան Չաւուշի հետ գրկեցի դիւզը, մեզի ուտելիք
բերելու համար: Վերգարձին պատմեցին ինչ որ թուրքերը ըսած էին.
գիշերը հոն անցուցինք:

Առտուն կանուխ ճամբայ ելանք. լուրը հասած էր արդէն Մա-
րաշ. Մարաշէն հեռագրած էին Իսլահիէ, Մարաշէն գինուոր հանած
են ճամբայ, նաև Իսլահիէյէն մաս մը հեծելազօրք, սրպէսդի մեզի
օգնութեան հասնին:

Մենք նոյն օրը կէսօրին էր որ հանդիպեցանք հեծելազօրքին:
Անոնց սպան հարցուց ինծի թէ որեւէ կռիւ ունեցա՞ծ ենք Ձէթէնե-
բու հետ: Ես ըսի. Ոչ, միայն լսած ենք որ այս կողմերը երկու հոգի
զարնուած են եղեր: Սպան ըսաւ որ մեզի Մարաշէն հեռագրած են
որ դուք կռիւի բռնուած էք: Ես նորէն կրկնեցի թէ ոչ: Արեւմն դուք
չէք, եւ շարունակեցին ճամբան դէպի Մարաշ:

Իրիկունը ուշ ատեն մենք հասանք Իսլահիէ, ու նոյն գիշերն
իսկ բնացանք մնացած ապրանքները եւ ես գացի պիւսո, տուի տե-
ղեկութիւն, որ մենք որեւէ կռիւ չենք ունեցած ճամբան: Հոս էր որ
լրիւ իմացայ թէ, սրպէս թէ մենք կռիւ ունեցած ենք Ձէթէներու
հետ, սրպէս թէ երկու հոգի զարնուած է, այդ իսկ պատճառաւ Մա-
րաշէն հեռագրած են Իսլահիէ, թէ Իսլահիէյէն եւ թէ ալ Մարաշէն
գինուոր գրկած են մեզի օգնելու:

Հրամանատարը հարցուց. Ե՞րբ ճամբայ պիտի ելլես: Ըսի.
Առտուն կանուխ: Լաւ, ըսաւ, վաղը քեզի հետ պիտի գան 40 գին-
ուորներ, որ հիւանդանոցէն ելած են, այժմ լաւ են, պիտի գան միա-
նալու ձեզի. եւ հոս սնտուկ մը կայ, որ քեզի պիտի յանձնեն ճամ-
բայ ելած պահուղ. երկու հարիւր հազար Փրանք կայ ատոր մէջ.
ձեր ուտելիքի եւ գինուորներու ամսական զրամն է. սեւէ գինուոր
պէտք չէ գիտնայ բացի քեզմէ:

Բարեւեցի ու դուրս ելայ: Կանչեցի Նշան Չաւուշը, պատուի-
բեցի որ առտուն ժամը վեցին ճամբայ պէտք է ելլենք: Հաւաքեցի
ինծի հետ եկող գինուորները եւ անոնց եւս ըսի որ ժամը վեցին
ճամբայ պիտի ելլենք, պատրաստ պէտք է ըլլաք:

Յաջորդ առտու, սրտուած ժամուն, ամէն մարդ պատրաստ

էր: Ես եւ Նշան Չաւուշը դացինք պիւսոն, առինք սնտուկը եւ գրինք
իր կառքին մէջ, եւ պատուիրեցի իրեն որ այս սնտուկին մէջ կայ
չատ սուպոց դեղեր. պէտք է որ ամէն գնով հասցնենք Մարաշ. եւ
եղանք ճամբայ. հասանք Մարաշ. այլեւս լրացած էր փոխադրու-
թիւնը:

Ձիս նորէն գրին իմ գինուորներով, զօրանոցի կողքին, ձորի
մը բերանը: Մեր գէմ կար թրքական կարմիր բերդը, ձախ կողմեր-
նիս էր թրքական գերեզմանոցը ու քիչ մը վար, ձորին սակ կար
Հայոց Ս. Յակոբ եկեղեցին:

Մարաշի կռիւը սկսաւ 1919 Դեկտ. 27ին, տեւեց մինչեւ 1920
Յունուար 21ը, 24 օր շարունակ պաշարուած մնացինք 20-30 հազար
թուրք ու քիւրա սիվիլներով: Կտրուած էինք բոլորովին դուրսի աշ-
խարհէն: Հեռագրական թելերը բոլոր կտրած էին. անթել հեռագիր
ալ չունէինք հետերնիս: Ուտելիքնիս լրացած էր. ամէն անգամ որ
ձի մը կամ ջորի մը զարնուէր, կը մորթէինք շուտով եւ գինուորնե-
րու կերակուր կ'եփուէր:

Կռիւի երրորդ շարաթն էր, որ սրտչեցին մի քանի գինուոր
ծպտուած զրկէն դուրս, որ լուր տանին Իսլահիէ:

Առաջին փորձը ձախողեցաւ. երկրորդ փորձը պիտի ընէինք,
երբ երկու քիւրաի հագուստով ծպտուած Ձէթուցի հայեր եկան
մեզի մօտ. բերած էին նամակ մը մեր հրամանատարէն: Կը պահան-
ջէին հինգ հարիւր գէնք, յիսուն հազար փամփուշտ. եթէ իրենց
տրուին ասոնք, շատ մը Ձէթուցիներ կու գային մեզի օգնութեան:

Ֆրանսական սպաները մերժեցին այս առաջարկը: Կը խոր-
հէին որ այս անգամ մարդ կրնան դուրս զրկել: Ու ես զրուեցայ
կամաւոր, եւ իմացուցի Պիւսոյին իմ ծրագրես, սպէս. քանի որ
այս երկու Ձէթուցի երիտասարդները կըցան մտնել Մարաշ, կըր-
նան նաև դուրս ելլել: Ես պիտի հագուէի աղջկայ հագուստ, այս
երկու քիւրաերը զիս սրպէս հայ աղջիկ պիտի փախցնէին, որով նա-
մակ մը գրգանս պիտի անցնէինք պաշարման շղթան: Այս ձեւը շատ
յարմար դատեցին. դտան հագուստները. սրտուած էր յաջորդ գի-
շերը զիս փախցնելու համար:

Մեր երուանդը հետս կը կուէր շարունակ, թէ՛ մ'երթար,
էջ նահատակ պիտի ըլլաս. ու շատ մը մեր զիւլպայի տղաներ կը ցա-
ւէին վրաս:

Սակայն մեր բախտէն, նոյն օրը իրիկուն ժամը չորսի ատեն-
ները օգանաւ մը եկաւ, տասը տարբեր տեղեր թուղթեր նետեց, որ
հազիւ մուծը կռիւիւն նորէն կու գամ: Երբ մուծը կռիւեց, նորէն

եկաւ. ինքը վերէն, մենք վարէն լոյսի նշաններով հասկացոյցինք ա-
մէն բան: Ան մեզի բաւ որ իրենք զիտան թէ մենք պաշարուած ենք,
չուսով կու դան, Իսլաւճիկի թնդանօթները եւ զինուորները պատ-
րասա թող ըլլան, որ դուրս դան. ու այսպէս այդ ծրագիրս ջուրը
ինկաւ:

Կոյրը կը շարունակուէր. մանաւանդ զիշերները. լուր բերին
տղաքը որ Փաշալեան Սողոմոնը զարնուած է: զիս կ'ուզէ. վաղեցի
իրենց զիրքը. Սողոմոնը կու լար, կ'ազաչէր, որ զինք հոն չթո-
զուի: Հող մի ընէր, քեզ անպայման հետերնիս կը տանինք, ըսի:

Չորանոցը լեցուն էր թրքական զէնքերով եւ փամփուշտը ա-
ռատ էր, բայց զէնքերու մէկ մասնիկը թուրքերու քով էր, այդպէս
կարգադրուած էր անպիտաններու օրով:

Հրաման ելաւ որ բոլոր զէնքերն ու փամփուշտները պէտք է
կտորուին: 48 ժամ ժամանակ ունէին, որ Մարաշէն դուրս պէտք էր
գալին:

Յաջորդ օր հասան թնդանօթները. սկսաւ ոմրակոծուծը թըր-
քական թաղերու. քաղաքի որոշ թաղերը սկսան այրիլ. իրիկուն էր.
զինուորները եւ տանեակ հազարներով դադթականներ լեբան կո-
զէն սկսան քալիլ մութին մէջէն, գէպի թնդանօթները: Թնդանօթ-
ները կը ճեծէին զիմացի լեռներն ալ. անանկ որ թշնամին գրեթէ
դադրեցուցած էր կրակիլը:

Երբ զինուորներն ու սիփիլները կը քալէին զէպի թնդանօթ-
ները, մենք մեր տանեակով մնացինք յետսապահ: Ինծի յանձնը-
ւած էին երկու միսիոնարուհի. մէկը ուրիշին յանձնեցի: Մամթէոս
Լէյլէկեանին: Օտեան Սաշիկին յանձնեցի մեր Ամուն Սողոմոն Փա-
շալեանը, հեծցուցած Քափթընի մէկ ձիուն:

Երբ բոլոր ժողովուրդը եւ զինուորները հեռացած էին զօրա-
նոցէն, մեր սպան հրաման տուաւ որ կրակի տանք. պարկերով բո-
լոր վառօթները. հեռացանք զօրանոցէն, կրակ տուինք մէջ ծայրէն,
չուսով հասաւ զօրանոցի վառօղի տեղին ու մէկ ալ կարծես երկինք,
զեւտին իրար անցան, պայթեցաւ զօրանոցը ու սկսաւ վառիլ:

Սկսանք քալիլ զէպի թնդանօթներու կողմը. շուարած մեր
ճամբէն, ես եւ ընկերուհիս, ամերիկացի միսիոնարը, ինկած էինք
բրինձի ալրի մը մէջ. մինչեւ ծունկերնիս ջուրերու մէջ, մութին
մէջէն կը քալէինք. վերջապէս հասանք վեր, որոշ տեղը. ճամբան
հարցուցի իր անունը շրտաւ միսիոն Սմիթ, պրիշիօրը քանաթքերէն էր.
ես ալ ըսի եկած եմ Ամերիկայէն, Փրովիտենս քաղաքէն, թէ եւ ան
չատ բաներ խօսեցաւ, բայց ես անգլերէն շատ լաւ չէի գիտեր:

Երբ հասանք թնդանօթներու մօտ, մենք ալ բարբոսեցանք
կրակին մօտ եւ սկսանք մի քիչ տաքնալ:

Եկաւ առաւօտ. Չինուորներէն մաս մը սկսած էին քալիլ զէ-
պի Իսլաւճիկ. մեր խումբն ալ սկսաւ քալիլ: Ես 15 զինուորով մնացի
յետսապահ: Մեր ետեւ մնացին թնդանօթները, որ դեռ կը ոմրա-
կոծէին բոլոր գիրքերը:

Մեզի հետ կային, բացի մեր զինուորներէն, երկու հարիւր
Ալճերիացի զինուորներ եւ եօթէն ութը հազար գաղթականներ. շա-
տերը ստուցան ճամբան, նաեւ հարիւր Ալճերիացի զինուորներ: Այդ
իրիկուն հասանք Ջանջիլլի: Գիշերեցինք բացօթեայ. ձիւնը սկսաւ
տեղալ: Վարձած էինք քանի շափ տավարներ, որ կը քալէին մեր
առջեւէն, ձիւնին վրայէն ճամբայ բանալու համար մեզի:

Երբորդ օրն էր որ հասանք Իսլաւճիկ: Հարիւրաւոր տեղեր
կայարանի շուրջը կրակներ կը վառէին, խուճը խուճը բարբոսուած
կրակին շուրջը կը տաքնային, ոմանք տուներու մէջ, ոմանք բացօթ-
եայ: Թէչեւ ձիւնը դադրած էր, սակայն երկու ոտք թանձրութեամբ
ձիւն եկած էր արդէն: Ով անկիւն մը կը դանէր կրակին քով, պրան-
քէթը վաթթուած կը նստէր:

Մարաշէն մինչեւ Իսլաւճիկ, բոլոր զիւղերու արջառը քշած բե-
րած էին զինուորները. տանեակներով մորթուած եղ, կով, հորթ
կար հոս ու հոն. ամէն մարդ կտոր մը կը փրցնէր, փայտի մը ծայրը
կը բռնէր կրակին վրայ եւ առանց այլի կ'ուտէր: Ամէն բան խառ-
նակ վիճակի մէջ էր. ոչ մեծ մնացեր էր, ոչ պղտիկ եւ ոչ ալ կարդ
կանոն. ամէն մարդ իր գլխուն ճարը կը նայէր:

Վեց օր մնացինք Իսլաւճիկ. ցերեկը կրակներու շուրջ կ'անցը-
նէինք, իրիկունները դեռ մութը չկոխած, ամէն զինուոր տուն մը,
ախոտ մը, վերջապէս պատսպարուած տեղ մը կը թխամուէր: Ես զի-
շեր մը մի քանի զինուորով ախոտ մը մտայ եւ քնացանք մտուրներու
մէջ. չորս զիշեր ալ դուրսը վրաններու տակ անցուցի. շորբորդ
զիշերն էր որ ընկերներս իմացուցին որ շատ աղուոր տեղ մը գտած
են. իրիկունն ճաշէն վերջ, կամաց կամաց քալեցինք զիւղին մէկ
ծայրը, թուրք տուն մը կար հոն. ունէր բաւական խոշորիկիկ ախոտ
մը. մէկ կողմը կապուած էր մէկ ձի, մէկ կողմ, երկու հատ ալ ոչ-
խար: Իսկ միւս կողմը քիչ մը բարձր եւ մաքուր տեղ մըն էր, օ-
ճախ մըն ալ կար. տղաքը ցերեկը բաւական փայտ տարած էին.
քովի սենեակը թուրք էրիկ կնիկ մը դուրսը գոցած պտտկած էին.
Երբ մենք հոն հասանք, ցերեկը արդէն հայ էրիկ կնիկ մըն ալ մէկ
անկիւնը նստած էին, երկուքն ալ Մարաշցի:

Ընդամենը հինգ զինուոր էինք. կրակը կը վառէր, տեղը տաք, պլանքէթնիս փռեցինք եւ երկնցանք: Կէս զիշեր էր երբ այս մարդուն կինը սկսաւ լալ. էրիկը կու լար, կինը կու լար:

Տղաքը արթնցան եւ սկսան հայհոյել. ես ալ բարկացայ թէ այսօր քանի օր է որ չենք քնացեր, ձայններնիդ կտրեցէք որ քիչ մը քնանանք. մարդը դարձաւ, թրքերէն հասկցուց, որ կինը տղարեքի մէջ է, ցաւեր ունի, եւայն: Պէ աղբար, ժամանակը գտաք: Տղոց ըսի որ ելլեն, փայտ մը պատէն կանդնեցնեն, փայտ մըն ալ առատադէն վար, պլանքէթին մէկն ալ կապեն ծայրերէն մեր եւ անոնց միջեւ, բաժնեն: Կէս ժամ շանցած, փոքրիկին ձայնը լսեցինք. հայրը կու լար, մայրը կու լար, փոքրիկը կու լար:

Մեր ընկերներէն Օննիկը ելաւ ոտքի, չեմ գիտեր ի՞նչ բարութիւն էր որ պիտի ընէր, սոքը սահեցաւ, ինկաւ կրակին մէջէ փայտերուն վրայ. կրակը ցատկեց առատապղը, որ չօր եղէզներով ծածկուած էր, բռնկեցաւ առատապղը, սկսաւ վառիլ:

Ախոռի ձիուն, կոճին եւ ոչխարներուն կապերը կտրեցինք, դուրս հանեցինք, կինն ու երեխան դրինք իմ պլանքէթիս մէջ. արդաքը ծայրերէն բռնեցին, հանեցին դուրս, կրակէն բաւական մը հեռու գրինք ձիուն վրայ, էրիկն ալ քովը, եւ մենք հեռացանք, երբ քովի սենեակէն թուրք կինն ու մարդը սկսան պոռալ. Ասքեարլար սովորի ետեւը լար...:

Մեր տղաներէն մաս մը քամփի դացին. ես եւ Օննիկն ալ մօտակայ ջաղացք մը կար, հոն մտանք, լուցկի մը դարկի. մի քանի զինուորներ տեսայ, որ ոտքերնին ջուրին մէջ, կոթնած պատին, կէս քուն կէս աթոն: Հոն էր նաեւ մեր Մատթէոս Լէյլէկեանը, կոթնած իր հրացանին, կը քնանար. ելանք ատկից ալ դուրս եւ դացինք ամպարները որ դաղթականները լեցուցած էին. հոն ալ տեղ չգտանք եւ դարձանք քամփ. լոյսը բացուած էր արդէն:

Հինգերորդ զիշերուան վրայ կը մտածէի, երբ մեր երուանդը գիս տեսաւ եւ հրաւիրեց իր հօթէլը: Երուանդին հօթէլը թրէնի վահոն մըն էր. թէեւ վրան գոց էր, սակայն այնչափ ճեղքեր ունէր, որ ցուրտ քամին կը փչէր ներս. մի քանի պլանքէթով մաս մը տեղ գոցած էին սպանները. մէկ անկիւնն ալ երկու խոշոր մանդալ կար կրակով լեցուն: Երուանդը անոնց աչճըն էր: Ես ալ դարձայ անոր օգնական եւ այդ զիշերն ալ հոն դացի: Սակայն իմ բարձայ, ստակալի փորձարութիւն մը բռնած էր գիս, պէտք էր ամէն երկու վայրկեանը անցած մը դուրս ելլէի. չերկարենք, վերջապէս լուսուցեցինք: Յաջորդ օրը թրէնները եկած էին. Մեզ լեցուցին վահոնը եւ

դարձանք դէպի Ատանա. սակայն մեզմէ մեծ մասը մնացինք ձիահան:

Երբ ձիահան հասանք, հոն իմացայ որ Այրան մարդ չէ մնացեր, այն ծերուկ հունգարացին եւ կինն ու մեր Յասմիկը գացած են Ատանա:

Բաւական ուրախ եղայ, թէեւ դեռ վստահ չէի որ Յասմիկը հօրաքոյրենցս մօտ հասած է: Գացի պիւռօն, որ Մափօրը բարեկամս էր. խորհուրդ հարցուցի թէ արդեօք կրնամ երկու օրով արձակուրդ մը առնել, գէպի Ատանա երթալու համար: Ան ըսաւ որ ներկայիս անկարելի է սեւէ զինուոր քամփէն դուրս դրկել. սպասէ, երբ ժամանակը գայ, առաջին պատեհութիւնը քեզի կու տամ:

Գրեցի շուտով Ատանա. լուր առի որ Յասմիկը իրենց քով չէ, կը փնտռեն: Անցաւ երկու շաբաթ, բարտոս ժպտեցաւ. կանչեցին պիւռօ. մեր Քափթընը պահարան մը տուաւ, մէջը լեցուն թրքական դրամ, երկու օրուան ալ փոսի թուղթ մը եւ ըսաւ. Գնա, տես Տրդքմըրընի քափթընը եւ մեր լէյտենանտը. անոնք ալ տուին մէկ մէկ պահարան դրամով լեցուն. պէտք է շիտակ Մերսին երթայի եւ այդ դրամները յանձնէի անոնց տիկիններուն, որ Ֆրանսայէն եկած, Մերսին, հոտեղերը կը բնակէին:

Ելայ դուրս, եկայ իմ վրանս, մաքրուեցայ եւ դացի շիտակ կայարան. կէսօրուայ ժամը չորսի ատենները կու դար հալէպի թըրէնը հոն ու անկէ Ատանա ու Մերսին, վերջին կայանը կ'երթար: Ժամանակին եկաւ թրէնը, ու ելայ վակոն:

Մտածեցի, լաւ է որ շուտով նախ Մերսին երթամ, դրամները յանձնեմ, ու գառնամ Ատանա, որ աւելի ժամանակ ունենամ Յասմիկը փնտռելու, ու այդպէս ալ ըրի:

Մի քանի ժամէն հասայ Մերսին: Գացի շիտակ այն պանդոկը, ուր տիկինները կը մնային: Պանդոկապետը գիս տարաւ մեր Քափթընին տիկնոջ սենեակը. տուի նամակը եւ դրամը, ըսի որ երկու հատ պահարան եւս կան, որ պէտք է տամ. ան ըսաւ հոս կեցիր. դրնաց կանչեց միւս երկու տիկիններն ալ. ամէնքն ալ ստին իրենց նամակները եւ պահարանները եւ աղաչեցի որ շուտով գրեն պատասխանը, այս զիշեր իսկ կ'ուզեմ դառնալ Ատանա, հոն աղապականեր ունիմ, կ'ուզեմ զիշեր մը անոնց հետ մնալ. մեր Քափթընին կ'իկը՝ Մատամ Քանթոն, որ լրացուցած էր իր նամակին ընթերցումը, հանեց պահարանէն հինգ պանքոթ, եւ ըսաւ. Հիմա ժամանակ չունիմ նամակին պատասխանելու. առ այս հինգ ոսկին, գնա լաւ ժամանակ անցուր. վաղը ժամը սասին եկուր կը ստանաս պատասխանը. միւս

տիկիններն ալ մէկը տուա հինգ ոսկի թուղթ դրամ, իսկ մեր լէյ-տենանտին տիկինը տասը հառ տուաւ. բոլորն ալ ըսին որ վաղը տասին կը ստանամ պատասխանը հակառակ իմ պնդումին. ճար ձկար, պէտք էր սպասէի մինչեւ վաղը տասին, երբ մատամ Գանթոն ըսաւ. քանի՞ օր արձակուրդ տուած է քեզի Գափթընը. ըսի երկու օր միայն. առաւ ձեռքիս թուղթը եւ աւելցուց վրան երեք օր եւս, եւ ըսաւ, հոգ մի ընեմ, ես կը գրեմ իրեն: Շնորհակալութիւնս յայտնեցի եւ վար իջայ:

Գացի շիտակ պանդոկապետին ըսի որ այս գիշերուան համար սենեակ մը կ'ուզեմ. պանդոկապետը որ յոյն մըն էր, ըսաւ. Տղաս, հոս քեզի յարմար չէ, հոս սպաններ եւ անոնց տիկինները կը կենան. դուն հոս հանգիստ չես կրնար ընել, լաւ է որ ուրիշ պանդոկ մը երթաս: Եւ տուաւ ուրիշ անդոկի մը հասցէն. հոն շատ գինուորներ կան եւ հայ գինուորներ ալ շատ կան. հոն աւելի հաճոյսի տեղ է, գինուորներու համար:

Հասցէն տաի եւ դուրս ելայ, գտայ տեղը, ներս մտայ. մէկ կողմը ճաշարան էր եւ խմելիքի տեղ. բաւական մը դրամ ունէի քովս, քսան պանֆօթ ալ անոնք տուած էին. մտածեցի որ լաւ ճաշ մը ընեմ նախ, յետոյ սենեակ մը:

Երբ մտայ ճաշարանը, լեցուն էր տարրեր ազդերու գինուորներով. տեսայ նաեւ մեր բանակէն հայ գինուորներ. պարսպ սեղան մը գտայ եւ սպասուրեցի կերակուրս. դեռ կերակուրս չեկած, երկու հայ գինուոր շարորդ քրմփանիէն մօտեցան ինծի. մէկը ծանօթ էր եւ նստեցան. սկսանք խօսիլ. եկաւ կերակուրս. եկան նաեւ շատ մը ուրիշ հայ գինուորներ. պատմեցի թէ ինչպէս եղաւ որ եկած եմ Մերսին:

Շատերը կը փափաքէին իմանալ Մարաշի նահանջին մասին. իսկ ես հարցութիւն չէի ցածրիկին եւ հունգարացիներուն մասին. անոնցմէ մին, որ տեղեակ էր ամբողջ պատմութեան, ըսաւ որ ամիսէ մը աւելի է որ անոնք անպիտան նաւով գացին, եւ այլն, եւ այլն: Յուսախարութիւնս մեծ եղաւ եւ չափազանց նեղուեցայ. ամսուս որ խեղճ Յասմիկս յայտնուեցաւ կ'ըրանցուցի:

Չինուորներէն մէկը տեղ ունէր իր սենեակը, հոն պտուկեցայ այդ գիշեր. յաջորդ օրը ժամանակին գացի եւ առի նստակները եւ գացի Ատանա. հոն հասնելուս լսեցի որ Փաշալեան Մոզմոնը հոն, հրահրանոցն է. գացի իր քով. վէրքը բաւական լաւ էր, սակայն թեւը դեռ չէր կրնար շարժել. բժիշկները որոշած են որ թեւը կըտրեն. ես խորհուրդ տուի անոր որ թոյլ շտայ որ թեւը կտրեն. վաղը

Ամերիկա կը վերադառնաս, հոն աւելի լաւ բժիշկներ կան, դուցէ՛ ճար մը գտնեն:

Երկու օր ալ մերիներուն հետ անցուցի եւ դարձայ ձիւհան, մեր Գափթընին քով. ան բարկացաւ ուշանալուս համար, բայց երբ էր տիկնոջ նամակը կարդաց, սկսաւ խնդալ եւ ներքեց ինծի:

Երեք ու կէս ամիս մնացինք ձիւհան. սկսած էին մաս առ մաս գինուորները արձակել, որ երթան Ատանա. վերջին կարգադրութիւնը հոն պիտի ըլլար. կարգը եկած էր նաեւ ինծի. անին մեր գինուորական հագուստները եւ զէնքը. կէս գինուոր, կէս սիվիլ բան մը ճարեցինք, անցուցի վրաս եւ եկայ Ատանա. թէ եւ շատ դժուար էր սիվիլ նոր հագուստ մը գնել այն օրերուն, սակայն բաւական կոկիկ բան մը յարմարեցուցի:

Երկու օր էր որ Ատանա էինք. կը պատրաստուէի վերադառնալ Ամերիկա. առաւ մը մեր դուռը դարկին, գինուորական մաքուր հագուստները մը զիս կը հարցնէր: Երբ հօրաքոյրս զիս վար կանչեց, գինուորը մաքուր հայերէնով մը ինծի ըսաւ. Մերժանտ Արամեան, Պ. Տամատեանը քեզ կ'ուզէ:

Ես որ Պ. Տամատեանի անունը միայն լսած էի, ըսի իրեն որ ի՞նչ ունի ինծի հետ Պ. Տամատեանը. ճամբան ան ըսաւ որ անոնք ըսել ունին թէ ոչ կ'արձակուի բանակէն:

Այս երիտասարդը, Մկրտիչ Փօրթուզալեանի պղտիկ տղան՝ Օննիկ Փօրթուզալեանն էր եւ իր եղբայրը Վահան Փօրթուզալեան, որ Ատանայի փոխ-կառավարէն էր այն ատենները:

Հասանք դոց շարժիլ մօտ գեղեցիկ շէնք մը, մտանք ներս խոշոր սրահէ մը. հոն էր Տամատեանը, Ազգային Միութիւնը, իր կազմով, միջ-կուսակցական բոլոր ներկայացուցիչները, Հանրմեանը, Պրոտիպոլի երկու եղբայրները, Տոքթ. Սալիպեան, Սեղբակ Շահէն, ձէմ Չանգալեան, Գափթըն Շիշմանեան եւ ուրիշներ:

Երբ զիս տեսան, Պ. Տամատեանը զիս իր քով կանչեց եւ ինքը ստիկ ելաւ ու ըսաւ ներկաներուն. ահա հառ մը եւս ունեցանք, եղաւ երկու. թող սկսին գործի, մինչեւ որ ուրիշներ ալ գտնենք:

Ես շուարած բան մը չէի հասկնար այդ խօսքերէն: Երբ Պ. Տամատեանը դարձաւ ինձ եւ ըսաւ. Տղաս, երեք տարիներէ ի վեր Ազգային հանդէպ պարտականութիւնդ կը կատարես, բայց դեռ պակաս մաս մը կայ, որ պէտք է լրացնես, մեզի հետ այս անգամ. մենք ունինք երկու հարիւր արձանադրուած գինուորներ, շուտով այս թիւը կը բարձրանայ 5000ի, ասոնց մարդիչներ պէտք են. երբ ձեր աղաքը բոլոր արձակուին, մեր ձեռքին տակ կ'ունենանք բաւական

մը մարդուած զինուորներ. դուն զիտես որ Ծճ հազար զաղթականներ լեցուած են Ատանա. Ազգային Միութիւնը առանց վարժ զինուորներու չի կրնար կառավարել այս ժողովուրդը. քեզի հոս կանչեցինք որ մարդես այս տղաքը. ունինք հաս մը արդէն. կը խնդրենք որ չմերժես:

Ես անակնկալի մը առջեւ գտնուեցայ, չէի գիտեր ինչ պատասխանէի: Միայն կը յիշեմ որ սաշափ մը ըսի իրենց. Դուք գիտէք որ արձակուող ունէ կամաւոր վեց ամիս միայն ժամանակ ունի իր եկած տեղը վերագտնալու, անկէ վերջ Ֆրանսական կառավարութիւնը պատասխանատու չէ այլևս. ես աւելի կը նախընտրեմ վերադառնալ Ամերիկա:

Նոյն պահուն Բափթըն Շիշմանեանը ոտքի ելաւ ու ըսաւ. Այս բոլորի ներկայութեան պատուոյ խօսք կու տամ որ ինչ գնով ալ ըլլայ, քեզի ինծի հետ միասին Ամերիկա կը հասցնեմ վաճան, ես պիտի մնամ եւ կ'ուզեմ որ դուն եւս մնաս ինծի հետ, որ քիչ մը մարդինք այս տղաքը:

Ես որ Բափթընին վրայ հիացող մըն էի, չմերժեցի այլևս եւ ըսի. Կ'ընդունիմ ձեր պայմանները. Պ. Տամատեան համբուրեց զիս եւ ըսաւ. վաղը եկուր Ս. Նշան եկեղեցին. հոն ունինք ուրիշ սերժանտ մը. կը ծանօթացնենք քեզի հետ:

Այս սերժանտը, Տիգրան Կիրակոսեան, յիտունի մօտ, այժմ զեռ ողջ է եւ կը բնակի Լոնկայլընտի կողմերը:

Յաջորդ օրը զացի եւ սկսանք դործի. ամէն օր տասնեակներով նոր կամաւորներ կ'արձանագրէին. թիւը հասաւ չորս հարիւրի. ընդհանուր հրամանատարը Բափթըն Շիշմանեանն էր, իր օչնականը ձէմ Չանգալեանը: Ամէն կուսակցութիւն ունէր իր կառույ խումբը. մեր զինուորներուն հաղուսան ու ուտելիքը կը հոգար Ազգային Միութիւնը, եկեղեցիի կողքին, որ Հայոց դպրոցն էր, հոն տեղաւորած էինք բոլոր զինուորները:

Ունէինք 11 հատ հայ աղջիկ զինուորներ, անոնք առանձին սենեակ մը կը սպասէին. ուրիշ սենեակ մըն ալ Շիշմանեանին էր. ես հօրաբորջս առնը կ'երթայի ամէն իրիկուն:

Բաւական կարգի դրած էինք զինուորները. աղջիկներն ալ մաղբրին կտրած, ազայի պէս հագած էին: Ձիւորական հաղուստ ունէին բոլորն ալ: Շուտով բաժնեցինք մասերու եւ սկսանք մարզանքի. զիմացի կաթողիկ եկեղեցւոյ բակը աւելի լայն էր եւ յարմար. հոն կը տանէինք խումբ խումբ ու կը մարզէինք: Նախապէս առանց զէնքի:

Սկսաւ խլրտումը Ատանայի մէջ: Թուրքերը իրենց ընտանիքներով մաս առ մաս կը փոխադրուէին դաշտերը եւ թուրք զիւղերը, շատ մը թուրք խանութպաններ ալ դոցած էին իրենց խանութները եւ քաղաքէն հեռացած էին: Ոլրտումը սաստկացաւ, կոխը սկսաւ:

Մաս մը թաղերու մէջ, մենք քսան տարբեր տեղեր զինուորներ զետեղած էինք. երբ օր մըն ալ կոխը սաստկացաւ, թուրքերը ձգեցին Ատանան ու փախան բոլորն ալ: Բերքը որ հասունցած էր ու ամբողջը դաշտն էր, եւ քաղաքի ժողովուրդն ալ կը նեղուէր ուտելիքէ. ահա այդ օրերուն էր որ զիս կարգեցին վաշտապետ եւ երկու արագահարուած ու ԴՅ զինուորներ տուին ինծի եւ զրկեցին դաշտ. Չանգալեանը տասը ձիւորով մեզի հետ էր:

Ելանք դաշտ. փախան շրջակայ զիւղերու թուրքերն ալ ձիւհան գետի միւս կողմը. ամբողջ պարտէզներն ու դաշտը իր բերքով մեր ձեռքը մնաց:

Հասած էինք արդէն Գաարիպէկի Չուխլըլը. տղաքը բաժնեցի չորս տարբեր զիւղերու մէջ. քաղաքէն զրկեցին յիտուն հաս նոր զինուորներ եւս ու ժողովուրդին հրաման տուին որ գայ դաշտը, բերքերը հաւաքէ, քաղաք տանի: Մեզի հրաման եկաւ որ աւելի առաջ երթանք:

Գացինք մինչեւ Սիսի գետափը, ուր միւս կողմը թուրքերն էին: Օրական հարիւրներով կու դային դաշտ կառքով, ձիով, էջով, կը բեռնէին եւ կը տանէին: Քաղաքի ճամբուն վրայ զրի տասը զինուոր. սրուցի իւրաքանչիւր կառքէ երկու թրքական թղթոսիկ գանձել, իսկ ձիով եւ էջով եկողները մէյ մէկ թղթոսիկ: Բաւական դրամ կը հաւաքէինք. կը բաժնէի զինուորներուն: Ինծի ալ կոկիկ գումար մը կը մնար:

Անցած էր երեք շաբաթներ, երբ սուրհանդակը լուր բերաւ, որ զիս քաղաք կ'ուզեն. Չանգալեանը վաղուց զացեր էր արդէն: զինուորները յանձնեցի տասնապետներու եւ ես զարձայ քաղաք:

Գացի շիտակ այն շէնքը որ առաջին անգամ զիս հոն տարին. հաւաքուած էին նորէն Ազգին մեծերը. սրուցեցաւ որ անկախ հրուշակենք Կիլիկիան: Ժենեբալ Կուրօն զացեր էր Պէյրութ. Սենեկալցի զինուորները քիչ էին. Ֆրանսացի սպաներէն մաս մըն ալ համակիր էին մեզի:

Ինծի պատուիրեցին որ երբ լուրը ստանամ, դաշտէն շիտակ պէտք է քալէինք Օսմանիէ. ես պիտի դրաւէի Օսմանիէն եւ զիս կառավարիչ պիտի ընէին հոն: Օսմանիէն այդ շրջանի ամենամեծ զիւղաքաղաքն էր, հոն պիտի սպասէին նոր հրահանգներու:

Ես գիշերով վերագարծայ իմ տեղս: Այս ժողովին մէջ տեսայ նաև մեր Մանուկ ձէլալեանը ու անկէ ի վեր այլևս չտեսայ զինք, մինչև որ Տէր Վահան ձեռնադրուած, եկած էր Ամերիկա, ճիշդ մեր տունը:

Հասած էի դաշտ. առաւ կանուխ հրաման զրկեցի որ բոլոր զինուորները զան Գատրիպէկի Չութլըկը. անոնց բացատրեցի եղևլութիներ եւ ըսի պատրաստ եղէք ամէն ժամ, երբ լուրը դայ, քաղաքէն, շուտով ճամբայ պիտի ելլենք զէպի Օսմանիէ:

Մենք կը սպասէինք լուրի, երբ լսեցինք որ յաջորդ օրն իսկ Պ. Տամատեանը դացած է Սարայ. Վալին, որ թուրք մըն էր, վար առած է. Տամատեանը նստած է Վալիին տեղը: Հեռագրիցը հասած է Պէյրութ, Կիլիկիա անկախ հռչակուած. Ժեներալ Կուրծոն օդանավ կը հասնի Ատանա. Փրանսական մի քանի մարտանաւ Ալճերիացի զինուորներով լեցուն, Մերսին կը հասնին, անկէ Ատանա, խաղաղութիւն կը հաստատեն:

48 ժամ հազիւ կեանք կ'ունենայ Կիլիկիոյ անկախութիւնը:

Մինչ մենք դեռ որոշ հրահանգի կը սպասէինք դաշտը: Չորբորդ օրն էր որ խումբ մը զինուորներ կու գային զէպի մեր կողմը. բոլորն ալ Ալճերիացի, Փրանսական սպայ մըն ալ հետերնին: Երբ հասան մեզի, Փրանսացի սպան թուզի մը տուաւ, որուն վրան զբռնուած էր այսպէս. «Վահան, հաւաքէ բոլոր զինուորները եւ դարձիք քաղաք: Փորթուգալեան»: Հաւաքեցի զինուորներս եւ դարձանք քաղաք. մտանք դպրոցի բակը, ուր զրան վրայ Փրանսացի պահակներ կային. երբ ես ուզեցի դուրս ելլել, չթողուցին:

Շուտով եկաւ Պ. Վահան Փորթուգալեանը. ան իմացուց որ հաւաքեմ իմ եւ Շիշմանեանի զոյքերը եւ երթամ իրեն հետ. իր հետ կար նաև ուրիշ սպայ մը եւ երկու զինուոր:

Ես ըսի, հոս որեւէ բան չունիմ, իմ ամբողջ զոյքերս հօրաքորջս տունն է, երթեմ աննեմ եւ դամ. հաւաքեցինք Շիշմանեանի պայուսակներն ու հաղուստները. կառք մը որ եկած էր դուրսը, զրան մօտ, երկու Ալճերիացի զինուոր եւ յիննապետ մը, իրենց հրաջաններով, ամէն բան զրինք կառքին մէջ, աղաչեցի որ երթանք կառքով իմ զոյքերս ալ աննեմ. Փրանսացի սպան հակառակը պընդեց, ու զիս ալ զրին կառքը եւ քշեցին քաղաք:

Դուրսը մուտք կոխած էր արզէն, եւ ո՞ր կը տանէին զիս, չէի զիտեր. չորս ու կէս ժամ տեւեց, երբ հասանք զիւզ մը. զիս ալ առին եւ թիւեցին տուն մը: Հոն էր որ տեսայ Աղգալին Միւթեան բոլոր անդամները եւ Շիշմանեանը, նաև Մեղրակ Շահէնը:

Շիշմանեան զիս տեսնելուն պէս շատ յուզուեցաւ եւ բառաւ: Այս աղուն կեանքին պատճառը ես եղայ: Հոս հասեցայ որ աքսորած եմ մեզ բոլորս ալ:

Յաջորդ օրը մեզ զրին զինուորական բաց թրօքները եւ առին Ախարճայ, ծովեզերեայ զիւզ մըն էր, ամբողջ օրը ջնկատ մը զինուորներ պահակ դրած էին մեր վրայ. իրիկունը դեռ մուտք չկոխած, տեսանք ճերմակ նաւ մը, որ կը մօտենար մեր կեցած զիւզին:

Եկան երկու նաւակներ, մեզի փոխադրեցին նաւը, որ Փրանսական կարմիր խաչ նաւ մըն էր. ելանք նաւը. մեզի տունն երկու քահան պլանքէթներ եւ բացօթեայ տեղ մը, ուր բոլորուեցանք եւ նստանք:

Ամէն մարդ տխուր էր եւ անխօս. անօթի էինք. ուզեցինք որ կերակուր տան մեզի. ըսին որ կերակուրի ժամանակը անցած է:

Շիշմանեանը փայփը կը ծխէր. ես սկսայ շրջիլ եւ իջայ վարի յարկը: Կուզէի գտնել ճաշարանը, այն յոյսով որ դուրսէ բան մը կընամ գտնել ուտելու. ու իրաւ ալ, երբ մօտեցայ ճաշարանին, տեսայ որ մէկ անկիւնը երկու ծովային զինուոր կը ճաշէին արդէն: Փրանսական զինուորի հագուստ ունէի վրաս. մօտեցայ անոնց եւ ըսի անօթի եմ. զինուոր մը որ հազիւ կէսը կերած էր պնակին, երկարեց զայն ինծի, իսկ միւսը կանչեց աշփին. ան ըսաւ որ քիչ մը փաթաթէսով կերակուր կայ աւելցած. լեցուց ամանի մը մէջ եւ ըսաւ, նստէ եւ կեր:

Կարծեմ գիտէին մեր ո՞վ ըլլալը. ես տեսայ որ կերակուրը շատ է միայն ինծի, ըսի. կընամ այս կերակուրը տանիլ վերի ընկերներուս ալ: Աշփին ըսաւ որ խիստ կերպով արդիւրուած է, եթէ հոս կ'ուզես, կեր շուտով: Իսկ զինուոր մը ըսաւ. դուն զնայ վերը եւ սպասէ սանդուխներու զլուխը, ես միջոցով մը կը բերեմ: Շնորհակալութիւն յայտնեցի եւ դացի վեր, ուր Մեղրակ Շահէնն ալ եկած էր: Ըսի ձայն մի հաներ, սպասէ: Զինուորը եկաւ, մի քանի կտոր հաց ալ հետը բերած:

Երբ հացը տարինք, ամէն մարդ պատառ մը առաւ, բայց ոչ Շիշմանեանը, որ շարունակ յուզուած էր:

Յաջորդ առաւ հասած էինք Իսթանբուլուն. մեզի նորէն նաւակ զրին եւ հանեցին Իսթանբուլուն, տարին մեծ շէնքի մը մէջ եւ պահակներ զրին դուրսը:

Մեր առաջին գործը եղաւ ուտելիքի մասին խորհիլ. կանչեցինք պահակապետը, ըսինք որ ուտելիք կ'ուզենք զնել չուկային:

Ան տուաւ պահակ մը ինծի հետ: Պղտիկոյլի Կարապետ էֆէնտին ըսաւ. Վահան, առ սա քսան պանքնօթը, դնայ շուկայ, հոս ազուտը տէճնէր քէզպպ կը շինեն, առ մեզի, նաեւ պտուղ, շաքար եւ հաց: Գացի եւ առի, տուի թուրք լահոտի մը որ շալիէ եւ եկայ մեր տեղը:

Երեք օր էր որ ասանկ ախորժակով բան մը կերած չունէինք: Ճաշէն վերջը մեզ տարին կարակոլ: Բաւական մը հարցաքննեցին եւ մեզի իմացուցին որ այլեւս ազատ ենք, ուր որ ուզենք կրնանք երթալ, իրաց առեալ Կիլիկիայէն. իսկ ես ու Շիշմանեանը պէտք է մնանք Իսթանբուլում, մինչեւ որ մեզ ալ պիտի փոխադրեն Պէյրութ: Մեր վրայ արդէն գաղտնի ոստիկաններ զրուած էին: Բացի մեր կրուօքէն, մաս մը Կիպրոս դացին, մաս մը Պոլիս, միայն Տոքթ. Սալիպեանը մնաց մեզի հետ, որ Պէյրութ կ'ուզէր երթալ, իր ընտանիքը հոն էր:

Իսթանբուլումի մէջ կային շատ հայեր, ունէին Ազգային Միութիւն. օր մը մեզ բոլորս հրաւիրեցին ճաշի. հանեցինք շատ նկարներ. հոն հանդիպեցայ մեր Փրոֆիտենսի Վարդաշահ Վարդապետին, որ այլեւս աշխարհական գարձեր էր եւ ամուսնացած շատ զեղեցիկ հայուհիի մը հետ, վաճառականութեան սկսած էր. երբ զիս տեսաւ, զրկեց եւ համբուրեց եւ ծանօթացուց իր ազնիւ տիկնոջ, ըսելով. Ահա կը ծանօթացնեմ իմ մածուճիս գոյր: (Փրոֆիտենս, երբ մենք զինամարտական խումբ մը կը մարդէինք, եկեղեցիի տակի սրահին մէջ, այն ատեն Վարդաշահ Վարդապետը հոն կը բնակէր եւ շատ մածուն կը շինէր, ես ալ մարդանքէն ետք, կ'առնէի մածունէն եւ կ'ուտէի, ատանց Վարդապետին բան մը ըսելու. սակայն օր մը վրայ հասաւ, թէ եւ չըստիացաւ, բայց զիտցաւ որ ես էի ուսողը):

Ճաշը լրացած էր, վերադարձանք մեր տեղը: Կառավարութիւնը արդէն ամէն մէկուս համար երկու հարիւրական պանքնօթ տուած էր:

Ազգային Միութիւնը տասը հարար պանքնօթ հետք վերցուցած էր, որ բաժնեցինք մեր մէջ: Ես եւ Շիշմանեանը 15 օր մնացինք հոն, յետոյ նաւ մը եկաւ եւ մեզ տարաւ Պէյրութ: Տարին մեզի գորանոց, եւ ըսին, որ՝ եթէ կ'ուզէք պանդուկ մը երթալ բնակիլ, ազատ էք, բայց ամէն օր հոս, Պիւսո պէտք է գաք, ներկայանաք:

Մենք նախընտրեցինք պանդուկը: Լուրը հասած էր Ամերիկա արդէն, որ մեզի աքսորած են: Այն ժամանակները բոլոր հայ թերթերը զրամ էին մեր մասին:

Ես եղբորս զրամ էի որ ողջ եմ եւ կը մնամ Պէյրութ: Շիշմանեանի մայրը Ամերիկա էր. ան զիմօժ էր Ամերիկեան կառավարու-

թեան եւ բողոքած էր որ իր տղան եւ հետը ուրիշ զինուոր մը, Ալեքերիա աքսորած են: Ամերիկեան կառավարութիւնը կը զիմէ Ֆրանսական կառավարութեան, մեզի փնտռելու համար:

Շիշմանեանը գնաց Դամասկոս: Ես մնացի Պէյրութ: Դրամս սկսաւ ոտքը քաշել: Երբ Ամերիկայէն երիտասարդներ սկսած էին գալ Պէյրութ, ուր կ'ամուսնանային եւ կը վերադառնային Ամերիկա: Ես գործ մը գտած էի. երբ նաւ մը կու գար, կ'երթայի նաւահանգիստ, կը հանդիպէի հայ ճամբորդներու. անոնք որոնք ամուսնանալու համար եկած էին, կը տանէի շիտակ Պուրմանա, անգլիական աղջկանց որբանոցը, որ մէկը որ հաւնէին, կ'ըջնայինք Պէյրութ, տէրաէր մը կը կանչէինք պանդուկը, կը պատկէր եւ ես ալ կ'ընահայր կ'ըլլայի: Այսպէս ինը հայ աղջիկներ կարուցի: Այս աղջիկներէն, որոնք մայր զարձած են հիմա, կայ Նիւ Եորքի մէջ, Սիրայէթա, Տիթթոյթ, ողջ են եւ զաւակներու տէր:

Երկու ամիս մնացինք Պէյրութ. Ատանան նորէն պարպած էին հայերը: Մեր զինուորներէն յետոն հողի եկած էին Պէյրութ, հոն իմացայ որ հօրաքոյրս իր ընտանիքով գաղթած է Յունաստան. զոյգերս մանաւանդ, վեց հատ լաւագոյն գորգեր ունէի, ծախած կամ տարած են հետերին: Տղաք եկած, բայց անօթի կը թափառէին Պէյրութի փողոցները. եկան վասն զիս, ունեցածս ալ անոնց հետ կերայ եւ ես ալ մնացի ատանց զրամի: Շիշմանեանը զեւ Դամասկոս էր:

Ամերիկայէն ալ շատ մարդ չէր գար այդ օրերուն: Մեր հօթէլը կար Յարութիւն էֆէնտի անունով մարդ մը, որ նաւահանգիստ նաւակներ պարպելու եւ լեցնելու ընդհանուր անօրէնն էր: Դիմեցի անոր. ան խորհուրդ տուաւ, որ հաւաքեմ տղաքը. ան պիտի տայ մեզի օրական երկու նաւակ, որ պարպենք. մեր բախտէն մէկ նաւակը պտուղ էր, պարպեցինք շուտով, իսկ միւսն ալ ամուխ. բաւական կոկիկ գումար մը տուաւ մեզի: Այսպէս, տղաքը սկսան աշխատիլ:

Շիշմանեանը եկած էր, մօտ օրէն ճամբայ պիտի ելլէինք. Կիլիկեան մեր կամաւորներէն աղջիկ կամաւոր մըն ալ հասած էր Պէյրութ: Շատ կը թախանցէր որ ես հետս Ամերիկա տանէի. կը մտածէի որ զրամ չունիմ ճամբու ծախսի համար: Դիմեցի Շիշմանեանին, պարզեցի ինդիքը. ան ըսաւ. ես ճամբու ծախսը յանձն կ'առնեմ, դուն ալ մնացածը լրացուր. եւ վացինք շիտակ ամերիկեան հիւպատոսին քով. ըսի անոնց որ այս աղջիկը քոյրս է, նոր գտած եմ, կ'ուզեմ տանիլ հետս Ամերիկա. հարցուց թէ գրեւ կարողալ զիտէ՞:

ըսի թէ ոչ, բայց եւ մինչեւ Ամերիկա հասնելը կը սորվեցնեմ իր ա-
նունը գրելը, եւայլն, եւայլն: Բարի հիւպատոսը առաւ իր վիզան,
Տիգրանուհի Արամեան անունով: Այս աղջիկը Հայնեցի էր Տիգրա-
նակերտի շրջանէն. այժմ ողջ է, ամուսնացած, եւ կը բնակի Նիւ-
Եորք, ունի նաեւ դուստի:

Գործերնիս կարգադրուած էր Պէյրութի մէջ. մեզի գրին նաւ.
Տիգրանուհին ղեւ իր ղինուորական հաղուստով էր, մազերն ալ աը-
զու պէս կտրուած. նաւուն մէջ եւ եւ Քափթըն Եիշմանեանը միայն
զիտէինք աղջիկ ըլլալը: Հասանք Մարսէյլ. մէկ դիշեր միայն մեզի
պահեցին Մարսէյլ, տարին Փարիզ:

Երբ հասանք Փարիզ, շնորհիւ ամերիկեան հիւպատոսին եւ
Պօղոս Նուպար Փաշային մեզի ազատ թողուցին եւ մենք ազատ էինք
զալու Ամերիկա, սակայն Պօղոս Փաշան կանչեց Եիշմանեանը եւ ու-
զած էր գիտնալ Ատանայի բոլոր անցուղարձը. կ'ուզէր որ բոլորը
գրի աւնուի. Եիշմանեանը կը հասկցնէ որ բուսական ժամանակ կ'առ-
նէ գրի աւնել մանրամասնութիւնները. պէտք է պահենք նաեւ Սեր-
ժան Վահանը, ան էր զաշար՝ կոտի ժամանակ:

Յաջորդ օրը դիւ ներկայացուց Պօղոս Նուպար Փաշային, իր
տունին մէջ. Փաշան խոստացաւ որ իմ եւ քրոջս ծախսերը կը հողայ
որքան ատեն որ մնանք Փարիզ: Օրական 45 Քրանք կը ստանայի. այն
ատեն հինգ Քրանքը մէկ տոլար կ'արժէր: 69 օր մնացինք Փարիզ.
յաջորդ օրն իսկ սկսանք զործի. օրական երկու ժամ կ'երթայի Եիշ-
մանեանին քով, եւ կը պատմէի, ան կը մեքենադրէր:

Երբ մեր զործը լրացաւ, սկսանք պատրաստուիլ զալու Ամե-
րիկա:

1920 Դեկտ. 25ին տեղի ունեցաւ հրապարակային ժողով մը,
Փարիզի մէջ. գլխաւոր խօսողներն էին Եիշմանեանն ու Պօղոս Փա-
շան: Նոյն տարին էր որ սկսաւ լըյս տեսնել «Ապագայ» թերթը.
հաւաքուեցաւ յիսուն հազար Քրանք զաղթականներու համար: Այն
օրը տեսայ Անդրանիկ Փաշան:

Չինուորականի ինձ տուած վեց ամիս պայմանաժամը լրացած
էր, նոր անձադիր մը պէտք էր ունենայի. զիմեցի Հայաստանի Հան-
րապետութեան Փարիզի հիւպատոսին. ունեցայ անձադիր մը հայե-
բէն եւ Քրանտերէն տպուած, Վրթանէս Փափազեան ստորագրու-
թեամբ եւ Հանրապետութեան կնիքը:

Միայն բախար ղունեցայ տեսնելու Ահարոնեանը. այն ատեն
ան ժընեւ կը գտնուէր:

Փարիզ մեր կեանքը շատ լաւ անցաւ. ամէն օր լաւ տեղեր կը

պտըտէինք. ուտելիքը շատ առատ էր:

Երբ ժամանակը եկաւ, ելանք ճամբոյ դէպի Եգիպտոս. երբ
հասանք Եգիպտոս, հոն յայտնի եղաւ որ նաւուն մէջ մանրամասն
քննութեանէ կ'անցնեն: Հոն պարտաւոր եղանք Տիգրանուհիին հա-
ղուսանքը փոխել եւ հազցնել աղջկայ հաղուստ: Եգիպտոսի մէջ,
եւ եւ պանդոկապետի կ'իյնր զացինք շուկայ, տարինք Տիգրանուհիին,
առինք կօշիկ եւ հաղուստ ու այն օրէն ի վեր դարձաւ աղջիկ:

Փրանսական իս Թրանս նաւով հասանք Ամերիկա 1921 Յունիլ.
16ին: Նաւուն վրայ աղջիկը շատ գէշ եղաւ. երբ էլիզայէլնու ելանք,
եւ եւ Եիշմանեանը անմիջապէս առանց որեւէ քննութեան ազատ
էինք դուրս գալու. սակայն Տիգրանուհիին աչքերը քիչ մը վնաս
ունէին լալէն: Ուղեցին ութը օր պահել. պարտաւոր եղայ եւ եւս
հետը մնալ. Եիշմանեանը ելաւ դուրս: Յաջորդ օրը եկաւ մեզի տես-
նելու. հետն էր իր քոյրը եւ փեսան, իր քրոջ ամուսինը, որ ամերի-
կացի բարձր պաշտօնեայ էր: Ամէն օր մեզի կ'այցելէին, եւ ծխելիք
ու անուշեղէն կը բերէին: Մեր Պարթեւ Գափրիկէլեանը երկու անգամ
եկաւ ղիւ տեսութեան:

Երբ ժամանակը եկաւ, դուրս ելանք. Եիշմանեանը իր հետը
Գալիֆօրնիա տարաւ Տիգրանուհիին: Ես էլէվէթ մը առի, զացի շե-
տակ Փոլ Ոսկանեանին քով, ուր մեր Պարթեւն ալ կ'աշխատէր. կար-
դադրեցինք որ շուտով սկսիմ աշխատիլ Փոլին քով: Անցայ Փրոպի-
տենս, մնացի ամիս մը եղբորս հետ եւ զարձայ Նիւ Եորք:

Երկու տարի աշխատեցայ Ոսկանեանին քով, եւ ունեցայ իմ
սեփական խանութս: 1928ին ամուսնացայ, փոխադրուեցայ ձըրզի
նահանգը:

Ունեցանք դուստկ մը: 1951ին տղաս ղինուոր տարին 16 ամիս
Գորէա եւ ձափոն. մնաց ողջ առողջ, տուն զարձաւ:

Հիմա ունինք մեր սեփական տունը, տղաս ամուսնացած է եւ
մեր թոռնիկը կը մեծցնենք:

*

**

Այս բոլորը միայն ամփոփումն է իմ ղինուորական յուշերուս,
Ամերիկայէն մինչեւ աքսորուած օրս, հազար ու մէկ բաներ գրած
էի, օրը օրին բոլոր, մանրամասն, սակայն մնաց Ատանա, հօրաքրոջս
քով. անոնք ալ իրենց զաղթելու ատեն կորսնցուցած են, թէեւ երբ
Ամերիկա հասայ, մաս մը վերջիչեցի եւ գրի առի, այս այն վերջի-
չումներու օրինակն է, որ կը գրեմ ձեզի: Երբ մէկուսն տարիքը
60ը կ'անցնի, իր ետանդն ալ հետը կը տանի...:

ՄԻՆԱՍ ՏՈՒՊԱՇԵԱՆ

(ԳԱՅԼ ՎԱՀԱՆ)

Մինասը ծնած է Բարու Հաւաւ գիւղը, Համեստ ընտանիքի մը պաւակն էր ան, Տօլպաշեան բաղմանդամ զերգաստանէն: Մինասին դպրոցական կեանքը եղած է պարզուկ, նախակրթարանի մը ընթացքը, իր գիւղին մէջ պարզ կարգաւ գրել մը հաղիւ միջոց ունեցաւ սորվելու:

Հայուն, մասնաւորապէս իր գիւղին վաղեմի սովորութեան համեմատ, երբ 15-16 տարեկան եղաւ, պանդուխտի ցուպը ձեռք առաւ, իր սիրելիներուն ու հայրենիքի օճախին մնաք բարով լաւաւ, իրեն տարեկիցներու հետ, և Ինքզինքը Պոլսի ափերը նետեց:

1889 թուականին արդէն Պօլսի էր պատանի Մինասը, հոն հետեւեցաւ պապենական արհեստին, և եղբօրը Հաճի Գասպարին ձեռքին ու խնամքին տակ հիւանդութիւն սորվեցաւ:

Մինասը, որպէս ընդունակ պատանի, իր արհեստին մէջ լաւագոյն վարպետներէն եղաւ. ու մինչդեռ մէկ կողմէն կը ջանար լաւ տիւրկէր մը բլլալու, իր հասակակից ընկերներուն հետ մըցելով, միւս կողմէն սկսաւ ծանօթանալ օրուան հայ կեանքին կենսական պահանջներուն:

Ընթերցանութեան սիրահար մըն էր ան և ատոր կը պարտի իր դարբացումը: Պոլսական թերթերէն դատ ան կը կարդար արտասահմանեան հայ թերթեր, «Արմենիա»ն, «Հնչակ»ը, «Գրօշակ»ը նոր մարդ շինած էին Մինասը:

Ան հոն տեսած ու սիրած էր ցեղին տառապանքն ու խոշանքը: Իր դպրոցումները յաղթահարած էին փրոստ դաղափարները հին վարպետներուն, որոնք հարիւրներով տարապրում, անդիտակից իրենց հային ու վիճակին, դարաւոր կեանք մը մաշկեցուցած էին Չուզըր Չէլմէի (Թաշ խոնք) մէջ: Միշտ միամիտ հաւատացողները ճակատադրին, որով սերունդներ ապրած էին և հաղիւ բախար վաշկած էին ծերութեան օրեր հայրենի գերեզմանոցին մէջ վերջին հանգիստը առնելու: Բանի՜ քանի՜ «Փարպ վարդունի»ներ արին ու հառաչանքը կուրծքերուն մէջ ծովացած, հարած ու մաշած են Թաշխանի քարայրին մէջ, և Պալլըզլի գերեզմանոցը այդ հառաչալից կուրծքերը իր սեւ հոգերուն տակ առած, անտէր, անյիշատակ, ժամանակի մոռացութեան մէջ անհետացուցած է, թոյլ չտարով անոնց որ թրբական անարգ ուժիմը բմբուխէին, հայ մարդուն թշուառութեան իրական պատճառները հասկնային:

Ռուս-թուրք պատերազմէն ասդին երբ հայ գիւղացին վերածնութեան նոր թուական մը մտաւ, նոր սերունդը փոխեց իր մտածողութեան եղանակը, ան ալլեւ լոկ ընտանեկան, նեղ, սահմանա-



ՄԻՆԱՍ ՏՈՒՊԱՇԵԱՆ

փակ վիճակին մէջ չապրելով, ցեղին վրայ խորհեցաւ, անոր տառապանքին պատճառները սերտեց:

Այդ հոսանքին հետ քալեց Մինասն ալ, անկեղծ հաւատացող մը եղաւ հայ յեղափոխութեան, և միշտ անձնուէր սիրտ մը պահեց

մը ընկելով, որ Մինասի գործունեությունը կը բնորոշէ .

«Մեր շրջանի գործն է ապրանք փոխադրել Հայաստան. մօտ օրերս Վահանը պատրաստուած է նորից անպատճառ կատարելու Չորրորդ երթը. մի գծուարին, բայց անհրաժեշտ գործ, որը յաջողութեամբ ի կատար է ածում նա : Մանուանդ այժմ, որ լեռները սկըսել են ձիւնել եւ ցրակ : — 18 Սեպտ. 1903, Մրդաստանի կեղը. Կոմիտէ» :

Եւ արդարեւ կարճ ժամանակի մէջ այդ շրջանի փոխադրութեան գործը, Մինասի շնորհիւ, առաջ դնաց մեծ յաջողութեամբ. իրրեւ խմբապետ, Մինաս չորս խմբերու առաջնորդեց զէպի Ա. առաջին անգամ 8 հոգիով, երկրորդ անգամ 25 հոգիով, երրորդ անգամ 27 հոգիով եւ չորրորդ անգամ նորէն 27 հոգիով, բայց այդ գործերը այլեւս չլիցցան գոհացում տալ Մինասին, Մօսուն Զօռի արշաւանքի ատեն, ինքն ալ իր թեկնածութիւնն առաջարկեց : Արշաւանքի պատրաստութեան գործին ծանրութիւնը մեծ մասով անոր ուսերուն վրայ ինկաւ, եւ Մինաս կատարեց այդ ամէնք մեծ հմտութեամբ եւ ճարպիկութեամբ :

Անոր հերոսական մահը մասնաւորապէս սպային անոր ապրած շրջանի դիւզացիք, որոնց համակրանքն ու սէրը շահած էր Մինաս իր մաքուր վարքութեամբով. բարեհամրոյր բնաստութեամբ եւ գործին վրայ տածած անձնութեամբ :

Նամակէ մը հետեւեալ հատուածը կը քաղենք հոս, որ իր հերոսական մահէն երկու-երեք շաբաթ ետք մեր ձեռքը հասաւ, իր լուսանկարին հետ. — Հազիւ գուրգուրանքի ակնարկ մը քաջին կենդանագրին վրայ, որ իր պարզուկ ձեւին մէջ հիացմունք ու պատկասանք է համակ. ահա վրայ հասաւ Մոսունի գորանոցը քար ու քանդ ընողին խիպխուսմանն ու հերոսական մահը : «Վահանի ծանօթներն ու ընկերները անհունապէս վշտացան. ան վրէժի նոր օղակ մըն ալ աւելցուց բոլոր անոր ծանօթ հայերու սրտին մէջ, սկսուած գործը աւելի թափով առաջ տանելու» :

Յարգանք քեզի, անուշիկ Մինաս, որ կուրի դաշտին վրայ ծագիկ կեանքդ գոհ բերիր պաշտած հայրենիքիդ ապաստութեան սիրոյն համար : Դուն ինկար, լիովին կատարեցիր բոժինդ. այսօր, մեր արցունքի օրերուն մէջ, չենք մոռնար յիշատակդ, իսկ վաղը, երբ հայրենիքի ապաստութեան արշալոյսը որ ծագի, ըսւ եւ արի ընկերներուդ թափած մաքուր արիւնին գնովը, այն ժամանակ ապրող

սերունդը ազդովին պիտի դայ բոլոր նահատակներուն ցան ու ցրիւ ինկած ոսկորներուն առջեւ պաշտամունքի մեծ տօնը կատարելու : Հանդիստ ձեզի, մաքառումի ճամբուն վրայ ինկող անմահ հոգիներ. ողջ մնացող ձեր եղբայրներուն ալ ներշնչեցէք գոհարելութիւն դէպի արիւնոտ դաշտեր, ուր ինկան մեծ Սերորները, Հրայրները եւ դուք, յարգանք ձեր անմոռաց յիշատակին : Վշտահար :

(Արտաստուած «Մինաս Տօլպաշեան Գայլ Վահան» գրքոյ կէն. ք. Յուլիս 25, 1904) : Տիգրան Ս. Փափազեան :

ՍԱՐԳԻՍ ԱՐԱՄԵԱՆ

Տալու Պաղտոյին մեծ թոռան Հերոս Հաճիին մեծ եղբայրը. Տալու Պաղտոյին գաւաղը Սայթա Կարապետը սուլթանական պատուանշան կրող, շէնք կառուցանող, կամուրջ շինելու մասնագէտ, երեք տղայ գաւաղներ կ'ունենայ : Սարգիս, Հերոս Հաճի եւ Սիսակ, որ կը կոտորուի Մեծ Եղեռնին :

Սարգիսը երիտասարդ տարիքին Պոլիս կ'երթայ իր հօր ձեռքին տակ մասնաւոր ճարտարապետ կը դառնայ :

Զէյթունի ապստամբութեան լուրը առնելով, քանի մը ընկերներով կը մտնեն Զէյթուն եւ կը մասնակցին կռիւներուն : Թուրք բանակը կը յաջողի գրաւել Զէյթունը :

Սարգիս կը փախչի, եւ կը յաջողի Պոլիս մտնել շատ գծուաբութեամբ : Նորէն հօրը կ'ընկերանայ, որ այդ ատեն Քրանսական գոնսուլատին համար շէնք կը կառուցանէր : Ծատ դէշ ատեն մը, որ թուրք կառավարութիւնը փոխատական հայեր կը փնտոէ, բարի հիւպատոսը Սարգիսը իր ատենը կը տանի քանի մը շաբաթ կը պտահէ : Սր մը Սարգիս դուրս կ'ելլէ, մօտի սրճարանը կը մտնէ իր հայ բարեկամները տեսնելու. երկու ճանտարմա սրճարան կը մտնեն Սարգիսը ձեռքազրկելու, որ սրճարանի ետեւի դռնէն կը փախչի, կը գտնէ հիւպատոսին տունը : Երկու ճանտարմաները կը դիմեն հիւպատոսին, որ Սարգիսը իրենց յանձնէ. հիւպատոսը կ'ըզդիմանայ, եւ կ'ըսէ անոնց թէ իր տան մէջ մարդ չկայ, խստիւ յանդիմանելով ճանտարմաները :

Սարգիսին հայրը շուտով կը հասնի հիւպատոսին տունը : Հիւպատոսին խորհուրդով, օր մը վերջ, Սարգիսը հիւպատոսի կնոջ փայթօնը հեծած, կը մտնէ Քրանսական նաւը, եւ կ'ելլէ Պաթում : Նաւապետը իր մարդուն միջոցով դայն կը մտցնէ հայ սրճարան մը,

ՏԱԼՈՒ ՊԱՂՏՈՅԻՆ ՄԵՐ ԹՈՌԸ ԻՐԵՆՆԵՐՈՎ
ԱՐԱՄԵԱՆ ԳԵՐԳԱՍՏԱՆ



ՏԻԳՐԱՆ

ՍԱՐԳԻՍ
և իր երկու տղաները

ՎԱՀԱՆ



ՍԱՐՃԸՆ ՎԱՀԱՆ
Կիլիկիան կամաւոր



Իր տղան ԱՐԱՄը
Քոբէայի կամաւոր

ուր Սարգիս կը հանդիպի իրեն պէս հայ փոխտակաւորներու, կը պատմէ իր զլխուն եկածները: Քանի մը օր զօրծելէ վերջ Մանթաշ-հանի քով զբաղիբի զօրծ կը ստանայ:

Այն ատեն Սարգիս Արմէնականներուն կը պատկանի. կուսակցութիւնը զայն Պուլիարիա կը զբղէ, հոն կազմակերպելու. երկու տարի հոն մնայլ վերջ, կ'անցնի Ռուսմանիա, հոն կը զբաղի թէ կուսակցական զօրծով եւ թէ իր արհեստով. իր անունը կը փոխէ Մարգիս, Կարապետի: Սարգիս Կարապետի անունով կը նամակցի երկիրը եւ ամէն տեղ:

Ժամանակ մը Քոսթանցոյ մնայլ վերջ, կը փոխադրուի զիւր գերը. հոն բաւական տուներ շինելէ վերջ, լու անուն կ'ունենայ, զինք զիւղապետ կ'ընտրեն:

Հաւաւէն իր կինն ու զաւակները բերել կու տայ. մեծ տղան Տիգրանը Ամերիկա կ'անցնի, իր հօրեղբօր Սիսակին քով կը մնայ, չորս տարի վերջ իր եղբայրը Վահանն ալ բերել կու տայ Ամերիկա: 1914ին կը մեռնի Սարգիսին կինը Ռուսմանիա: Իր տղաները Տիգրանն ու Վահանը շատ կը ջանան հայրենին Ամերիկա բերել. անկարելի կ'ըլլայ. կը զբէ անոնց որ ինք ծերացած է եւ պէտք չունի Ամերիկա դալու. կ'ապրի մինչեւ 1925 եւ կը մեռնի հոն, հայրենիքի կարօտով եւ իր զաւակներէն հեռու:

Յեղափոխական ուղին դարբէ ի վեր միշտ վառ պահուած է Հաւաւցիներու մէջ. հայեցի դաստիարակութիւն, արհեստագիտութիւն, յեղափոխական ուղին միա ոսկոր դարձած է, որ կարելի չէ եզրած խուսափիլ: Գիւղը այնքան ազատ էր, ոչ ոք չէր զլուջանար, չէր վախնար խօսելու ազատութեան մասին. արձակ համարձակ չկար այլազգի, ոչ բողոքական, ոչ կաթոլիկ. 3000ի մօտ հայութիւն, զուտ լուսաւորչական, փոքրերը կը դաստիարակուէին մէկ ուղղութեամբ:



Առաջին դասերադին կոմիտե, Կիլիկիա գոցող Հաւաքի կա-
 ժաւորները եղած են 34, կուսի մասնակցողները եղած են 30: Անոնց
 անուններն ու մականունները, ոմանց ալ լուսանկարները, որ կըցած
 են ձեռք ձգել մեծ դժուարութեամբ:

Մասրէոս Լէյլէկեան, Նշան Սարգիսեան, Երուանդ Արամեան,
 Վահան Արամեան, Յարութիւն Սարգիսեան, Մանուկ Ճէլայեան,
 Ստեփան Փափագեան, Պարոյր Փափագեան, Մարտիրոս Խումարեան,



Ասատուր Համբարձումեան, Նշան Խիմարեան, Պարթեւ Գարրիլեան,
 Յարութիւն Ոսկանեան, Ներսէս Ոսկանեան, Խաչիկ Բարեղեան,
 Մարտիրոս Տէրոյեան, Մկրտիչ Տօլպաշեան, Յակոբ Տէր Մխեան,
 Գրիգոր Տէր Մխեան, Պաղտատար Ճնտեան, Պաղտատար Քէչեան,
 Երուանդ Խլրչեան, Ասատուր Ամբակումեան, Կարապետ Թնրիկեան,
 Պօզոս Զախտուրեան, Սողոմոն Փաշայեան, Կարապետ Խալարչեան,
 Գեորգ Էլլիեան, Պօզոս Խլրչեան, Խաչիկ Օզանեան:



Հերոս ՀԱՃԻՆ և իր որդին ԵՐՈՒԱՆԳԻՐ, որ Մեծ Եղեռնին կոտելով անցած են Տերսիմ. Հանին կը մեռնի Ֆրանսա, Երուանդը՝ Նիւ Եորք:



ՄԱՆՈՒԿ ՃԷԼԱԼՅԱՆ, Հաւաի դպրոցը աւարտած. Ամերիկա եկած. Կիլիկիա կամաւոր գացած. եղած է Բաւար. մեծ զորքեր կատարած. ամուսնացած. Բահաւայ օծուած. նորէն Ամերիկայ եկած: Ճրրգի հաստատուած. վախճանած:



ՄԱՏԹԷՈՍ ԼԵՅԼԵԿՅԱՆ և ՆՇԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ



ՅԱՐՈՒԹԻՆ և ՄԱՏԹԵՆՈՍ ԼԵՅԼԵԿԵԱՆ
Մելիք Չափզունի բողոք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԿՐԻՍՏՈՍԻԱՆ



ՄԷջտեղ կանգնած Սարերն ՎԱՀԱՆ ԱՐԱՄԵԱՆ
ՊԱՂՏԱՍԱՐ ԲԷԶԵԱՆ ՄԱՏԹԵՆՈՍ ԼԵՅԼԵԿԵԱՆ



ՏԻԳՐԱՆ ՏՕԼՊԱՇԵԱՆ, Ուսումնա-
սիրացի գործոն անդամներէն. ամե-
րիկեան զինուոր. մահացած Փրո-
վիտենսի մէջ:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԵԱՆ

(ՊԱՏՄԱՐԱՆ)



ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԵԱՆ

Եղած ատեն կուսերու որ հին ազգային ասպարեզներու վերջ տրուի: Հիմքը դրած է Ազգային Ընկերութեան, իր վերին մարմնով, Համբարձում Կարեան, Օհան Վարժապետ Ոսկանեան, Տէր Թորոս, Սարգիս Մայիկեան, Քաջ Վարդան Պոյաճեան: Ընկերութեան անդամագրած գիւղին երիտասարդութիւնը, տարեկան տուրքի գրութիւն հաստատած, ժողով ամէն ամիս:

Ազգային Ընկերութեան նպատակը եղած է ինքնապաշտպանութիւնը: Հաստատած է խմբական գրութիւն, որոնք իրենց կարգին պէտք է շրջան բնէին, գիւղերնրը գիւղին վրայ յարձակողներ, գողեր, աւազակներ բռնելու, ցերեկ ատեն գաշտին կենդանիներու վրայ յարձակողներուն, խմացնող օչնութիւն պոսացողներու վայրը շուտով հասնել, բոլորը զինուած:

Ազգային Ընկերութեան հիմքը դնելով, աւելի զօրացուցած է զիմադրութեան ոգին Հաւաքիներու մէջ, որուն պատճառաւ շատ մը քաջեր երեւան եկած են. այս ընկերութիւնը աւելի բորբոքուց հայր հայու պէս ապրելու:

Այս Ընկերութիւնը, որ հիմնուած էր 1885ին, հայերու մէջ

ինքնապաշտպանութեան կամ յեղափոխական կողմակերպութեան գոյութիւն չէ ունեցած, որ Թրքահայաստանի հայերը բոլորն ալ ճգմուած, պէկերու, աղաներու, ցեղապետներու գերի դարձած էին:

Հաւաքի Ազգային Ընկերութիւնը հիմնած է Համբարձում Կարեանը, որով անոր համար Եւրոպի Պէկի գիւղէն գուրս քուսել վերջ, աշխատած է գողեր, աւազակներ կողմակերպել Հաւաքիներուն ներդուրները տալու, որ ստիպուին պէկը գիւղ բերելու: Սակայն Հաւաքիներու մէջ հին հայկական ոգին բոլորովին չէ մարած, որ ատեն ատեն բռնկած է Օսմ. տիրապետութեան շրջանի դարերուն մէջ:

Թուրքը չէ կրցած Հաւաքը ստիպեցնել, Հաւաքը ստիպութեան չլիքայ չէ տեսած: Իր այս զօրաւոր կեցուածքը կը պարտի իր միատարր միալուն:

Հաւանաբար անցեալ դարերու մէջ Կարեանի պէս քաջատուջ տրամարանող, գործող անհատներ ծնունդ տուած է Հաւաքը, ներչնուած անհետացող սերունդներէն, որ դարեր եկած ու անցած է, եւ Հաւաքը մնացած է միւլենոյնը, քաջ եւ անվախ, կուսող, մարտնչող, զօրապաշտ:

Կը յիշեմ շատ փոքր եղած ատեննիս, փայտէ հրացաններով, սուրբով կը պարտէինք, խելքերնիս, միտքերնիս զննքին վրայ էր շափահասներ թիթեղով հրացանի փող կը շինէին իրական հրացանի կոթերով, Չէ մտա երկարութեամբ. նշանաւոր էր Միսաք Պոզոսեանը, գերեզմանի անկիւնին, մեր այգիին մօտ էր անոնց այգին, կու դար գերեզմանոց, ցերեկ ատեն, կը հաւաքուէինք իր շուրջը, իր շինած հրացանը վառողով կը կրակէր: Կը ստիպէինք մեր ծնողներուն, որ մեզի փոքրիկ ատրճանակներ զնէին քաղաքէն, որ միայն թուղթէ քափոսնով, ձայն կը հանէին:

Համբարձում Կարեան ոչ միայն ջանացած է գիւղը զնել յառաջդիմութեան վրայ, որ յաջող գուրս եկած է, այլեւ հիմնադրին է եղած Հաւաքի պատմութեան, որ պատմուածքներով կրցած էմ զրի առնել աննման Հաւաքի պատմութիւնը:



Թովմաս ձեւաւեան

Պոլիս ուսած, մտաւորական, վաղուց Ամերիկա եկած. եղած է «Հայրենիք» օրաթերթի հիմնադիրներէն. կարկառուն դաշնակցական. մասնակցած է Դաշնակցութեան ընդհ. ժողովներուն. 1911ին երկիր գացած. կատարածին գոհ գացած:



ԿԱՐԱՊԵՏ ԱՅԼԱԵԱՆ, Պոլիս ուսմանից առած, փայլուն մտաւորական, Ամերիկա եկած, անձնական գործով զբաղած. երկիր գացած, գոհ գացած Մեծ եղեռնին. ունի կարն կենսագրական գրքին մէջ:

ՆՇԱՆ ՏԷՍԷԿԻԻԼ

Նշան Տէստէկիւլ, մեր զիւզի նշանաւոր Յակոբ Տէստէկիւլի մօր կողմանէ Մելիք Չափուցի թոռ, Հաւաւցիներու փառքն ու պարծանքը, հայրը վաղուց մեռած, 95ի կտորածէն վերջ իր մեծ մայրը Տէստէկիւլ Շուշան Հաշուկը իր ամուսինը կոչուած, կ'անէ նշանն ու իր քոյրը փոքրիկ Պակցատան, Խարբեջոյ Մաղրան կը փոխադրուի, նշանին բարձր ուսմունք տալու, որուն այնքան կարօտ էր, որուն ճակատին վրայ կը կարգացուէր մեծ մարդ ըլլալը:

Փոքրիկ նշանը Կեղրոնական կը յաճախէ իր մեծ մօր աշխատանքով, մեծ յոտաջգիմութիւն ցոյց կու տայ նշանը եւ բարձր նիշերով կ'աւարտէ Կեղրոնականը. կը պաշտօնավարէ Հաւաւի զբոսը:

Ամերիկա երթալու բաղձանք կ'ունենայ եւրոպական լեզուն կատարելագործելու. կը հաստատուի Փրովիտենս քաղաքը. իր հօ-

րեղբոր Անդրանիկի օգնութեամբ Պրատուն համալսարանը կ'աւարտէ: Պոսիքն կ'երթայ, Մաղրայի մէջ ծանօթացած ընտանիքի մը աղջկան հետ կ'ամուսնանայ, ընտանիք կը կազմէ, կ'ունենայ աղջիկ զաւակ մը, Անահիտ, ամուսնացած, ողջ է հիմա:

Նշանը եղած է աններող եւ կշտամբող բոլոր անոնց զէմ որ գիտակցարար սխալներ կը զործեն. ճշմարտասիրութիւնն ու արդա-



ՆՇԱՆ ՏԷՍԷԿԻԻԼ

բամտութիւնը այնքան զօրաւոր դասաւորուած էր իր մէջ, որ չէր կարող ինքզինք զսպել չարիքներու եւ կեղծիքներու հանդէպ, որ կը դարձուէին անխղճարար: Քաջ եւ անխախ էր ճշմարտութիւնն ու արդարութիւնը պաշտպանելու: Արտակարգ մաքուր սիրտ, ուղղամիտ, որ յատուկ է փիլիսոփաներու:

Ան դարձած էր ջղային մարդ, որուն պատճառու անողորմ հիւանդութիւն մը բոյն զբաւ անոր մաքուր սրտին վրայ, որ մահ-

ուան անդուլթ մանդաղը հնձեց տարու մեր եզակի Նշանը իր երիտա-
սարդ տարիքին մէջ. սույ ու շխանի մատնեց իր կինն ու միակ դա-
ւակը Անահիտը, իր արդականներն ու արիւնակիցները, իր դիւղա-
ցիներն ու ծանօթները:

Անխալ էր մեր Նշանը իր բոլոր արտայայտութիւններուն
մէջ, շխտակին շխտակ, սխալին սխալ ըսելու քաջութիւնն ունէր:
Սահաւախօս էր, իր միտքը յայտնելու համար բառերու, նախադա-
սութիւններու պէտք չունէր. միայն մէկ բառ, որ դուն դայն հաս-
կընալու պէտք ունէիր, շատ քիչեր հասկցած էին Նշանը:

Անխնայ կը հարածէր շարքորթները, երեսպաշտները: Իրա-
պէս փելլոստիայ էր:

Զիւն ձմեռ էր, Նիւ Եորքէն Պօսթըն դպցի իմ նուիրական
պարտականութիւնս կատարելու: Վօթհըր Թաունի գետինները ձիւ-
նով ծածկուած, Քըլլոյին շուրջի փողոցները օթօսպիլներով բըռ-
նուած: Զարմացայ, մտքիս մէջ ըսելով. օ՛հ, Տէստէկիւլը միայն
Հաւաւցիներունը չէ. կը պատկանի ամբողջ հայութեան: Աներեւա-
կայելի բազմութիւն մը խոնուած էր Քըլլոյին ներսն ու դուրսը, քայլ
փոխել անկարելի էր. կարելի չեզուս վերջին անգամ անոր երեսը
տեսնել:

Անոր դադադին վրայ խօսողներու պոչ մը շարուած, իրարու
ետեւ, կը սպասէին իրենց կարգին, կիներ, մարդիկներ արցունք կը
թափէին: Տրտու՛մ ախար հեռացայ, անէ՛ծք կարգալով Պօսթընին,
որ մեր աննման Նշանը կերտու:

Յիշեցի վրային մէջ զինքը, հոն եղած միջոցին, որ այնքան
սիրահար էր վէպ խաղալու. գժուար էր անոր հետ վէպ խաղալ. պի-
տի պարտուէիր անպայման:

Ունեցած է քանի մը հրատարակութիւններ: Երիտասարդ մե-
ռաւ. եթէ երկար սպրէր, ապահովարար պիտի ունենար շարք մը
հրատարակութիւններ:

Դժուար է մոռնալ անոր ծիծաղկոտ դէմքը, թեթեւ կատա-
կարանութիւնները երբ Փրոփիտենս էինք. ամառ աստն տարեկիցնե-
րով պտոյտ կ'ունենայինք կիրակի օրերը. այնքան հպարտ կը զգա-
յինք որ Նշանին հետ պտոյտ կ'ունենայինք. հպարտութիւն չունէր
մեր Տէստէկիւլը:

ՏԻՐԱՆ ՓԱՇԱԼԵԱՆ

Ծնի կտորածէն վերջ, Հաւաւի դպրոցին ստաշին հունձքը ե-
ղաւ Տիրան Փաշալեան, իր եօթը գասընկերներով: Խարբերդ Մազ-
րայի Կեղրոնականի Տիգրան Սաբոյիտեանի, Տիգրան Պաղտիկեանի,
Բաւը քաղաքի Սանասարեանի աւարտող Մանուկ Պալոյեանի պէս-



ՏԻՐԱՆ ՓԱՇԱԼԵԱՆ

ներու շունչին տակ ուսած, շրջան աւարտած: Այս երեք ուսուցիչ-
ներու օրով մեր դպրոցը իր վերելքն առաւ, որ կարգով կանոնով
դպրոց էր, սկսաւ տարուէ տարի բնթացաւարտներ դուրս տալ. ի-
րականութեան մէջ այս ստաշին հունձքի աշակերտները աւելի շատ
դպրոցի երես տեսած են:

95ի կոտորածին պատճառով զպրոցը կորնցուցած էր իր բարձրութիւնը, որ կը կառավարուէր Միացեալ Ընկերութեան տեսուչ Պետրոս Էֆէնտի Սրապեանի նախաձեռնութեամբ, օղնական Հաւաքի Պոլիս ուսմունք ստան չարս ուսուցիչներով:

95ի կոտորածէն վերջ մեր զպրոցը շարունակուած է առանց զազարի, երկու-երեք ուսուցիչներով, բոլորն ալ պոլսական: Անոնց վճարումի գրամը Պոլիսէն կու գար, Ուսումնասիրացի անունով գնուած սենեակներու վարձքով, որ յետոյ ծախուեցաւ: Անկէ վերջ, 1900ին Ուսումնասիրաց Նիմուեցաւ Ամերիկայի մէջ. զիւղին դըպրոցը կարգ կանոնի գրուեցաւ, նախապէս յիշուած դասատուներով:

Առաջին կարգի աշակերտներս էինք թուով եօթը. Տիրան Փաշայեան, Համբարձում Փափաղեան, Պօղոս Պիտան, Կարապետ Կատարեան, Տիգրան Փափաղեան, Լեւոն Էլլիեան, Մանուկ ձէլալեան: Հաւաքի պատմութիւնը գրողս, Տիգրան Փափաղեան, տարի մը առաջ ձգեց զպրոցը, խանութի գործով գրադեցաւ. միւս վեց ընկերներս վկայական ստացան, ուսուցչութիւն ընելու: Համբարձում Փափաղեան, Պօղոս Պիտան, Կարապետ Կատարեան մնացին Հաւաք, եզան կանոնաւոր ուսուցիչ, զո՛ւ գացին Մեծ Եղեռնին: Տիրան, Տիգրան, Լեւոն եւ Մանուկ Ամերիկա եկան:

Տիրանը գիւղէն Պոլիս գնաց իր հայրը Հայրապետը տեսնելու որ բնաւ չէր յիշեր: Վեց ամիս աւելի հօր քով մնալէ յետոյ, կու գայ Ամերիկա, կը հաստատուի Փրովիտենա, գործարան կ'աշխատի. բայց խելքը միտքը գրամի վրայ չէր, որ պէտք ունէր երկիր զրկելու: Անոր խելքն ու միտքը կարգալու վրայ էր, որ եթէ փողոցը թուղթ մը գտնէր, պէտք էր լերցնէր եւ կարդար: Իր առած գրամները կը գործածէր զիրք գնելու, երկիր զրկելու եւ իր ազրուստին յատկացնելու: Տիրանը ինքնօգնութեամբ բաւական յառաջացաւ, անդերէն սորվեցաւ: Հետամուտ էր ազգային, կուսակցական եւ եկեղեցական գործերու մէջ մանկ:

Եղաւ հաւատարեալ զաշնակցական, եկեղեցական գործերու մասնազէտ եւ կատարեալ հայազէտ: Երբեմն կը կարդայինք իր զբոսութիւնները «Հայրենիք» օրաթերթի եւ ամսաթերթի մէջ. Հաւաքիներս հպարտ էինք իրմով: Օրէնսդրութիւն սորվեցաւ, աւարտեց ալ բայց չչարունակեց: Նուիրուած էր կուսակցական, եկեղեցական գործերու: Դրամտէր չէր: Երկիրը ամուսնացած, կինը կոտորուած, երկու անգամ եւս ամուսնացած: Առաջին կնոջմէն հոս աղայ գաւակ մը ունեցաւ, մեծցաւ, բայց անունը չլսեցինք: Տիգրան որեւէ հրատարակութիւն չունէր, բրած է քանի մը թարգմանութիւններ:

Հայ ազգը Տէստէկիւլի եւ Տիրան ֆաշայեանի պէսներու շատ պէտք ունէր: Անոնք երկուքն ալ մեր Հաւաքիներու փառքն ու պարծանքն էին, որոնցմով այնքան կը հպարտանայինք: Երկուքն ալ մեռան զացին: Տէստէկիւլը Պօսթըն եւ Տիրանը Տիթրոյթ. Հաւաքիներուս մէջ զժուար է անոնց տեղը բնոյններ ըլլան նոր սերունդին մէջ: Տիրան, Լեւոն, Մանուկ մեռան. ողջ կը մնայ զեւ Տիգրանը, զրոցը Հաւաքի պատմութեան:



ՅԱՆՈՒՆ ՀԱՃՆԱՆ
Մտաւորական

Գիւղին դպրոցը աւարտած, եղած է Ազգ. Ընկերութեան գործօն անդամներէն. վաղուց Ամերիկա եկած ու Նիւ Եորք հաստատուած, անձնական գործով գրադած. նուիրուած հայ մշակոյթին. ունեցած ձեռագիրները փնցած. եղած է իմաստուն մարդ, որ մէկ նայուածքով հասկցած է դէմինն նկարագիրը: Նիւ Եորք մեռած:

ՊՕՂՈՍ ՀԱՃՆԱՆ



Յակոբին փոքր եղբայրը, անոր պէս գիւղին դպրոցը աւարտած, եղած է Ազգ. Ընկերութեան անդամներէն. եղած է ուսումնասէր, ինքնօգնութեամբ մտաւորական դարձած. վաղուց Ամերիկա եկած, երբօրը հետ գործած. լաւ վիճաբանող, առողջ բնադատ. երկու եղբայրներն ալ ցեղային լաւ յատկութիւններ ունէին. Նիւ Եորք մահացած:

ՏԻԳՐԱՆ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ, 1915ի շրջանին Հաւաւի դպրոցէն շրջանաւարտ, վկայական ստացած. ուսուցչական պաշտօն վարած Բալահովիտի գիւղի մը մէջ. գոհ կ'երբբայ Մեծ Եղեռնին. Տիգրան մեծ ապագայ խոստացողներէն եղած է. աւաղ որ անոր աստղը շուտով մարած է. յարգանք իրեն եւ իր հետ կոտորուողներուն, պիտի չմոռցուի բոլոր անոնց յիշատակները, որոնց համար կագմուած է Բալու Հաւաւ գիւղի պատմութիւնը:




ԱՍԱՏՈՒՐ ՃԷԼԱԿԵԱՆ



կինը Տիգրանուհին, եւ զաւակները Նազէնին, Կարապետը, Պետրոսը, ամուսնացած՝ հայերու հետ:

Հաւաւի նշանաւոր գերդաստանի զաւակներէն. պատանի հասակին Պոլիս գացած հիւսնութիւն սորված. Ամերիկա եկած, անճանական գործով զբաղած. 1911ին երկիր գացած, գիւղապետ ընտրուած. նորէն Ամերիկա եկած, Նիւ Եորք հաստատուած, անճանական գործով զբաղած. մահացած Նիւ Եորք: Կ'ապրին իր



Հաւաւի յարգուած ընտանիքի զաւակներ ՅԱԿՈՒՐ ՊԵՆԱՆ եւ ԳԱՔՐԻԷԼ ԼԷՅԼԷԿԵԱՆ Ուսումնասիրացի մնայուն անդամներ, երկուքն ալ մահացած Փրովիտենս:

ՏԻԳՐԱՆ ՄԿՐՏԻԶԵԱՆ,
Փալու, Իսապէկ գիւղացի,
յարգուած անճանարութիւն:





ՓԱՓԱԶԵԱՆՆԵՐՈՒ ԽՄԲԱՆԿԱՐ

- Ա. Կարգ. ՏԷՐ ՊԱՂՏԱՍԱՐ, ՏԻԳՐԱՆ, ՊԱՐՈՅՐ
- Բ. Կարգ. ՎԱՀԱՆ, ՍՈՒՐԷՆ, Պարոյրին եղբայրը ՊԵՏՐՈՍ
- Գ. Կարգ. ԳԵՂԱՄ, ԿԱՐԱՊԵՏ, ԶԱԼԻՆ (Տիգրանին հոգեգառակը) :



Փրովիտենս Բաղաբի Հաւաքի երիտասարդներու խմբանկար



Ֆրանսայի Լիոն Բաղաբի Հաւաքի երիտասարդներու խմբանկար

ԿԱԼԻ ԵՐԳԵՐ

Օդանրբուց մէշանին,
Նանանանին օդի շուշանին,
Տէփոն կօլրրտէր ֆօշանին,
Կըլմանէր ցօղ բօշանին:

Մարթապանուն տղաքն,
Ելան գացին քաղաքն,
Մէկը մտաւ մարագըն,
Տարաւ սերն ու կարագըն:

Իսրայօլայ համբընին,
Կը չափչփեն խալփանին,
Յարեն կը հանեն համբընին,
Աղջիկ կ'առնեն ջանկընին:

Փափագենց կոտորակ սայլըն,
Թղթիկանց ճիւղն նալըն,
Ճըլէենց նըլլատ կալն,
Խըռտըգոյին շալվարն:

Մախասիկն ու մըրբատըն,
Ամբակումն ու Խայրութն,
Եկաւ Ելաւ շաբաթըն,
Փափագենք կը ֆաղեն ֆայրատըն:

Ըռան ըռան Ջատկին դռան,
Փափագենց երկու պուղան,
Այվազին երկու տղան,
Չուք կը գարնեն տամպուրան:

Կայի Երգեր, որ կամ կամնայ աղաները կ'երգէին կամերուն վրայ:

ԿԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԵՐԳ

Ես մի փոքր տղայ եմ, Աստու ծառայ,
Աստու մէջ խնդրեցի, մուրագս չառայ,
Երբ որ տարիքս քան եւ մէկ տարուայ ըլլայ,
Հայրենիքս զինուոր երթամ, կամաւոր, համայ:

Թըրէնը եկեր է, վակօնը կ'ուզէ,
Արամ փաշան զինուոր կ'ուզէ,
Զօրանցը մտայ աչքըս կը խաղար,
Քուէ ֆաշել սկսան, սիրտս կը դողար:

Աչին հայկօշ-հայկօշ մագերդ մի բանար,
Ես մեռնելու կ'երթամ, մի ամուսնանար,
Սեներդ մի հագնիր սգաւոր դառնար,
Ազօթէ, միշտ ազօթէ, զիս մի մոռնար:

Աստուածդ սիրես մայրիկ չանքաս լաւ կապէ,
Զինուորութիւնը շատ ազուր բան է,
Մի արտասուէր, մեզի համար ուրախ օր է,
Կուրի կ'երթանք, որ Հայաստանը յաղթանակէ:

ՀԱՆՏԱՐՄԱՆ

Ոռնալով ինկաւ սարի քանտարմին,
Օդին մէջ բռաւ իր անմահն ձին,
Գնաց ու կանգնաւ մնաց առանձին,
Ոչ ոք չկրցաւ բռնել իր սանձին:

Կը խրխնջէր միշտ, կը բռփէր գետին,
Հոգին կ'աւանդէր քեօփիք քանտարմին,
Խնդրէր, կ'աղաչէր քաջ Հաւաւցիին,
Զէնքի չբռնել այդ անմահն ձին:

Արեւը պատեց, խաւարը տիրեց,
Մեր անմահն եկաւ յանձնուեց,
Երեք քայքայի բաղձանքը կատարուեց,
Ճանարմին սպաննուեց, ձին գրաւուեց:

Կրպոյնի աղբիւր բարով մնացիր,
Հագար տարիներ միշտ զլզլացիր,
Քեօփիք քանտարմին աղուոր երկնցիր,
Սեւ-սեւ գայլերու կերակուր եղիր:



Պատմութիւն Հաւաւի զրքին մէջ յիշուած ճանտարմային սպանութեան առթիւ յօրինուած ոտանաւորը: Երեք քաջ Հաւաւցիներ սպաննած են ճանտարման, Հաւաւի հոգին դուրս, Կրպոյնի աղբիւրին վրայ, անոր ձին տանելով Տերսիմ, միեւնոյն զիչերը:

ՇԵՐԻՖ ՊԷԿԻ ԱՔՍՈՐԸ

Հաւաւ տէտուղըն պիր քիւշիւկ նայա,
Հէրսի քի չըլսքի խուլաղ ասմազ քիմսայա,
Պէկ նառիշ կեքմայ տօլվաք ումտրմայ,
Հապապտան տիլատի, սուրկիւն Թէքիր տաղա:

Եալվարուրըմ սանա Աւետիս աղա,
Պէնի եօլլամա շու Թէքիր տաղա,
Պէկ սէն սէնի սըլսըլմա, պօշ եէրընա,
Փաշանըն կէօյնի տհա աշաչի սուտա:

Աւետիս տէտուղըն խայնախամ փաշայ,
Անատան տօղմիշ ալ վաւումազ ելայ,
Հէյպաքլի պիր ատամ, սարի պույուղլի համայ,
Աքա քի պինար տէրլար պին եաշայ:

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Տիգրանակերտի Վալի փաշան հեռագիր կը տանայ Պոլսոյ Բարձրագոյն Դատարանէն, որ կը հրամայէ, Շարիֆ Պէկ պէտք է հեռանայ Հաւաւ գիւղէն, աքսոր Թէքիր տաղը: Վալի փաշան հեռագրով Մելիք Չափուենն ու իր երկու օգնականները, Աւետիս Փաշալեանն ու Դաւիթ Արզումանեանը, Տիգրանակերտ կ'ուղչէ եւ կ'ըսէ անոնց՝ գտար շահած էք. Շարիֆ Պէկը Թէքիր տաղ պիտի աքսորուի. միտք ունիմ աւելի հեռուները աքսորելու այդ բարբարոսը: Անոնց կ'ըսէ՝ որոշուած օրը գուք տանց վախնալու բռնի գուրս հանցէք գիւղէն, այլապէս ան կը մնայ յաւիտեան:

Իսկապէս ալ Հաւաւցիք որոշուած օրը բռնի դուրս կը հանեն Պէկին ընտանեկան պարագաները առանց իր ներկայութեան: Յետոյ Հաւաւցիներու հաւանութեամբ աքսորապայք Թէքիր տաղը կը փոխուի Հաւաւէն հինդ ժամ հեռու Թիլ գիւղը, որ նոյնպէս Շարիֆ Պէկին կը պատկանի:

Այս առթիւ Տօլպաշ Մելիքոն երկ մը կը յօրինէ յախուռն Աւետիս Փափաղեանի անունով, թրքերէն բառերով, որ թուրքերն ալ երգեն:

1948 Փետր. 12

Մերելի Տիրբան,

Նամակիդ իր ժամանակին պիտի պատասխանէի, բայց երբեմն արամազրութիւններս տեղը չէն ըլլար, աունը միմակ եմ, գրազում մը չունիմ, սիրաս կը նեղուի. դուրսը շատ ձիւն կայ, դուրս չեմ ելլեր: Այս տարի շատ ձիւն եկաւ: Անցեալ շարթուն Գասպարը եկաւ օր մը կեցաւ, վերադարձաւ. անշուշտ եկաւ ձեզ տեսաւ: Իսկ դորձերու մասին, Հռիփսիմէն կը գործէ, Պետիկը քուլէճ կ'երթայ, իսկ Վարդուհին եւ Մաճին դպրոց կ'երթան. այս շարթուն Մաճիկը ձիւնիւր բարձր դպրոց սկսաւ երթալ, շատ ուրախ է: Արմենուհին, անոնց մասին հարցնես, շատ լաւ են, երբեմն կ'երթանք զիրար կը տեսնենք: Սուրէնին մասին զրած էիր որ թէլէֆոն ըրած էր, եթէ երկու տող գրէր ինձի եւ ինչպէս ըլլալս հարցնէր, սեւէ մարդ արգելք կ'ըլլա՞ր. թէ ես ուրախ կ'ըլլայի եւ թէ կը դնատէի զինքը. ես սեւէ մէկէն ակնկալութիւն չունիմ. իմ ակնկալութիւնս իմ ազգականներուս ատոյջութիւնն է, ուրիշ ոչինչ. ամբողջին ալ շնորհակալ եմ. եթէ զրեն, կը պատասխանեմ, իսկ եթէ չզրեն, ես ալ չեմ զրեր:

Հռիփսիմէն մասնաւոր բարեւ կը խօսի քեզի, Փերուզին, Չալիլին, Ռոզին: Բարեւս քեզի, Փերուզին, Չալիլին, Ռոզին: Մասնաւոր բարեւ կը խօսին Պետիկը, Վարդուհին, Մաճին. քեզի, Փերուզին, Չալիլին, Ռոզին:

Մնամ կարտալի բարեւներով՝

ՊԱՐՈՅՐ ՓԱՓԱԶԵԱՆ

ՆԻԻ ԵՈՐՔ.— Այս տարուան ձեռնարկը, որ տեղի ունեցաւ Ապրիլ 20ի Կիրակին, Ս. Գ. Լ. եկեղեցիի սրահը, անցաւ շատ յաջող. օրուան ատենապետ Տիրբան Գաբրիէլեան բացաւ ժողովը եւ յարգանքի հրաւիրեց հանդիսականները՝ Մեծ Եղեռնի նահատակներուն եւ մեզմէ յաւէտ բաժնուած Հաւաւցիներուն համար: Հակիրճ խօսքերէ յետոյ, ժողովը վարելու պաշտօնը յանձնեց Կ. Վարդութեան քարտուղար Ս. Փափագեանին: Այս վերջինը մեծ գովասանքով յիշեց Հաւաւ գիւղը եւ անոր անունով հիմնուած Ուսումնասիրացը, որ հայու յամառութեամբ պահած է իր դոյութիւնը: Թէեւ չունինք Հաւաւը, բայց ունինք կարօտեալներու հոգը, բնաւ անազգային գործ մըն է որ կը կատարուի: Հաւաւցիներու նպատակը եղած է պահել իրենց ընկերութիւնը իրենց զիւղին համար, եւ իր օգնութեան պէտք ունին առաւելագէս Պէյրութի, Հալէպի 40է աւելի ուսանողները, որոնց զպրօցական թշաղիւ տարիներէ ի վեր կը վճարուի: Հոգ կը տարուի արտասահմանի ծերերուն, հիւանդներուն, եւ կարօտեալներուն: 1000 տարիէ աւելի տարեկան պիտոճէ մը յատկացուած է ուսանողներուն: Այս գումարը պէտք է աւելնայ: Եթէ Հաւաւի Ուսումնասիրացի անունով զոհոյթիւն չէ եղած Ազգային հաստատութիւններու, Հաւաւցիներու անունով կազմակերպուած խումբեր նշանակելի գումարներով բերած են իրենց մասնակցութիւնը: Իր ընկերութիւնը չունի որեւէ եկամուտ եւ կարելի չէ երեսի վրայ թողուլ իր բեկորները:

Երկրորդ խօսողն եղաւ մեր նոր սերունդէն ուսանող Պր. Պետրոս Օտեան, որ գովարանեց Հաւաւցին, հիմնած ըլլալուն այս Ուսումնասիրացը, երկար տարիներ առաջ եւ որ միշտ օգնած է արտասահմանի իր կարօտեալներուն: Մենք հոս ծնածներս, պիտի պահենք մեր պապերուն կողմէ հիմնուած այս միութիւնը եւ պիտի շարունակենք միեւնոյն ուղղութեամբ, բնաւ Պր. Պետրոս Օտեան, սահուն հայերէնով:

Վերջին խօսողն էր հիմնադիրներէն Պր. Փօլ Կատարեան, որ յիշեց այն հին ու նեղ օրերը, երբ չկար զրամի եւ գործի առատութիւն, բայց կար մեծ եռանդ՝ հաստատելու Ուսումնասիրացը, որուն այնքան պէտք ունէր նոր սօքի կանգնած Հաւաւը, քարուքանդ եղած 95ի կոտորածէն: Ըսաւ թէ Հաւաւը դարերէ ի վեր սիրած է հայ մշակոյթը, որուն հանդէպ չէր կրնար անտարբեր մնալ: Միշտ ալ փնտրած է բարձր պահել զիւղին զպրօցը:

Ամերիկա գտնուող Հաւաւցիներս որոշեցինք հիմնել — ըսաւ ան, — Ուսումնասիրացը, այն յոյսով որ մեզմէ վերջ եկողներն ալ պիտի պահեն, եւ օգտագործեն զայն: Գուր ներկաներդ, կը տեսնէք, որ մենք սխալած չենք. որ մեր Ուսումնասիրացը կը մնայ կանգուն եւ անբաժան, պիտի մնայ սակից վերջն ալ: Երեք խօսողներն ալ ծափահարուեցան:

Մեր զիւրացի երգող եւ արտասանողները բանաւոր պատճառներով կը բացակայէին: Հաւաւցիներու յատուկ ամէն ուսելիքով եւ խմելիքով առատ սեղանին շուրջ հաւաքուողներ, կերան, խմեցին, զուարճացան: Ունեցանք մենապարօղներ եւ խմբապարող, որոնց միջոցով զոյսացաւ կոկիկ դումար մը: Կարգը եկաւ մոմալտուութեան. §35ով մասնակցեցաւ Տօնիկ Գարրիէլեան, մասնաճիւղիս ատենապետ Տիգրան Գարրիէլեանի տղան: Շնորհատրութիւն Տէր եւ Տիկ. Գարրիէլեաններուն: 10ով, 5ով մասնակցողներէն զոյսացաւ որոշ դումար մը: Անունով Հաւաւցիներու բացակայութիւնը զգալի էր: Հաւաւի անունով, թերթով պոստախօսողը միշտ ալ բացակայ եղած է մեր ձեռնարկներէն:

Վարչութիւնս, հիմնուած Հաւաւցիներու թուին, պատրաստութիւն տեսած էր: Գովաստանքի արժանի է Վարչութեանս ատենապետը, որ երկու շաբաթ, տունը եւ խանութներ այցելած էր, հայրենակիցներ ձեռնարկին բերելու:

1958, Մայիս 17



ՆՇԱՆ ՍԱՐԳԻՍԵԱՆԸ ՀԱԻԱԻ ԳԻՒՂԱՑԻ

Իմ զիւղս զրացի, պատուական զերդաստանէ թղթիկ Սարգիսի թոնն էր: Իր հօրը Մանուկ աղբօր պէս պարզ դրել կարգաւ զիտցող, քիչ խօսող, ազգային նպատակներով տարուող Նշանը գոհուեցաւ իր խոր հաւատքին: Գեռ երիտասարդ, ձկնց ազատ Ամերիկան, գնաց միացաւ Կիլիկեան կամաւորական խումբին: Մասամբ իր վրէժն տուած, ետ եկաւ: Միշտ անհանդիստ, միշտ տրտում, կը ցաւէր իր զիւղին, հայրենի օճախին քանդումը: Իր պատուական հօր պէս երբեմն կը բորբոքէր, գործելու, ապրելու փափաքը մէկ կողմ դրած, կ'ըսէր. «Մենք Հայերս ալ ինչո՞ւ կ'ապրինք, թող տալով որ այդ դազան թուրքը ապրի»:

Միշտ կ'երազէր կամաւորական շարժում մը եւս, երթալ կըրուելու համար: Փրօվիտենս եղած ատենս, տարին անգամ մը պէտք էր Նիւ Եորք երթալի, Մաթօն ու Նշանը տեսնելու: Նիւ Եորք հաստատուելէս յետոյ, տարին վեց-եօթ անգամ Մինկսիկ կ'երթայի: Ինծի համար ուխտատեղի եղաւ Սինկսիկը, ամբողջ 15 տարի, ամառ, թէ ձմեռ:

Կնոջս հիւանդութեան պատճառաւ, ա'լ չկրցայ երթալ վերջին տարիները. նամակ, Մնունդի եւ Զատիկի տաթիւ քարթ գրկելով կը բաւականանայի:

Ու օր մըն ալ ահա, ապատութիւնը: Երկուքն ալ, Նշանն ու Մաթիկոսը, հին օրերու պէս երջանիկ եւ դեռ երիտասարդ երեւոյթով, դուրս եկած էին:

Փա՛ւք Տիրոջ, որ անոնք իրենց կեանքը չանցուցին բանտին մէջ: Նշանը, թէեւ կարճատեւ, սակայն տեսաւ ազատ կեանքը զարձեւալ, ու մեռաւ իրրեւ ազատ մարդ:

Հոգը թեթեւ, սիրելի՛ Նշան, ողջ մնացողներս պիտի չմոռնանք քեզ:

**ԸՆԿԵՐՆԵՐ ՄԱՏՔԷՈՍ ԼԷՅԼԷԿԵԱՆ ԵՒ ՆՇԱՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ
ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒԱԾ**

Ինչպէս զրած էինք, ընկերներ Մատթէոս Լէյլէկեան եւ Նշան Սարգիսեան ազատ արձակուած են, Նիւ Եորքի Նահանգապետ Պ. Հերիմընի հրամանագրով:

Մեր երկու ընկերները Չորեքշաբթի առաւօտ, 17 Դեկտ., ազատ ձգուեցան, զիմաւորուելով իրենց ազգականներուն եւ բարեկամներուն կողմէ: Իրենց առողջութիւնը լաւ է եւ տրամադրութիւնը բարձր:

Մեր խնդակցութիւնը, այս առթիւ, անզամ մը եւս: Այս կերպով ողբերգական էջ մը կը փակուի մեր ժամանակակից ազգային կեանքին մէջ եւ խաղաղութեան նոր էջ մը կը բացուի:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Շնորհակալութիւն Կարապետ եւ Պետրոս ձէլայեան երկու եղբայրներուն, որ առանց վնասումի պատրաստեցին զբէս պատկերներու քրթերը: Արամեաններու պատկերներուն քրթերը իրենք պատրաստած են:

ՏԻԳՐԱՆ Ս. ՓԱՓԱՋԵԱՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Վերջերս Պր. Սիրվարդ գրագէտը գրքոյկ մը հրատարակեց Թորոս Ծառուկեան (Մեծ Չէլլօ) անունով, որուն յառաջարանը զրած է մի ոմն Բ. Վարազդատ. ան կ'ըսէ, թէ իր այդ տեղեկութիւնները իբր թէ քաղած է Անգլիական դեսպանին (Ի Կարին) կողմէ իր կառավարութեան մղուած տեղեկագիրներէն, 1891ին:

Յառաջարանին մէջ, (էջ 8) կայ անվայել եւ խիստ ընդվզեցուցիչ դէպքի մը մասին քանի մը տող, եւ որ իբր թէ պատահած է մեր գիւղին՝ Հաւաւի մէջ:

Այսու կուզամ հայ հասարակութեան ընդհանրապէս եւ զերքը կարգացողներուն մասնաւորապէս ըսել, թէ մեր գիւղին մասին այդ գրուածքը բոլորովին շինծու եւ սուտ է, եւ կամ ուրիշ տեղ մը պատահած է ու մեր գիւղին վերադրուած է:

Այդպիսի դէպք չէ պատահած Հաւաւի մէջ, որեւէ ատեն, հող չէ թէ ինչ ազգի հիւպատոս ալ տեղեկագրած ըլլայ, իսկ յիշուած Նէ-ճիպ գաղանը, կամ ուրիշ ոեւէ թուրք, երբեք բնակութիւն չէ հաստատած Հաւաւ գիւղին մէջ:

Նիւ Եորք, Նոյ. 9, 1960

Պ. Ա. ԹԱԳԻՈՐԵԱՆ

(Հրատարակուած Պօսթօնի հայ օրաթերթերուն մէջ)

Ց Ա Ն Կ

Յառաջարան	Էջ 7
Աւանդութիւն	10
Պատմութիւն Բալու շառա գիւղի	11
Միութիւնը ուժ է	82
Մեր զպրոցը	100
Մարտիրոս Արիկեան	109
Կարապետ Այլանեան	110
Յակոբ Էֆ. Զախարեան	111
Կատարեան երկու հղրայրներ	112
Սուրբ Ծնունդը	114
Միլէտը	117
Բուն Բարեկենդանը	119
Հրաշափառ Զատիկը	123
Համբարձումը	127
Վարդավառը	129
Այգեկութիւնը	133
Արքայավայել հարսանիքները	136
Հաւաի մեղիքները	139
Գիւղին բնական հարստութիւնները	144
Քարակոփութիւն	146
Եկեղեցիներու բաժանումը	147
Օրէնսգէտ Նշան Էֆ. Քէօսէեան	151
Հողագործ Թըղթիկ Սարգիս	152
Խալփա Մարտիրոս Պօսանեան	155
Հարստարապետ Կարապետ Համբարձումեան	157
Տալու Պաղտօն	158
Էրզրնկացոց Արեւստանոցը	161
Նոր Փափագեաններ	162
Հին Փափագեաններ	164
Հողագործ Փափագ Արքիւն	170
Վահան Արամեանի Յուշերը	173
Մինաս Տօլպաշեան	202
Սարգիս Արամեան	207
Հաւասցիներու կամաւորական իմբանկար	210-211

	Էջ
Հերոս Հանի եւ իր որդին	212
Մանուկ ձեղալեան	212
Մ. Լէյլեկեան եւ Ն. Սարգիսեան	213
Յարութիւն եւ Մատթէոս Լէյլեկեան	214
Սերժան Վ. Արամեան, Քէչեան եւ Լէյլեկեան	215
Տիգրան Տօլաշեան	215
Համբարձում Կարեան	216
Թովմաս ձեղալեան	218
Կարապետ Այլեան	218
Նշան Տէստէկիւլ	218
Տիրան Փաշալեան	221
Յակոբ Հանեան	223
Պօղոս Հանեան	223
Տիգրան Եղազարեան	224
Ասատուր ձեղալեան	224
Յակոբ Պըխեան եւ Լէյլեկեան	225
Տիգրան Մկրտիչեան	225
Փափագեաններու խմբանկար	226
Փրովիտեն Բաղաֆի Հաւաքի երիտասարդներ	227
Ֆրանսայի Լիոն Բաղաֆի Հաւաքի երիտասարդներ	227
Ֆրանսայի Լիոն Բաղաֆի հաւաքիներ	228
Հալէպի Հաւաքի ուսանողներ	228
Հայրենիքի սերը	229
Կալի երգ	230
Կամաւորական երգ	231
Ճանտարման	232
Շէրիֆ պէկի աքսորը	233
Պարոյր Փափագեանի նամակը	234
Հաւա Գիւղի ձեռնարկը	235
Նշան Սարգիսեան	237
Մ. Լէյլեկեան եւ Ն. Սարգիսեան ազտտ արձակուած	238
Շնորհակալիք	238

Տպագրութիւնը աւարտեցաւ 26 Հոկտ. 1960ին
Տպարան Մշակ, Փոստարկղ 3166, Պէյրուք